Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ինքնագիր
68

Ինքնագիր
10

189

95709-Ա2

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

208

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐԻ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

2012

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ
1891

Ա-83
$ 2004

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐԻ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԵԳԻՊՏՈՍ, ՓԻՒՆԻԿԻԱ, ՄԻՋԱԳԵՏՔ (ՔԱՂԴԷԱ, ԱՍՈՐԵՍՏԱՆ, ԲԱԲԵԼՈՆԻԱ), ԻՐԱՆ (ՄԱՐԱՍՏԱՆ, ՊԱՐՍԿԱՍՏԱՆ)։

Հին գրութիւններով եւ քարտէզներով զարդարած։

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ
1891

95709-ԱՀ
3240
1004 / 175608
ՀԱՅԿ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Дозв. ценз. Тифлисъ. 29 Сентября, 1890 г.

Типогр. М. Д. Ротиніанца, на Голов. пр. соб. д. № 41

10 - 2014
№ 10

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Արեւելքի հին ազգերին առաջ ճանաչում էին միայն նրանով, ինչ նոցա մասին գրել են հին դարերի պատմագիրները՝ Հերոդոտ, Ստրաբոն, Պլինիոս, Դիոդոր Սիցիլիացի, Հին Կտակարան, Մանէթոն, Բերոզ, Մովսէս Խորենացի, Քսենոֆոն, Կտեզիաս, Թուկիդիդէս և ուրիշներ։ Բայց անցեալ դարու վերջերքից և մանաւանդ ներկայ դարում եւրոպացի գիտնականները մի ուրիշ միջոց էլ գտան այդ ազգերին ուսումնասիրելու համար. այդ միջոցը տուեցին հին ազգերի աւերակները և մանաւանդ նոցա գրութիւնները, որոնց կարդալու գաղտնիքները գտնուեցին մեր դարում։ Արձանագրութիւնների կարդալով նոր ձեռք բերուած տեղեկութիւնները մասամբ հաստատեցին, մասամբ հերքեցին հների վկայութիւնները, մասամբ պարզաբանեցին նոցա և մասամբ էլ անյայտութիւնից հանեցին չը յիշատակուած և հներին անծանօթ պատմական և այլ իրողութիւններ։ Թէ որքան ճոխացել է նոր գրականութիւնը Արեւելքի հին ազգերի մասին, թող, գէթ մի թոյլ գաղափար տալու համար, յիշատակենք նորա մէջը տեղ բռնած գիտնականներից հետեւեալների անունները՝ Մարիէտտ, Օսբուրն, Ֆրանսուա Լընորման, Բրուգշ, Հարտման, Մասպերօ, Շամպօլիօն—Ֆիժակ, Շամպօլիօն կրտսեր, Յակոբ դը Ռուժէ, Բենֆէյ, Շւարցէ, Լեպսիուս, Դիւմիխէն, Ստէրն, Գուդւին, Բիրչ, Վայզ, Գէորգ Էբէրս, Պլէյտ, Մաքս Միւլլէր, Ռաուլինսոն, Լէյարդ, Լոֆտուս, Օպպէրտ, Պրիչարդ, Օբրի, Էկշտէյն, Կրէուցէր և Գինյօ,

Կնոբէլ, Էրնէստ Ռընան, Մովէրս, Նէլդէկէ, Հիցիգ, Էւալդ, Բերթօ, Տուկ, Լէնգէրկէ, Մունկ, Վինէր, Ստէրկ, Իւստին, Սամուէլ Պորտէր, Մենան, Դանիէլ Հայգ, Պոյնոն, Շարպ, Նիկոլսոն, Գրին և ուրիշներ, դեռ չը խօսած Հրէաստանի պատմութիւնը մշակողների մասին, քանի որ այդ պատմութիւնը մեր գրքի նպատակից դուրս է։ Շնորհիւ վերոյիշեալ գիտնականների՝ Արևելեան ազգերի հին պատմութիւնը շատ մասերում այժմ այլ բան է ներկայացնում, քան առաջ էր։ Դեռ աւելին կարելի է ասել՝ այդ պատմութիւնը գրեթէ նոր է ստեղծւած։

Աւելորդ է ասելն անգամ, որ վերը յիշւած հեղինակների երկար շարքից հազիւհազ մէկը կամ միւսը հայ ընթերցող հասարակութեանը, այն էլ նորա մի փոքրիկ մասին լոկ անունով յայտնի են։ Իսկ նոցա գրած աշխատութիւնները մեր գրականութեանը իսպառ անյայտ են։ Այլ խօսքերով՝ մեր գրականութիւնը դեռ ևս չի շօշափւած այն հարուստ նոր գրականութիւնից, որ ստեղծւած է Եւրոպայում՝ արևելեան ազգերի հին պատմութեան վերաբերեալ, ի բաց առած մի քանի տեղեկութիւններ հին Հայաստանի մասին։

Ներկայ աշխատութիւնով ես չեմ մտածել այդ ահագին պակասը լրացնել. բայց ես աշխատել եմ մի գրքի մէջ, որ դպրոցական գործածութեան համար է նշանակւած, երևան հանել ամենակարևոր պատմական փաստերը, որ յայտնւել են նոր հետազօտութիւնների շնորհիւ։ Զուտ պատմական մասի նկատմամբ՝ ես այստեղ ուղեցել եմ կատարել ոչ հետազօտողի և ոչ կոմպիլեատորի, այլ միայն ժողովրդականացնողի, տարրականացնողի պաշտօն, այդ մասում ուղեցոյց ունենալով Մասպէրոյի հռչակւած գրւածքը՝ «L'Histoire ancienne des peuples d'Orient.»

Բայց և այնպէս իմ աշխատասիրութիւնը մի թարգմանութիւն չէ այդ գրքի, այլ ես ազատ կերպով օգտւել եմ նորանից՝ ջնջելով կարևորից այն, ինչ կարևոր չեմ համարել գրքիս նպատակի համար, և դասաւորելով նիւթերը ինքնուրոյն կեր-

պով, հակառակ Մասպէրոյի, որը իւր գրքում ուղեցել է բոլոր հետազօտութիւնների զուտ գիտնական ամփոփումն անել. դորա համար էլ նա միանգամայն այլ կերպ է դասաւորել իւր հարուստ նիւթերը։

Նիւթերի դասաւորութիւնը իմ գործն է, որպէս նաև շատ տեղերում իմն է պատմելու եղանակը, բայց այդ բանում մասամբ օգտւել եմ Վիկտոր Դիւրիւյի գրքոյկից V. Duruy, Petite histoire ancienne, որից առնւած են իմ աշխատասիրութեան մի քանի գլուխները։

Տեղ տեղ ես ինձնից ծանօթութիւններ եմ դրել և կամ պատմւած նիւթերի մասին մեր հին գրականութեան վկայութիւնների հետ համեմատութիւններ եմ արել. այդ բոլորի օգտակարութիւնը բացատրութեան կարօտ չէ։

Այս աշխատասիրութիւնը նշանակւած է թէ դպրոցների և թէ ընդհանուր ընթերցանութեան համար։ Մեզ թւում է, թէ հայոց դպրոցներում արևելեան ազգերի պատմութիւնը աւելի ընդարձակ պէտք է անցնել, քան այդ կատարւում է այդ ազգերի հետ անմիջական շփումն չունեցած ազգերի դպրոցներում։ Այս գրքի սխեմով ես անցել եմ ընդհանուր պատմութիւնը Թիֆ. Ներսէս. դպրանոցում, 1883/84, 1884/85 և 1887/88 թւականներում։ Դասաւանդելու ժամանակ գրքից կրճատումներ անելը և լոկ ընթերցանութեան համար նշանակւած տեղեր որոշելը—թողնում ենք դասատուին։

Այս գիրքը տպւում է երկու մեծութեան տառերով. խոշոր տառերով տպւած են գլխաւորապէս նիւթի պ ա տ մ ա կ ա ն և աշխարհագրական մասերը, աւելի փոքր տառերով տպւած են գլխաւորապէս ա ւ ա ն դ ո ւ թ ի ւ ն ն ե ր ը և պատմական եղելութիւնների ու աշխարհագրականի մանրամասները։

Իմ ցանկութիւնն էր այս գիրքը զարդարել նկարներով՝ բովանդակութիւնը կազմող ազգերի պատմութիւնից։ Բայց այդ դիտաւորութիւնը ես ստիպւեցի առ այժմ թողնել գլխաւորապէս այն պատճառով, որ դա այժմեանից աւելի կը թանկացնէր

գրքի գինը. իսկ նա տպւած է միայն 800 օրինակ, զարդարւած լինելով եգիպտական, փիւնիկիական և ասորական հին գրութիւններով և քարտէզով, որոնք մեր տւած եւրոպական նմուշներով տեղական վարպետներ են ձուլել, փորագրել կամ վիմագրել։

Եթէ այս աշխատութիւնը կ'արժանանայ յաջորդ տպագրութիւնների, մենք կ'աշխատենք, բնագիրը բարելաւելով, նաև նորան զարդարել հարկաւոր նկարներով։

Ա. Ա.

ԵԳԻՊՏՈՍ

I

ԵԳԻՊՏՈՍԻ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Եգիպտոսի սահմանները։—Անապատը։—Նեղոսը եւ Դելտան։—Նեղոսի պարբերական հեղեղումը։—Սիենի քարաժայռերը։—Եգիպտոսը զանազան եղանակներում։—Եգիպտոսի բոյսերը։—Եգիպտոսի կենդանիները։—Եգիպտոսի թռչունները։—Եգիպտոսի ձկները։—Փառաբանութիւն Նեղոսի։

ԵԳԻՊՏՈՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ։—Եգիպտոսը մի հովիտ է մօտ 825 վերստ (880 կիլօմետր) երկարութեամբ. նա սեղմւած է հարաւում երկու լեռնաշղթաների մէջ, որոնց հեռաւորութիւնը գետից տեղ-տեղ միայն կէս վերստ է, բայց որոնք, քանի դէպ հիւսիս են գնում, աւելի հեռանում են իրարից և վերջապէս միանգամայն անյայտանում։

Հիւսիսում Եգիպտոսի սահմանն է Միջերկրական ծովը. հարաւում նորա սահմանները կատարելապէս որոշ չէին. միայն աւելի ուշ, երևի Եգիպտոսի և Եթովպայի մէջ եղած երկարատև պատերազմներից յետոյ, այդ սահմանը որոշւեց Սիենի քարաժայռերի մօտ։ Այդ տեղում ժայռերը կատարելապէս սեղմում են գետը և անկարելի են դարձնում նաւագնացութիւնը։

ԱՆԱՊԱՏԸ։—Այդ երկար ձորի աջ ու ձախ կողմերում տարածւում են չոր անապատներ, ծածկւած շարժուն աւազահատիկներով, որ քամին ծովի նման երերում է։ Այդ անապատային ծովի վերայ լինում են նաև ալեկոծութիւններ։ Յաճախ է պատահել, որ աւազը, քամու ոյժով վեր բարձրացրւած, ամբողջ քարւաններ է կուլ տւել։ Այդ աւազային ալիքները Եգիպտոսի համար մշտական սպառնալիք են։

ՆԵՂՈՍԸ ԵՒ ԴԵԼՏԱՆ։—«Եգիպտոսը Նեղոսի պարգևն է», ասում է Հերոդոտը [1]։ Եւ իրօք, Եգիպտոսը բուսաբեր պարարտ հող է՝ ձգւած անապատի մէջ. մի օազիս է, ձգւած գետի ափերին, որից նա ստանում է այն խոնաւութիւնը, որ անհրաժեշտ է բուսական կեանքի համար։

Նեղոսը առնում է իւր սկիզբը այն մեծ լճերից, որ կան կենտրոնական Աֆրիկայի բարձրաւանդակում և որ անյայտ էին հին ժամանակներին։ Լճերից դուրս գալով, նա անցնում է մեծատարած դաշտերի միջով, որոնք տեղ-տեղ կտրւած են անտառներով և ճահիճներով։ Յետոյ նա դառնում է դէպ արևելք, կարծես Կարմիր ծովը ընկնելու համար. բայց, հանդիպելով լեռների, որոնց միջով անցնել չի կարող, նա

1) Հերոդոտ—ամենահին յունական պատմաբանն է և կոչւում է «պատմագրութեան հայր»։ Ծնւեց Քրիստոսից 484 տարի առաջ Հալիկառնասում, երկար ճանապարհորդութիւններ արաւ Ասիայում և Աֆրիկայում (այն է Եգիպտոսում). 456 թւականից կրկին Յունաստանումն էր, 443-ին գնաց Իտալիա, ուր և մեռաւ։ Նորա աշխատասիրութիւնը բովանդակում է արևելեան ազգերի և Յունաստանի պատմութիւնը, մանաւանդ յոյն-պարսկական պատերազմներինը։

կրկին փոխում է իւր ընթացքը, ընդունելով աջ կողմից երկու օժանդակ գետեր, որոնք բերում են Աբիսինիայի ջրերը։ Յետոյ նա դիպչում է Սահարայի անապատին, ուր նա օձապտոյտներ է անում և ուր նորա հոսանքը չորս անգամ ընդհատւում է ջրվէժներով. յետոյ հանդարտ հոսում է դէպի Միջերկրականը, առանց այլ ևս օժանդակ գետեր ընդունելու։

Նեղոսը թափւում է ծովը երկու գլխաւոր թևերով, ծովային սահմանի հետ կազմելով մի եռանկիւնի, նման յունաց դելտա (△) տառին. այդ պատճառով Եգիպտոսի այդ ամենաստորին մասը կոչւում է Դելտա։

Անյիշելի ժամանակներում Դելտան գոյութիւն չունէր և նորա տեղը ծովն էր բռնում։ Դելտայի հողը կազմեց Նեղոսի բերած տիղմով, փոքր առ փոքր, հազարաւոր տարիներով։ Նաև այժմ Դելտան մեծանում է տարէցտարի, թէպէտև աննշմարելի կերպով։ Այժմ նա ունի 23.000 քառակուսի կիլոմետր։

ՆԵՂՈՍԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԸ։—Ամեն տարի, մօտ յունիսի 15, Նեղոսը սկսում է բարձրանալ և այդ շարունակւում է հարիւր օր, մինչև սեպտեմբերի վերջերքը։ Բարձրանալով, ջուրը դուրս է գալիս գետի ափերից Միջին և Ստորին Եգիպտոսում և տարածւում դաշտերի վերայ։ Այդ դաշտերի հողը այդպիսով ծծւում է ջրով այնքան, որ գիշերների ցօղերի հետ միասին՝ կերակրում է բոյսերը տարւայ մնացած մեծ մասը։

Սեպտեմբերի երկրորդ կիսում Նեղոսը սկսում է իւր ջրերը հաւաքել, մինչև որ, ձմեռւայ արևադարձին, նա կրկին ընդունում է իւր կանոնաւոր կերպարանքը, թողնելով ջրով ծածկւած հողերի վերայ թանձր տիղմ,

որը փափուկ է և թեթև։ Այդ տիղմը պարարտացնում է հողը, և Եգիպտոսի համար նա նոյն ծառայութիւնն է անում, ինչ որ անում են ուրիշ երկիրների աղքատ հողերի համար՝ աղբը, գուանօն և այլն։

Որպէս զի ջուրը կարողանայ այն բոլոր տարածութիւնը ոռոգել, որի վերայ ցանք են անում և որպէս զի հունձը առատ լինի, պէտք է որ Նեղոսը բարձրանայ 10—10½ արշին (7—7½ մետր)։ Պատահում է, որ Նեղոսը այդքան չի բարձրանում,—այն ժամանակ դաշտերի միայն մի մասն է ոռոգւում և միայն այդ մասն է ցանւում։ Պատահում է, ընդհակառակը, որ ջուրը այդ չափից աւելի է բարձրանում,—այն ժամանակ դաշտերը վնասւում են, որովհետև, այդ դէպքում, ջուրը աւելի երկար է մնում դաշտերի վերայ և գետինը դառնում է ճահճային. իսկ ճահճային հողերի վերայ ցանքերը մինչև անգամ վտանգաւոր են, որովհետև բոյսը փտում է. իսկ դորանից կարող է ժանտախտ առաջանալ։

Վերին Եգիպտոսում Նեղոսի ափերը այնքան բարձր են, որ գետը չի կարողանում այնտեղի դաշտերը ոռոգել. այդտեղ ոռոգումը կատարւում է արհեստական կերպով, այն է՝ ջրանցքներով։

Ասացինք, որ Նեղոսը ամեն տարի դաշտերի վերայ թանձր տիղմ է թողնում։ Հասկանալի է, որ դորանով Եգիպտոսի գետինը ամեն տարի, որքան և իցէ, պիտի բարձրանայ։ Ի հարկէ, այդ երևոյթը մնում է աչքի համար աննկատելի, բայց մի դարում նա կարող է զգալի լինել։

Հաշւել են, որ, տիղմի բարդւելուց, Եգիպտոսի գետինը

մի դարում բարձրանում է մօտ երեք վերշոկ (126 միլիմետր)։ Այդ հաշւով, հազար տարում գետինը պիտի բարձրանայ 1 արշին 11 վերշոկ, իսկ 5000 տարում՝ 8½ արշին։

ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ։—Նեղոսի ջրերի բարձրանալը մի երևոյթ է, որ մի ժամանակ անբացատրելի և հրաշք էր թւում. այժմ գիտենք, որ դորա պատճառը շատ հասարակ բան է և որ այդ երևոյթը միմիայն Նեղոսին չէ յատուկ։ Բոլոր գետերը, որոնց աղբիւրները այրեցեալ գօտումն են, նոյնպէս կանոնաւոր կերպով բարձրանում են, և այդ լինում է այն հասարակ պատճառով, որ այրեցեալ գօտում անձրևները կանոնաւոր կերպով, տարւայ որոշ եղանակներին են գալիս։

ՍԻԵՆԻ ՔԱՐԱԺԱՅՌԵՐԸ։—Եգիպտոսի սահմանները մտնելով, Նեղոսը անցնում է քարաժայռերի միջով, որոնց կատարները, ջրերի նւազման ժամանակ, դուրս են ցցւում գետի երեսին։ Այդ ժայռերը կոչւում են Սիենի քարաժայռեր, որոնք հնումը շատ հռչակւած էին։

ՆԵՂՈՍԻ ԳԵՏԱԲԵՐԱՆՆԵՐԸ։ — Սկսած Սիենից մինչ Մեմֆիսը Նեղոսը հոսում է մի՛ ընթացքով. Դելտայի ծայրերում գետը բաժանւում է մի քանի ճիւղերի և թափւում էր ծովը եօթը գետաբերաններով։ Այդ եօթից այժմ մնացել են միայն երկուքը՝ Ռօզէտի և Դամիէտի բերանները։ Մնացածները այժմ մի-մի ջրանցք են ներկայացնում։

ԵԳԻՊՏՈՍԻ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԸ։ Համեմատ Եգիպտոսի երեք եղանակներին, Դելտայի դաշտերը երեք զանազան պատկերներ են ներկայացնում։ Գարնան սկզբից, երբ հունձը կատարւած է, գետինը մոխրագոյն է և փոշոտ և այնքան փապարած (ճեղքճեղքւած), որ հազիւ մարդ սիրտ է անում վե-

բայով անցնել։ Այնտեղ արևադարձին Դելտան ներկայացնում է կարմիր ջրի մի ընդարձակ տարածութիւն, որի միջից բարձրանում են սև և փափուկ գետին։ Բայց ամենից սքանչելին այն եղանակն է, որ համապատասխանում է մեր ձմռան, երբ օդի զովութիւնը, բուսականութեան ուժը և պտուղների առատութիւնը գերազանցում են ամենը, ինչ գոված բան կայ աշխարհքում։ Այդ եղանակին Եգիպտոսը ծայրէ ի ծայր մարգագետին է, ծաղիկների դաշտ է և կամ հասկերի ովկիանոս։ Եւ այդ պտղաբերութիւնը նամանաւանդ աչքի է ընկնում, որ չուրջը կատարեալ անապատ է։

Այդ յաջողակ կլիմայում, ուր ջուրը երբէք չի սառչում, ուր ձիւնը մի անծանօթ բան է, ուր ծառերը թափում են իրանց տերևները միմիայն նորերով իսկոյն ծածկւելու համար՝ բուսականութիւնը երբէք չի դադարում. և իւր խղձերի մէջ լիացած հողագործի համար շարունակ պտղատու եղանակ կը լինէր, եթէ միայն Նեղոսի հեղեղումները չ՚ընդհատէին երկրի մշակութիւնը տարւայ մի քանի ամիսներում։ Եւ երբ մարդու աշխատանքը կայ՝ հողը, Եգիպտոսում, տարէնը երկու կամ երեք անգամ հունձ է տալիս։

ԵԳԻՊՏՈՍԻ ԲՈՅՍԵՐԸ։—Միմիայն հողը չէ, որ ստեղծել է Նեղոսը Եգիպտոսում. Նեղոսը իւր դրոշմն է դրել Եգիպտոսի ամբողջ բնութեան և պտուղների տեսակների վրայ։ Մի ձոր, որ ամբողջովին ծնուած է ջրերի ծոցից և որ միշտ հեղեղւում է նոցանով, կարող է սնուցանել միմիայն սահմանափակ թւով բոյսի տեսակներ։ Այնտեղ լաւ աճում են մոլաթզենին (թզենի՝ թթենու տերևներով, սիկամոր) և ակացիան. Նռնենին, հընդկական արմաւենին, ծիրանին և թզենին զարդարում էին այգիները։ Երկու տեսակ արմաւենիներ աճում են գրեթէ առանց մշակութեան. բայց մեր ծառերի գլխաւոր տեսակներից (տան-

ձենի, խնձորենի և այլն) և ոչ մէկը չի ընտելացած այդ երկրի այն մասում (միջին և վերին), որ հնումը ամենից լաւն էր ճանաչած։

Դորա հակառակը ջրային բոյսերը աճում են այնտեղ մեծ ճոխութեամբ և տալիս են երկրին նորա յատուկ կերպարանքը։ Սովորաբար նոքա չեն գտնւում գետի եզրներին, որտեղ ջրի խորութիւնը և արագ հոսանքը նոցա չէին թողլ տալ հանգիստ աճելու. բայց ջրանցքները, աւազանները, ջրակոյտ տեղերը, որոնք մնում են Նեղոսի հեղեղումներից յետոյ, նոցանով դրականապէս խեղդւած են։ Այդ ջրային բոյսերից մանաւանդ երկուսը շատ յայտնի են լուսաւորեալ երկիրներում՝ պապիրուսը (որ եղեգնի մի տեսակն է) և լոտոսենին, որոնք մեծ դեր են խաղում Եգիպտոսի պատմութեան, կրօնի և գրականութեան մէջ։ (Եգիպտացիք գրում էին, ի միջի այլոց, պապիրուսի տերևների վերայ)։ Պապիրուսը մանաւանդ սիրում էր Դելտայի ծովահոս ջրերը և նա դառաւ Դելտայի ներկայացուցիչ նշանը. լոտոսենին, ընդհակառակը, խորհրդաւոր նշանն էր վերին Եգիպտոսի կամ Թեբայիսի։ Լոտոսեններ կային՝ սպիտակ, կապոյտ և վարդագոյն։ Վերջինս՝ վարդագոյն նռնուփարն է, որ ճիշտ նկարագրած է Հերոդոտը. «նա տալիս է մի պտուղ, որ գտնւում է այլ ոտի վերայ, քան այն, որ տալիս է ծաղիկը. և այն ոտը դուրս է գալիս ուղիղ արմատից. ձևով նա շատ նման է մեղրաճանճերի մոմի ծաղին»։ Վերևի մասում նա ունի քսան-երեսուն փոքրիկ փոսեր, որոնցից իւրաքանչիւրը ունի մի սերմ, ձիթենու պտղի սերմի մեծութեամբ, թարմ կամ չորացրած ուտելու համար համեղ։ Այդ այն է, ինչ նախնիք անւանում էին Եգիպտոսի բակլայ։ Պապիրուսի մասին Հերոդոտը ասում է. «կտրում են նաև պապիրուսի ամեն տարուայ նոր ընձիւղները։ Ճահիճներից դուրս բերելով, նոցա ծայրերը կտրում են և դէն գցում, իսկ մնացած մասը, որ մի արմուկի մեծութիւն ունի, ուտելու են բանեցնում և փողոցում ծախւում է. Նրբաճաշակ մարդիկ, սակայն, նորան միմիայն խաշած են ուտում»։

Բայց ժողովրդի ամենասովորական ուտելիքն էր հացը ցորենի և այլ հացահատիկների՝ ցորեան, գարի, սորգօ (կորեկի նման), օլիրա և զէա, որոնց Եգիպտոսի հողը առատութեամբ արտադրում է: Վիգը, եգիպտոլոռը, բակլան, սիսեռը, ոսպը և գենեգերչէգի բոյսը խրանք-խրանք բուսնում էին դաշտերում. խաղողի որթը աճում էր Դելտայի ու Միջին Եգիպտոսի որոշ մասերում. ձիթենին սակաւագիւտ էր և բուսնում էր միմիայն որոշ տեղերում:

ԵԳԻՊՏՈՍԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ:—Դեռ ևս ամենահին ժամանակներում Եգիպտոսը ունեցած է երկար պօզերով եզների մի քանի տեսակները, նոյնպէս և այծերի ու շների մի քանի տեսակները: Էշը, որ աֆրիկական ծագումից է, Եգիպտոսի յաջողակ կլիմայի տակ, պահպանեց ձևերի գեղեցկութիւնը և ոյժը շատ աւելի, քան այդ տեսնւում է ուրիշ երկիրներում: Ձին, ուղտը, ոչխարը ներմուծւած են երևում Թագաւորութիւն հաստատելուց շատ յետոյ (որովհետև արձանների վերայ չենք գտնում նոցա նկարները):

Գալով ոչ-տնային կենդանիներին, Եգիպտոսի առաջին գաղթականները գտան նապաստակներ, օձամարտ, վիթերի (գազել) երամակներ, լամոյրներ երկար քնարանման պօզերով, որոնց նոքա կխտալ չափ ընտելացնելու յաջողեցան. յետոյ, աւելի ահաւոր անասուններ, որպէս վայրի կատու, գայլ, շնագայլ (չախկալ), բորեան չերտաւոր և խայտաբղէտ, ընձառիւծ, հնդիկ կատու և վերջապէս՝ առիւծ, որոնց հալածեցին և մղեցին դէպի անապատը: Երկու երկակենցաղ հրէշներ՝ կոկորդիլոսը և գետաձին (հիպպոպոտամ) ապրում էին Նեղոսի ափերի վերայ և վտանգաւոր էին դարձնում մարդկանց և անասունների համար գետին մօտենալը: Գետաձիերը, որոնք բազմաթիւ էին առաջին Թագաւորների ժամանակ, շուտով պակասեցին թւով

հալածւելու պատճառով և քաշւեցին դէպի Ստորին Եգիպտոսի ճահիճները. նոցանից մի քանի հատ դեռ ևս կային այնտեղ Քրիստոսից տասն և երեք դար յետոյ: Կոկորդիլոսը, որ պաշտւում էր մի քանի տեղերում, և ատւած էր ուրիշ տեղերում, կայ մնացած մինչ մեր օրերը:

ԵԳԻՊՏՈՍԻ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ:—Եգիպտոսը ունի մեծ քանակութեամբ բազմատեսակ թռչուններ՝ արծիւ, ճուռակ, բազէ, անգղ, կաչաղակ, աղաւնի, տատրակ, ծիծեռնակ, կաքաւ, ճնճղուկ: Եգիպտահաւերը (իբիս) սպիտակ և սև, պելիկանները, ջրակաւը (որ կերակրւում է ձկներով), սագը, բադը—լըքցնում են ճահիճները և ծածկում գետի ջրերը իրանց բազմեբանդութեամբ:

ԵԳԻՊՏՈՍԻ ՁԿՆԵՐԸ:—Նեղոսի գետաբերանները կատարելապէս վխտում են ձկներով, որոնք, մեծ մասամբ, համեղ են:

Առանձին յիշատակութեան արժանի են փատրականները, որոնք շատ ծիծաղաշարժ են. Փատրական երկար ձուկն է, որ կարողանում է, ուղեցածին պէս, ուռչել. երբ նա չափից դուրս ուռչում է, շուռ է գալիս փորն ի վեր, բարձրանում է և առեգնալ է լինում փորը ջրի երեսին, ծածկւած փշերով, որոնք նորան ոզնու կերպարանք են տալիս: Հեղեղներից յետոյ, ջրերը, յետ քաշւելով, թողնում են նորան տիղմային դաշտերի վերայ, և նա դառնում է թռչունների և մարդկանց ուրս և երեխաների համար խաղալիք է ծառայում:

Գետաբերանները յաճախում են ծովի ձկները, որպէս նաև գետի ձկները համարձակ մտնում են ծովը՝ ձուեր դնելու համար:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՆԵՂՈՍԻ:—Եւ այսպէս Եգիպտոսում ամեն բան յարմարւած է Նեղոսին՝ հողը, պտուղները, կենդանիների տեսակները, ձկները: Եգիպտացիք

այժ շատ լաւ էին զգում և աշխատում էին երախտապարտ լինել նորան՝—իրանց գետը նոքա Աստուած էին դարձրել Հապի անունով, որի բարերարութիւնը տօնելով նոքա չէին դադրում։

«Ողջոյն, ո՛վ Նեղոս,—ո՛հ դու, որ այս երկրում երևացիր—և որ գալիս ես խաղաղութեամբ—Եգիպտոսին կեանք տալու համար։—Աստուած դու ծածկւած, որ խաւարը տանում ես դէպի լոյսը,—ոռոգողը այգիների, որոնց արեգակն է ստեղծել—բոլոր անասուններին կեանք տալու համար...

«Տէր ձկների, երբ դու բարձրանում ես հեղեղած հողերի վերայ—այլ ևս ոչ մի թռչուն ոտ չէ կոխում օգտակար բարիք-ների վերայ.—Ստեղծողը հացահատիկների, արտադրողը գարու,—Նա յաւիտենականացնում է տաճարների տևողութիւնը... Երբ Նա (գետը) Նւաղում է, երկնքում աստուածները—վայր են ընկնում երեսի վերայ, մարդիկ կոտորւում են...—Երբ Նա բարձրանում է, ամենքը ցնծութեան մէջ են,—ամեն որովայն հրճւում է—ամեն արարած իւր սնունդն է ստանում—ամեն ատամ որոճում է։

«Նա բերում է ամեն անուշ պաշարներ.—Նա ստեղծում է բոլոր լաւ բաները,—եթէ կան զոհեր՝ այդ Նորա շնորհիւքն է»... և այլն։

II

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԸ

Եգիպտացու տեսքը։—Եգիպտացւոց ծագումը։—Ազգութեան կազմութիւնը։—Դասակարգեր։—Քահանայական դասակարգ։—Զինուորական դասակարգ։—Այլ դասակարգեր։—Երկրագործներ։—Թագաւորը։

ԵԳԻՊՏԱՑՈՒ ՏԵՍՔԸ։ — Եթէ մենք մտնելու լինենք մի թանգարան և դիտելու լինենք եգիպտական արձանները, սոցանով մենք կարող ենք իմանալ, թէ ինչ տեսք ունէին եգիպտացիք ամենահին ժամանակներում։ Եգիպտացին, առհասարակ, բարձրահասակ էր և լղար. Նորա ուսերը լիքն էին և լայն, կուրծքի մկանունքները դուրս ցցւած, բազուկները Նեարդային, ձեռները Նուրբ և երկար, ազդրը քիչ զարգացած, սրունը չոր, բումբը (սրունի մսերը) ամուր, ոտները երկար, բարակ, ծայրերը տափակ։ Այս Նշանները բոլորն էլ ման եկող ազգերի Նշաններ են։ Գլուխը, որ յաճախ շատ է մեծ մարմնի համեմատ, սովորապէս մեղմութիւն և բնական տխրութիւն է ցոյց տալիս։ Ճակատը քառանկիւնի է, փոքր ինչ ցածր, քիթը կոլոլ և կարճ։ Աչքերը մեծ են և լաւ բացւած, թշերը կոլոլ, շրթունքները հաստ, բայց ոչ շուռ տւած, որպէս սևամորթների (Նեգրների) մօտ։ Բերանը փոքր ինչ երկար է և վհատւած կամ տխուր մարդու ժպիտով։

Նոյն իսկ այժմ, եթէ եգիպտացւոց բարձր դասա-

կարգերը այլափոխուած են օտարականների հետ խառնուելուց, հասարակ գիւղացիք գրեթէ ամէն տեղ պահպանած են նմանութիւն իրանց նախահայրերի հետ։ Այդ նմանութիւնը երբեմն զարմանալու չափ կատարեալ է [1])։

ԵԳԻՊՏԱՑԻՈՑ ԾԱԳՈՒՄԸ։ — Այս բոլորից եզրակացնում ենք, որ եգիպտացիք պատկանում են մարդկային ազգի սպիտակ ցեղին [2])։

Բայց թէ արդեօք սպիտակ (կովկասեան) ցեղի որ ճիւղին են պատկանում նոքա՝ սեմական, թէ արիական, այդ հարցի պատասխանը տալիս է հին եգիպտական լեզուի քննութիւնը, որով գրուած են թանգարաններում գտնուող և հնուց մնացած ձեռագիրները և արձանները։

---

[1]) Բուլաքի թանգարանի ամենագեղեցիկ փայտաշէն արձաններից մէկը այն աստիճանի մեծ նմանութիւն է ներկայացնում Սաքքարայի ներկայ ցեղապետի դէմքի գծագրութիւնների հետ, որ սորա անունով այդ արձանին կահիրեցիք ուղիղ անուանում են Շէյխ-էլ-Բելեդ։

[2]) Հին Եգիպտացիք շուտով մոռացան իրանց ասիական ծագումը։ Գրեթէ բոլոր հին պատմաբանները ասում են, թէ Եգիպտացիք պատկանում են աֆրիկական մի ցեղի, սկզբում, իբր թէ, հաստատուած Եթովպայում և յետոյ միայն, հետևելով գետի ընթացքին, իջած դէպի ծովի կողմերը։ Եթովպացիք իրանք ասում էին, թէ Եգիպտացիք եթովպական գաղթականներ են։ Այժմ, սակայն, անկասկած կերպով գիտենք, որ Եթովպացիք եկան Եթովպա շատ աւելի ուշ, քան Եգիպտացիք արդէն հաստատուած էին Եգիպտոսում։ Եգիպտացի ճանապարհորդները մինչ մեր դարու սկիզբը սխալմամբ կարծում էին, թէ հին Եգիպտացիք պէտք է նման լինէին այժմեայ կոպտերին, մինչդեռ սոքա բոլորովին կորցրած են հին եգիպտացու գծագրութիւնները։

Այդ հին եգիպտական լեզուով թէպէտ այժմ ոչ մի ազգ չի խօսում, և ոչ էլ եգիպտական հին տառերը մի որ և իցէ ազգի մօտ գործ ածւում,—այնու ամենայնիւ այժմեայ գիտնականները կարողացել են այդ գրութիւնները կարդալ և նորան ուրիշ լեզուների հետ համեմատել։

Այդպէս վարուելով գտել են, որ հին եգիպտական լեզուն նման չէ արիական ազգերի լեզուներին, (որպիսիք են հնդկաց, պարսից, հայոց, ռուսաց, գերմանացւոց, յունաց, ֆրանսիացւոց և այլ լեզուները), այլ նա նման է սեմական ազգերի լեզուներին, օրինակ՝ հրէից լեզուին։

Ուրեմն եգիպտացիք պատկանում են մարդկային ազգի սպիտակ (կովկասեան) ցեղին և սպիտակ ցեղի սեմական ճիւղին։ Դորանով ասուած է արդէն, որ եգիպտացիք եկան Եգիպտոս Ասիայից և ոչ թէ աֆրիկական ծագումից են։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԵԼԸ։ — Երբ Ասիայից Եգիպտոս եկան, եգիպտացիք չը գտան երկիրը այն դրութեան մէջ, ինչ նա յետոյ դառաւ։ Նոքա երևի այդ երկրում գտան սև ցեղի բնակիչներ, որոնց արտաքսեցին նոքա։ Երկիրը դեռ անմշակ էր։ Նեղոս գետը, որ առանց թումբերի էր, միշտ փոփոխում էր իւր փոսը։ Դելտան կիսով չափ գետի ջրի տակ էր, կիսով չափ էլ Միջերկրականի ալիքներով էր ծածկուած և ներկայացնում էր լայնատարած ճահիճ մի քանի աւազոտ կղզիներով և ծածկուած պապիրուսով, լոտոսենիով և ահագին եղեգներով։ Ժամանակով նորեկները սովորեցին թումբեր շինել՝ գետին մի որոշ ուղղութիւն տալու համար և ջրանցքներ շինել՝ ջուրը հեռաւոր դաշտերը հասցնելու համար։ Առնւազը երեք-

չորս հազար տարի անցաւ, մինչև որ Եգիպտոսը իւր նախկին տեսքը փոխեց և դարձաւ մեզ ծանօթ պտղաբեր Եգիպտոսը:

Այդ սկզբնական երեք-չորս հազար տարիների պատմութիւնը անյայտ է մեզ, որովհետև ոչ մի արձան և ոչ մի գրութիւն չի եղած և կամ մեզ չի հասած: Այսքանը միայն գիտենք, որ այդ ժամանակներում եգիպտացիք, թէպէտ ամենքը մի ծագում ունէին, բայց մի ազգ չէին կազմում և մի՛ գլխաւորի չէին հպատակւում, այլ բաժանւած էին բազմաթիւ ցեղերի, որոնցից իւրաքանչիւրը իւր պետն ունէր և իւր կրօնը. ժամանակով միայն այդ ցեղերը միմեանց հետ խառնւեցին և երկու գլխաւոր իշխանութիւններ կազմեցին, մէկը՝ Դելտայում, միւսը՝ Դելտայի անկիւնից մինչ առաջին քարաժայռերը: Այդ երկու իշխանութիւնները յետոյ միացան մի Թագաւորի ներքոյ և կազմեցին եգիպտական Թագաւորութիւն. իսկ նախկին փոքրիկ իշխանութիւնները դարձան Թագաւորութեան նահանգներ, որոնց յոյները անւանեցին նոմ՚եր:

ԴԱՍԱԿԱՐԳԵՐ:—Ազգը բաժանւած էր դասակարգերի: Ամենաբարձր դասակարգերը կազմում էին՝ հոգևորական կամ քահանայական դասակարգը և զինւորական դասակարգը, որոնք վայելում էին առանձին իրաւունքներ և կատարում՝ որոշ պարտականութիւններ: Այդ դասակարգային իրաւունքները ժառանգական էին և անմատչելի էին միւս դասակարգերի համար: Այդ պատճառով այդ դասակարգերը անւանում ենք կ ա ս տ ա ն ե ր, այսինքն փակ դասակարգեր:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԸ:—Եգիպտոսում քահանաները կազմում էին ամենաուժեղ դասակարգը: Երկար

ժամանակ նոցա ձեռքումն էր երկրի կառավարութիւնը: Այդ իրաւունքը նոցա ձեռքից խլեց զինւորական դասակարգը, որից դուրս եկան Թագաւորներ. բայց քահանաները այդ Թագաւորների կենդանութեան համար այնքան կրօնական պատւէրներ տւին, որ Թագաւորները քահանայական դասակարգից մեծ կախումն ունէին:

Քահանաները միմիայն կրօնական պաշտօններ չէին վարում, այլ նաև պետական բազմաթիւ բարձր պաշտօններ: Նոցա անկախութիւնը ապահովւած էր նոցա հարստութիւնով և այդ հարստութիւնը նորանից էր, որ այդ դասակարգին էին պատկանում երկրի լաւագոյն հողերը, որոնց համար նոքա հարկ չէին վճարում: Այդ հողերը իրանք քահանաները չէին մշակում, այլ տալիս էին կապալով և ստանում արդիւնքի մի մասը: Այդ արդիւնքը գնում էր տաճարների շինութեան, ժամասացութեան ծախքերին, տօների ծախքերին և քահանաների ապրուստին: Քահանաներից իւրաքանչիւրը ամեն օր ստանում էր մի-մի բաժին օրհնեալ միս, կամ եզան կամ սագի: Նրանց տալիս էին նաև գինի, բայց ձուկ ուտելը նրանց արգելւած էր:

Նոքա պարտաւոր էին իրանց մարմինը և հագուստը մաքուր պահել: «Ամեն երեք օրը մի անգամ, ասում է Հերոդոտը, նոքա ածելում էին իրանց մարմինը: Նոցա հագուստը մի քաթանի վերարկու է և Բիբլոսի կօշիկներ. այլ հագուստ նրանց արգելւած էր: Նոքա լւացւում են ցերեկը երկու անգամ սառը ջրի մէջ և նոյնքան անգամ գիշերը:

ԶԻՆՒՈՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԸ:—Զինւորական դասակարգը

1004 | 3240
4568
10-2019
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
имени А. Мясникяна

երկրորդն էր տէրութեան մէջ: Նա անհագին հողեր ունէր և կարող էր տալ մինչ 400.000 զինուած մարդիկ: Սովորապէս որդին յաջորդում էր հօրը, այնպէս որ ազգաբնակութեան աճելովը՝ աճում էր և զօրքի թիւը: Ամէն զինուոր ունէր հարկից ազատ մի կտոր հող: Զինուորներից 2000-ը մի-մի տարի ծառայում էին Թագաւորին, որպէս թիկնապահներ, և այն ժամանակ նոքա ստանում էին, բացի իրանց հողերի արդիւնքից, նաև օրեկան իւրաքանչիւրը 5 ֆունտ (2 կիլոգրամ) հաց, 2 ֆունտ եզան միս և 4 չափս գինի:

Եգիպտական թագաւորութեան վերջին թագաւորներից մէկը (Պսամետիք) իրանից հեռացրեց եգիպտական զինուորներին և իրան շրջապատեց յոյն վարձկան զինուորներով: Զինուորական դասակարգը դորանով իրան վիրաւորուած զգաց և նոցանից 240.000 հոգի գաղթեցին Եթովպիա: Երկրի համար դա մի դժբաղդութիւն էր, որովհետև երկրի պատերազմական կազմակերպութիւնը դորանով խախտուեց. և այդ եղաւ մի այնպիսի ժամանակ, երբ վտանգ էր սպասում Ասորեստանից, իսկ յետոյ՝ Պարսկաստանից:

ԵՐԿՐԱԳՈՐԾՆԵՐ:—Եգիպտոսի ամբողջ հողը պատկանում էր Թագաւորին, քահանաներին և զինուորներին, այնպէս որ հողագործները միմիայն կապալառուներ էին, մօտաւորապէս այժմեայ Եգիպտոսի ֆելլահների նման, որոնք նմանապէս հողի սեպհականութիւն չունեն, այլ մշակում են փաշաների հողը, որոնք այդ երկրում միակ հողատէրերն են:

ԹԱԳԱՒՈՐԸ:—«Եգիպտացիք, ասում է պատմաբան

Դիոդոր Սիկիլիացին, յարգում են և պաշտում իրանց Թագաւորին աստուածներին հաւասար: Արձանների վերայ գտնուած նկարները ներկայացնում են Թագաւորին յարաբերութիւնների մէջ աստուածների հետ, որոնց նա շնորհակալութիւններ է անում, իսկ փոխարէնը՝ նոցանից ստանում է նոցա պարգևները, այսինքն՝ ոյժ, կարողութիւն և փառք:

III

ԵԳԻՊՏԱՑԻՈՑ ԿՐՕՆԸ

Միակ Աստուծու հաւատը Եգիպտոսում։—Նու Աստուծու երեք անձ-
նաւորութիւնը։—Աստուածութիւններ։—Գլխաւոր Աստուածութիւն։ Ե-
րը։—Նոցա պաշտաման տեղերը։—Աստուծու կռիւը չար ոգիների դէմ։—
Նոյն կռիւը բնութեան մէջ. Արեգակ-Աստուած Ռա։—Ռայի զանազան
կերպարանքները։--Օզիրիս։—Աստուածային Թագաւորներ։--Հոգու անմա-
հութիւնը։—Մեռեալների գիրքը։—Թաղման հանդէսը. զմռսումն։—
Շարունակութիւն. մեռեալների դատաստանը։—Կենդանապաշտութիւն։—
Ապիս եզը։—Արձաններ կենդանիների գլխով։

ՄԻԱԿ ԱՍՏՈՒԾՈՒ ՀԱՒԱՏԸ։—Եգիպտացւոց կրօնական
գրքերից երևում է, որ Եգիպտացիք գաղափար ունէին
Միաստուածութեան մասին, այսինքն Նորա մասին, որը
«մի է, անեղ, կատարեալ, ամենագէտ»։ Նորան կոչում էին
Նու։
ՆՈՒ ԱՍՏՈՒԾՈՒ ԵՐԵՔ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ։—Էու-
թեամբ մի լինելով, Նուն ունէր երեք անձնաւորութիւն,
Նա էր միաժամանակ և հայր, և մայր, և որդի Աստուծու.
Այդ Աստուածը, որ թէ եռանձնեայ էր և թէ մի էր, ու-
նէր Աստուծու բոլոր յատկութիւնները՝ «համատարածու-
թիւն, յաւիտենականութիւն, անկախութիւն, ամենակա-
րողութիւն և անսահման բարութիւն»։

ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ։—Այդ Աստուածը ինքը ստեղ-
ծում է իւր անդամները, որոնք երկրորդական աստուածու-
թիւններ են։ Նոցանից իւրաքանչիւրը ունէ իւր երրոր-
դութիւնը և այդ երկրորդական երրորդութիւնից իւրաքան-
չիւրը կրկին տեղիք էր տալիս ուրիշ երրորդութեան և այսպէս
շարունակ։ Նոցանից իւրաքանչիւրը ունէր իւր անունը։ Հա-
սարակ ժողովուրդը նոցանից ամեն մէկին ընդունում էր
առանձին աստուծու տեղ, մինչդեռ լուսաւորեալ հաւա-
տացողի աչքում՝ նոքա բոլորը միևնոյն էութեան զանա-
զան անունները և կերպարանքներն էին։
ԳԼԽԱՒՈՐ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ։—Նունը, իբրև ստեղ-
ծող՝ կոչւում էր Ամոն, իբրև ամենագէտ ոգի՝ կոչ-
ւում էր Իմհոտէպ, իբրև արւեստով և ճշմարտու-
թեամբ գործող՝ կոչւում էր Փտահ, իբրև բարի և բա-
րեգործ Աստուած՝ կոչւում էր Օզիրիս։
ՆՈՑԱ ՊԱՇՏԱՄԱՆ ՏԵՂԵՐԸ։—Այդ գլխաւոր և այլ
աստուածութիւններին ամեն տեղ հաւասար կերպով չէին
պաշտում Եգիպտոսում։ Իւրաքանչիւր նահանգ (նոմ)
ունէր իւր ազգային Աստուածը։ Ամոնի գլխաւոր պաշտօ-
նատեղին էր Թեբէ քաղաքը, Օզիրիսինը՝ Թենի և Աբիդոս
քաղաքները, Փտահինը՝ Մենֆիս քաղաքը և այլն։
ԱՍՏՈՒԾՈՒ ԿՌԻՒԸ ՉԱՐ ՈԳԻՆԵՐԻ ԴԷՄ։—Աստուած,
ստեղծելով աշխարհքը, իւր դէմ գրգռեց չար ոգիներին,
որոնք միշտ ջանում են նորա ստեղծածը փչացնել։ Քանի
աշխարհքը կայ, այդ կռիւը շարունակւելու է, չար ոգի-
ները յաղթւելու են, բայց չեն ջնջւելու։
ՆՈՅՆ ԿՌԻՒԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ. ԱՐԵԳԱԿ-ԱՍՏՈՒԱԾ
ՌԱ։—Նոյն այդ կռիւը Եգիպտացիք տեսնում էին նաև

բնութեան մէջ։ Նեղոսին նմանեցրին Աստուծուն, իսկ անապատը՝ չար սկզբունքին. այնպէս որ Նեղոսի կռիւը անապատի դէմ՝ դառաւ նոցա համար Աստուծու կռիւ չար ոգիների դէմ։ Նոյն նմանութիւնը նոքա տեսնում էին նաև արեգակի մէջ, որը կռւում էր խաւարի դէմ։ Այդ նմանութիւնը այնքան կատարեալ էր թւում նրանց, որ արեգակը սկսեցին ընդունել նոյն իսկ Աստուծու տեղ։ Արեգակ-Աստուածը կոչւում էր Ռա։

ՌԱՅԻ ԶԱՆԱԶԱՆ ԿԵՐՊԱՐԱՆՔՆԵՐԸ. ՕԶԻՐԻՍ։—Ընդունելով Ռային Աստուծու տեղ, նորա ընթացքի փոփոխութիւնները ընդունեցին Ռայի զանազան կերպարանքների տեղ։ Ծագելուց առաջ նա կոչւում էր մի՛ անունով, կէսօրին՝ ուրիշ անունով։ Արեգակը գիշեր ժամանակ՝ կոչւում էր Օզիրիս։

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ։—Մարդս, դուրս գալով ստեղծողի ձեռքերից, դեռ ևս չը գիտէր կեանքի համար անհրաժեշտը. նա չունէր խօսելու և կառավարւելու կարողութիւն։ Այն ժամանակ Աստուած իջաւ երկրի վերայ զանազան կերպարանքներով, որոնք յաջորդեցին մէկը միւսին և այսպիսով կազմեցին աստուածային սերունդներ։ Եգիպտոսի գլխաւոր քաղաքներից ամէն մէկը ունեցաւ իր սեպհական աստուածային թագաւորները։

Այդ աստուածային թագաւորներից ամենից յայտնին էր եգիպտական ժողովրդին՝ Օզիրիսը, որը կոչւում էր արեգակնային թագաւոր և որը մշտական կռւի մէջ էր Սետ՚ի հետ, այսինքն չարի հետ։

Աստուածութիւնները, երկիր իջնելով, սկզբում բնակւեցին մարդկանց մէջ, մինչև որ սոքա կը սովորէին լեզու,

արհեստներ և կառավարւել։ Երբ նոքա այդ բաները սովորեցին, աստուածները դուրս եկան մարդու մարմնից և բնակւեցին անասունների մէջ, որտեղից նոքա հսկում էին մարդկանց վերայ։ Եգիպտացիք իմացան այդ բանը և սկսեցին պաշտել անասուններին։

ՀՈԳՈՒ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆԸ։—Մարդս մեռնելով, նորա հոգին չի մեռնում, այլ ներկայանում է Օզիրիսի մօտ, որտեղ քառասուն երկու դատաւորներ կշռում են նորա բարի ու չար գործքերը։ Եթէ նա մեղապարտ է ճանաչւում, նա ինքն իրան չարչարում է և որոնում է մարդու մարմին, որ բնակէ. երբ մարմինը գտնում է, սորան տանջում է, չարչարում հիւանդութիւններով, դրդում դէպի չար գործքեր և խելացնորութիւն։ Հարիւրաւոր տարիներ այդպէս չարչարւելուց յետ՝ նա կրկին անգամ մեռնում է ոչնչանում։

Այդպէս չի լինում արդար հոգու հետ։ Օզիրիսի դատաստանի առջև արդար ճանաչւելուց յետ, նա, երջանկութիւնը վայելելուց առաջ, դեռ պիտի շատ կռիւներ անէ, շատ փորձութիւններից ազատւի։ Նա թռչում է տարածութեան մէջ և ազատ է ընդունել ինչ կերպարանք որ կամենայ, թէ չորքոտանու և թէ թռչունի։ Չար ոգին աշխատում է նորան յաղթել, բայց իզուր. նա ազատւում է, սլանում է դէպի երկնային տարածութիւնը։ Այստեղ Ալույի Դաշտերի վերայ կատարում է կրօնական մշակութեան ծէսը, որից յետոյ նա մտնում է աստուածների շարքը և տեսնում Աստուծուն, որի հետ նա բոլորովին խառնւում է։

ՄԵՌԵԱԼՆԵՐԻ ԳԻՐՔԸ։—Թէ ինչ աղօթքներ պիտի

անէ մեռեալը և ինչպէս պաշտպանէ իւր դատը Օզիրիսի և քառասուն ու երկու դատաւորների առջև,—այդ բոլորը բովանդակուած էր մի գրքի մէջ, որը կոչւում էր Մեռեալների Գիրք։ Մեռեալին չէին թաղում, այլ զմռսում էին և պահում գերեզմանի մէջ. զմռսուած մարմինը կոչւում էր մոմակ (մումիա), և իւրաքանչիւր մոմակ բռնած ունէր մի օրինակ Մեռեալների Գրքից։

Այդ գրքից օրինակներ կան գտնուած եգիպտական գերեզմաններում, և ինքը գիրքը թարգմանուած է եւրոպական մի քանի լեզուներով։ Ահա մի կտոր (գլուխ 125-րդ) Մեռեալների Գրքից։

«Փառք ձեզ, Տեարք ճշմարտութեան և արդարութեան։ Փառք քեզ, մեծդ Աստուած, Տէր ճշմարտութեան և արդարութեան։ Ես եկած եմ քեզ մօտ, ո՛վ իմ Տէր. ես ներկայանում եմ քեզ քո կատարելութիւնների վրայ խոկալու համար։ Որովհետև յայտնի է, որ ես գիտեմ քո անունը և այն քառասուն և երկու աստուածութիւնների անունները, որոնք քեզ հետ են ճշմարտութեան և արդարութեան դահլիճում և որոնք ապրում են մեղաւորների բեկորներով և լիանում նոցա արիւնով այն օրը, երբ կշռւում են խօսքերը Օզիրիսի առջև, այն որ ուղիղն է... Ես ձեզ մօտ բերել եմ ճշմարտութիւնը, ձեզ համար ես սուտը խորտակել եմ։ Մարդկանց դէմ ոչ մի խարդաւանք չեմ գործել։ Ես չեմ չարչարել այրի կնոջ։ Դատարանում ես չեմ ստել։ Ես չեմ ճանաչում սուտը։ Ես չեմ արել ինչ արգելուած է։ Մշակների մեծին ես աւելի չեմ բանեցրել օրեկան, քան ինչ որ նա պարտական էր անելու... Ես անհոգ չեմ եղել։ Ես պարապ չեմ եղել։ Ես թուլութիւն չեմ արել։ Իւր տիրոջից ստրուկին ես չեմ խլել։ Ես չեմ լացացրել։ Ես չեմ սպառնացել»... և այլն և այլն։

ԹԱՂՄԱՆ ՀԱՆԴԷՍԸ. ԶՄՌՍՈՒՄԸ։—Իրանց կրօնական

հայեացքների համեմատ, Եգիպտացիք կատարում էին նաև թաղման հանդէսը։ Մեռեալին նախ զմռսում էին։

Հերոդոտի ասելով, երբ մի պատուաւոր մարդ էր մեռնում, տան բոլոր կանայք և մարդիկ ծածկում են իրանց երեսը ցեխով և, կուրծքները հարւածելով, անցնում են քաղաքը, ուղեկցած իրանց ազգականներով։ Այդ ծէսից յետոյ մարմինը տանում են զմռսողների մօտ։ Զմռսումը հարուստի համար կատարւում էր այսպէս. Նախ հանում էին ուղեղը քթածակերից, գլխաւորապէս կռացրած երկաթէ չողիկով։ Յետոյ մի սուր քարով ճղում էին փորը և դուրս բերում փորոտիքը, մէջը սրբում և լւանում արմաւենու գինով և անուշ իւղերով։ Յետոյ փորը լցնում էին փչրած մաքուր զմուռսով [1], դարիճենիքով (դարչին) և այլ հոտաւէտ բաներով, ի բաց առած խունկը։ Այդ վերջացրած՝ նոքա աղի մէջ էին դնում մարմինը 70 օր շարունակ, որից յետ մարմինը լւանում էին և փաթաթում բամբակեայ քաթանի կտորներով, նախօրէն այդ քաթանը նշայի (օսլայ, կրախմալ) մէջ դնելով։

Այդպէս զմռսած մարմինը ծնողները վերցնում են և դնում փայտեայ ամանի մէջ, որը դնում են յատուկ դորա համար նշանակուած մի դահլիճի մէջ։

ՄԵՌԵԱԼՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ։—Զմռսելուց յետ լինում էր հրապարակական դատաստանը։

Դիոդոր Սիկիլիացին, որը, որպէս Հերոդոտը, այցելեց Եգիպտոսը, այսպէս է պատմում այդ ծէսի մասին։ «Երբ որ մարմինը պատրաստ է թաղելու համար, ազգականները իմաց են տալիս դատաւորներին, ննջեցեալի մօտ ազգականներին և բարեկամներին, որոնց յայտնում է թաղման օրը. Իսկոյն դա-

---

[1]) Զմուռը մի տեսակ խէժ է անուշահոտ և լեղակի համով և բերում էին Երջանիկ Արաբիայից։

տաւորները, թւով քառասնից աւելի, գալիս էին նստում մի կիսաբոլոր սրահի մէջ, մի լճի մօտ։ Նախ քան մարմինը պարունակող արկղը կը դնէին նաւակի մէջ, իւրաքանչիւրը իրաւունք ունի նորա վերայ մեղադրանքներ կարդալ։ Եթէ մեղադրողներից մէկը կարենայ ապացուցել, թէ ննջեցեալը վատ կեանքի տէր է եղած, դատաւորները վճիռ են կայացնում, որով ննջեցեալին մերժում են օրինաւոր թաղումից։ Անարդար կերպով մեղադրողին խիստ պատիժների էին ենթարկում։ Եթէ մեղադրող չի երևում և կամ մեղադրանքը զրպարտութիւն է ճանաչւում, ազգականները հանում են սուգը, ննջեցեալի վերայ գովասանքներ են անում, աղաչում են աստուածներին, որ նորան տանեն բարեպաշտ մարդկանց համար նշանակած տեղը։ Հանդիսականները իրանց կողմից մաղթում են, որ ննջեցեալը արժանանայ յաւիտենական կեանքին, բարի մարդկանց ընկերութեան մէջ։

ԿԵՆԴԱՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ. — Եգիպտացւոց աչքում աստուածութիւնները կարող էին բնակւել նաև կենդանիների մարմինների մէջ. այնպէս որ կենդանին ներկայացնում էր աստուածութեան կամ նորա մի մասի մարմնացումը։ Բայց այդպէս էին նայում լուսաւորւած հաւատացեալները. իսկ հասարակ ժողովուրդը, մանաւանդ յետոյւայ ժամանակներում, Եգիպտոսի անկման դարերում, պաշտում էր մի քանի կենդանիներին, որպէս աստուածներին։ Այդ պատճառով է, որ Եգիպտոսը հնումը յայտնի էր որպէս նախապաշարմունքների հայրենիք։

«Երբ դուք մի տաճար էք մտնում, ասում է Կլեմենտիոս Ալեքսանդրիացին (մեռաւ 217 թ. Քր. յետոյ), մի քահանայ մօտենում է ձեզ լուրջ դէմքով, երգելով մի ինչ որ սրբազան աղօթք. նա մի փոքր բարձրացնում է քօղը, իբր թէ աստուածը ցոյց տալու համար։ Եւ ինչ էք տեսնում՝ մի կատու, մի կոկոր-

դիլոս, մի օձ և կամ մի այլ վտանգաւոր կենդանի։ Եգիպտացւոց աստուածը երևում է... և դա՝ մի վայրենի անասուն է, որը թաւալւում է մի ծիրանագոյն կարպետի վերայ»։

Գլխաւոր կենդանիները, որոնք ընդունւում էին աստուածային էակների տեղ, էին՝ օձամարտը, եգիպտահաւը (իբիս), ճուռակը, կոկորդիլոսը, կատուն և եզը։

Բայց միևնոյն կենդանին ամեն տեղ չէր պաշտւում։ Կոկորդիլոսը սուրբ էր Թեբէ քաղաքում, որտեղ նորան այնքան ընտելացնում էին, որ նա թոյլ էր տալիս ձեռ տալ։ Նորա վերայից կախում էին ոսկի օղեր, առջևի ոտներին կապում էին փոքրիկ շղթաներ կամ ապարանջաններ։ Նորան կերակրում էին զոհերի մսով և այլ կերակուրներով, համաձայն իրանց օրինագրքի պատւէրներին։ Քանի որ նա ապրում էր, նորա վերայ մեծ խնամք էին տանում. երբ նա մեռնում էր, նորան զմռսում էին և դնում մի սրբազան արկղի մէջ։

Գետաձին սրբազան էր նահանգներից մէկում, մինչդեռ մնացեալ տեղերում նա այդ յարգը չէր վայելում։ Թեբէի մօտերքում օձերին աստուածների պատիւներ էին տալիս. մինչդեռ ուրիշ տեղերում նոյն պատիւները վայելում էին կատուները, երևի նոցա մեծ օգտակարութեան պատճառով, որովհետև մկները կատարեալ ցաւ էին եգիպտացւոց համար։

Օրէնքը պարտաւորում էր սրբազան կենդանիներից մի քանիսին կերակրել, և նրանց ծառայելու համար կարգւած էին առանձին պաշտօնեաներ։ Ով նոցա դիտմամբ սպանում էր, պատժւում էր մահով, իսկ եթէ սպանումը պատահական էր՝ մեղաւորը ենթարկւում էր տուգանքի,

որի չափսը քահանաներն էին որոշում: Բայց իբիսի և ճուռակի սպանման համար՝ ոչ մի դէպքում ներումն չը կար և մեղաւորը պատժւում էր մահով:

Մի անգամ, Քրիստոսից մի-երկու դար առաջ (Պտոլոմէոսների ժամանակ), մի հռովմայական զինուոր մի նվիրական կատուին պատահմամբ սպանեց: Ամբոխը այդ զինուորին մասմաս կտրատեց, չը նայած Թագաւորի աղաչանքներին և չը նայած որ այդ ժամանակ Եգիպտոսը դողում էր Հռովմի առջև:

ԱՊԻՍ ԵԶԸ:—Բոլոր կենդանիներից, որոնց Եգիպտացիք Աստուծու տեղ էին պաշտում, ամենից հռչակաւորն էր Ապիս եզը: Ապիսը սովորական եզներից չէր: Եգիպտացւոց ասելով, Ապիս եզը ծնւում էր կայծակի զօրութեամբ մի երինջից (մատաղ կով): Բայց որովհետև այդ դժւար իմանալու բան էր, ուստի դիմում էին քահանաներին, որոնք եզան աստուածային լինելը ճանաչում էին որոշ նշաններից: Ապիս եզը պէտք է ունենար սև մորթի, ճակատի վերայ նա պիտի ունենար եռանկիւնի սպիտակ նշան, մէջքի վերայ՝ արծւաձև նշան, իսկ պոչի ծայրը պիտի կրկնակի լինէր:

Երբ քահանաները մի այդպիսի եզն էին գտնում, ամբողջ Եգիպտոսը ցնծութեան մէջ էր: Ապիսին տանում էին Մեմֆիս, որտեղ մի պալատում քահանաները ծառայում էին նորան բոլոր այն շքով, որ վայել էր մի այդպիսի հիւրին:

Բայց Ապիսին չէին թողնում յայտնի տարիներից աւելի ապրել: Քսան և հինգ տարեկան դառած, նորան խեղդում էին Նեղոսի մէջ մեծաշուք հանդիսով. յետոյ նորան զմռսում էին, ողբում էին նորա վերայ և ողջ եր-

կիրը ընկնում է սուգի մէջ մինչև որ նորա համար յաջորդ էին գտնում: Մինչև նոր Ապիս եզան գտնելը ողջ աէրութիւնը տագնապի մէջ էր: Հռովմայեցւոց կայսր Հադրիանոսի ժամանակ (մօտաւ 138 թ. Քր. յետոյ), Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքում քիչ էր մնում ապստամբութիւն լինէր, որովհետև Ապիս եզ չէր գտնւում:

ԱՐՋԱՆՆԵՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳԼԽՈՎ:—Բացի կենդանիներից, Եգիպտոսում ամեն տեղ արձաններ կային մարդու մարմնով, բայց անասունների գլխով. այդ գլուխը լինում էր կատուի, ճուռակի, գետաձիու և կամ արձանը ներկայացնում էր սֆինկս՝ կնոջ մարմնով և առիւծի գլխով:

IV

ԵԳԻՊՏԱՑԻՈՑ ՕՐԷՆՔՆԵՐԸ

Եգիպտացւոց օրէնքի հռչակը։—Երդմնազանցութեան, բանսարկութեան, սպանութեան, անարդար դատաւորների եւ սպանութիւնը խանգարելու պարտաւորութեան մասին։—Զինուորական պատիժներ։—Լրտեսի մասին։—Նենգողների մասին։—Պարտքերի մասին։—Այլ սովորութիւններ։

ԵԳԻՊՏԱՑԻՈՑ ՕՐԷՆՔՆԵՐԻ ՀՌՉԱԿԸ։—Հնումը շատ էին գովում Եգիպտացւոց իմաստութիւնը, իսկ Հերոդոտի ասելով՝ Յոյների բոլոր լուսաւորութիւնը եկած է Եգիպտոսից։ Այդ խօսքերի մէջ ճշմարտութեան մաս կայ։ Այս մեծ տէրութիւնը, որը երկրիս ամենահիններից մէկն է եղել, շատ սխալների հետ միասին գտել էր շատ ճշմարտութիւններ և ունէր մի քանի խելացի հաստատութիւններ։ Եգիպտոսը լաւ ոստիկանութեան աղբիւր էր։

Դիոդոր Սիկիլիացին բերում է այդ երկրի օրէնքներից մի քանիսը, որոնք ահա.

ԵՐԴՄՆԱԶԱՆՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ։—Երդմնազանցութիւնը պատժւում էր մահով, որովհետև նա մի յանցանք է թէ մարդու դէմ և թէ աստուածների դէմ, որոնց անունով երդւում էին։

ԲԱՆՍԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ։—Նոքա, որոնք բանսարկութեան մեղադրանքներ էին անում, պատժւում էին զրպարտողների հաւասար։

ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ։—Ով դիտմամբ սպանում էր թէ ազատ և թէ ստրուկ մարդուն, պատժւում էր մա-

հով, որովհետև օրէնքը պատժում էր ոչ թէ նայած սպանւածի հարստութեան՝ այլ չարագործի դիտաւորութեան։

Միևնոյն ժամանակ, ստրուկներին խնայելու համար, նրանց պաշտպանում էին՝ երբեք մի ազատ մարդու չը վիրաւորել։

ԱՆԱՐԴԱՐ ԴԱՏԱՒՈՐԻ ՄԱՍԻՆ։—Անմեղին մահւան պատժի դատապարտող դատաւորները նոյնքան մեղաւոր էին համարւում, որքան եթէ նոքա մի մարդասպանի ազատէին։

ՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԽԱՆԳԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ։—Ով ճանապարհին մի մարդու տեսնում էր մարդասպանի ձեռքին և կամ մէկից վիրաւորւելիս և չէր օգնում նրան, եթէ կարող էր,—պատժւում էր մահով։ Եթէ նա անկարող էր օգնել՝ նա պիտի աւազակներին մատնէր դատարանին։ Եթէ նա այդ չէր անում, պատժւում էր մարակի հարւածներով և երեք օրւայ սովածութիւնով։

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐ։—Զինւորներին վերաբերեալ օրէնքների մէջ կար մինը, որը դատապարտում էր ոչ թէ մահւան, այլ անւանարկութեան այն զինւորին, որը դասալիք է եղած (փախուստ է տւած) և կամ որը իւր մեծաւորների հրամանը կատարած չէ։ Եթէ յետոյ նա մի որ և իցէ փայլուն գործով ջնջէր իւր ամօթը, նա կրկին ստանում էր իւր նախկին պաշտօնը։

ԼՐՏԵՍԻ ՄԱՍԻՆ։—Լրտեսին, որը թշնամուն գաղտնիքներ, էր յայտնում, պատժում էին լեզուն կտրելով։

ՆԵՆԳՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ։—Կեղծ դրամ շինողներին, կամ ով կեղծում էր կշեռքի քարերը և չափերը և կամ ով կնիքներ էր խարդախում կամ կեղծ գրութիւններ անում ուրիշի անունով,—պատժում էին կտրելով երկու ձեռքերը։

ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ։—Մի պարտք, որի գոյութիւնը պարտականը մերժում էր հանդիսաւոր երդումով, չեղած էր համարւում, եթէ միայն պարտատէրը հաստատ ապացոյց չունէր։

Ոչ մի հաշւի մէջ փողի շահը չը պիտի աւելի լինէր, քան պարտք արած գումարը։

Պարտքերի գրաւական պիտի լինէին միմիայն պարտականի կայքը, բայց ոչ թէ պարտականի անձնաւորութիւնը, այսինքն՝ պարտքը չը վճարող չէր դառնում պարտատիրոջ ստրուկը, ինչպէս հին երկիրներից շատերում այդ սովորութիւն էր։

Պարտքի համար կարող էր գրաւ դնել նաև հօր գերեզմանը։ Ով չէր վճարում իւր պարտքը, նա զրկւած էր իւր ընտանիքի հանգստարանից։

ԱՅԼ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—Հերոդոտը պատմում է նաև մի քանի այլ սովորութիւնների մասին։ Նորա ասելով, «Յոյների մէջ միայն լակեդեմոնացիք չարգում էին ծերերին Եգիպտացւոց նման։ Երբ մի երիտասարդ հանդիպում է մի ծերունու, նա նրան տեղ պիտի տայ, և երբ մի ծերունի մի տեղ է գալիս, որտեղ երիտասարդ կայ, սա պիտի ոտի կանգնի։

«Երր եգիպտացիք իրար հանդիպում են, ողջունում են իրար, խորը կերպով խոնարհւելով և իջեցնելով ձեռքերը մինչ ծնկները»։

V

ԵԳԻՊՏՈՍԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Քաղաքների տեսակները։—Քաղաքներ հարաւային կամ Վերին Եգիպտոսում։—Թեբէ։—Քաղաքներ Միջին Եգիպտոսում։—Մեմֆիս։—Քաղաքներ Ստորին Եգիպտոսում։—Սաիս։

ՔԱՂԱՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ։—Որքան բազմաթիւ էին նահանգները, և առաւել բազմաթիւ էին քաղաքները Եգիպտոսում։ Բոլորը, ի հարկէ, հաւասար նշանակութիւն չունէին, իսկ նշանաւորները նոցանից զանազան պատճառներով էին նշանաւոր։ Նոցանից մի քանիսը տարբեր ժամանակներում մայրաքաղաքներ էին, միւսները, նշանաւոր էին որպէս սրբազան քաղաքներ, երրորդները՝ որպէս վաճառականութեան կենտրոններ, չորրորդները՝ որպէս կարևոր բերդեր։

Եգիպտացւոց քաղաքները կրում էին առհասարակ երկու տեսակ անուններ՝ կամ բուն եգիպտական և կամ յունական անուն։ Մեծ մասամբ նոքա մեզ յայտնի են յունական անուններով, թէպէտ և նոցա բոլորի համար գտնւած են իրանց իսկական եգիպտական անունները։

ՔԱՂԱՔՆԵՐ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿԱՄ ՎԵՐԻՆ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ։

ԹԵԲԷ։—Եթէ սկսելու լինենք հարաւից, առաջ պիտի յիշել Էլեֆանտին (կամ եգիպտերէն՝ Աբու) և Սիէն, որոնք երկուքն էլ հարաւային սահմանի մօտ գտնւած քարաժայռերի

մօտ էին և շինած էին գետի կղզիների վերայ։ Քիչ ներքև գալիս էր Նեխեբ, որը մի կարճ ժամանակամիջոց մայրաքաղաք դարձաւ և որի անունով կոչւում էին մի քանի ժամանակ եգիպտական թագաժառանգները («թագաւորական որդի Նեխեբի»)։

Աւելի դէպ հիւսիս գալիս էր Թեբէն, որը հին Եգիպտոսի ամենանշանաւոր քաղաքը պիտի համարել։ Թեբէն, Հոմերոսի ասելով, հարիւր դուռն ունէր, ուստի կոչւում էր «Հարիւրդռնեան»։ Քաղաքի գլխաւոր աստուածն էր Ամմոն-Ռա, աստուածների թագաւորը և տիեզերքիս արարիչը։ Իր փայլուն ժամանակներում քաղաքը տարածւում էր Նեղոսի երկու ափերի վերայ, լիբիական շղթայի ստորոտից մինչ արաբական շղթայի ստորոտը։ Երկար ժամանակ Եգիպտոսի մայրաքաղաք լինելուց յետոյ, Թեբէն աւերւեց և կողոպտւեց եթովպացիներից, ասորեստանցիներից և պարսիկներից։ Եգիպտոսի անկումից յետ՝ Պտղոմէոսների ժամանակ նա մասամբ կործանւեց, իսկ առաջին դարում Քրիստոսից առաջ նա կիսով չափ աւերւեց։ Նորա աւերակների վերայ յետոյ շինեցին բազմաթիւ մանր գիւղեր, որոնք այժմ ևս կան արաբական անուններով և որոնցից, իրանց մէջ պարունակող նշանաւոր հին արձանների և շինութիւնների պատճառով, հռչակաւոր են Լուքսոր և Կարնակ գիւղերը։

Թեբէից դէպ հիւսիս հանդիպում ենք Կոպտոս քաղաքին, որը կարևոր բերդաքաղաք էր և Վերին Եգիպտոսի մեծ վաճառատեղերից մէկն էր։ Էլ դէպի հիւսիս գտնւում էր Աբիդոս քաղաքը, որի անունը Թեբէից յետ ամենից յաճախն է յիշւում հին արձանագրութիւնների մէջ։ Աբիդոսը յայտնի էր մանաւանդ որպէս սրբազան քաղաք. Նորա տաճարները հռչակաւոր

էին, Նորա աստուածն էր Օզիրիսը, որը մեծ յարգ էր վայելում, իսկ նորա տօներին գալիս էին ուխտաւորներ Եգիպտոսի բոլոր տեղերից։ Միւս նահանգների հարուստ մարդիկ պատիւ խնդիր էին համարում թաղւել Աբիդոսի գերեզմանատան մէջ, Օզիրիսի գերեզմանի չուրջը։

ՔԱՂԱՔՆԵՐ ՄԻՋԻՆ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ։ ՄԵՄՖԻՍ։—Աբիդոսից դէպի հիւսիս, Միջին Եգիպտոսում, գտնւում էր «ութ աստուածների քաղաք՝» Հերմոպոլիսը (կամ եգիպտերէն՝ Սեսուննու), որը Եգիպտոսի ամենահին քաղաքներիցն էր։ Նորա հայրենի աստուածն էր Թոտը (նա էր, որ Օզիրիսի և քառասուն երկու դատաւորների առջև կշռում էր մարդկանց մեղքերը)։

Վերին Եգիպտոսի ամենանշանաւոր քաղաքն էր Մեմֆիսը, Պտահ կամ Հակա Փտահ աստուծու քաղաքը։ (Հակա Փտահ խօսքից յոյները շինեցին Եգիպտոս բառը)։ Մեմֆիսը Եգիպտոսի ամենաամուր քաղաքներիցն էր։ Մօտ երկու հազար տարի շարունակ Մեմֆիսը Եգիպտոսի մայրաքաղաքն էր, դեռ ևս Թեբէից առաջ։ Նորա նշանակութիւնը, որպէս քաղաքի, նւազեց, երբ Ալեքսանդրիան հիմնւեց (4-դ դարում Քր. առ.). իսկ երբ հիմնւեց Կաիրէ (այժմեայ Եգիպտոսի մայրաքաղաքը), Մեմֆիսը բոլորովին ընկաւ և կործանւեց։

Դեռ ևս Դելտային չը հասած, գտնւում էր Հելիոպոլիսը (կամ Օն), որ նշանաւոր էր որպէս կրօնական կենտրոններից մէկը և որտեղ գտնւում էր ամբողջ աշխարհում հռչակւած աստուածաբանական դպրոցը։ Ըստ յունական աւանդութեան, յոյների մեծ օրէնսդէտներից և փիլիսոփաներից Սոլոնը, Պիւթագորոսը, Պլատոնը և Եւդոկսոսը իրանց կեանքի մի քանի տարիները անցկացրին

այդ դպրոցում՝ եգիպտական գիտութիւնները և փիլիսոփայութիւնը ուսանելու համար։

ՔԱՂԱՔՆԵՐ ՍՏՈՐԻՆ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ։ ՍԱԻՍ։—Դելտայի կամ Ստորին Եգիպտոսի քաղաքներից յիշենք Սաիս, Քսօիս, Տանիս, որոնք մայրաքաղաքների դեր կատարեցին։ Սաիսը դոցանից կարևորագոյնն էր։ Երբ Ալեքսանդրիա քաղաքը հիմնւեց, նոքա բոլորը կորցրին իրանց նշանակութիւնը և դարձան հասարակ աւաններ։

VI

ԵԳԻՊՏԱՑԻՈՑ ԳՐՈՒԹԻՒՆԸ

Գրութեան երկու եղանակները։—Գաղափարագրութիւնը Եգիպտացւոց մէջ։—Հնչագրութիւնը Եգիպտացւոց մէջ։—Նշանագրեր, մեհենական գրեր։—Ինչպէս սկսեցին կարդալ եգիպտական գրութիւնները մեր ժամանակներում։—Րօզետտի արձանագրութեան գիւտը։—Շամպոլիոն Կրտսերը։—Եգիպտագիտութիւնը։

ԳՐՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ։—Գրել կարելի է երկու տեսակ՝ նշաններով, որոնցից իւրաքանչիւրը մի միտք է յայտնում, և նշաններով, որոնցից իւրաքանչիւրը յայտնում է մի կամ մի քանի հնչիւններ։ Եգիպտացիք սկզբում գրում էին առաջին եղանակով, այսինքն նշաններով, որոնցից իւրաքանչիւրը մի միտք (մի գաղափար) էր յայտնում։ Գրութեան այդ եղանակը կոչւում է գաղափարագրութիւն։ Բայց յետոյ զարգացաւ նոցա մէջ հնչագրութիւնը։

ԳԱՂԱՓԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ։—1) Այդ նշանները այն առարկաների նկարներն էին, որոնց անունը ուզում էին գրել։ Օրինակ, արեգակի գաղափարը յայտնելու համար նշանակում էին մի սկաւառակ ⊙, լուսնի համար՝ մի մահիկ) և այլն։

2) Առարկայի գաղափարը յայտնելու համար նկարում էին նաև այդ առարկայի միայն մի մասը։ Օրինակ, աչքի գաղափարը յայտնելու համար նկարում

էին միմիայն աչքի բիբը, եզան համար՝ եզան գլուխը։

3) Մի առարկայի պատկեր յայտնում էր նաև նորա հետևանքը կամ նորա պատճառը, որպէս նաև մի գործիքի պատկերը յայտնում էր նորանով կատարւած գործը։ Օրինակ, արեգակային սկտեղը նշանակում էր ոչ միայն արեգակ, այլ նաև ցերեկ օր. Թանաքամանը մի վրձինով՝ նշանակում էր գրութիւն։

4) Առարկայի նկարը յայտնում էր փոխաբերաբար մի այլ միտք։ Օրինակ, մի պիծակ նշանակում էր Թագաւորութիւն, մի գորտի ձագ նշանակում էր հարիւ- բաւոր հազարներ։ Նմանապէս՝ Թառի վրայ կանգնած մի ճուռակի պատկեր նշանակում էր Աստուած, ջայլամի փե- տուր նշանակում էր արդարութիւն։

5) Կային նաև բարդ նշանագրեր։ Օրինակ, մի վազող հորթ, ջրի նշանով նշանակում էր ծարաւ. շուռ ւած մահիկը աստղի նշանով նշանակում էր ամիս։

6) Միտքը յայտնում էին նաև ռեբուսով (ծածկանկար)։ Օրինակ, լազւարթ (կապոյտ գոյն) եգիպտերէն կոչւում էր քես- դեր. և որով՝ եւս քես նշանակում էր մի մարդ, որ քաշում էր, իսկ դեր նշանակում էր խոզի պոչ, ուստի խոզի պոչը քաշող մի մարդու պատկեր, նշանակում էր լազւարթ։

ՀՆՉԱԳՐՈՒԹԻՒՆ։ — Վերը բացատրած գաղափարագրու- Թիւնը, սակայն, փոխարկւեց հնչագրութեան։ Այն, ինչ սկզբում ողջ գաղափարն էր յայտնում, սկսեցին գործ ածել նոյն խօսքի առաջին վանկի հնչիւնները յայտնելու համար։ Այդպիսով կազմւեց գրութեան մի եղանակ, որով սկզբում գաղափար յայտնող նշանները ներկայացնում էին հասարակ

կամ բարդ վանկեր, իսկ յետոյ նաև ուղղակի պարզ հնչիւններ։

Այդ փոփոխութիւնը կատարւեց Քրիստոսից դեռ ևս մի քանի հազար տարի առաջ. բայց նա կատարելագործւեց ժամանակով։

1) Եւ այսպէս։ Եգիպտացիք ունեցան հնչագրական նշաններ կամ այբբենարան, որի տառերը ներկայացնում էին շնչաւոր Թէ անշունչ առարկաների նկարներ և որոնցից իւրաքանչիւրը նշանակում էր մի հնչիւն՝ ա, բ, վ, ն, ի, ու, լ, հ, ս, դ և այլն։

Երբեմն միևնոյն հնչիւնի համար գործ էին ածում երկու նշան, իսկ երբեմն միևնոյն նշանը արտայայտում էր մի քանի հնչիւններ։ Օրինակ, (որը այնքան նման է մեր «ջ» տառին) նշանակում էր և «տ», և «փտ» և «ջ»։ դորա հակառակ՝ «մ» տառը գրւում էր Թէ , Թէ որ- պէս , Թէ և Թէ որպէս . «տ» տառը գրւում էր երկու ձևով և ։

Մինչև այժմ ճանաչւած եգիպտական այբբենարանը ունի 34 նշան, որոնք արտայայտում են 35 հնչիւններ։

2) Բացի դորանից, Եգիպտացիք ունէին բազմաթիւ նշաններ (նմանապէս շնչաւոր կամ անշունչ առարկաների նկարներ), բարդ հնչիւններ կամ վանկեր արտայայտելու համար. դոքա կոչւում են վանկագրական նշաններ։

Օրինակ՝

«աբ» գրւում էր կամ կամ և այլ նշաններով։

«առ» գրւում էր կամ կամ

«տա» գրւում էր կամ

«պդ» գրւում էր կամ կամ և այլն։

Մինչև այժմ ճանաչւած են 28 նշաններ, որոնք արտայայտում են 137 բարդ հնչիւններ կամ վանկեր։

Որովհետև վանկագրական նշանները մեծ մասամբ բազմահնչիւն էին, ուստի ընթերցանութիւնը հեշտացնելու համար այդ նշաններից առաջ դնում էին այբբենարանից վերցրած այս կամ այն տառը և կամ այդ նշաններից յետոյ դնում էին այլ նշաններ որ դորանով հասկացնեն թէ պէտք է այսպէս կարդալ և ոչ թէ այնպէս։ Օրինակ, նշանս՝ գործ էր ածւում թէ «աբ» և թէ «մեր» գրելու համար. երբ նա պէտք է նշանակէր «աբ», գրում էին , իսկ եթէ նա պէտք է նշանակէր «մեր» գրում էին ։

3) Վերջապէս հնչագրութեան մէջ գործ էին ածում նաև գաղափարագրական նշաններ։ Օրինակ, փոխանակ գրելու ,
գրում էին՝ , և այդ կարդացւում էր նուտեր, որ նշանակում է աստուած։

Փոխանակ գրելու ,
գրում էին՝ , և այդ նշանակում էր կեանք։

Բայց մեծ մասամբ այդ գաղափարագրական նշանները չէին կարդացւում, այլ միայն որոշում էին գրւածի միտքը։ Օրինակ՝ կարդացւում էր աքըք և նշանակում էր հաց. աք վանկը գրւում էր , իսկ ըք վանկը՝ , այնպէս որ նշանս ընթերցանութեան համար աւելորդ էր և ներկայացնում էր նոյն իսկ առարկան։

Այդ պատճառով այդ գաղափարագրական նշանները կոչւում են՝ բ ա ց ա յ ա յ տ ի չ ն շ ա ն ն ե ր։

Բացայայտիչ նշանները երկու տեսակ էին՝ մասնաւոր և ընդհանուր։ Մասնաւորը նոքա են, որոնք միայն մի

միտք էին յայտնում։ Օրինակ, ականջի նկարը  գործ էր ածւում միմիայն ականջի գաղափարը յայտնող խօսքերի համար։ Ընդհանուր նոքա են, որոնք դնւում էին շատ խօսքերի մօտ, որոնց իմաստը յիշեցնում է նկարի առարկան։ Օրինակ, բերանը ցոյց տւող մարդու նկարը  դնւում էր այս խօսքերի մօտ՝ ուտել, խմել, բղաւել, խօսել, խորհել, ճանաչել, գիտենալ, դատել։ Չէ՞ թէ գիտենալու համար պէտք է հարց ու փորձ անել, ուրեմն բերան բացել!

Բացայայտիչ նշանների թիւը մեծ է, բայց ամենագործածականը նոցանից 55-ի չափ է։

ՄԵՀԵՆԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ։— Նշանագրութիւնը, որ բացատրեցինք վերը, գործ էր ածւում միմիայն արձանների վերայ։ Բայց գրականութեան մէջ գործ էին ածում ընթացիկ գրեր, որոնք բղխած էին նշանագրերից և որոնք այժմ կոչւում են մեհենական գրեր։ Մինչդեռ նշանագրերով գրում էին թէ աջից ձախ և թէ ձախից աջ, մեհենական գրերով գրում էին միմիայն աջից ձախ (որպէս հայերէնը)։ Ահա մի օրինակ այդ գրութիւնից.



Մունուախոպէրուդուա Հէթրա պատու
Ջուր մի չինել տնել տրեփտնէն եղա-

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ։— Յետոյ մեհենական գրերն էլ դարձրին աւելի հասարակ, կրճատեցին նոցա թիւը և ստացան ժողովրդական գրեր, որոնցով գրում էին վաճառականական և այլ պայմանաթղթերը։ Գրութեան

այդ եղանակը դեռ ևս լաւ չէ ճանաչուած. բայց ահա մի նմուշ.



վ Ն-աՄ վ աւ ՏօՊ էՆ ՄԱ Ռախ է վաՆ

նորա ՔՁ էր երկնի տէրը և ֆէտէր նորան տէնեւըն

ԻՆՉՊԷՍ ՍԿՍԵՑԻՆ ԿԱՐԴԱԼ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ։—Եգիպտական գրութիւնները ժամանակով մոռացուեցին և նոցա ընթերցումով երկար դարեր ոչ ոք չէր զբաղւում։ Միմիայն երբ, մօտ 300 տարի մեզնից առաջ, եւրոպական գիտնականները սկսեցին զբաղուել հին ազգերի պատմութիւնով և գրականութիւնով, գիտնականները իրանց ուշքը դարձրին նաև եգիպտական գրութիւնների վերայ, որ նոքա գտան Եւրոպայում եղած եգիպտական հաղւագիւտ արձանների վերայ։

Սակայն ամբողջ երկու և կէս դար նոցա ջանքերը անպտուղ անցան։ Նոցա սխալցնողները հին պատմաբաններն էին, որոնք պնդում են, թէ եգիպտացիք իբր թէ տառեր չունէին, այլ միայն գաղափարագրական նշաններ։

ՌՈԶԵՏՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԻՒՏԸ։—Բայց ահա 1799 թ-ին մի ֆրանսիացի սպահ (օֆիցեր) գտնում է Եգիպտոսի Ռոզետտ քաղաքում մի արձանագրութիւն, գրուած նշանագրերով, ժողովրդական գրերով և յունարէնով։ Յունարէնի միջոցով սկսեցին որոշել եգիպտական տառերը, մանաւանդ ժողովրդական գրերը (համեմատելով իրար հետ յատուկ անունները)։ Դորանով զբաղուեց մանաւանդ շուեդացի Ակերբլադ, որը առաջին անգամ որոշեց

մի եգիպտական այբուբէն։ Վերջինս սակայն դեռ շատ անկատար էր։

Նորանից յետ, մի անգլիացի, Թէոդոր Իւնգ, (1814—18) աշխատեց գտնել նշանագրերի գաղտնիքը։ Նրան յաջողուեց կարդալ միայն մի քանի անուններ եգիպտական կոթողների (սիւնանման արձանների) գրութիւնների մէջ։ Բայց աւելին չաջողուեց նրան։

ՇԱՄՊՈԼԼԻՈՆ ԿՐՏՍԵՐԸ։—Այս ֆրանսիացին եղաւ գաղտնիքի իսկական յայտնիչը։ Այդ նա էր, որ առաջին անգամ հասկացաւ և ապացուցեց, թէ նշանագրերը չեն գաղափարների նշաններ, այլ նոքա են հնչիւնների նշաններ։ Իւր հետազօտութիւնների առաջին հետեւանքները նա հրատարակեց 1822 թ-ին, իսկ նորա «տառերի նշանագրութեան» գիրքը հրատարակուեց 1824 թ-ին։ Շամպոլլիօն Կրտսերը (կոչուած այսպէս ջոկելու համար նորա մեծ եղբօրից) մեռաւ 1832 թ-ին։

ԵԳԻՊՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ։—Նորա մահից յետ նորա գործը շարունակեցին ուրիշները Ֆրանսիայում Գերմանիայում, Հոլլանդիայում, Նորւեգիայում, Անգլիայում։ Այդ բազմաթիւ գիտնականների հետազօտութիւններով ստեղծուեց եգիպտագիտութիւնը։ Քանի մի տարիներից յետոյ, եգիպտական գրուածները պիտի կարելի լինի կարդալ նոյնքան հեշտութեամբ, որպէս այժմ կարդացւում են հին յունարէնը, լատիներէնը և կամ մեր գրաբառ լեզուն։

VII

ԵԳԻՊՏՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Նախապատմական եւ պատմական շրջանները։—Թագաւորական սերունդներ։—Սերունդների կապը։—Եգիպտոսի պատմութեան գլխաւոր շրջանները։

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ։—Այն երեք-չորս հազար տարիները, երբ եգիպտական ազգը դեռ ևս կազմւելու վերայ էր և երբ դեռ ևս զանազան մանր իշխանութիւնների էր բաժանւած,—պատմութիւն չունին, և այդ պատճառով կոչւում են նախա-պատմական շրջան։ Մինչև անգամ իրանք եգիպտացիք այնպէս էին պատմում օտար ճանապարհորդներին, օրինակ, յոյն Հերոդոտին, թէ իբր մինչև Մենէս թագաւորը Եգիպտոսում աստուածներն էին թագաւորում։ Դորանով նոքա երևի ուզեցած են ասել, թէ երկրի իշխանութիւնը կամ կառավարութիւնը քահանաների ձեռքումն էր։

Բայց ժողովրդի միջից վերջապէս դուրս եկաւ մի մարդ, որը խլեց քահանաներից երկրի իշխանութիւնը և դառաւ թագաւոր ամբողջ Եգիպտոսի։ Դա՛ Մենէս թագաւորն էր, որից և սկսւում է Եգիպտոսի պատմութիւնը։ Մենէսի հիմնած թագաւորութիւնը տևեց առնւազն չորս հազար տարի, այն է՝ մինչև 525 թւականը Քրիստոսից առաջ։

Սկսած Մենէս թագաւորից մինչև Եգիպտոսի վերջին թագաւորը (փարաւոնը), կոչւում է պատմական շրջան։ Այդ ժամանակից սկսած Եգիպտացւոց պատմածները հաւանական են. բայց գլխաւորը այն է, որ այն ժամանակից կան մնացած բազմաթիւ յիշատակարաններ, որոնցից կարելի է ճիշդ բաներ իմանալ ժամանակւայ անցքերի և անձնաւորութիւնների մասին։

ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՍԵՐՈՒՆԴՆԵՐ։ – Ասացինք, որ Եգիպտացւոց առաջին թագաւորը Մենէսն էր, և որ Մենէսի հիմնած թագաւորութիւնը տևեց առնւազն 4000 տարի։ Բայց այդքան երկար ժամանակ չը թագաւորեցին փարաւոններ միմիայն Մենէսի սերնդից։ Եկաւ ժամանակ, երբ Մենէսի սերնդից այլ ևս տղամարդ չկար, այլ միայն աղջիկ զաւակներ մնացին։ Այն ժամանակ գահը բարձրացաւ մի այլ մարդ, որով սկսւեց մի այլ թագաւորական սերունդ։ Այդպիսին մէկը լինում էր երբեմն մի քաջ զօրապէտ։ Եգիպտոսը ունեցաւ երեսուն թագաւորական սերունդներ։ Իսկ թագաւորների թիւը հասաւ մի քանի հարիւրների։

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԿԱՊԸ։ – Առհասարակ սովորութիւն էր Եգիպտոսում որ, երբ մի մարդ նոր թագաւորական սերունդ էր հիմնում, ժողովուրդի աչքին խորթ չը թւալու համար, կնութեան էր առնում նախկին թագաւորական սերնդից մի աղջիկ, որով նոր սերունդը նախկինի ազգականն էր դառնում և այդպիսով նա մի տեսակ սորա շարունակութիւնն էր համարւում։

ԵԳԻՊՏՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՇՐՋԱՆՆԵՐԸ։— Մօտ հինգ հազար տարիների ընթացքում Եգիպտոսը ու-

նեցաւ ոչ թէ մէկ, այլ մի քանի մայրաքաղաքներ։ Մայրաքաղաքը առաջ Միջին Եգիպտոսի Մեմփիս քաղաքն էր. յետոյ մայրաքաղաքը տեղափոխուեց Վերին Եգիպտոսի Թեբէ քաղաքը. իսկ վերջին ժամանակներում թագաւորները կենում էին Ստորին Եգիպտոսի կամ Դելտայի զանազան քաղաքներում, բայց մանաւանդ Սաիս քաղաքում։

Այդ պատճառով Եգիպտոսի պատմութիւնը բաժանւում է երեք գլխաւոր շրջանների. դոքա են՝ Մեմփիսի շրջան, Թեբէի շրջան և Սաիսի շրջան։ Դոցանից ամենանշանաւորներն էին առաջին երկու շրջանները, որովհետև դոքա թէ երկար տևեցին և թէ այդ դարերում Եգիպտացիք աւելի հզօր էին և քաղաքակրթւած։

VIII

ՄԵՄՓԻՍԵԱՆ ՇՐՋԱՆ

Մենէս։—Քէօպս։—Եգիպտական բուրգեր։—Քեփրէն։—Մենկերա։—Պապի I եւ Ունա նախարարը։—Պապի II։—Նիկոտրիս։—Մեմփիսի շրջանի վերջը։—Հերակլէօպոլիս։

ՄԵՆԷՍ։ – Մենէսը Եգիպտոսի զինւորական դասակարգի գլխաւորն էր, որը խլեց քահանայական դասակարգից երկրի իշխանութիւնը, միացրեց իւր ձեռքի տակ Եգիպտոսի բոլոր ցեղերը և այդպիսով հաստատեց եգիպտական թագաւորութիւնը։ Եւ որովհետև իւր հայրենի քաղաքում ժողովուրդը դեռ շատ հնազանդ էր քահանաներին, ուստի նա թողեց Թենի քաղաքը և հիմնեց մի նոր՝ Մեմփիս քաղաքը Միջին Եգիպտոսում, ոչ շատ հեռու Դելտայի ծայրից, և դարձրեց նորան մայրաքաղաք։ Մեմփիսը հիմնուեց Քրիստոսից մօտ 5.000 տարի առաջ։ Որտեղ Մեմփիս քաղաքն էր, առաջ Նեղոսն էր անցնում. Մենէսը շուռ տուեց գետի ուղղութիւնը դէպի աջ, թումբերի միջոցով, որոնք դեռ այժմ էլ կան։ Նոր քաղաքը նուիրուեց Փտահ աստուծուն. այդ պատճառով նա կոչւում էր «Օթևան Փտահի», իսկ եգիպտական լեզուով՝ Հակա-Փտահ կամ Հակա-Փտահ։ Այդ խօսքից յոյները շինեցին Եգիպտահ կամ Եգիպտոս խօսքը։

ՔԷՕՊՍ։ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲՈՒՐԳԵՐ։ – Մենէսի յաջորդները

նուաճեցին Լիբիան, յետոյ նաև Սինաի թերակղզին, որը հարուստ էր պղնձի և փիրուզայի հանքերով։

Մենէսից յետոյ Մեմֆիսի թագաւորներից ամենանշանաւորներն էին՝ Քէօպս, Քեփրէն, Մենկերա, Պապի I, Պապի II և Ռոդոպիս կամ Նիկոտրիս։

Քէօպս, Քեփրէն և Մենկերա կոչւում են բուրգաշէն թագաւորներ, որովհետև նոքա շինել տուին Եգիպտոսի ամենամեծ բուրգերը (պիրամիդ)։

Քէօպսի անունը շատ ատւած էր եգիպտացիներից, որովհետև նա իւր փառքի համար շինել տուեց մի հսկայական բուրգ, որի կառուցումը անասելի զոհեր պահանջեց ժողովրդից։ Դեռ շատ տարիներ յետոյ, երբ եգիպտացւոց յիշողութիւնից իսպառ վերացած էին այդ հեռաւոր ժամանակները, նոքա յիշում էին այն զարհուրելի տառապանքը, որ քաշեց ժողովուրդը Քէօպսի բուրգը շինելու համար։ Եւ արդարև, այդ բուրգը այնքան հսկայական է և այնքան տարիների գործ է, որ մարդս, երբ նորա մօտ կանգնում է, ոտների տատանումն է զգում, որպէս թէ մի ահագին ծանրութիւն դրած լինի իւր վերայ։ Բուրգը շինած է տաշած սպիտակ քարանկիւնի քարերից, որոնցից ոչ մէկի երկարութիւնը երեսուն ոտնաչափից պակաս չէ։

ՔԵՓՐԷՆ։—Նոյնքան ատելի էր եգիպտացիներին Քէօպսի յաջորդ Քեփրէնի անունը, որը նոյն բլուրի վերայ շինել տուեց իւր համար մի բուրգ, բայց առաջնից աւելի փոքրը։ Աւանդութիւնը ասում էր, որ ոչ Քէօպսը և ոչ Քեփրէնը կարողացան վայելել այն գերեզմանները, (բուրգերը) որ նոքա շինել տուին այնքան նեղութիւնների գնով․

դայրացած ժողովուրդը ապստամբեց, հանեց նոցա մարմինները դագաղներից և կտոր-կտոր արաւ նոցա։ Պատմում էին նաև թէ իբր Քէօպս և Քեփրէն կողպեցին տաճարները։

ՄԵՆԿԵՐԱ։—Եգիպտացւոց յիշողութեան մէջ Մենկերան, Քեփրէնի յաջորդը, երևում էր որպէս ամենալաւը բոլոր եգիպտական թագաւորներից և որպէս մի ամենահեզաբարոյ մարդ։ Նա կրկին բացեց տաճարները, թողեց, որ մարդիկ իրանց գործերով պարապւեն, տալիս էր արդար դատաստան։ Նորա բարութեան մասին պատմում էին թէ այն մարդուն, որը գանգատւում էր նորա վճռից, ընծայ էր տալիս, նորա բարկութիւնը մեղմացնելու համար։

Նորա մասին պատմում էին այս զրոյցը, թէ նրան դժբաղդութիւններ հասան. Նա կորցրեց իւր միակ աղջկան և քիչ ժամանակ յետոյ իմացաւ մի պատգամախօսից, որ ինքը վեց տարուց աւելի չունի ապրելու։ Իրան մխիթարելու համար նա դնել տուեց իւր աղջկայ մարմինը մի փայտեայ երինջի (մատաղկով) մէջ և դրաւ Սաիս քաղաքում, որպէս զի նորան աստուածային պատիւներ տան։ Բայց որպէս զի պատգամախօսի խօսքերը չը կատարւեն, նա մի տարօրինակ հնարքի դիմեց, որի մասին եգիպտացիք պատմեցին Հերոդոտին այսպէս։ Մենկերան յանդիմանութիւններ արաւ աստուծուն, գանգատւելով, որ իւր հայրը և իւր եղբայրը (Քէօպս և Քեփրէն) տաճարները փակելով, աստուածներին մոռանալով և մարդկանց ճնշելով հանդերձ՝ երկար ապրեցին, մինչդեռ ինքը, որ այնքան բարեպաշտ էր, այդքան շուտ պիտի մեռնի։ Այս գանգատի վերայ պատգամախօսը ուշք չը դարձրեց և կրկնեց, որ ասածը պիտի կատարւի։ Այն ժամանակ Մենկերան իրան միանգամայն դատապարտւած համարեց և շինել տուեց բազմաթիւ լապտերներ, որ նա վառում էր ամեն երեկոյ և գիշեր. Նա անձնատուր եղաւ խմողութեան և, առանց դադար առնելու, գիշեր ցերեկ թափառում

էր լճակների վրայ և անտառների մէջ և ամեն տեղ, որտեղ նա կարող էր զւարճութիւն գտնել: Այս բանը Մենկերան հնարել էր, որ ցոյց տայ պատմագամախօսին, թէ նորա գուշակածը սուտ էր, քանի որ գիշերներն էլ ցերեկ հաշւելով, նա ապրեց տասներկու տարի:

Մենկերան ևս իւր սեպհական բուրգն ունեցաւ, որի մէջ և թաղւեց: Նորա շիրիմը, որ մի զարմանալի գեղեցիկ արձան էր այդքան հեռաւոր ժամանակների համար, գտնւեց նորա բուրգի մէջ և (մեր ժամանակներում) ուղարկւեց Անգլիա. դժբաղդաբար Պորտուգալիայի եզերքին նաւը կործանւեց և կորաւ, նորա հետ նաև այդ շիրիմը: Նորա մումիայի դագաղը, սակայն, կայ մնացած:

ՊԱՊԻ I և ՈՒՆԱ ՆԱԽԱՐԱՐԸ:—Մեմփիսի նշանաւոր թագաւորներից մեզ մնում է յիշել Պապի I, Պապի II և Նիկոտրիսին:

Պապի I նշանաւոր է նրանով, որ Սինաի թերակղզին յետ խլեց արաբական թափառական ցեղերից, հպատակեց Եթովպիան և ծածկեց Եգիպտոսը արձաններով: Այդ բոլոր գործքերի մէջ նորա օգնականն էր Ունա անունով նախարարը, որ չափազանց եռանդոտ և գործունեայ մարդ էր: Սկզբում նա մի հասարակ պալատական էր, յետոյ դառաւ տէրութեան առաջին մարդը, իսկ Պապի I-ի մահից յետ, Մերենրա թագաւորը նորան նշանակեց կառավարիչ երկրի սկսած Դելտայի ծայրից մինչև Էլեֆանտին քաղաքը: Այդ մի պաշտօն էր, որին Ունայից առաջ ոչ ոք արժանացած չէր:

ՊԱՊԻ II:—Պապի I-ին յաջորդեց Մերենրա, իսկ սորան՝ Պապի II, որի մասին հաստատւում է, որ մօտ հարիւր տարի թագաւորեց:

ՆԻԿՈՏՐԻՍ:—Պապի II-ի յաջորդը, գահը բարձրանալուց քիչ ժամանակ յետոյ, սպանւեց: Նորա քոյրը, որ, համեմատ եգիպտական թագաւորների սովորութեան, նորա կինն էր դառնել, յաջորդեց իւր եղբօր, բայց հաստատ մտադրութեամբ՝ վրէժխնդիր լինել իւր եղբօր սպանման համար: Այդ մտքով նա շինել տւեց մի մեծ ստորերկրեայ դահլիճ, ուր նա խնճոյքի հրաւիրեց շատ եգիպտացւոց, որոնց մէջ և նոցա, որոնք, իւր կարծիքով, սպանել էին իւր եղբօրը: Ճաշկերոյթի ժամանակ նա հրամայեց բաց թողնել դէպի դահլիճը Նեղոսից անցկացրած և մինչ այն ժամանակ գաղտնի պահած մի ջրանցք, որով բոլոր ներկայ եղածները խեղդւեցին. իսկ ինքը Նիկոտրիսը, «վարդի թշիկ գեղեցկուհին» (ասւած է արձանագրութեան մէջ) իրան գցեց մի սենեակ, որ լցրած էր տաք մոխիրով, և մեռաւ:

Նիկոտրիսը թագաւորեց միայն եօթ տարի, որի ընթացքում նա վերջացրեց կիսատ թողած մի մեծ բուրգ, որի չքնաղութիւնը հիացնում էր օտարական ճամբորդներին: Այդ բուրգի մէջ նա թաղւեց:

ՄԵՄՖԻՍԻ ՇՐՋԱՆԻ ՎԵՐՋԸ: ՀԵՐԱԿԼԷՕՊՈԼԻՍ:—Նիկոտրիսից յետոյ անցաւ հինգ հարիւր տարի, մինչև որ Մեմփիսի շրջանը լրացաւ: Բայց վերջին հարիւր տարիներում Մեմփիսը իւր տեղը զիջանեց Ախնեմնու կամ Հերակլէօպոլիս քաղաքին, որը մի առժամանակ գերիշխող քաղաքը դարձաւ և որտեղից ծագեցին երկու թագաւորական սերունդներ:

IX

ԵԳԻՊՏՈՍԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՄՖԻՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Տէրութեան ոյժը։— Ճանապարհներ։— Ճարտարապետութիւն։— Բուրգեր։— Արձանագրութիւն։— Հանքաբանութիւն։— Բժշկականութիւն։— Տիեզերագրութիւն։— Եգիպտացւոց տօմարը։— Գրականութիւն։

ՏԷՐՈՒԹԵԱՆ ՈՅԺԸ։ – Չը նայած իր մեծ հնութեան, Եգիպտոսը, Մեմֆիսի մայրաքաղաքութեան ժամանակ, սկսած 5.000 թուականից մինչ մօտ 3.500 թուականը Քրիստոսից առաջ, նշանաւոր լուսաւորութեան հասաւ։ Եգիպտացիք այդ շրջանում՝ արդէն այնքան հզօրացան, որ կարողացան Եգիպտոսից դուրս երկիրներ նուաճել, որպէս էին Լիւբիան, Եթովպան, Սինայի թերակղզին և երկրի որոշ կողմերը, որպէս Դելտայի արևելեան կողմը, բերդերով ամրացնել, որպէս զի ասիական թափառական ցեղերը չը կարողանային հեշտութեամբ մուտք գործել Եգիպտոսում։

Բայց եգիպտացիք, Մեմֆիսեան շրջանում, միմիայն պատերազմների մէջ չը հռչակուեցին, այլ նոքա հռչակուեցին նաև արհեստների և գիտութիւնների մէջ։

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ։—Նոքա լաւ հասկանում էին, որ երկրի բարօրութեան համար լաւ ճանապարհներ են հարկաւոր։ Այդ ժամանակներում շինած ճանապարհներից ամենանշանաւորը այն էր, որ շինուեց Կոպտոսից մինչև Կարմիր ծովը։

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ։ ԲՈՒՐԳԵՐ։ – Արհեստներից նշանաւոր կատարելագործութեան հասաւ նոցա մօտ շինութիւններ շինելու արհեստը կամ ճարտարապետութիւնը։ Այդ բանը պարզ երևում է այժմ աւերակ դարձած տաճարներից, պալատներից, բայց մանաւանդ իրանց ամբողջութեամբ դեռ այժմ էլ մնայուն մեծ թէ փոքր բուրգերից, որոնցից մի քանիսը մեզ միմիայն իրանց մեծութիւնով չեն զարմացնում, այլ և զմայլեցնում են իրանց պարզութիւնով և վեհութիւնով։

Այն վարպետները, որոնք շինել են բուրգերը և Սաքքարայի գերեզմանները, անկարելի է, որ չը գիտենային երկրաչափութիւն, գոնէ այդ գիտութեան այն մասերը, որ վերաբերում են հող չափելուն և քարեր կտրելուն։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ։ Ճարտարապետութեան հետ միասին պէտք է զարգանար արձանագործութիւնը։ Ամենահին արձանը, որ հասած է մեզ՝ Քեփրէն թագաւորի արձանն է. եթէ ի նկատի առնենք, որ այդ արձանը մեզնից վեց հազար տարի առաջ է շինուած, կը գտնենք, որ նա զարմանալի գեղեցիկ է։

ՀԱՆ ԲԱԲԱՆՈՒԹԻՒՆ։ – Հանքաբանութիւնը զարգացաւ Մեմֆիսեան շրջանում. դորա ապացոյցն է այն մեծ արժէքը, որ տալիս էին եգիպտացիք Սինայի հարուստ հանքերին։ Նշանաւոր էին նաև Ռոհաննուայի քարհանքերը։

ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ։—Գիտութիւններից, որոնք յայտնի էին եգիպտացիներին Մեմֆիսի շրջանում, պէտք է յիշել բժշկականութիւնը, որի մասին երկու ձեռնարկներ կան մնացած։

ՏԻԵԶԵՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ։ – Բայց աւելի մեծ յառաջդի-

մութիւն արաւ տիեզերագիտութիւնը (գիտութիւն երկնային
մարմինների վերաբերեալ)։ Նախ և առաջ նոքա անշարժ աստ-
ղերը որոշեցին շարժուն աստղերից կամ մոլորակներից և մինչ և
անգամ նոքա գիտէին թէ արեգակը, որը բոլոր հին ազգերի
հասկացողութեամբ տիեզերքի կենտրոնն էր համարւում,
շրջում էր միւս շարժուն աստղերի հետ։

Երկինքը նրանց թւում էր որպէս մի հեղանիւթ, որ
ամուր հաստատուած է մթնոլորտի վերայ։

Աստղերից եգիպտացւոց համար կարևորագոյնն էր
Սիրիուսը, որովհետև նորա ծագումը նշանակում էր Նե-
ղոսի ուռոգման սկիզբը, որով և լրանում էր եգիպտացւոց
տարին։

ՏՈՄԱՐ։—Տարին, նոցա մօտ, բաժանուած էր 12 ամիս-
ների, որոնցից իւրաքանչիւրը 30 օր ունէր։ Այդ 12 ամիս-
ները կազմում էին ոչ թէ չորս եղանակ, որպէս մեզ
մօտ, այլ երեք եղանակ, ամէն մինը չորս ամիս տևո-
ղութեամբ՝ սկզբնաւորութեան եղանակ (Նեղոսի հեղեղ-
ման ամիսները), ցանքերի եղանակ (մեր ձմեռնային ամիս-
ները) և հունձքերի եղանակ (մեր ամառնային ամիս-
ները)։ Եգիպտական աստղաբաշխները յետոյ աւելցրին
հինգ օր ևս 360 օրերի վերայ կամ տարւայ վերջում կամ
տարւայ սկզբում։ Բայց որովհետև տարին ունի 365 օր և
մօտ վեց ժամ (քառորդ օր), ուստի եգիպտացւոց մօտ տարին
քառորդ օրով աւելի վաղ էր վերջանում։ Այդ սխալը չորս
տարւայ մէջ կը կազմէր մի օր, հարիւր քսան տարում՝
30 օր կամ մի ամիս։ Մի խօսքով, եթէ մի ժամանակ
եգիպտացւոց մօտ տարին սկսւում էր Նեղոսի հեղեղման
սկզբում, հարիւր քսան տարուց յետ՝ տարին պէտք է վեր-

ջանար մի ամիս առաջ, 480 տարում՝ չորս ամիս վաղ։
Եթէ այսպէս շարունակելու լինենք մեր հաշիւը, կը տես-
նենք որ 1460 տարում եգիպտացիք իրանց տարեհաշիւ-
ների մէջ մի ամբողջ տարով սխալուած են և որ դեռ հե-
ղեղումը նոյն օրում պիտի կատարւէր, ինչպէս 1460 տարի
առաջ, ուրեմն կրկին Սիրիուսի (հայերէն՝ նաև Շնաստղ)
ծագման հետ միասին։ Այսպիսով մենք տեսնում ենք, որ
հեղեղման սկիզբը ընկնում էր Սիրիուս աստղի ծագման հետ
միասին ամէն 1460 տարին միայն մի անգամ։

Սիրիուս աստղը եգիպտացիք անուանում էին Սօպտ,
որից յոյները շինեցին Սօթիս խօսքը։ Եւ որովհետև ամէն
1460 տարին մի անգամ տօմարը ուղղւում էր, ուստի այդ
տարին Սիրիուսի կամ Սօթիսի ծագումը առանձին կեր-
պով էր տօնւում։ Այդ 1460 տարիների շրջանը կոչւում էր
Սօթիական շրջան։

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ։—Բացի վերոյիշեալ
գիտութիւնների վերաբերեալ գրքերից, եգիպտացիք, Մեմ-
փիսեան շրջանում, ունեցան բազմաթիւ այլ գրքեր։ Այդ
երևում է նորանից, որ այդ ժամանակների պալատական
բարձր ծառայողներից մէկը, բացի երկու մեծ տիտղոսնե-
րից, կրում էր նաև այս տիտղոսը՝ «կառավարիչ գրքերի
տան», այսինքն գրադարանի։ Այդ ժամանակներից մեզ հա-
սած է մի խրատական գիրք, որ գրուած է պապիրուսի վե-
րայ և որ պահւում է Պարիզի գրադարանում։ Դա հա-
մարւում է աշխարհիս ամենահին գիրքը։ Այդ
գրքի մի կտորը, որ շատ հետաքրքիր է, կրում է, նորա
գրողի անունով, «Պտահհոտեպի խրատներ» անունը։

X

ԹԵԲԷԵԱՆ ՇՐՋԱՆ

Թեբէի բարձրանալը։—Ամենեմհատ I։—Իշխանակցութեան սովորութիւնը։—Ամենեմհատ III։—Մովրիս լիճը։—Շարունակութիւն. Լաբիւրինթոսը։—Եգիպտոսի ժամանակաւոր անկումը։

ԹԵԲԷԻ ԲԱՐՁՐԱՆԱԼԸ։—*Մեմֆիսը մայրաքաղաք մնաց մօտ 2.000 տարի։ Այդքան ժամանակայ ընթացքում Մեմֆիսում թագաւորեցին տասն և մէկ սերունդ, և բոլոր լուսաւորութիւնը Միջին Եգիպտոսումն էր. մինչդեռ Եգիպտոսի հարաւային մասը կամ Վերին Եգիպտոսը, հեռու լինելով մայրաքաղաքից, դեռ լուսաւորուած չէր և մեծ նշանակութիւն չունէր։*

Բայց ժամանակով, երբ Միջին Եգիպտոսի զօրութիւնը սկսեց ընկնել, հարաւային Եգիպտոսը սկսեց զօրեղանալ, նորա հետ միասին և Թեբէ քաղաքը։ Այդ քաղաքի իշխանները առաջ հպատակ էին Մեմֆիսի թագաւորներին. այժմ նոքա անկախ դառան և զօրեղացան այն աստիճան, որ եղան տէր ոչ միայն Վերին, այլ և ամբողջ Եգիպտոսի։ Այդ ժամանակից ի վեր Թեբէն դառաւ Եգիպտոսի մայր-քաղաքը։

Այստեղ կը յիշենք Թեբէի գլխաւոր թագաւորներին։

ԱՄԵՆԵՄՀԱՏ I.—*Սա ջանք արաւ Եգիպտոսը անվտանգ պահել հարևան բարբարոս ազգերի յարձակումներից և այդ*

նպատակով յաղթական պատերազմներ ունեցաւ Լիբիացւոց, Նուբիացւոց և զանազան ասիական ազգերի հետ։

Այդ պատերազմները բռնեցին նորա թագաւորութեան մեծ մասը։ Ծերութեան հասած, նա լաւ համարեց կառավարութիւնից հրաժարուել և այն իւր որդուն յանձնել. ինքը շարունակում էր խորհուրդներ տալով իւր որդուն՝ կառավարութեան վերաբերեալ։

Ամենեմհատ I ճանաչուած էր որպէս մի շատ խելացի մարդ. այդ խսկ պատճառով նորա ժամանակակիցներից մէկը մի փոքրիկ գիրք գրեց նորա անունով, որտեղ Ամենեմհատը ներկայացրած է որպէս Աստուած, որը վեր է կենում և գիտում իւր որդուն մի քանի խորհուրդներով կառավարութեան վերաբերեալ։ Այդ փոքրիկ գրուածքը, ոչ աւելի մեծ քան երեք երես, շատով մեծ հռչակ ստացաւ և մնաց այդպէս ամբողջ հազար տարի։ Դեռ այդքան տարիներից յետ այդ գիրքը ուսանում էին Եգիպտոսի ուսումնարաններում, իսկ դրագիրները արտագրում էին նորան՝ լաւ ոճ սովորելու համար։

ԻՇԽԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ։—*Մենք տեսանք, որ Ամենեմհատը, իւր կենդանութեան օրերով, իւր որդուն իրան ընկերացրեց կառավարութեան համար։ Նորա այդ վարմունքը օրինակ ծառայեց նորա յաջորդներից շատերին։*

ԱՄԵՆԵՄՀԱՏ III։ ՄԵՐԻ ԿԱՄ ՄՈՎՐԻՍ ԼԻՃԸ։—*Ամենեմհատ III-ը իւր բոլոր նախորդներից ամենամեծն է համարւում, շնորհիւ այն ահագին լճի, որ նա շինել տուեց և որին տալիս են Մերի լճի անունը։ Նորանից առաջ փարաւոնները շատ ջանքեր էին արել Նեղոսի հոսանքը կանոնաւորելու, որպէս զի ռոգման ժամանակ երկիրը չը հեղեղէ աւելի քան հարկաւոր էր և կամ որպէս զի ջուրը առատ տեղերից հոսէ ջրի կարօտ դաշտերը։ Այդ նպատակով, օրինակ, Ամենեմհատ I-ի յաջորդ Ուզորտեզենը Նեղոսի*

արեւմտեան ափի լայնութեամբ թումբեր շինել տուեց։ Բայց այդ բոլոր աշխատանքներին գերազանցեց Ամենեմհատ III-ի գործը։ Նա շինել տուեց մի ահագին աւազան, որտեղից ջուրը կարողանար կրկին դէպի գետը հոսել, եթէ, ինչպէս յաճախ պատահում էր, Նեղոսը բաւականաչափ չը բարձրանար հեղեղման ամիսներում և այդ պատճառով դաշտերը հարկաւոր եղածին չափ չը ջրւէին հեղեղումից։ Այդ աւազանը, որ Եգիպտոսի սքանչելիքներից մէկն է, կոչւում էր Մերի և կամ, որպէս յոյները նորան անւանում էին՝ Մոյրիսի լիճ։ Այդ լճի շինութեան համար հարկաւորութիւն չկար գետինը շատ փորել, որովհետև տեղը փոս էր. հարկաւոր էր միայն կողքերից մեծ թումբեր շինել, որոնց մնացորդները ցայժմ կան։ Այդ թումբերը ունէին մինչ 70 արշին (50 մետր) հաստութիւն և միայն երեք և կէս մետր բարձրութիւն։ Իսկ լճի բռնած տարածութիւնը հասնում էր մինչ 30 քառակուսի մղոնի։

Ասում են, թէ լճի միջում բարձրանում էին երկու բուրգեր և իւրաքանչիւրի վերայ՝ մի-մի հսկայական արձան, որոնցից մէկը ներկայացնում էր Ամենեմհատին իրան, միւսը՝ նորա կնոջ։

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ։ ԼԱԲԻՒՐԻՆԹՈՍ։—Մոյրիս լճի մօտերքում Ամենեմհատը հաստատեց նաև իւր բնակութիւնը, շինելով իւր համար մի պալատ և գերեզման։ Պալատը, նորա մահից յետ, դառաւ տաճար և անւանւեց Լօպ-րօ-հունա, որ նշանակում է՝ լճի մօտ շինած տաճար։ Այդ խօսքից յոյները շինեցին Լաբիւրինթոս խօսքը։

Լաբիւրինթոսը լճի արևելեան կողմումն էր։ Ամբողջը մի քառանկիւնի շինութիւն էր մօտ 280 արշին (200

մետր) երկարութեամբ և մօտ 240 արշին (170 մետր) լայնութեամբ։ Շինութեան ճակատը նայում էր դէպի լիճը և ամբողջապէս շինւած էր մարմարանման սպիտակ կրաքարերից։ Սրահը մտնելուն պէս՝ մարդս իրան շուտով կորած էր զգում խաւար և փոքրիկ քառանկիւնի սենեակների բաւիղի մէջ, որոնցից ամեն մինը ծածկւած էր մի քարով։ Սենեակների թիւը, ասում էին, երեք հազար էր, կէսը գետնի տակ, կէսը՝ գետնի վերայ։ Սենեակների պատերը և առաստաղները լիքն էին գրութիւններով և քանդակագործ պատկերներով։

Լաբիւրինթոսում պահպանում էին աստւածութիւնների խորհրդաւոր նշանները, վախճանւած թագաւորների արձանները, որպէս նաև արքունիքի թանկագին իրեղէնները։

Շինութեան մի անկիւնում Ամենեմհատը շինել էր տւել իւր գերեզմանը, որ ներկայացնում էր մի բուրգ, շինւած հում աղիւսներից և ծածկւած քանդակազարդ քարերով։

Լաբիւրինթոսը մեծ խնամքով պահպանւում էր Ամենեմհատ III-ի յաջորդների կողմից, այնպէս որ հազարաւոր տարիներից յետ, Քրիստոսից հինգ դար առաջ, Լամբիւրինթոսը օտարականների աչքին երևում էր որպէս եգիպտական արհեստի ամենակատարեալ արձանը։ Հերոդոտը նկարագրել է Լաբիւրինթոսը, որը նա հրաշալի է գտնում. բայց խօսելով Մոյրիս լճի մասին, նա վկայում է, որ վերջինս դեռ աւելի ևս սքանչելի է, քան նոյն իսկ Լաբիւրինթոսը։

Որ Մոյրիս լճի շինողը և Լաբիւրինթոսի կառուցա-

նողը Ամենեմհատ III-ն է եղած,— այդ չը գիտէին նախնիք, որոնք այդ գործքերի պատիւը սխալմամբ վերագրում էին Պսամետիք և մի քինչ որ Մովրիս փարաւոններին։

ԵԳԻՊՏՈՍԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԱՆԿՈՒՄԸ։—Ամենեմհատ III-ը պատկանում էր Եգիպտոսի Թագաւորների տասներկուերորդ սերնդին, որի ժամանակներում Եգիպտոսը հզօր տէրութիւն էր և հարուստ։ Այդ զօրութիւնը Եգիպտոսը պահպանեց նաև յաջորդ Թագաւորական սերնդի օրերով, այսինքն մի քանի հարիւր տարի ևս։ Բայց արդէն տասնևչորս երորդ սերնդի ժամանակ Եգիպտոսը բաժանւեց բազմաթիւ մանր իշխանութիւնների և սկսեց Թուլանալ, մինչև որ Ասիայից եկած մի բարբարոս ցեղ մտաւ Եգիպտոս, նւաճեց Դելտան և Միջին-Եգիպտոսը, իսկ յետոյ տիրապետեց նաև ամբողջ Եգիպտոսին. Դրքա՝ Հիւքսոսներ կամ Հովիւներ կոչւած ցեղն էին։

XI

ՀՈՎԻՒՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Հովիւները (քանանացիք)։—Իսրայելացիք Եգիպտոսում։—Իսրայելացւոց ելքը Եգիպտոսից։—Հովիւների վռնտւիլը Եգիպտոսից։

ՀՈՎԻՒՆԵՐԸ։—Պարսից ծոցի ափերին, Քրիստոսից հազարաւոր տարիներ առաջ, հաստատւել էին այսպէս կոչւած՝ քուշական ցեղեր, որոնք նմանութիւն ունէին սեմական (օրինակ՝ հրէական) ցեղերի հետ [1]։ Չը գիտենք ինչ պատճառով, այդ քուշերը սկսեցին գաղԹել մեծ մասամբ դէպի արևմուտք, այն է՝ դէպի Ասորիքի կողմերը։ Երևի Եգիպտոսի մեծ հարստութիւնների մասին լսած լինելով, այդ գաղԹականքուշերը մեծ մասամբ դիմեցին դէպի Եգիպտոս, անցան Սուէզի պարանոցը և մտան Դելտան, որին տիրեցին։ Այդ այն ժամանակն էր, երբ Եգիպտոսում իշխում էին տասն և չորս երորդ սերնդի Թագաւորները, երբ Եգիպտոսը խառնուԹեան մէջ էր և Թոյլ։

Ասիայի այդ բարբարոսները մորեխների նման Թափ-

[1]) Եբրայեցւոց աւանդութեամբ Նոյի երեք որդիքն էին՝ Սեմ, Քամ, Յաբէթ։ Սեմից սերւեցին եբրայեցիք. Քամի մեծ որդին էր Քուշ, փոքր որդին՝ Քանան, որոնցից սերւեցին քուշանացիք և քանանացիք (Տես Աստւածաշունչ, Գիրք Ծննդ. Գլ. Ժ.) Քուշանացւոց կամ քուշերի մասին աւելի երկար խօսք կը լինի Բաղդէայի պատմութեան մէջ։

ւեցին Եգիպտոսի վերայ։ Քաղաքները և տաճարները աւերւեցին, կողոպտւեցին, կրակւեցին։ Ժողովրդից շատ տղամարդ փչացաւ, իսկ կանայք և երեխաները ընկան ստրկութեան մէջ։

Դելտան նւաճելուց և Մեմֆիս քաղաքը առնելուց յետ, բարբարոսները իրանց մեծերից մէկին թագաւոր ընտրեցին։ Վերջինս հաստատւեց Մեմֆիսում և եգիպտական հպատակների վերայ մեծ տուրք դրեց։

Որովհետև Ասորիքի թափառական ցեղերին եգիպտացիք անւանում էին շ ո ւ, որ նշանակում է կողոպտողներ, յափշտակողներ, այդ պատճառով Եգիպտոսը նւաճող բարբարոսների թագաւորներին նոքա անւանեցին շուսերի թագաւորներ կամ հիք-շու։ Դորանից յոյները շինեցին Հիքուսօս կամ Հիքսօս խօսքը։ Իսկ նորեկ ժողովուրդը կոչւեց «մենփիու», այսինքն՝ հովիւներ (չոբաններ, ինչպէս մեր երկրի «Զօբանքեարան» կոչւած քրդական ժողովուրդը)։

Եգիպտացիք շատ ատեցին հովիւներին, որոնց կոչում էին անիծեալ, ժանտահար, բորոտ։

Հովիւները, թէպէտ և զինուորական և քաղաքական կողմերով գերազանցում էին եգիպտացիներին, բայց նոքա զգացին իրանց ստորութիւնը սոցա առջև մտաւոր և բարոյական կրթութեան կողմից։ Այդ պատճառով Հովիւների թագաւորները, երկիրը կառավարելու համար, իրանց ստիպւած տեսան պաշտօններ տալ եգիպտացւոց գրագէտներին։ Դոցա շնորհիւ նոքա նւազ առ նւազ ընտելացան եգիպտացւոց լուսաւորութեան։ Եգիպտացւոց կրօնը այլ ևս չը հալածւեց և մինչև անգամ իրանց կրօնը, որ քանանացւոց կրօնն էր, մի քանի բաներում փոխւեց, գլխաւո-

րապէս այն բաներում, որոնք շատ օտարոտի էին թւում եգիպտացիներին։

ԻՍՐԱՅԵԼԱՑԻՔ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ։ Սեմական ցեղերը, երևի փախչելով նոր բարբարոսներից, թողին Քաղդէան (Եփրատի և Տիգրիսի մէջ, դէպի Պարսից ծոցի կողմը) և, առասպելական Թարայի առաջնորդութեամբ, գնացին Եփրատ գետի ուղղութեամբ դէպի հիւսիս և հաստատւեցին Միջագետքում (Եփրատ և Տիգրիսի մէջ, հիւսիսային կողմը)։ Շուտով նոցա մի մասը, եբրայեցւոց անունով, թողեց Միջագետքը առաջնորդութեամբ Թարայի որդի Աբրահամի, անցաւ Ասորիքը և հաստատւեց Հեբրոնի շուրջը, որտեղից նոքա սկսեցին ցրւել քանանացւոց ամբողջ երկրում։ Բայց եբրայեցւոց մի մասը ընդունեց, իրանց առաջնորդ Բնու-Իսրայէլի անունով, իսրայելացի անունը և, երկար ժամանակ քանանացւոց երկրում թափառելուց յետոյ, մտաւ Եգիպտոս, իւր հետ բերելով իւր բոլոր գոյքը։

Այս անցքը պատմւած է նաև Հին Կտակարանի մէջ, որը հրէաների կամ եբրայեցւոց կեանքի աւանդութիւններն է պարունակում։ Ըստ հրէական աւանդութեան, Յակոբի տասն և երկու որդկերանցից ամենակրտսերը՝ Յովսէփը, հօր ամենասիրելի զաւակը լինելով, գրգռեց իւր եղբայրների ատելութիւնը. և սոքա ծախեցին Յովսէփին վաճառականների մի քարւանի, որը, Եգիպտոս հասնելով, վաճառեց Յովսէփին փարաւոնի մեծ պալատականներից մէկին։ Այստեղ նա մեծացաւ և դարձաւ փարաւոնի առաջին նախարարը։ Մի անգամ Յովսէփի եղբայրները, երբ սոցա երկրում սով էր, եկան Եգիպտոս ցորեն գնելու։ Յովսէփը նոցա ճանաչեց և տարաւ փարաւոնի մօտ։ Ուրախացաւ փարաւոնը և ասաց Յովսէփին, որ յետ ուղարկէ իւր եղբայրներին իրանց տուն, որպէս զի նոքա բերեն

Յակոբի ամբողջ գերդաստանը և խոստացաւ նրանց տալ Եգիպտոսի ամենալաւ հողը։ Այդպէս էլ եղաւ։ Յակոբը իւր տնով հաստատուեց Դելտայի արևելեան ճիւղի և անապատի մէջ՝ Գոշենի երկրում, որտեղ նոքա չափազանց աճեցին և բազմացան։

ԻՍՐԱՅԵԼԱՑԻՈՑ ԵԼՔԸ ԵԳԻՊՏՈՍԻՑ։—Իսրայէլացւոց դրութիւնը լաւ էր, քանի որ Եգիպտոսում հիքսոսներն էին իշխում. բայց, որպէս այդ շուտով պիտի տեսնենք, հիքսոսների դէմ եգիպտացիք ապստամբեցին և Հովիւները քշեցին երկրից։ Հովիւների վռնդուելուց յետ, իսրայէլացիք ընկան ստրկական վիճակի մէջ։ Նոցա գործ էին ածում շինութիւնների համար, և բոլոր աղէտները, որ նոքա կրեցին ստրկութեան ներքոյ, երկար ժամանակ մնացին նոցա յիշողութեան մէջ։ Դոցա մասին աղիողորմ կերպով պատմւում է նոցա աւանդութիւնների գրքի, այն է՝ Աստուածաշունչի մէջ։

Այդ ստրկական դրութիւնից իսրայէլացիք ազատուեցին Մովսէսի ձեռքով, որը նոցա դուրս բերեց Եգիպտոսից և օրէնքներ տուեց նրանց։ Այդ օրէնքները կոչւում են Մովսիսական օրէնքներ. նոքա պարունակում են նաև տասն պատգամները։

Աստուածաշունչի այն մասը, որ պատմում է իսրայէլացւոց ելքը Եգիպտոսից, կոչւում է Գ ի ր ք Ե լ ի ց։

ՀՈՎԻՒՆԵՐԻ ՎՌՆՏԻՒԼԸ ԵԳԻՊՏՈՍԻՑ։—Հովիւների իշխանութիւնը իսկապէս տարածւում էր Դելտայի և Մեմֆիսի վերայ և ոչ շատ հեռու Մեմֆիսից։ Վերին Եգիպտոսում և Նուբիայում իշխում էին մանր իշխաններ, որոնցից ամենանշանաւորն էին Թեբէի իշխանները։ Սոքա

յաճախ փորձեր արին Եգիպտոսը Հովիւների լծից ազատելու, բայց ի զուր։ Միմիայն երկու հարիւր տարի յետոյ բռնկուեց մի մեծ ապստամբութիւն, առաջնորդութեամբ Թեբէի իշխանի։ Հովիւները դուրս քշուեցին Եգիպտոսից և հալածուեցին մինչև Դելտայի հիւսիսային կողմերը, որտեղից, մի քանի ժամանակ յետոյ, նոյնպէս ստիպուեցին փախչել Ասորիքի կողմերը։

Ազատութեան պատերազմները, սակայն, տևեցին շատ երկար՝ աւելի քան հարիւր յիսուն տարի։

XII

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԹԵԲԷԵԱՆ ՇՐՋԱՆԻ

Թութմէս I, Թութմէս III։—Նուաճումներ Ասիայում։—Ամենհոտեպ III։—Ամմոնի տաճարը եւ Մեմնոնի արձանը։—Ռամզէս II կամ Սեզոստրիս Մեծը։—Աւանդութիւն Սեզոստրիսի աշխարհակալութեան մասին։—Պենտաուր բանաստեղծը։

ԹՈՒԹՄԷՍ I, ԹՈՒԹՄԷՍ III։ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐ ԱՍԻԱՅՈՒՄ։—*Հովիւներին դուրս քշելուց յետոյ Եգիպտոսը կարճ ժամանակում կազդուրուեց և ստացաւ այնպիսի պատերազմական ոգի, որպիսին նա դեռ երբէք ունեցած չէր։*

Եգիպտացւոց պատերազմների նպատակն էր այսուհետև նուաճել Ասիայի հարուստ երկիրները։ Դոքա էին՝ Հրէաստան, Փիւնիկիա, Ասորիք, Ասորեստան, Արաբիա։ Մէկը միւսից յետոյ այդ երկիրները նուաճուեցին և դառան ոչ թէ Եգիպտոսի նահանգներ, այլ հպատակ իշխանութիւններ, որոնք յաճախ ապստամբւում էին և կրկին հպատակւում։ Այդ նուաճումների մէջ ամենից շատ հռչակուեցին Թութմէս I *և Թութմէս* III *փարաւոնները, որոնք երկուքն ևս պատկանում էին 18-դ թագաւորական սերնդին։*

ԱՄԵՆՀՈՏԵՊ III, ԱՄՄՈՆԻ ՏԱՃԱՐԸ ԵՒ ՄԵՄՆՈՆԻ ԱՐՁԱՆԸ։—*Նոյն 18-րդ սերնդին պատկանում էր նաև Ամենհոտէպ* III, *որը Թեբէում եղած տաճարների վերայ*

աւելցրեց նաև մէկը՝ յանուն Ամմոնի։ Նա շինուած է գետի ափին, որտեղ այժմ Լուքսոր գիւղն է։ Այդ տաճարը կարող է համարուել մի գլուխ-գործոց եգիպտական արհեստի։ Տաճարի առջև կանգնեցրած էին երկու հսկայական արձաններ, որոնք երկար ժամանակ հին աշխարհի զարմացք էին կազմում։ Նոցանից մէկը ջարդուեց մի մեծ երկրաշարժից 27 թ. Քրիստոսից առաջ. արձանի վերին մասը կոտրուեց ու ընկաւ գետին, իսկ ստորին մասը մնաց իւր տեղում։ Շուտով ձայն տարածուեց, թէ արձանի պատուանդանից ամեն առաւօտ ձայներ են դուրս գալիս, նման այն ձայնին, որ առաջացնում է տաւիղի կամ քնարի կտրուող լարը։ Ճանապարհորդները հետաքրքրուեցին և շուտով մի ամբողջ աւանդութիւն կազմեց։ Չը նայած Թեբացւոց վկայութեան, յոյները չը հաւատացին, թէ այդ արձանը Ամենհոտեպինն է, այլ նորան ընդունեցին որպէս արձան եթովպական Մեմնոնի, որդու Տիթոնի և Արշալոյսի, որը Հեկտորի մահից յետոյ, եկաւ Պրիամոսին օգնութեան յոյների դէմ և որը սպանուեց Աքիլլէսից։ Ըստ առասպելի, ամեն առաւօտ Մեմնոնը, որպէս երախտապարտ որդի, ողջունում էր իւր մօրը՝ Արշալոյսին։ Այդ աւանդութիւնը այնքան ընդհանրացաւ, որ դեռ ևս երկրորդ դարում Քրիստոսից յետոյ, հռովմէական կայսր Հադրիանը Սաբինէ կայսրուհու հետ ճանապարհորդեց Վերին Եգիպտոսը՝ Մեմնոնի արձանի հրաշալի ձայնը լսելու համար։ Վերջապէս մտածեցին արձանը վերականգնել, և կայսր Սեպտիմուս Խիստը վերականգնեց նորան այն ձեւով, որպէս նա էր առաջ։ Բայց, անսպասելի կերպով, արձանը լռեց։ Եւ այդ բնական էր. քամին այլ ևս մտնելու և դուրս գալու

տեղ չունէր և օդը այլ ևս չէր խաղում նորա մէջ:

ՌԱՄՋԷՍ II ԿԱՄ ՍԵԶՈՍՏՐԻՍ ՄԵԾՆ:—Բոլոր եգիպտական թագաւորներից Սեզոստրիս Մեծը ամենայայտնին է: Նա պատկանում էր 19-դ սերնդին: Ռամզէսը դեռ միանգամայն փոքրիկ երեխայ էր, երբ իւր հայրը իրան գահակից արաւ նորան: Տասը տարեկան հասակում Ռամզէսը պատերազմեց Ասորիքում և Արաբիայում: Այդպիսով նա դեռ մանկութիւնից սովորեց զինուորական հրամանատարութեան: Իւր հօր ծերանալովը, Ռամզէսը բոլորովին իւր ձեռքն առաւ կառավարութիւնը, մինչև որ հայրը, հեռացած իւր պալատներում, վերջացրեց իւր կեանքը շրջապատած աստուածային յարգանքներով:

Սեզոստրիսի ժամանակ փոքր Ասիայի ազգերը, որոնք մինչև նոյն ժամանակ բոլորովին անյայտ էին Եգիպտացիներին, միացան Լիբիացիների հետ և յարձակուեցին հիւսիսից Դելտայի վերայ: Բայց նոցա պարտութիւնը այնքան կատարեալ էր, որ մի դար շարունակ նոքա այլ ևս չը համարձակուեցին մտածել անգամ իրանց արշաւանքները վերսկսել: Հիւսիսային կողմը ապահովելուց յետ, Սեզոստրիսը դիմեց դէպի Եթովպա՝ վերին Նեղոսի ափերի վերայ բնակող այլ և այլ ցեղերի ապստամբութիւնները ճնշելու համար: Այդտեղ նա լսեց իւր հօր մահուան լուրը և իսկոյն վերադարձաւ Թեբէ քաղաքը: Նորան շրջապատող մարդկանց մէջ կային շատ երիտասարդներ, որոնք մասնակցում էին Սեզոստրիսի բոլոր պատերազմների մէջ: Գահը բարձրանալուց մի քանի տարի յետոյ հիւսիսային Ասորիքի ազգերը, միանալով նոցանից ամենազօրեղի հետ, այն է խետացիների հետ, ապստամբեցին: Դորան ճնշելը շատ

նեղութիւն պատճառեց Սեզոստրիսին, որը անձամբ առաջնորդում էր իւր զօրքերին: Պատերազմը վերջանալուց յետ, Սեզոստրիսի և խետացւոց իշխանի մէջ կապուեց բարեկամութեան դաշինք, որով երկու իշխանները իրար խոստանում են օգնութեան գալ իրանց թշնամիների դէմ: Եւ հովանաւորել փոխադարձ առևտրական յարաբերութիւնները. նաև խոստանում էին փախստական չարագործներին յետ տալ:

Նկատելու է, որ այդ դաշնադրութիւնը, որը սկզբում խետացւոց լեզուով է գրուած, համարւում է ամենահին գրաւոր դաշնադրութիւնը, որ երբ և իցէ եղած է երկու ազգերի մէջ:

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՍԵԶՈՍՏՐԻՍԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ:—Որքան և փառաւոր էին Սեզոստրիսի պատերազմները, աւանդութիւնը չը շատացաւ եղածով: Աւանդութիւնը պատմում էր, թէ Սեզոստրիսը գնաց մինչ Ասիայի խորքերը, հպատակեց Ասորիքը, Մարաստանը, Պարսկաստանը, Բակտրիան, Հնդկաստանը մինչ ովկիանոսը և իբր թէ, վերադարձին, անցաւ սկիւթացւոց անապատների միջով, Կովկասով. այստեղ, Կովկասում, իբր թէ նա թողեց Եգիպտացիներից մի գաղթականութիւն, որից, աւանդութեան ասելով, ծագեց Կողքիսի ազգը [1]. Ասում էին մինչև անգամ, թէ Սեզոստրիսը անցաւ նաև Եւրոպա և կանգ առաւ Թրակիայում, որտեղ սովը և կլիմայի խստութիւնները վերջ դրին նորա արշաւանքներին:

[1] Կողքիս, Կոլխիս կամ Կոլխիդա այժմ հնացած անունն է մի երկրի, Սև ծովի արեւելեան ափին, որ այժմ մօտաւորապէս ռուսաց Քութայիսի նահանգն է կազմում և որ անյիշելի ժամանակներից ի վեր վրացական ազգին պատկանող գլխաւորապէս Իմերէթցի ընկերներով է բնակեցրած: Կոլխիսեցիք ուրեմն այդ երկրի հնագոյն բնակիչներն էին: Կոլխիսի մասին կայ յիշատակութիւն նաև յունաց առասպելաբանութեան մէջ, ուր պատմւում է «Արգոնաւորդների արշաւանքը»:

ՌԱՄԶԷՍ II-Ի ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ։ – Այդ պատերազմները վերջացնելով, Սեզոստրիսը մինչ իր մահը պահպանեց խաղաղութիւնը երկրում և ամբողջապէս զբաղուեց մեծ շինութիւններով։ Նա թագաւորեց 67 տարի և կարողացաւ վերջացնել իրանից առաջ սկսած շինութիւնները։ Եգիպտոսում չը կայ աւերակ, որ չը կրկէր Սեզոստրիսի անունը։ Թեբէյում, որտեղ այժմ գտնւում է Լուքսոր գիւղը, նա վերջացրեց տաճարի շէնքը և զարդարեց նորան երկու գրանիտեայ կոթողներով, որոնցից մէկը այժմ Պարիզի հրապարակներից մէկի վերայ է կանգնեցրած։

Շատ տեղ, սակայն, ճարտարապետները, զանազան շինութիւններ շինելիս, ջնջեցին հին թագաւորների անունները և նոցա տեղ Սեզոստրիսինը դրեցին։

Սեզոստրիսի ուշադրութիւնը չէր դարձրած միայն հոյակապ շինութիւնների վերայ. նա մեծապէս զբաղուեց նաև օգտաւէտ հասարակաց շինութիւններով։ Նուբիայի ոսկէհանքերը շահագործելու համար շինել տուեց ճանապարհի վերայ մի շարք կայարաններ, օժտելով նոցա անձրևային ջրամբարներով։ Ստորին Եգիպտոսի ջրանցքների ցանցը մաքրել և լրացնել տուեց, նոցա թւում նաև երկու (Միջերկրական և Կարմիր) ծովերի իրար հետ միացնող ջրանցքը։ Ասորիքի անապատի կողմի սահմանը բերդերով ամրացրեց՝ Արաբիայի և Ասորիքի թափառական ցեղերին դիմադրելու համար։ Ինքը Սեզոստրիսը իր բնակութիւնը հաստատեց Ստորին Եգիպտոսում, որտեղ շինել տուեց մի քանի նոր քաղաքներ, որոնցից ամենանշանաւորը կրում էր իր (Ռամզէս) անունը։

ՊԵՆՏԱՈՒՐ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ։ – Սեզոստրիս Մեծի գա-

րում Եգիպտոսը ունեցաւ բանաստեղծներ, որոնք իրանց գրուածքների մէջ փառաբանեցին մեծ թագաւորի գործքերը։ Նոցանից ամենայայտնին է Պենտաուր բանաստեղծը, որի մէկ գրուածքը եգիպտական բանաստեղծութեան մէջ գեղեցիկ տեղ է բռնում։ Դա՝ մի բանաստեղծական վէպ է, ուր հեղինակը երկար ու բարակ պատմում է Սեզոստրիսի քաջագործութիւնները որ նա կատարեց վերը յիշած պատերազմների մէջ խետացւոց հետ։

XIII

ԴԵԼՏԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ռամզէս III եւ նորա յաջորդները։—Թեբէի անկումը։—Տանիսի թագաւորները։—Օտարականների ազդեցութիւնը։—Բուբաստի թագաւորները։ Շեշոնք I։—Եգիպտոսը բաժանւում է մանր տէրութիւնների։—Սաիսի թագաւորները։

ՌԱՄԶԷՍ III ԵՒ ՆՈՐԱ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ։—Սեզոստրիս Մեծից (Ռամզէս II) յետոյ Եգիպտոսը սկսում է ընկնել։ Այդ անկումը եղաւ կամաց-կամաց։ Մեծ թագաւորին յաջորդեցին Թեբէյում թոյլ թագաւորներ, որոնց ժամանակ եղան անկարգութիւններ և ապստամբութիւններ։ Դոցա ճնշողը եղաւ Ռամզէս III (նոյնպէս 19-դ սերնդից), որը Եգիպտոսի մեծ թագաւորներից ամենավերջինն էր։ Նա դուրս քշեց բեդուիններին դէպի արեւմուտք, հնազանդեցրեց Լիբիան մի կողմից և Ասորիքը միւս կողմից, որոնց բնակիչները, որպէս նաև յունաց կղզիների բնակիչները, յաճախ ասպատակում էին Դելտան։ Ռամզէս III մի ծովային արշաւանք էլ ուղարկեց Արաբիա։ Այդ բոլորից յետ, Ռամզէս III-ի օրերով Եգիպտոսը կրկին ձեռք բերեց այն սահմանները, որ գոյութիւն ունէին Ռամզէս II-ի (Սեզոստրիսի) օրերով։

ԹԵԲԷԻ ԱՆԿՈՒՄԸ։—Զը նայած դորան, Եգիպտոսի անկումը մօտ էր։ Ռամզէս III-ի յաջորդները այլ ևս ոչ մի մեծ արշաւանքի չը ձեռնարկեցին. Թեբէն կորցրեց իւր ոյժը

և քահանայական դասակարգը զօրեղացաւ այնքան, որ տէրութեան կարևոր պաշտօնները իւր ձեռքն առաւ։

Թեբէի այդ անկման ժամանակ, Եգիպտոսի ոյժը Թեբէից անցաւ Դելտա, որտեղ գլխաւորապէս երեք քաղաքներ մրցեցին իշխանութիւն ձեռք բերելու Եգիպտոսի վերայ։ Դոքա էին՝ Տանիս, Բուբաստ և Սաիս։

ՏԱՆԻՍԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ։—Նախ բարձրացաւ Տանիսը, որտեղ մի նոր տոհմ իշխանութիւն ձեռք բերեց և այդպիսով սկիզբ դրեց 21-րդ թագաւորական սերնդին։ Բայց Տանիսի թագաւորները այնքան անզօր էին, որ Վերին Եգիպտոսը, Թեբէ քաղաքով, չը հնազանդուեց նրանց, իսկ Եթովպան բոլորովին անկախութիւն ձեռք բերեց և սկսեց անկախ կառավարել Ամոնի քահանայապետներից մէկի ներքոյ։ Եգիպտոսի միացեալ նահանգներն ևս բոլորովին հպատակութիւն ցոյց չը տուին Տանիսի նոր թագաւորական սերնդին։ Այդպիսի նեղ դրութեան մէջ՝ նոր թագաւորական սերունդը իւր համար նեցուկ որոնեց օտարների մէջ և սկսեց խնամութիւն հաստատել մանաւանդ Հրէաստանի թագաւորական տան հետ։

ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ։—Դելտայում շատ կային օտարականներ, գլխաւորապէս Ասորիքից, որոնք սեմական ցեղ էին։ Նոքա շատ ազդեցութիւն ձեռք բերին Դելտայում, այն աստիճան որ նոցա լեզուն տարածուեց եգիպտացւոց մէջ և մինչև անգամ պարծանք էր համարւում նոցա լեզուի խօսքերը գործածել։ Նոքա ունեցան իրանց տաճարները Մեմֆիսում և այլ քաղաքներում։ Այդ օտարականները մանաւանդ զօրացան Բուբաստ քաղաքում, որտեղ նոցանից մի գերդաստան այնքան ուժեղացաւ, որ

Բուբաստում հիմնեց մի նոր, 22-րդ թագաւորական տոհմը, որի առաջին թագաւորն էր Շեշոնք I։

ԲՈՒԲԱՍՏԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ. ՇԵՇՈՆՔ I։—Շեշոնքի գլխաւոր գործքը այն էր, որ նա օգտուեց Հրէաստանի խառնակ դրութիւնից, յարձակուեց այդ երկրի վերայ Սողոմոնի ժամանակ, յետոյ անցաւ Իսրայէլ, որտեղ առաւ շատ քաղաքներ, վերադարձաւ Եգիպտոս և արձանագրեց Կարնակի (Թեբէի) արձանների վերայ բոլոր նուաճած քաղաքների անունները։ Այդ ժամանակից Հրէաստանը քանի գնում այնքան ընկնում է, աւելի և աւելի խրուելով ներքին դժուարութիւնների մէջ, մինչև որ իսպառ կորցրեց այն հեղինակութիւնը, որ նա վայելում էր Դաւթից սկսած։

ԵԳԻՊՏՈՍԸ ԲԱԺԱՆՒՈՒՄ Է ՄԱՆՐ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ։— Բայց Շեշոնքի այդ յաջողութիւնները մնացին անհետևանք։ Նորա յաջորդները այլ ևս չը մտածեցին հարևան և հեռաւոր ազգերի վերայ, այլ փակուած մնացին Դելտայի մէջ։ Եգիպտոսը վայելեց խորին հանգստութիւն և խարխափեց անգործութեան և քնի մէջ, զբաղուելով միայն շինութիւններով զանազան քաղաքներում։ Բուբաստի թագաւորները, հաստատութիւն չը գտնելով ազգաբնակութեան մէջ, տէրութեան գլխաւոր պաշտօնները յանձնեցին թագաւորական տան անդամներին. թագաժառանգը սովորապէս նշանակւում էր Ամոնի քահանայապետ և Թեբէի կառավարիչ. միւս որդիքը կառավարիչներ էին այլ նահանգներում։

Շուտով, սակայն, այդ պաշտօնները դառան ժառանգական, և, երբ Բուբաստի փարաւոնները արդէն բաւականաչափ թուլացան, այդ կառավարիչները իրանց սեփականացրին թագաւորական տիտղոս և դարձան փարաւոնից անկախ թագաւորներ։

Ժամանակով Բուբաստի հեղինակութիւնը ընկաւ և նորա տեղը բռնեց կրկին Տանիսը, որտեղ հաստատուեց 23-րդ թագաւորական սերունդը։ Դորա ժամանակ դրութիւնը չը լաւացաւ. գոնէ հաստատ է, որ այդ սերնդի իշխանութեան օրերով Եգիպտոսը մինչ քսան իշխանութիւնների բաժանուեց, իրարից բոլորովին անկախ, որոնցից գոնէ չորսը թագաւորական տիտղոս էին կրում։

ՍԱԻՍԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ։—Այդ խառնակ դրութեան ժամանակ վերջապէս Սաիս քաղաքում մի տոհմ երևաց, որ գերազանցեց իւր հակառակորդներին տոկունութիւնով և զինուորական ոգով։ Սաիսի իշխանները ձգտեցին վայր գցել իշխանութիւնից այն մանր իշխաններին, որոնք բաժանել էին Եգիպտոսը։ Սոքա էլ միացան իրար հետ և, յոյս չունենալով իրանց վերայ, դիմեցին օգնութեան եթովպացիներին։

XIV

ԵԳԻՊՏՈՍԸ ԵԹՈՎՊԱՑԻՈՑ ԵՒ ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՈՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ

Եթովպական նւաճումը։—Սաբակոն։—Եգիպտոսը եւ Ասորեստանը։—Սաբակոնի պարտութիւնը։—Դելտայի իշխանների ջարդւելը ասորեստանցիներից Ալտակուի մօտ։—Ասորեստանցւոց փախուստը։—Եգիպտոսը վերստին եթովպացւոց եւ ասորեստանցւոց ձեռքում։—Եթովպացի Տահրակա Թագաւորը։—Ասորեստանցիք Եգիպտոսում. Թեբէի կործանումը։—Վերստին եթովպացիք Եգիպտոսում։—Սախեան սերնդի վերջնական յաղթութիւնը։

ԵԹՈՎՊԱԿԱՆ ՆՒԱՃՈՒՄԸ։—Դեռ ևս 21-րդ սերնդէ Թագաւորները աքսորեցին Ամմոն-Ռայի Թագաւոր-քահանաներին, որոնք ապաստանեցին Եգիպտոսի եթովպական նահանգներում։ Այդտեղ, Թեբէի իշխանութեան անկումից յետոյ, նոքա հիմնեցին մի անկախ Թագաւորութիւն, Նապատա մայրաքաղաքով, որը դառաւ մի տեսակ եթովպական Թեբէ, որովհետև այդ նոր Թագաւորները աշխատեցին նորան նմանեցնել Թեբէին։ Այդ նոր քահանայական Թագաւորութեան սահմանները տարածւում էին Աբիսինիայի լեռներից մինչև երկրորդ քարաժայռերը։ Իրանց յիշողութիւններով կապւած լինելով Թեբէի հետ, այդ Թագաւորները աշխատեցին գոնէ ձեռք բերել Վերին Եգիպտոսը։ Եւ դորանում նոքա յաջողեցան, հասցնելով սահմանը

մինչև Աբիդոս, երբ Դելտայում Թագաւորում էր 23-րդ սերունդը։

Եթովպայի Թագաւորը, (որի անունն էր Պիանխի—Մէյամուն) ուրախութեամբ ընդունեց Եգիպտոսի մանր իշխանների առաջարկութիւնը, մեծ զօրքով մտաւ Եգիպտոս և նւաճեց ողջ երկիրը։ Այսպիսով Եթովպան, որ երկար դարերով հպատակ էր Եգիպտոսին, այժմ ինքը դառաւ տէր Եգիպտոսի։ Եգիպտոսի մանր իշխանները պահպանեցին, սակայն, իրանց իշխանութիւնը, բայց միայն որպէս հպատակներ Եթովպայի Թագաւորին։ Սախի իշխանը, Թէպէտև յաղթւեց, բայց իշխանութիւնից չը զրկւեց։

ՍԱԲԱԿՈՆ։—Սախի իշխանները չը վհատւեցին, այլ շարունակեցին իրանց պատրաստութիւնները իրանց սերնդին յատուկ տոկունութեամբ։ Դէպքերից օգուտ քաղելով, Սախի իշխանը վերսկսեց իւր հալածանքը եգիպտական այլ մանր իշխանների դէմ և կրկին իւր ձեռքն առաւ Դելտան և Միջին Եգիպտոսը, մինչև որ Եթովպայի գահի վերայ նոր բարձրացած Սաբակոն ձեռնարկեց մի նոր արշաւանքի և կրկին նւաճեց ամբողջ Եգիպտոսը։ Սախի իշխանը բռնւեց և կենդանի այրւեց. բայց ազգականները փախան Դելտայի ճահճային տեղերը, Թափառական կեանք վարեցին և մեծ ժողովրդականութիւն ձեռք բերին։

Սաբակոնը հիմնեց նոր տոհմ և աշխատեց իւր օտար լինելը մոռացնել տալ լաւ կառավարչութիւնով։ Ճանապարհները նորոգւեցին, ջրանցքները մաքրւեցին և ընդարձակւեցին, քաղաքների համար Թումբեր շինւեցին, որ պաշտպանւեն գետի հեղեղումներից։ Տաճարները Մեմփի-

սում, Թեբէյում և այլ տեղերում նորոգւեցին։ Երկիրը սկսեց վայելել մի բարօրութիւն, որից երկար ժամանակ զրկւած էր։

ԵԳԻՊՏՈՍԸ ԵՒ ԱՍՈՐԵՍՏԱՆԸ։—Այդպիսի ուժեղ թագաւորից հարեան փիւնիկեցիք, հրէաները և փղշտացիք ուզեցին օգտւել Ասորեստանի Տուկլատ-Հաբալ-ասարի դէմ պաշտպանւելու համար։ Բայց Տուկլատ-Հաբալ-ասարի յաջորդ Սալմանասարը վաղօրօք իմացաւ նոցա գաղտնի բարեկամութիւնների մասին, ասպատակեց այդ երկիրները, ամենուրեք սարսափ տարածելով բացի Տիրոսից, որը ոչ մի հնարքով վերցնել չը կարողացաւ։

Երբ Ասորեստանում Սալմանասարին յաջորդեց Սարխուքինը, վերջինս կործանեց Սամարիան և Իսրայէլի թագաւորութիւնը, որով Ասորեստանի սահմանները այլ ևս ոչնչով չէին բաժանւած Եգիպտոսի սահմաններից և վաղ թէ ուշ՝ այդ երկու տէրութիւնները իրար պէտք է հանդիպէին։

ՍԱԲԱԿՈՆԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ։—Այդ հանդիպումը կատարւեց շուտով Պաղեստինում Ռաֆիհի մօտ, Գազայից հարաւ։ Սաբակոնը սաստիկ ջարդ կրեց և ինքը հազիւ կարողացաւ ազատւել մի փղշտացի հովւի ձեռքով, որը նորան անապատով անցկացրեց։

Սաբակոնի պարտութիւնից յետ, Եգիպտոսի մանր իշխանութիւնները իրանց գլուխը բարձրացրին, իսկ Սաիսի իշխանական ցեղից մէկը իրան ուղղակի փարաւոն հռչակեց։

ԴԵԼՏԱՅԻ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՋԱՐԴՒԵԼԸ ԱԼՏԱԿՈՒՅԻ ՄՕՏ։—Երբ Ասորեստանի գահը բարձրացաւ Սեննախերիբը, ապստամբութիւնները նորոգւեցին Ասորիքում, Պաղեստինում, Փիւնիկայում և փղշտացւոց երկրում։ Բայց Սեննախերիբի երևալը այդ երկիրներում արդէն բաւեց, որ նոքա

գլուխները խոնարհեցնեն։ Եգիպտոսի (Դելտայի) իշխանները միացան թշնամու երևալուն պէս։ Նոքա միացրին իրանց զօրքերը և ընդ առաջ գնացին ասպատակողի դէմ։ Հանդիպումը եղաւ Ալտակույի մօտ, Պաղեստինում. բայց և այս անգամ ասորեստանցիք տարան յաղթութիւնը։ Սեննախերիբը յետոյ դիմեց Հրէաստանին, որտեղ նորա անողորմ վարւողութիւնը երկար ժամանակ մնաց հրէաների յիշողութեան մէջ։

ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՈՑ ՓԱԽՈՒՍՏԸ։—Նոցա օգնութեան պիտի հասնէր Եգիպտոսը, որը կարողացաւ կարճ ժամանակում կազդուրւել, և Եթովպայի թագաւոր Տահրական։ Բայց մինչև վերջինիս գալը, Սեննախերիբը ուզեց ջնջել եգիպտացւոց զօրքերը։ Նա սխալւեց. Դելտայի վերայ արշաւելու ժամանակ, նորա զօրքերի կէսը ժանտախտով փչացաւ, միւս կէսը այն աստիճան թուլացաւ, որ Սեննախերիբը շտապեց ազատւել՝ փախչելով Նինուէ։

ԵԳԻՊՏՈՍԸ ՎԵՐՍՏԻՆ ԵԹՈՎՊԱՑԻՈՑ ԵՒ ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՈՑ ՁԵՌՔՈՒՄ։—Այսպիսով Եգիպտոսը ազատւեց նւաճողից. բայց նա չը կարողացաւ ոյժ և միութիւն ստանալ։ Դելտայի իշխանները իրար հետ մրցում էին գերիշխանութեան համար, իսկ Թեբէյում Սաբակոնին յաջորդեց նորա որդի Սաբատոկը, որը մի առ ժամանակ կարողացաւ իրան տէր ճանաչել տալ ամբողջ Եգիպտոսում։ Բայց եթովպական թագաւոր Տահրական վերջ դրեց նորա յաջողութեան, յաղթեց նորան և տիրացաւ Եգիպտոսին, մինչև որ Ասորեստանի թագաւոր Ասուր-ախէ-իդինը արշաւեց դէպի Նեղոսի հովիտը ջարդեց եթովպացիներին։ Տահրական փախաւ Եթովպայի Նապատա քաղաքը։ Ասորեստանցիք առան

Մեմֆիսը և կողոպտեցին Թեբէն. աստուածների և աստուածուհիների արձանները, քահանաների զարդերը և տաճարների շատ անօթներ տարեցին Նինուէ։

Դորանից յետ Ասուր-ախէ-իդինը սկսեց կազմակերպել երկրի կառավարութիւնը։ Նա անկախութիւն տուեց քսան իշխաններին, որոնք բաժանել էին Եգիպտոսը. նոցանից խւրաքանչիւրի վերայ հարկ դրեց և նոցա ամենքի վերայ գլուխ նշանակեց Սաիսի թագաւոր Նէքօ (Նէքաւոն) I.ին, որ ունէր իւր ցեղի բոլոր յատկութիւնները՝ եռանդ, տոկունութիւն և իշխելու ոգի։

ՏԱՀՐԱԿԱ ԵԹՈՎՊԱՑԻՆ։—Դորանով բանը չը վերջացաւ։ Եթովպայի թագաւոր Տահրական կրկին ասպատակեց Եգիպտոս։ Դելտայի իշխանները պատրաստուեցին նորան բարձրացնել փարաւոնների գահի վերայ։ Ասուր-ախէ-իդինի յաջորդ Ասուր-բան-հաբալը երևաց Դելտայում, յաղթեց Տահրակային, հարկատու իշխաններին կրկին իրանց իշխանութիւնը յետ տուեց և վերադարձաւ Նինուէ։ Բայց Տահրական վերսկսեց իւր գործը, կրկին առաւ Թեբէն և Մեմֆիսը։ Այս քաղաքում նա տօնեց նոր Ապիսի գահակալութիւնը, բայց, մի երազի պատճառով, վերադարձաւ Եթովպա, որտեղ և շուտով մեռաւ։ Նա թագաւորեց 26 տարի Եգիպտոսի վերայ և մօտ յիսուն տարի Եթովպայի վերայ։

Սաիսը վերադարձուեց Նէքաւոն I-ին և սորա որդուն էլ շնորհուեց մի այլ նահանգ։

ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻ ԱՍՈՒՐ-ԲԱՆ-ՀԱԲԱԼ ԵՒ ԹԵԲԷԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ։—Եթովպայում Տահրակային յաջորդեց Ուրդ-Ամէն, որ հռչակուեց նաև թագաւոր Թեբէի։ Նա մտաւ

Եգիպտոս, յաղթեց ասորեստանցիներին, գերեց Նէքաւոն I-ին, որին սպանել տուեց։ Ասուր-բան-հաբալը վերջապէս վճռեց վերջ դնել այդ բոլորին. նրան յաջողեց եթովպացիներին դուրս քշել նոյն իսկ Թեբէից, որը վերստին կողոպտուեց և որի բնակիչները ամբողջապէս գերի տարուեցին։ Եւ ոչ միայն Եգիպտոսը, այլ նոյն իսկ բոլոր ափական երկիրները մինչև Միջերկրական և Եգէյեան ծովերը մի քանի ժամանակ, գոնէ անունով, հպատակ եղան Ասուր-բան-հաբալին։ Բայց դեռ ևս Ասուր-բան-հաբալի օրերով, այդ հպատակութիւնից կամ կախումից ազատուեցին Լիւդիան և Եգիպտոսը։

ԵԳԻՊՏՈՍԸ ՎԵՐՍՏԻՆ ԵԹՈՎՊԱՑԻՈՑ ՁԵՌՔՈՒՄ։—Հազիւ ազատուած Ասուր-բան-հաբալի ձեռքից, Եգիպտոսը կրկին ընկաւ Եթովպայի լուծի տակ։ Այդ լուծը, սակայն տևեց միայն մի քանի տարի. Եթովպայի թագաւորը անյայտացաւ մի անյայտ պատճառով։

ՍԱԻՍԵԱՆ ՍԵՐՆԴԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ։—Ահա, այդ անցքերից յետ է, որ Սաիսեան տոհմը վերջնականապէս սկսում է տիրանալ Եգիպտոսի վերայ։ Նէքաւոն I-ի որդի Պսամետիքը ժառանգել էր իւր հօր համարձակ և ձեռնարկող ոգին։ Ինքնասիրութիւնը նորան գցեց ամեն տեսակ արկածների մէջ, որոնցից ժողովուրդը զանազան տեսակ աւանդութիւններ հիւսեց։

XV

ՍԱԻՍԵԱՆ ՇՐՋԱՆ

Աւանդութիւն տասներկու թագաւորների մասին։—Պատգամախօսի գուշակութիւնը։—Եգիպտոսը Պսամետիքի ներքոյ։—Պսամետիքի արտաքին գործերը։—Եգիպտացւոց գաղթը։—Նեքաւոն II։—Ջրանցք երկու ծովերի մէջ։—Ճանապարհորդութիւն Աֆրիկայի շուրջը։

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ։ ՊՍԱՄԵՏԻՔ։ — Այդ ժամանակներում, մօտ 666 թ. Քր. առաջ, ասում էին եգիպտացիք, ինչ ինչ պատճառներից մի շփոթութիւն եղաւ և զինուորականների գլխաւորները իրանց ձեռքը գցեցին կառավարութիւնը, որը յանձնեց նոցանից տասներկուսին։ Բայց այդ տասներկուսից մէկը, Պսամետիքը, որ Սաիսի կառավարիչն էր, իւր ընկերներին հեռացրեց և կրկին հաստատեց միութիւնը։

ՊԱՏԳԱՄԱԽՕՍԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ։—«Մի պատգամախօս, պատմեցին եգիպտացիք Հերոդոտին, յայտնել էր, որ տասներկուսից նա, որ Վուլկան աստուծուն գինի կը զոհաբերէ մի պղնձեայ ըմպանակի մէջ՝ նա կը մնայ միակ թագաւոր։ Մի օր, երբ տասներկու ազգապետները այդ աստուծուն զոհաբերութիւն էին անում, քահանայապետը նրանց առաջարկեց ոսկեայ ըմպանակներ, որ այդպիսի դէպքերում սովորութիւն էր գործածել. բայց սխալմամբ, տասներկուսի փոխարէն, նա տասնմէկն էր բերել։ Պսամետիքը ամենավերջինն էր և, որովհետև ինքը ըմպանակ չունէր, նա վերցրեց իւր պղնձեայ սաղա-

ւարտը և նորան գործածեց ըմպանակի տեղ։ Միւս իշխանները իսկոյն մտաբերեցին պատգամախօսի խօսքերը և ուզեցին սպանել Պսամետիքին։ Բայց նոքա խոստովանեցին, որ Պսամետիքը այդ բանը դիտմամբ չարեց, ուստի խնայեցին նորա կեանքը և շատացան նորանով, որ նորա կալուածները խլեցին. իսկ իրան քշեցին Դելտայի ճահճային կողմը, արգելելով, որ նա և է յարաբերութիւն ունենայ երկրի մնացած մասի հետ։

«Պսամետիքը հանգիստ չը մնաց. նա ուղարկեց մի պատգամախօսի մօտ, որը նորա հարցին պատասխանեց, թէ նա, Պսամետիքը, իւր վրէժը կը հանէ պղնձէ մարդկանց ձեռքով, որոնք ծովից դուրս կը գան։ Նա չը հասկացաւ, թէ ինչպէս այդ պիտի կատարուէր. բայց քիչ ժամանակից յետոյ մի ալեկոծութիւն յունաստանցի ծովային աւազակներին գցեց Եգիպտոսի կողմերը, ուր նոքա ափ իջան՝ զինուած պղնձէ զրահներով և զէնքերով։ Մի եգիպտացի վազելով եկաւ Պսամետիքի մօտ և պատմեց այդ լուրը. և որովհետև այդպէս զինուած մարդիկ նա երբէք տեսած չէր, լրաբերը ասաց, թէ պղնձէ մարդիկ են դուրս եկել ծովից և կողոպտում գիւղերը։

«Պատգամախօսութիւնը կատարուեց։ Թագաւորը իւր մօտ կանչեց այդ յոյներին և մեծ խոստումներով համաձայնեցրեց նոցա իւր հետ միասին կռուել։ Այդ մարդկանց և նրան հաւատարիմ մնացած եգիպտացւոց հետ Պսամետիքը գահավիժեց միւս տասնմէկ թագաւորներին և ինքը դառաւ միակ թագաւորը»։

Այս աւանդութիւնը, որ առասպելական է, մեզ միայն ցոյց է տալիս, որ Պսամետիքը կարողացաւ իւր իշխանութիւնը տարածել Եգիպտոսի վերայ շնորհիւ վարձկան զօրքերի, կազմած յոյներից և եգիպտացիներից։

Պսամետիքը ինքը որոշում էր իւր գահակալութեան տարին 666 թւականին Քր. առաջ, այսինքն նոյն տարին, երբ մեռաւ եթովպացի Տահրական։ Բայց ասորեստանցւոց վռնուելը, եթովպական վերջին նուաճումը և պատերազմները միւս իշխան-

նների դէմ անշուշտ առնուազն տասը—տասնհինգ տարի բռնե-
ցին. և արդարև, ըստ յունական աւանդութեան, Պսամետիքը
միակ տէր դառաւ 651 թ. Քր. առաջ:

Այդպիսով Պսամետիքը հասաւ այն նպատակին, որի
համար նորա սերունդը հարիւր տարի ի վեր մարտնչում էր
առանց վեհերութեան, առանց յուսահատութեան:

Այդ սերունդը Եգիպտոսի 26-րդ թագաւորական սե-
րունդն էր:

Իւր սերնդին օրինաւոր հաստատութիւն տալու համար,
Պսամետիքը կնութեան առաւ Սապենոպ անունով իշխանուհուն,
որը Սաբակոնի նախորդ Սաբակի քրոջ աղջիկն էր: Այդ Սա-
պենոպը համարւում էր եգիպտական հին սերունդների օրի-
նաւոր ժառանգուհին:

ԵԳԻՊՏՈՍԸ ՊՍԱՄԵՏԻՔԻ ՆԵՐՔՈՅ:—Սախեան սերունդը
վերջինն էր եգիպտական մեծանուն սերունդներից: Պսա-
մետիքը գտաւ երկիրը աղետալի վիճակում. թէ Մեմֆիսը
և թէ Թեբէն քանիցս անգամ պաշարւել էին և կողոպտ-
ւել ասորեստանցիներից: Հարկաւոր էր կրկին մաքրել և
նորոգել ջրանցքները և ճանապարհները. հարկաւոր էր նո-
րոգել տաճարները և այլ սրբազան շինութիւնները:

Արւեստները խրախոյս ստացան ուղղակի թագաւորից:
Արձանները բազմացան ամենուրեք: Սախեան շրջանում
արձանները շինւում էին աւելի շնորհալի ոճով. աւելի մեծ
հասկացողութիւն ունեցան մանրամասները դուրս բերելու
համար, որպէս նաև զարմանալի ճարպկութիւն ձեռք բերին
կարծր քարերին ճկուն ձևեր տալ: Մարմնի չափերը աւելի
բարակացան և աւելի երկարութիւն ստացան. մարմնի ան-
դամները ճանաչւում են իրանց լայն և փոքր ինչ բէա-

լիստական ոճով. Թեբէեան շրջանի (Ռամզէս II-ի) ար-
ձանների ոճը հոյակապ է, մեծափառ և շատ անգամ
բիրտ. Սախեան արւեստը, ընդհակառակը, մեղմ է և մա-
քուր, նուրբ և կուսական:

ՊՍԱՄԵՏԻՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՔԵՐԸ: ՍԿԻՒԹԱՑԻՔ:—
Ունենալով հարաւում՝ Եթովպան, հիւսիս-արևելքում՝
Ասորեստանը, Պսամետիքը հոգս տարաւ նախ այդ սահման-
ները ապահովել բերդերով, և յետոյ միայն սկսեց իւր ար-
շաւանքները: Բայց Պսամետիքը շատ հեռու չը գնաց.
հարաւում երկրի սահմանը ընդարձակեց մինչ երկրորդ
ջրվէժը, իսկ Ասորիքի կողմից նա նւաճեց միմիայն
փղշտացւոց երկիրը: Նոյն այդ ժամանակները սկիւթացիք
հեղեղեցին Ասորեստանը և առաջաւոր Ասիայի շատ
երկիրներ և մօտեցան Եգիպտոսին: Պսամետիքը ընծաներով
կարողացաւ նոցա յետ դարձնել:

ՅՈՅՆԵՐ ԵՒ ԱՅԼ ՕՏԱՐՆԵՐ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ:—Պսամե-
տիքի ժամանակ, սակայն, եգիպտացիք մի բանի վերայ
մեծ դժգոհութիւն յայտնեցին, որը աղետալի հետևանքներ
ունեցաւ: Դժգոհութիւնը օտարների, մանաւանդ յոյների
վերայ էր: Այն օգնութեան պատճառով, որ յոյները և
այլ օտարները տւեցին Պսամետիքին նորա թագաւորու-
թեան սկզբնական տարիներում, Պսամետիքը ամեն կերպ
աշխատեց, մանաւանդ յոյներին, հիւրասիրել իւր երկրում:
Այդ օտարասիրութիւնը այն աստիճան հասաւ, որ Պսամետիքը
իւր թիկնապահութիւնը միմիայն յոյներին և կարիացւոց
յանձնեց և նրանց շնորհեց պատւաւոր տեղը զօրքի աջ
թևում: Տեղական զօրքերը դորանով չափազանց վիրաւոր-
ւեցին, նամանաւանդ, որ եգիպտացիք առելով ասում էին

յոյներին, որոնց հետ մօտ յարաբերութիւնն անգամ պղծութիւն էին համարում:

ԵԳԻՊՏԱՑԻՈՑ ԳԱՂԹԸ:—Եգիպտական զօրքերը, յուսահատութեան հասած, վճռեցին թողնել իրանց ծառայութիւնը և գաղթել: Նոցանից 240.000 հոգի հաւաքուեցին իրանց զէնքերով և ճանապարհ ընկան դէպի Եթովպա: Այդ մեծ աղէտի դէմն առնելու համար, Պսամետիքը նոցա յետևից ընկաւ, որ նոցա համոզէ վերադառնալ, չը թողնել իրանց երկրի աստուածներին, իրանց կանանց և որդկերանց: Նոցանից մէկը բիրտ կերպով պատասխանեց, թէ ամեն տեղ, ուր իրանք կ'երթան, հաւասարի կերպով կանայք էլ կը ճարեն, երեխաներ էլ: Եթովպայի թագաւորը նոցա ուրախութեամբ ընդունեց և նոցա համար բնակութեան տեղ տուեց, ուր նոքա ժամանակով առանձին ժողովուրդ կազմեցին:

Այդ մեծ գաղթը մեծապէս վնասեց Պսամետիքի դիտաւորութիւններին: Նա տեսաւ Նինուէի կործանումը (625 թ.), առանց կարողանալու օգուտ քաղել դորանից:

Իւր թագաւորութեան վերջին տարիները Պսամետիքը գործ դրեց նոր զօրք կազմելու և կրկին մի նաւատորմ ստեղծելու: Նա մեռաւ 611 թ. և թաղուեց Սայիսում, թողնելով մի որդի, որը կրում էր իւր պապ Նեքաւոնի անունը:

ՆԵՔԱՒՈՆ II:—Նեքաւոնը Եգիպտոսի նշանաւոր փարաօնների բնաւորութեան տէր մարդ էր: Նա իրան արդէն այնքան ուժեղ զգաց, որ մտադրուեց Եգիպտոսին վերադարձնել նորա նախկին զօրութիւնը: Այդ մտքով նա ձեռնարկեց մի քանի պատերազմների: Նա մտաւ Պաղես-

տին, յաղթեց և սպանեց Մագեդդօին, Հրէաստանի թագը տուեց Յովակիմին, որին նա հարկատու դարձրեց: Բայց նա աւելի հեռու գնաց. մօտեցաւ Եփրատին և վերցրեց Կարկեմիշը (Եփրատի վերին մասում): Այդտեղից նա պիտի վերադառնար. նա յաղթուեց Բաբելոնի թագաւոր Նաբուգոդոնոսորից, որը Նեքաւոնի բոլոր նուաճած երկիրները յետ խլեց և ստիպեց նորան Եգիպտոս մնալ:

ՋՐԱՆՑՔ ԵՐԿՈՒ ԾՈՎԵՐԻ ՄԷՋ:—Նեքաւոնի գլխաւոր փառքը պատերազմների մէջ չէ: Նա փորձ փորձեց միացնել Միջերկրական ծովը Կարմիր ծովի հետ, միացնելով վերջինս Նեղոսի հետ մի ջրանցքով, որի վերայ նաւագնացութիւնը պիտի տևէր չորս օր: Նա պէտք է այնքան լայն լինէր, որ երկու նաւ իրար կողքով անցնել կարողանային: Հերոդոտի ասելով, 120.000 մարդ կորան ջրանցքը փորելիս: Բայց Նեքաւոնը չը շարունակեց այդ վիթխարի գործը. պատճառը վերագրում են մի պատգամախօսին, որը թագաւորին զգուշացրեց թէ նա մի բարբարոսի համար է աշխատում:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՇՈՒՐՋԸ:—Յամաքի զօրքը Նեքաւոնը արդէն պատրաստ ստացաւ իւր հայր Պսամետիքից. իսկ իւր ուշքը ամբողջապէս դարձրեց պատերազմական նաւատորմի վերայ, որը թոյլ տուեց Եգիպտոսին իշխել թէ Կարմիր և թէ Միջերկրական ծովերի վերայ: Ջրանցքի գործը թողնելով, նա իւր հոգսը այլ բանի վերայ դարձրեց: Տիրոսացւոց և կարթագենացւոց ծովային արշաւանքները արդէն ցոյց էին տալիս, որ Աֆրիկայի շուրջը կան երկիրներ հարուստ փղոսկրով, թանկագին փայտերով և զանազան տեսակ բերքերով. բայց տիրոսացիք և

կարթագենացիք ուրիշներին չէին թոյլ տալիս գնալ այդ երկիրները Միջերկրական ծովով։ Նեքաւոնը հրամայեց իւր փիւնիկեցի նաւաստիներին գնալ այդ երկիրները հակառակ ճանապարհով, այն է՝ դուրս գալով Արաբական ծոցից և վերադառնալով Եգիպտոս Հերկուլէսեան Սիւներով (այժմեայ Ջիբրալտարի նեղուցը)։ Որքան յանդուգն ձեռնարկութիւն, եթէ հաշւի առնելու լինենք այն ժամանակուայ փոքրիկ նաւերը, Աֆրիկայի ափերի անյարմարութիւնը նաւագնացութեան համար և վերջապէս այն, որ այդ ժամանակներում Աֆրիկայի ափերի մեծագոյն մասը բոլորովին անյայտ էր։ Ճանապարհորդութիւնը տևեց երեք տարի, և ահա թէ ինչու. յարմար տեղերում նոքա վայր էին իջնում, ցորեն էին ցանում և սպասում մինչև հունձի վերջանալը։ Այլ տեսակ հնար չը կար պաշար ճարել։ Երրորդ տարին միայն հասան նոքա Հերկուլէսեան Սիւներին և Միջերկրական ծովով վերադարձան նոքա Եգիպտոս։ Պատմում են որ ճանապարհորդները կարծեցին թէ արեգակը իւր ծագման կողմը փոխել է, երբ Աֆրիկայի հարաւային ափը (այժմեայ Բարեյուսոյ հրուանդանը) անցնելուց յետ, նկատեցին, որ արեգակը այլ ևս ձախ կողմից չի ծագում, այլ աջ կողմից։

Նեքաւոնը մեռաւ 595 թ.։

XVI

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՍԱԻՍԵԱՆ ՇՐՋԱՆԻ

Ապրիէս։—Ամէս (կամ Ամասիս)։—Օտարականներ։ Յոյներ։—Ամես եւ ոսկէ անօթը։—Պարսից թագաւոր Կամբիւզը թշնամանում է Ամէսի դէմ։—Եգիպտոսի նուաճելը պարսիկներից։—Եգիպտոսը իւր անկումից մինչ այժմ։

ԱՊՐԻԷՍ։—Նեքաւոնին յաջորդեց իւր որդին Պսամետիք II մինչև 589 թ., իսկ սորան յաջորդեց Ուահաբրա (Ուհափրէս կամ Ապրիէս)։ Նորան ճանաչում էին որպէս ձեռնարկող, փառասէր և պատրաստ պատերազմական դէպքերի համար։ Երբ նա գահ բարձրացաւ, մեծ յոյսեր ստացան Տիրոսը և Փիւնիկիան, Երուսաղէմը և Յորդանանից դէս երկիրները, որոնց միակ մտածմունքն էր Նաբուգոդոնոսորից ազատուել։ Եգիպտոսը միացաւ նոցա հետ։ Բաբելատանի պատմութեան մէջ մենք կը պատմենք, թէ որքան աղէտալի եղաւ Հրէաստանի համար այդ ապստամբութիւնը։ 589 թ. Քր. առաջ Նաբուգոդոնոսորի դէմ միացած ազգերից կանգուն մնացին միայն Տիրոսը և Եգիպտոսը։ Տիրոսը 13 տարի անօգուտ կերպով պաշարելուց յետոյ, Նաբուգոդոնոսորը դիմեց Եգիպտոսին։ Բայց, ինչպէս երևում է, Նաբուգոդոնոսորը անաջողութիւն ունեցաւ, և Ապրիէսը գրաւեց Միջերկրական ծովի գրեթէ ամբողջ սիրիական ափը (Փիւնիկիան)։

ԱՀՄԷՍ։—Փիւնիկիան երկար ժամանակ չը մնաց Ապրիէսի ձեռքին։ Լիբիական ծովափեայ ցեղերը դիմեցին Ապրիէսին, որ նոցա հովանաւորէ կիրենացի յոյների դէմ (Կիրենը յոյն գաղթականութիւն էր Դելտայում, հիմնուած Պսամետիք I-ի ժամանակ)։ Ապրիէսը եգիպտական զօրք ուղարկեց Կիրենի դէմ, բայց զօրքը վերադարձաւ ջարդուած։ Եգիպտացիք, որոնք առանց այն էլ ատում էին Ապրիէսին նորա օտարամոլութեան համար, այժմ ապստամբեցին նորա դէմ։ Ապստամբների դէմ Ապրիէսը ուղարկեց իւր զօրավար Ահմէսին։ Ահմէսը սկսեց յորդորել ապստամբներին, բայց մի զինուոր նորա գլխին մի սաղաւարտ դրեց և թագաւոր հռչակեց նորան։ Ահմէսը այդպիսով ընդունեց դառնալ գլուխ ապստամբների և, ջարդելով Ապրիէսի 30.000 վարձկան զօրքը, նորան գերի վերցրեց և մատնեց Սաիսի ամբոխի ձեռքը, որը նորան սպանեց։

Ահմէսը իւր գահը հաստատուն դարձնելու համար, կնութեան առաւ Պսամետիք I-ի և սորա կին Սապենտիպի թոռան։

Դուրսը նա պահպանեց իւր գերիշխանութիւնը Փիւնիկիայի վերայ և նուաճեց Կիպրոս կղզին։ Բայց ոչ երկար կարողացաւ պահպանել այդ գերիշխանութիւնը. այդ ժամանակ կազմւեց պարսկական տէրութիւնը, որի հիմնող Կիւրոսը ամբողջ առաջաւոր Ասիան իւր հպատակութեան ներքոյ առաւ։ Ահմէսը կարողացաւ Կիւրոսի հետ հաշտութեան մէջ մնալ և իւր թագաւորութեան վերջին 25 տարիները երկրին խաղաղութիւն ապահովել և օգտակար գործերով Եգիպտոսը բարձր աստիճանի բարգաւաճման հասցնել։

ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐ. ՅՈՅՆԵՐ։ —Ահմէսը, գահ բարձրանալուց յետ, ոչ միայն չը հալածեց օտարականներին, գլխաւորապէս յոյներին, այլ և մեծապէս խրախուսեց, որ գան հաստատուեն Եգիպտոսում։

Նա մինչև անգամ մի յոյն աղջիկ կնութեան առաւ և Յունաստանի շատ սրբատեղերի հետ բարեկամական յարաբերութիւններ ունեցաւ։ 548 թ. ին երբ Դելփեան տաճարը (Յունաստանում) այրւեց, յունական տէրութիւնները իրար մէջ ժողոված գումարը անբաւական համարելով, դիմեցին բոլոր այլ ազգերին, Ահմէսը նրանց տւեց հազար տաղանդ եգիպտական շիբ, որից մեծ գումար կազմւեց։

Յոյները թափւեցին Եգիպտոս։ Պսամետիք I-ի ժամանակ եկածները, որոնք դրուած էին ստորին Նեղոսի աջ ճիւղը, արդէն բազմացել էին մինչ 200.000 հոգու։ Ահմէսը դոցա տեղափոխեց Մեմֆիս և շրջակաները։ Նորեկներին ծովի ափին մի քաղաք տւեց, որը սկսեց կրել Նաւկրատիս անունը և որտեղ յոյները կառավարւում էին իրանց սեփական օրէնքներով։ Քաղաքը մի քանի տարում դառաւ հին աշխարհի ամենանշանաւոր վաճառականական կենտրոններից մէկը։

ԱՀՄԷՍ ԵՒ ՈՍԿԷ ԱՆՕԹԸ։ —Ահմէսը ստոր ծագումից էր և այդ պատճառով արքունիքի մի քանի մեծամեծների կողմից քիչ էր յարգւած։ Նա սրանց մի դաս տւեց՝ այդ նախապաշարումը փարատելու համար։ Նորա թանկագին իրեղէնների մէջ կար մի ոսկէ աւազան, որտեղ ինքը և իւր սեղանին ճաշողները սովորութիւն ունէին ոտները լւանալ։ Թագաւորը, որպէս պատմում էին, հրամայեց այդ աւազանը կոտրել և կտորտանքից մի աստուծու արձան շինել, որին նա իւր պալատի ամենանկատելի տեղը դնել տւեց։ Ով մտնում էր պա-

լատը, խկոյն նորան երկրպագում էր։ Այն ժամանակ Ահմէսը ժողովեց այդ մարդկանց և ասաց նրանց՝ այն աստուածը, որին դուք այդքան յարգանքներ էք ցոյց տալիս, դեռ երէկ-էլօր մի աւազան էր, որը ամենագռեհիկ բանին էր ծառայում։ Նոյնը պատահել է ինձ հետ. առաջ ես չնչին մարդ էի, իսկ այսօր ես ձեր թագաւորն եմ. յարգեցէք ինձ, ուրեմն, որպէս մի թագաւորի»։ Եւ այդ օրից նա յարգւած էր ամենքից։

ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՄԲԻՒԶԸ ԹՇՆԱՄԱՆՈՒՄ Է ԱՀՄԷՍԻ ԴԷՄ։—Երբ որ Պարսկաստանում մեռաւ Կիւրոսը, սորան յաջորդեց Կամբիւզը։ Ահմէսը արդէն զգում էր, որ Կամբիւզը պիտի արշաւէ Եգիպտոս, և պատրաստւեց պատերազմի համար։ Կամբիւզը որոնում էր մի առիթ։ Պարսիկների ասելով, Կամբիւզը ուզեց Ահմէսի աղջկան այն յոյսով, որ նորա այդ առաջարկութիւնը կը մերժւի և դորանով վրէժխնդրութեան առիթ կ'ունենայ։ Ահմէսը, սակայն, փոխանակ իւր աղջկան, ուղարկեց իւր նախորդ Ապրիէսի աղջիկ Նիտետիսին։ Մի քանի ժամանակից յետոյ, Կամբիւզը, գտնելով իւր կնոջ հետ միայնակ, սորան կանչեց իւր կեղծ հօր անունով։ Դորա վերայ Նիտետիսը ասաց նորան՝ «ես տեսնում եմ թագաւոր, որ դու չես էլ կասկածում, թէ ինչպէս խաբւած ես Ահմէսից. նա ինձ վերցրեց և զարդարելով ինձ, քեզ մօտ ուղարկեց որպէս թէ ես նորա աղջիկը լինեմ. բայց իսկապէս, ես Ապրիէսի որդին եմ, որը նորա տէրն էր մինչ այն օրը, երբ Ահմէսը ապստամբեց նորա դէմ և, միւս եգիպտացւոց հետ միասին, սպանեց նորան»։

Կնոջ այս խօսքերը կատաղացրին Կամբիւզին և դրդեցին նորան զէնք բարձրացնել Եգիպտոսի վերայ։

Այլ կերպ էին պատմում եգիպտացիք։ Նիտետիսը, սոցա ասելով, ուղարկւած է եղել Կիւրոսին, որը նորան ունել է Կամբիւզին. այնպէս որ Կամբիւզը ուզեցած է եղել նուաճել Եգիպտոսը ոչ որպէս նուաճող, այլ միմիայն Եգիպտոսի գահը վերադարձնելու համար իրան, որպէս Ապրիէսի օրինաւոր ժառանգին։

ԵԳԻՊՏՈՍԻ ՆՈՒԱՃՈՒԵԼԸ ՊԱՐՍԻԿՆԵՐԻՑ 523 ԹՈՒԻՆ։—Վեց ամսից յետոյ պարսիկները յարձակւեցին Եգիպտոսի վերայ։ Ահմէսը արդէն մեռած էր և նորան յաջորդել էր նորա որդին՝ Պսամետիք III։ Վերջինս յաղթւեց, Մեմֆեսում մահւան պատժի ենթարկւեց, և Եգիպտոսը ընկաւ պարսիկների իշխանութեան ներքոյ 523 թ.։

ԵԳԻՊՏՈՍԸ ԻՒՐ ԱՆԿՈՒՄԻՑ ՄԻՆՉ ԱՅԺՄ։—Եգիպտոսը մնաց պարսիկների իշխանութեան ներքոյ մինչև որ Մակեդոնիայի թագաւոր Ալեքսանդր Մեծը նուաճեց այդ երկիրը 331 թ. Քրիստ. առաջ, հիմնելով այդտեղ Ալեքսանդրիա քաղաքը։ Ալեքսանդր Մեծի մահից յետոյ, Եգիպտոսի կուսակալ Պտոլոմէոս Լագոս այդտեղ, 303 թ. Քր. առաջ, հիմնեց մի նոր թագաւորութիւն, որը, հիմնադրի անունով, կոչւեց Պտոլոմէեան թագաւորութիւն։ Պտոլոմէոսների ժամանակ ազգային եգիպտական լուսաւորութիւնը վոնւեց, տեղ տալով յունական կուլտուրային և Ալեքսանդրիան դարձաւ կենտրոն յունական գիտնականութեան։ Պտոլոմէոսների վերջինն էր՝ Կլէօպատրա թագուհին, որի մահից յետ Եգիպտոսը, 31 թւին Քրիս. առաջ, դառաւ Հռովմէական կայսրութեան նահանգ և այդ ժամանակից ի վեր նա մշտապէս եղաւ Հռովմի համար ցորենի շտեմարան։ Քրիստոնէութիւնը դեռ առաջին դարում սկսեց արագ տարածւել այդտեղ։ Ճգնաւորութիւնը և կուսակրօնութիւնը այդտեղից սկսւեցին, և Ալեքսանդրիան դառաւ քրիստոնէական վարդապետութեան համար եղած շատ

խիստ կուռների ասպարէզ։ Երբ Հռոմէական կայսրութիւնը բաժանուեց Արեւմտեան մասի (Հռոմ մայրաքաղաքով) և Արեւելեան մասի (Բիւզանդիա, Կոստանդինապոլիս մայրաքաղաքով), Եգիպտոսը այս երկրորդին բաժին ընկաւ 395 թւին և այդպէս մնաց, մինչև որ 641 թւին նորան նուաճեց խալիֆ Օմարի զօրապետ Ամրուն (խալիֆները Մահմեդի յաջորդներն են)։ Այդ ժամանակից, արաբները մտան երկիրը, իրանց հնազանդեցրին բնիկներին, այն է կոպտերին, և երկրի մէջ իսլամութիւն տարածեցին։ Դորանով վերացան հին եգիպտական կուլտուրայի վերջին հետքերը։

Խալիֆների տիրապետութեան ժամանակ երկիրը կառավարւում էր փոխարքաների ձեռքով։ 969 թւականին տիրացաւ երկրին խալիֆ Մօէզ-Էդդին-Ալլա՛հ Ֆաթիմեանների ցեղից և հիմնեց 970 թւին Կաիրէ քաղաքը։ Երկիրը, քանի գնաց՝ այնքան ընկաւ, մինչև որ 1171-ին քուրդ Սալադինը Ֆաթիմեանների իշխանութեանը վերջ դրեց և հիմնեց Եյուբեանների իշխանական տոհմը, որի սերունդից սուլթան Մոադհամը սպանուեց իւր թիկնապահներից (մամլուք կոչուած)։ Դորանով սկսուեց մամլուքների զարհուրելի իշխանութիւնը, իրանցից ընտրուած սուլթանների ներքոյ։ 263 տարիների ընթացքում 47 մամլուք սուլթաններ սպանութեամբ և բռնութեամբ իրար յաջորդեցին։ 1517 թւին Օսմանեան (տաճկաց) սուլթան Սելիմ I (Օսմանեան սուլթանները ժառանգեցին Մահմեդի յաջորդների կամ, որ նոյնն է, խալիֆների իրաւունքները) ջարդեց մամլուքներին և երկրի կառավարութիւնը յանձնեց 24 մամլուքական բէյերին, որոնց վերայ հսկում էր մի դիւան։ 1771 ապստամբեց այդ բէյերից մէկը՝ Ալին՝ Օսմանեան սուլթանի (կամ որ նոյնն է՝ Թիւրքիայի) դէմ և իրան հռչակել տուեց մեծ սուլթան Եգիպտոսի։ Նորան վայր գցեցին, բայց դորանով Թիւրքիան միայն անունով իւր գերիշխանութիւնը վերականգնեց։ 1798 թւին ֆրանսիացիք, Նապոլէօն Բոնապարտի ներքոյ, նուաճեցին երկիրը, բայց նոցա դուրս գալուց յետ

(1801-ին) երկիրը կրկին ընկաւ Թիւրքիայի իշխանութեան ներքոյ, որը 1806-ին Մեհեմեդ Ալի՛ին Եգիպտոսի փաշա և փոխարքայ նշանակեց։ Մեհեմեդ Ալի փաշան ջնջեց մամլուքական բէյերին, անսահման իշխան դառաւ, նուաճեց Նուբիան, Կորդոֆանը և Սեննաարը, կազմակերպեց իւր զօրքը եւրոպական ձևով, նաւատորմ ստեղծեց, երկրի տնտեսական ոյժը բարձրացրեց և 1832-ին Ասորիքը խլեց Թիւրքիայից։ Թիւրքիան պատերազմեց իւր անհնազանդ վասալի դէմ, բայց յաղթւեց 1839 թ. Նիզիբի մօտ։ Եւրոպայի մեծ տէրութիւնների հակառակութեան շնորհիւ, Մեհեմեդ Ալին ընդունեց Թիւրքիայի գերիշխանութիւնը։ Եգիպտոսի հպատակութեան չափը և պայմանները որոշուեցին մի հատտիշերիֆով առ 13 փետրուարի 1841 թւի։ Մեհեմեդ Ալիի տոհմը մինչ այժմ իշխում է երկրի վերայ։ Նորան յաջորդեցին որդին Իբրահիմ փաշա, յետոյ թոռը Աբբաս փաշա, յետոյ կրկին մի որդին Սաիդ փաշա, ապա սորա հօրեղբօր որդի Իզմայիլ փաշա 1863-ից մինչ 1880 թւականը, իսկ 1880-ից մինչ մեր օրերը նորա որդի Տեւֆիկ փաշա։ Շնորհիւ մեծամեծ պարտքերին, երկրի ֆինանսները գտնւում են եւրոպական տէրութիւնների հսկողութեան ներքոյ։ Մի տասնեակ տարիներից ի վեր Անգլիան, օգնելով Եգիպտոսին Սուդանի արաբների գլուխ անցած Մահդիի դէմ, որը սպառնում է նաև Եգիպտոսին, զօրք է պահում այդ երկրում և ժամանակաւորապէս ազդեցութիւն է ձեռք բերել երկրի կառավարութեան վերայ։

ՓԻՒՆԻԿԻԱ

I

ՓԻՒՆԻԿԻԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԵՒ ԵՐԿԻՐԸ

Քանանացիք։—Փիւնիկիայի տեղագրութիւնը։—Փիւնիկեցւոց քաղաքները եւ տէրութիւնները։

ՔԱՆԱՆԱՑԻՔ։—*Անյիշելի ժամանակներից Միջին Ասիայից եկան Առաջաւոր Ասիա ցեղեր, որոնք յայտնի են քուշ անունով։ Դոքա սեմական ծագում ունէին։ Քուշերը հաստատուեցին գլխաւորապէս Պարսից ծոցի շրջակայքում և Տիգրիս ու Եփրատ գետերի երկարութեամբ։*

Քուշերից նոքա, որոնք բնակւում էին Պարսից ծոցի արեւմտեան և հարաւային ափի վերայ, դեռ ևս ոչ հաստատ յայտնի պատճառներից, բայց երևի նեղուած մի այլ ցեղի, այն է Թուրանցիների գալուստից, Պարսից ծովի ափերը Թողին և ուղևորուեցին դէպի արեւմուտք, բռնելով ամբողջ երկիրը սկսած Եփրատից մինչ Սուէզի պարանոցը։ Նոցա մի մասը, լսած լինելով Եգիպտոսի անբաւ հարստութիւնների մասին, անցաւ Եգիպտոս և նուաճեց այդ երկիրը։ Դոքա են ահա այն Հովիւները, որոնք իշխեցին Եգիպտոսում երկու հարիւր տարի շարունակ և որոնք, երկար պատերազմներից յետ, դուրս քշուեցին այդ երկրից։

Ասորիքի մեծ մասը յետոյ բռնեց այլ ազգերից, իսկ Պաղեստինը՝ հրէաներից, այնպէս որ քանանացիք աւելի և աւելի քաշւեցին դէպի Միջերկրական ծովի ափը, ուր նոքա յայտնի եղան փիւնիկեցւոց անունով:

ՓԻՒՆԻԿԻԱՅԻ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ:—Փիւնիկիան գտնւում էր Լիբանանի լեռնաշղթայի և Միջերկրական ծովի մէջ տեղը: Դա մի երկար կտոր հող է, որի լայնութիւնը միայն ութից մինչ տասը մղոն է: Լիբանանու բարձրութիւնները մի ժամանակ ծածկւած էին ահագին անտառներով կաղնիներից, եղևիններից ու կեդրոններից բաղկացած: Մեծ գետեր չը կան այդտեղ, բայց կան բազմաթիւ յորդ գետակներ, որոնք կարծես մի թռիչքով վազում են Լիբանանի ծայրերից դէպի ծովը: Հողը շատ տեղ շատ խորն է մտնում ծովի մէջ, այնպէս որ ծովափը մեծ յարմարութիւններ է տալիս նաւահանգիստների համար:

Ծովափեայ քանանացիք կամ փիւնիկեցիք դառան նաւագնաց և վաճառական ժողովուրդ:

ՓԻՒՆԻԿԵՑԻՈՑ ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՒ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:—Փիւնիկեցիք ունեցան բազմաթիւ քաղաքներ. այդ թիւը հասնում էր տասն և ութի: Դոցանից ամենանշանաւորներն էին Արադ, Սիդոն և Տիրոս: Բոլոր այդ քաղաքները կազմեցին իրարից անկախ մանր տէրութիւններ, որոնցից համաշխարհային նշանակութիւն ստացան՝ նախ Սիդոնը, իսկ Սիդոնի անկումից յետոյ՝ ևս առաւել նշանաւոր Տիրոսը: Այդ պատճառով Փիւնիկիայի պատմութիւնը բաժանւում է սիդոնեան և տիրոսեան շրջանների:

II

ՓԻՒՆԻԿԵՑԻՈՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԻԴՈՆԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Փիւնիկեցիք հին աշխարհի ամենավաճառական ազգը եղան: Իրանց առևտրական շահերի համար նոքա զոհում էին մինչև անգամ իրանց անկախութիւնը:

Առաջին անգամ փիւնիկեցիք հպատակ եղան եգիպտացւոց Թութմէս I-ի ժամանակ: Բայց այդ հպատակութիւնը կայանում էր միմիայն նորանում, որ նոքա մի որոշ հարկ էին վճարում և պարտաւոր էին, պատերազմի ժամանակ, թոյլ տալ եգիպտական զօրքերին անցնել նոցա երկրով, իսկ թշնամուն՝ մերժել:

Այդ հպատակութեան փոխարէն, Փիւնիկիան մենավաճառութիւն ձեռք բերաւ Եգիպտոսում: Սկզբում փիւնիկեցիք գաղթականութիւններ հիմնեցին Էգէյեան (Յունաց) ծովի կղզիներում. բայց նոքա այդ տեղերից յետ քաշւեցին, երբ յոյները զօրեղացան ծովերի վերայ: Յունաստանից նոքա անցան Իտալիա, այստեղից՝ Սիցիլիա, Մալտա և Աֆրիկա: Աֆրիկայում սիդոնացիք հիմնեցին Կամբէ և Ուտիկա քաղաքները: Կամբէի տեղում յետոյ միայն տիրոսացիք հիմնեցին Կարթագէն քաղաքը:

Եգիպտական հովանաւորութեան ներքոյ զօրեղացաւ Սիդոնը, որը գերակշիռ նշանակութիւն ձեռք բերեց Փիւնի-

կիայի բոլոր միւս քաղաքների առջև: Նորանից յետոյ, այդ շրջանում, նշանաւոր էր Տիրոսը:

Առևտուրը կատարւում էր ծովով և ցամաքով: Բոլոր ճանապարհները, որոնք արևելքից, այն է՝ Հնդկաստանից, Բակտրիայից, Քաղդէայից, Արաբիայից, Կովկասեան երկիրներից ուղղւում էին դէպի արևմուտք, գալիս վերջանում էին Սիդոնում և Տիրոսում: Այդ բոլոր ճանապարհների վերայ, գլխաւոր տեղերում, փիւնիկեցիք ունէին իրանց սեպհական վաճառական կոնտորները. Լաիսը, Յորդանանի աղբիւրների մօտ, սիդոնացւոց գաղթականութիւն էր. Համաթը, Օրոնտի հովտում, Թափսաք, Եփրատի հունի մօտ, Նիզիբիս, Տիգրիսի աղբիւրների մօտ—փիւնիկական գաղթականութիւններ էին համարւում: Կային նաև ուրիշ քաղաքներ, որոնց անունները մոռացւած են: Բայց այդ քաղաքները կախում չունէին Փիւնիկիայի իշխանութիւններից, այլ նոքա կախումն ունէին նոյն տեղերի հարևան իշխաններից կամ ցեղերից: Եգիպտոսի փարաւոնները թոյլ տւին նրանց ունենալ Եգիպտոսի քաղաքներում միմիայն մթերքների պահեստներ, այն է Դելտայի Տանիս, Բուբաստ, Մենդէս և Սաիս քաղաքներում: Մեմփիսում այդ պահեստները բռնել էին քաղաքի մի մասը, որը ժամանակով մի իսկական քաղաքի չափ դարձաւ:

Այլ բան էին ներկայացնում փիւնիկեցւոց միւս գաղթականութիւնները: Ծովերի ափերին փիւնիկեցիք հաստատեցին մի իսկական գաղթական տիրապետութիւն: Նոքա տիրապետեցին Կիպրոսին, հաստատւեցին Իսպանիայի ափերի վերայ, Կիլիկիայի ափը բռնեցին, ունեցան իրանց նաւահանգիստները Հռոդոս կղզու վերայ, բնակութիւն

հաստատեցին Դելոս, Հռենէ և Փարոս կղզիների վերայ. Օլիարոսը ընկաւ սիդոնացւոց ձեռքը, Մելոս՝ գիբլացւոց ձեռքը: Այդ տեղերից սիդոնացիք բարձրացան Թրակիայի ափերը, այդտեղի ոսկու հանքերը շահագործելու համար: Յետոյ մտան Սև ծովը, որտեղ նոքա, Բոսֆորից մինչ Կոլքիս, շինեցին մի շարք ամրութիւններ, որոնք յետոյ, յունաց տիրապետութեան ներքոյ, դարձան ծաղկած քաղաքներ: Դնեպրի գետաբերանի մօտ շինւեց մի քաղաք, և սիդոնացիք մտան մինչև անգամ հարաւային Ռուսաստանի մեծ դաշտերը: Այդ տեղերից նոքա ստանում էին թիւնոս ձուկը և սարդին, ծիրանի գոյն, յամպար (որը ծովից ստացւող անուշահոտ մի հիւթ է), ոսկի, արծաթ, արճիճ, բրոնզ պատրաստելու համար անհրաժեշտ անագ (կլեկ), որ նոքա առաջ ստանում էին ցամաքով՝ Հայաստանի և Ասորիքի միջով:

Միւս կողմից փիւնիկեցիք բռնեցին Կրետէ մեծ կղզին, ուր նոքա գտան ծիրանի գոյնի որսատեղեր: Կրետէից անցան Կիթեր կղզին, Լակոնիայի ծոցի մուտքի մօտ. այդ տեղը հանգստանալու տեղ էր այն նաւերի համար, որոնք անցնում էին Արևելքից դէպի Իտալիա և Սիցիլիա: Այդտեղից նոքան անցան Պելոպոնէզի ափերի շուրջը, որտեղ նոքա կառուցին փիւնիկեցւոց աստուածուհի Աստարտէի համար մի տաճար: Պելոպոնէզից նոքա տարածւեցին Իլլիրիայում և Իտալիայում: Ցամաքի Յունաստանը շուտով ինքը փիւնիկիական գաղթականներ ընդունեց: Եգինէն, Սալամինան, Արգոլիսը Ատտիկան խուզարկւեցին փիւնիկեցիներից. իսկ ըստ աւանդութեան, Կադմոս փիւնիկեցին հիմնեց Բէովտիայում (Յունաստ.) Թէբէ քաղաքը: Եւ նոյն այդ Կադ-

մոսը, ըստ աւանդութեան, հնարեց փիւնիկեցւոց այբբենարանին նմանեցրած յունական տառեր (կադմոսեան այբբենարան):

Այդ բոլորը, սակայն, չը դիմացաւ դորիացւոց գաղթականութեան: Բայց նոցա ներկայութիւնը Յունաստանի նախկին բնակիչների մէջ ունեցաւ իւր ազդեցութիւնը հելլենական բնաւորութեան և կրօնի վերայ:

Յոյները խսպառ ոչնչացրին փիւնիկական հետքերը Փոքր-Ասիայում. իսկ Յունաստանի ծովերի վերայ սիդոնական իշխանութիւնը սկսեց ընկնել, երբ Կրետէ կղզին դառաւ մի անկախ թագաւորութիւն:

Սիդոնի անկումը արագացրեց հրէաների գալով Յեսու Նաւեանի առաջնորդութեամբ. բայց վերջնական հարուածը նրան տւին փղշտացիք, որոնք կործանեցին այդ քաղաքը 1209 թւին:

Սիդոնը, թէպէտ շարունակեց իւր գոյութիւնը, բայց այդ ժամանակից ի վեր Փիւնիկիայի գերիշխող քաղաքը դառաւ Տիրոսը:

III

ՓԻՒՆԻԿԻԱՆ ՏԻՐՈՍԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Տիրոսը բռնեց Սիդոնի տեղը ազգի գերիշխանութեան մէջ. նա գլուխ կանգնեց սիդոնական զանազան քաղաքների, բացի Արադից, որը անկախ կեանք էր վարում: Բայց այդ միութեան անդամները նախանձով էին նայում Տիրոսի գերիշխանութեան վերայ և ամեն առիթից օգուտ էին քաղում նորան վնասելու: Ազգի մէջ լինում էին անկարգութիւններ, որպէս և նոյն իսկ Տիրոսում, որտեղի ազնւականութիւնը, սիդոնական ծագումից լինելով, մշտական կռւի մէջ էր ժողովրդի հետ: Տիրոսի հզօրութիւնը մեծ էր միմիայն Տիրոսի թագաւոր Իթոբաալի երկարատև իշխանութեան ժամանակ. բայց նորա մահից յետոյ նախկին տարաձայնութիւնները աւելի մեծ սաստկութեամբ վերսկսեցին: Քաղաքի թագաւորները թոյլ էին. դոցանից մէկը սպանւեց ժողովրդական կուսակցութիւնից. նորա կին Էլիսաբը դաւադրութիւն սարքեց ամուսնու տեղը բռնողի դէմ, չ'աջողեց և նաւերի վերայ, իւր հաւատարիմներով, ազատւեց դէպի Աֆրիկա: Նա վայր իջաւ այնտեղ, ուր մի քանի դար առաջ սիդոնացիք Կամբէ քաղաքն էին հաստատել. այդտեղը նա առաւ լիբիական-փիւնիկական թագաւորից և հիմնեց հին քաղաքի աւերակների վերայ մի նոր քաղաք, որին յոյները անւանեցին Կարքեդոն, իսկ հռովմայեցիք՝ Կարթագէն:

Կարթագէնի հիմնելը սկիզբն եղաւ Տիրոսի անկման: Ասորեստանցիք դեռ առաջուց երեւացել էին Փիւնիկիայում: Ասուր-Նազիր-Հաբալը անցաւ Լիբանանը և հասաւ ծովին: Տիրոսցիք բարւոք համարեցին հպատակել: Երբ ասորեստանցւոց ոյժը կէս դար յետոյ սկսեց ընկնել, Տիրոսը դադարեց ճանաչել Ասորեստանի գերիշխանութիւնը և սկսեց այլ ևս տուրք չը տալ. բայց Տուկլատ-Հաբալ-ասար II-ի ժամանակ, 742 թւին, Տիրոսը կրկին ճանաչեց այդ գերիշխանութիւնը: Բայց այդ միջոցներում Սիդոնը նուաճեց Արադ քաղաքը և կրկին դառաւ գերիշխողը Փիւնիկիայում: Կիպրոսը ապստամբեց Տիրոսի դէմ, որը կռւի մտաւ Ասորեստանի հետ: Ասորեստանցիք պաշարեցին Տիրոսը, սկզբում ցամաքից, յետոյ նաև ծովից. բայց ոչ Սալմանասար V և ոչ Սարիւքինը չը յաջողեցան քաղաքն առնել. 715-ին Սարուքինը, տասը տարի անպտուղ պատերազմից յետ, յետ քաշւեց պաշարումից, իր վրէժը հանելով Կիպրոսից, որ նա առաւ: Միմիայն 700 թւին Սարիւքինի յաջորդ Սեննախէրիբը կարողացաւ հպարտ քաղաքի օջախին գալ. նա վերցրեց Տիրոսը, սորա թագաւորի տեղ նշանակելով իրան հարկատու մի թագաւոր, որը իրան հարկատու ճանաչեց: Սիդոնը կրկին դառաւ կենտրոն փիւնիկական միութեան, բայց շատ կարճ միջոցով: Սեննախէրիբը քանդեց Սիդոնի պատերը և քաղաքի բնակիչների մի մասը տեղափոխեց Ասորեստան [1]: Ասուրբան-Հաբալը վերջին հարւածը տուեց Փիւնիկիայի քաղաքների ազատական նկրտումներին: Այդ ժամանակից ի վեր Փիւնիկիան այլ ևս չը շարժւեց մինչ Նինուէի անկումը:

[1] Գիտեցէք, որ բնակիչների տեղափոխումը հին ժամանակներում սովորական միջոցներից էր՝ նուաճած երկիրները անզօր կացուցանելու համար:

IV

ԳԱՂԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ ԱՃՈՒՄԸ ԵՒ ԱՆԿՈՒՄԸ

Մայր երկրի քաղաքների վիճակի փոփոխութիւնները կրեցին նաև փիւնիկեցւոց գաղթական քաղաքները: Քանի որ Տիրոսը աճում և զօրանում էր, զօրանում էր և ընդարձակւում նաև գաղթական տէրութիւնը: Տիրոսի ծովապետները անցան Ջիբրալտարի նեղուցը, շահագործեցին Մարոկկօի արեւմտեան ափերը և հաստատեցին բազմաթիւ կոլոնիաներ: Նոյն տիրոսցիք անցան Իսպանիայի և Գալլիայի արեւմտեան ափերով, թափանցեցին մինչ Հիւսիսային ծովի կղզիները և, գուցէ, Մեծ-Բրիտանիայից էլ դէնը: Տիրոսը մինչ Իթոբաալի մահը իսկապէս մայրաքաղաք էր ամբողջ աշխարհի վաճառականութեան: Իթոբաալի մահից յետոյ տեղի ունեցած խռովութիւնները ընդհատեցին այդ շարժումը և նուազեցրին երկրի ոյժը դեռ ևս այն ժամանակ, երբ զօրեղ թշնամիները սկսեցին իրանց յարձակումները զանազան տեղերից: Էտրուսքական (իտալական) նաւատորմը դադարեցրեց նորա յառաջդիմութիւնը Իտալիայի և Գալլիայի ափերի վերայ. իսկ յունական նաւատորմը, խլելով Սիդոնից իշխանութիւնը Էգեյեան ծովի վերայ և հաստատւելով Փոքր-Ասիայում, ետ դրեց Կիպրոսի վերայ և խիզախեց մինչ Սիցիլիա առաջ խաղալ: 734 թ. Քրիստ. առաջ առաջին արշաւանքով հիմնեց Էտնա լե-

ռան ստորոտում Նաքսոս և Մեգարէ յունական գաղթական քաղաքները. և նոյն տարում կորինթացիք և կորցիրացիք (Յունաստանի բնակիչներ) շինեցին Սիրակուզ քաղաքը Սիցիլիայում: Մի քանի տարում յոյները գրաւեցին կղզու արևելեան և հարաւային ափերը:

Կարթագէնը վերջացրեց այն, ինչ յոյները սկսած էին: Տիրոսի ազնւականութիւնը, տեղափոխւելով Կարթագէն, այստեղ երևան յանեց մի եռանդ, որ մեծութեան էր հասցրել Տիրոսը յընթացս դարերի: Նոր-քաղաքը (Կարթագէնը) մրցութեան մէջ մտաւ իւր մայր հայրենիք Տիրոսի հետ: Հիմնարկութիւնից հազիւ վաթսուն տարի անցած, նա արդէն իւր սեպհական հաշւով նւաճեց Սարդինիայի հարաւային ափը: Սիցիլիայի փիւնիկեցիք, նեղւելով յոյներից, Իսպանիայի և Աֆրիկէի փիւնիկեցիք, անդադար ասպատակւելով բնիկ բարբարոսներից, վերջապէս բոլոր ազգերը և վաճառատեղերը, որոնց պաշտպանելու կարողութիւն այլ ևս չունէր Ասորեստանի հետ պատերազմներ վարող Տիրոսը, նոքա բոլորը մտան Կարթագէնի հովանաւորութեան տակ: Ազգային «Պունի» հին անունը, որ կրում էին փիւնիկեցիք Պարսից ծոցի մօտ եղած ժամանակ, սկսեց հնչել Միջերկրականի և Ատլանտեանի ջրերի վերայ, և պունիկեան իշխանութիւնը բռնեց Արևմուտքում Փիւնիկիայի տեղը: Ասորեստանցի Ասուրնազիրհաբալի թագաւորութեան վերջին տարիներում Փիւնիկիան չունէր ոչ մի կոլոնիա, որ ճանաչէր մայր-հայրենիքի հեղինակութիւնը: Այսպիսով փիւնիկեցիք մնացին լոկ վաճառականներ առանց քաղաքական զօրութեան. նոցա ձեռքում մնաց սկզբում միմիայն բուն Փիւնիկիայի հողը, որը

վերջում նոցանից խլւեց, բայց միմիայն փիւնիկեցւոց անւան համար պատւաբեր երկարատև և յամառ պատերազմներից յետոյ:

Ասորեստանի թագաւորութեան անկումից յետոյ, Փիւնիկիայի քաղաքները, կառավարւելով իրանց թագաւորներով, ընդունեց Բաբելաստանի գերիշխանութիւնը Նաբուգոդոնոսորի ժամանակ, որի հռչակաւոր պաշարումը Տիրոսը առնելու համար, սակայն, անպտուղ մնաց: Յետոյ Փիւնիկիան ընդունեց Եգիպտոսի գերիշխանութիւնը Ուհաբրաի (Ապրիէս) և Ահմէս II-ի ժամանակ. իսկ վերջը կազմեց պարսից տէրութեան սատրապութիւններից (նահանգ) մէկի մասը, պահպանելով իւր թագաւորներին և կառավարիչներին:

Փիւնիկեցիք, ժամանակի ընթացքում, կորցրին իրանց ազգութիւնը այնպէս լիակատար կերպով, որ նոցա յետնորդները յայտնի չէ թէ ովքեր են:

V

ՓԻՒՆԻԿԵՑԻՈՑ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ

և

ՆՈՐԱՆԻՑ ԲՂԽԱԾ ԱՐԻԱԿԱՆ ԱԶԳԵՐԻ ԱՅԲԲԵՆԱՐԱՆՆԵՐԸ։

Շատ նշանաւոր իրողութիւն է, որ տառերով գրելու արհեստը հնումը կատարելագործեցին առաջին անգամ փիւնիկեցիք և որ աշխարհքում՝ բոլոր ազգերի մօտ ընդհանրապէս գործածւող այբբենարանները կամ ուղղակի կամ անուղղակի կերպով իրանց ծագումը առնում են փիւնիկեցւոց այբբենարանից։ Հնագոյն ազգերից՝ ասորեստանցիք իրանց գրութիւնը կատարելագործեցին միայն այնքան, որ գրում էին վանկական եղանակով, այսինքն նոքա ունեցան նշաններ ոչ թէ պարզ հնչիւնների համար, այլ վանկերի համար։ Եգիպտացիք, ինչպէս տեսանք, գտել էին այբբենական եղանակը, բայց և այնպէս նոքա չը կարողացան ազատել վանկանշաններից և գաղափարանշաններից, միաձայն և բազմաձայն գրերից։ Փիւնիկեցիք ընդհակառակը, իսկական այբբենարան ունեցան։

Ամենից առաջ Շամպոլիոնն էր որ յայտնեց թէ փիւնիկական այբբենարանը բղխել էր Եգիպտոսի մեհենագրութիւնից (երօգլիֆ)։ Շամպոլիոնի մտքերը այդ մասին պարզաբանեց Սալուոլինի և փոփոխեցին Շառլ Լենորման և Վան Դրիւալ։ բայց այդ մտքերը դեռ ևս գիտնական հաստատութիւն չէին

տուած, երբ Ժ. դը Ռուժէ խնդիրը իւր ձեռքն առաւ և նորան լուծեց։ Նա հաստատեց որ այն ժամանակները, երբ Հովիւները իշխում էին Եգիպտոսում, քանանացիք ընտրել էին Նօտրագրութեան եղանակների մէջ մի յայտնի քանակութեամբ տառեր, որոնք համապատասխանում էին իրանց լեզուի հիմնական հնչիւններին։ Ռուժէի ապացոյցները վերարտադրեցին Գերմանիայում Լօթ, Բրուգշ և Էբերս և ճանաչեցին որպէս վճռողական։

Փիւնիկեցւոց այբբենարանը բաղկացած է քսաներկու տառերից, որոնցից տասնհինգը մօտ նմանութիւն ունեն եգիպտական նշանների հետ, իսկ մնացածները մեհենական (հիերատական) նշանագրերի հետ հեռու նմանութիւն ունեն։

Այդ այբբենարանը առաջ գործ էր ածւում քանանացւոց երկրում, ուր նա փոփոխւեց նայած տեղերին և յաջորդաբար կազմեց արամէացւոց և պալմիրացւոց այբբենարանները։ Սիդոնացիք և տիրոսացիք ամենուրեք, ուր նոցա տանում էր իրանց վաճառականութիւնը, տարան իրանց այբբենարանը, որը ընդհանուր մայրը դառաւ աշխարհքումս ծանօթ բոլոր այբբենարանների, սկսած Հնդկաստանից և Մոնղոլիայից մինչ հին Գալլիա և Իսպանիա։ Ասիական ազգերի մօտ այդ այբբենարանը ծնունդ տուեց զանազան սիստեմների, որոնց մանրամասնութիւնների մէջ մտնել կարող չենք։ Աւելի կարևոր է իմանալ թէ ինչպէս նա անցաւ Յունաստան և Յունաստանից՝ Իտալիա։

Յոյները գիտէին որ իրանց այբբենարանը փիւնիկական ծագումից է։ Հերոդոտը (իւր պատմութեան գրքի գլուխ V) պատմում է այս աւանդութիւնը, թէ առաջին անգամ Եւրոպական ցամաքի վերայ գրութիւն տարածողը եղել է Կադմոս փիւնիկեցին։ Այլ աւանդութիւններ Կադմոսի տեղ դնում են Որփէոսի, Լինոսի, Մուսէոսի և մանաւանդ Պալամէդէսի անունները։ Յետոյ հաստատում էին թէ Կադմոսը Յունաստան բերաւ 16 կամ 18 տառեր, որ յետոյ լրացրեց Պալամէդէսը երեք կամ չորս տա-

ներով։ Այժմեան գիտութիւնը ապացուցել է որ այբբենարանի խնդրում, որպէս և շատ ուրիշ բաներում, յոյները շատ հեշտութեամբ յափշտակուել են երեւակայութիւնով։ Այժմ հաստատուած է որ յունական կադմոսեան այբբենարանը փիւնիկականն է, շատ թէ քիչ փոփոխուած՝ յունական հնչիւնների պահանջներին բաւարարութիւն տալու համար։

Ամենահին բնագիրներում (օր. Թերայի հին արձանագրութիւններում) դեռ այդ գրերով յոյները գրում էին աջից ձախ, ինչպէս փիւնիկեցիք և առհասարակ բոլոր սեմական ազգերը։ Յետոյ սովորութիւն մտաւ գրել առաջին տողը աջից ձախ, երկրորդը՝ ձախից աջ, երրորդը՝ կրկին աջից ձախ և այսպէս շարունակ։ Գրելու այդ ձեը կոչւեց բուստրոֆէդոն, որը այդպիսով օղակ ծառայեց սեմական ազգերի գրութեան և եւրոպական գրութեան եղանակների մէջ, ուր գրւում է ձախից աջ։

Կադմոսեան այբբենարանը փոփոխւեց ժամանակով, նայած տեղերին, և չորս գլխաւոր յունական այբբենարաններ ստեղծելուն տեղիք տւեց՝ էօլօ-դորիականը, ատտիքականը, կղզիների յոյների այբբենարանը և յոնիականը։ Դոքա բոլորն էլ գործածական էին մինչ V դարու վերջը Քրիստոսից առաջ. բայց 403 թւականին Քր. առաջ բոլոր յոյները վճռեցին ընդունել յոնիական այբբենարանը, որ բաղկացած է 24 տառերից։ Այդ տարուց սկսած բոլոր յոյների այբբենարանը մէկ էր։ Այդ վերջնական այբբենարանը բաւականին զանազանւում է կադմոսեան այբբենարանից տառերի դասաւորութիւնով և բնաւորութիւնով։

Կադմոսեան այբբենարանը Յունաստանից տարածւեց բոլոր հարեան երկիրների վերայ։ Փոքր Ասիան դեռ ևս չի տւել շատ հին արձաններ, որ կարելի լինէր հետևել այն բոլոր փոփոխութիւններին, որոնց ենթարկւեցին փիւնիկական ծագումն ունեցող գրութիւնները ծովափի և երկրի խորքում գտնուած ազգերի մօտ։ Լիւկիացիք և փռիւգիացիք (Փոքր Ասիայում), որպէս երեւում է, իրանց գրութիւնները փոխ են առած եղել ոչ թէ ուղղակի Փիւնիկիայից, այլ Յունաստանից, բայց փոփոխու-

թիւններով՝ համաձայն իրանց հնչիւնների պահանջներին։ Կարիացոց (նոյպէս Փոքր-Ասիայում) տառերի մի մասը կարծես փոխ են առնւած կադմոսեան այբբենարանից։

Իտալիայի հին ազգերի (օր. էտրուսքացոց) այբբենարաններում կան այնպիսի տառեր, որ չկան փիւնիկեցոց այբբենարանում, այնպէս որ նոքա այն փոխ են առել Յունաստանից, ինչպէս այդ պնդում է նաև Տացիտոս հռովմայական պատմաբանը։ Յոյն գաղթականները ներմուծեցին Իտալիա էօլօ-դորիական այբբենարանը, որը այդ երկրում երկու ձև ստացաւ՝ էտրուսքական և լատինական։ Էտրուսքականին նմանւեցին Իտալիայի կենտրոնում և Պօ գետի աւազանում բնակւող ազգերի այբբենարանները։ Լատինական այբբենարանը, որ առաջ բաղկացած էր 21 տառերից, վերջանալով X տառով, և որին յետոյ աւելցրին Y և Z տառերը, օրինակ ծառայեց ուրիշներին և նորանից բղխեցին, մի քանի փոփոխութիւններով, բոլոր այբբենարանները, որ այժմ ընդունւած են լատինական, գերմանական և սլաւոնական ցեղի ազգերից։

Հայոց այբբենարանում, որի հիմնադիրը եղաւ սուրբ Մեսրոպ, IV դարում Քր. յետոյ, տառերի հիմնական գծերը նմանութիւն ունին յունական, լատինական և փիւնիկական տառերի հետ։

Ահա փիւնիկեցւոց այբբենարանը։



Մ Ի Ջ Ա Գ Ե Տ Ք

Ք Ա Ղ Դ Ե Ա

I

ՔԱՂԴԵԱՅԻ ՀԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Տիգրիս եւ Եփրատ։—Միջագետքի նախկին բնակիչները։—Ովքեր էին Թուրանցիք։—Թուրանցւոց հին աւանդութիւնը։—Թուրանցւոց հին պատմութիւնը։—Ովքեր էին քուշերը։—Քուշերի լեզուն։—Քուշերի տիպարը։—Քուշական երեք գլխաւոր ազգերը։—Քուշերը եւ Թուրանցիք խառնւում են։—Քաղդէայի քաղաքները։—Կրօնը։

ՏԻԳՐԻՍ ԵՒ ԵՓՐԱՏ։—*Այդ երկու գետերը իրանց ակիզբը առնում են Հայաստանում, Նիփատէս լեռան մէջ, որը այժմ Կելեշին-դաղ է կոչւում։ Այդ լեռը մի լեռնաշղթայի մէջ է, որը Սև ծովի զուգահեռական շղթաներից ամենաբարձրն է և որը միայն իւր բազմաթիւ գագաթներում հասնում է մշտական ձիւնի սահմանին։*

Տիգրիս և Եփրատ գետերը, մի տեղից դուրս գալով, թափւում են նաև միևնոյն ծովը։ Դա՝ Երիթրէ ծովն է կամ, որպէս նա այժմ կոչւում է՝ Պարսից ծոցը։

Եփրատը ընթանում է առաջ արևելքից դէպ արևմուտք, յետոյ՝ դէպի հարաւ-արևմուտք, անցնում է Տաւրոսեան լեռնաշղթայով, կարծես թէ ուզելով թափուել Միջերկրական ծովը. բայց յետոյ թեքւում է դէպի հարաւ-արևելք՝ Պարսից ծոցի ուղղութեամբ։ Տիգրիսը, ընդհակառակը, նոյն իսկ սկզբից հոսում է դէպի հարաւ։ Բաղդադի մօտերքում երկու գետերը իրարից միայն մի տասնեակ վերստ հեռաւորութիւն ունին. յետոյ, գնալով իրարից գրեթէ հաւասար հեռաւորութեամբ մի երկու հարիւր վերստ, իրարից կրկին հեռանում են և յետոյ մօտենում ու միանգամայն միանում, կազմելով Շատ-էլ-արաբը, որը վերջապէս թափւում է Պարսից ծոցը։

Իւր ընթացքի միջերքում Եփրատը ընդունում է երկու օժանդակ գետեր՝ Բալիխ և Խաբուր, որոնք իրանց աղբիւրները Մասիոս լեռնից են առնում։ Խաբուրից դէնը Եփրատը այլ ևս օժանդակ գետեր չի ընդունում։ Դորա հակառակ՝ Տիգրիսը, իւր ձախ կողմում, մէկը միւսի յետևից ընդունում է Կենտրիտէս, Վերին Զաբ, Ներքին Զաբ և Գիւնդէս օժանդակ գետերը։

Իրանց ջրերի առատութեան պատճառով, երկու գետերն ևս շուտով սկսում են նաւագնաց դառնալ։ Երբ ձիւները ապրիլ ամսին սկսում են հալչել, այդ գետերը չափազանց մեծանում են, դուրս են գալիս ափերից և հաւաքւում են՝ կրկին միայն յունիս ամսին, ամենաառատիկ շոգերին։

Ամենահին ժամանակներում, Տիգրիս և Եփրատը առանձին-առանձին թափւում էին ծովը։ Այժմեայ Շատ էլ-արաբը մի ժամանակ չկար. դորա տեղը բռնում էր Պարսից ծոցը։

Այդ մեծ գետերի ջրատութիւնն է, որ յետոյ կազմեց Շատ-էլ-արաբի հարթ դաշտը, որով անցնում են այդ երկու գետերը միացած։ Նոյնը շարունակւում է դեռ այժմ, որովհետև նկատուած է, որ այդ գետերի ջրատութեան պատճառով, ծովը միշտ լցւում է, և այնքան արագ, որ եօթանասուն տարւայ մէջ՝ տեղը մի մղոնով երկարում է։

Տիգրիս և Եփրատ գետերի մէջ գտնուած երկիրը կոչւում է Միջագետք կամ եւրոպական լեզուներով, Մեսոպոտամիա։

ՄԻՋԱԳԵՏՔԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ։—Միջագետքի ամենահին բնակիչները կոչւում են Քաղդէացիք. նոքա բռնած ունէին այդ գետերի հարաւային մասը։ Քաղդէացիք մի խառնուրդ էին Թուրանցւոց և քուշերի։ Միջագետք եկան նախ Թուրանցիք, յետոյ՝ քուշեր։ Նոքա խառնուեցին միմեանց հետ և կազմեցին քաղդէական ազգը, որի անունով երկիրը կոչւեց Քաղդէա։

ՈՎՔԵՐ ԷԻՆ ԹՈՒՐԱՆՑԻՔ։—Թուրանցիք մի որոշ տիպար չէին ներկայացնում և դուցէ մի խառնուրդ էին սպիտակ և դեղին ցեղերի։ Կան Թուրանական ազգեր, որոնք սպիտակ ցեղին յատուկ գծերն ունին, և կան ուրիշ Թուրանական ազգեր, որոնք կատարելապէս խառնւում են դեղին ցեղի ազգերի հետ։ Եւ թէ այդ աստիճան զանազան ազգեր այնուամենայնիւ մի ընդհանուր Թուրանական ցեղին են պատկանում, այդ ապացուցւում է նոցա լեզուների կամ բառբառների նմանութիւնով։ Այդ նմանութիւնը, սակայն, այնքան մեծ չէ լողի համար, և ժամանակով այդ լեզուները իրարից այնքան տարբերուել են, որ մինչև անգամ հայր, մայր, տղայ, աղջիկ խօսքերը Թուրանական զանազան ազգերի լեզուներում զանազան են։

ԹՈՒՐԱՆՑԻՈՑ ՀԻՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ:—Այդ աւանդութիւնը պահպանուած է այժմ մի քանի թափառական թուրք ցեղերի մօտ: Սոցա ասելով, նախնական ցեղի հայրենիքն էր Պամիրի բարձրավանդակը, Ալտայի հովիտներից մէկը: Սկզբում իբր թէ այդ երկիրը բոլոր կողմերից պատած էր երկաթով հարուստ բարձր լեռներով: Մի հրդեհ հալեցրեց նոցա և թոյլ տուեց մարդկանց դուրս գալ իրանց բանտից: Ազգի մի մասը ցրուեց դէպի արեւմուտք և մինչև իսկ Եւրոպայի արեւմուտքը, որտեղ այժմեայ բասկերը թերևս նորա ամենավերջին ներկայացուցիչներն են: Ազգի մնացած մի մասը բնակութիւն հաստատեց այն տեղում, որը յետոյ կրեց Մարաստան անունը, միւսը՝ Ատրպատականում (Ատրօպատին), Հայաստանում և Փոքր Ասիայում: Վերջապէս այլ թուրանական ցեղեր եկան հաստատուեցին Իրանի (յետոյեայ Պարսկաստանի) հարաւում, Շուշաստանում (այլապէս Էլամ) և Տիգրիս-Եփրատի գետափերի վերայ:

ԹՈՒՐԱՆՑԻՈՑ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ: — Թուրանցիք, գալով Տիգրիսի և Եփրատի ափերը, կազմեցին մի ազգ և ունեցին արդէն գիր, ամենակարեւոր արհեստները, օրէնսդրութիւն և մի ամփոփ կրօն: Նոցա տառերը սկզբում նշանագրեր էին: Մետաղեայ գործիքները շինում էին բրոնզից. երկաթը աւելի սակաւ էր պատահում, նորան բովագործելու դժւարութեան պատճառով:

ՈՎՔԵՐ ԷԻՆ ՔՈՒՇԵՐԸ:—Աւանդութիւնը որոշում է քուշերի հայրենիքը Բակտրիայում: Նոցա ցեղերից մի քանիսը հաստատուեցին Ամու-Դարիայի և Սիր-Դարիայի ափերի վերայ այն լեռան ստորոտում, որ այժմ էլ կոչւում է Հինդու-Քուշ:

Ըստ աւանդութեան, քուշական այլ ցեղեր գնացին Դեկան (Հնդկաստանում), միւսները անցան Բաբ-էլ-Մանդեբի նեղուցը և հաստատուեցին Կապույտ-Նեղոսի ափերին, որտեղ նոքա

ճանաչուեցին, որպէս կատաղի թշնամիներ եգիպտացւոց: Դոքա են եթովպացիք, որոնց մասին յաճախ խօսք եղաւ Եգիպտոսի պատմութեան մէջ: Քուշերը անցան նաև Փոքր-Ասիա, որտեղ նոցա ներկայացուցիչներն են համարւում հին կարիացիք. վերջապէս, իրանց նաւագնացական ձգտումներով, նոքա մտան Միջերկրական ծովի ափերը և թափանցեցին նոյն իսկ Յունաստան:

Այսպիսով հնումը, տարածուած լինելով Յունաստանի ծովից մինչ Հնդկական ծովը, քուշերը ներկայացնում են ամենանշանաւոր մարկային ցեղը, որ կար հնումը:

ՔՈՒՇԵՐԻ ԼԵԶՈՒՆ:—Այդ լեզուն շատ նման էր եբրայական, արաբական և այլ սեմական ազգերի լեզուներին: Դորանից եզրակացնում են, որ քուշերը սեմական ազգերի ծագումից էին, բայց նոցանից վաղուց բաժանուած և առանձին զարգացած:

ՔՈՒՇԱԿԱՆ ՏԻՊԱՐԸ:—Քուշերը ունէին փոքր հասակ, ամուր կազմուածք, յորդ մազեր, յաճախակի խոպոպած, բայց ոչ երբէք գանգրաւոր՝ նեգրների նման. գոյնը մուգ, բաց-մուգից մինչև սև. դէմքի գծերը կանոնաւոր, երբեմն նուրբ. ճակատը ուղիղ, նեղ, բաւականաչափ բարձր. քիթը երկար, բարակ և նուրբ. միմիայն բերանն էր տգեղ՝ հաստ և մսոտ շրթունքներով:

Երեք գլխաւոր քուշական ազգեր հաստատուեցին Պարսից ծոցի շուրջը. դոցանից մէկը յետոյ թողեց գնաց Միջերկրական ծովի ափերը և կազմեց փիւնիկեցւոց ազգը: Քուշերը իրանց սրբատեղերը հաստատեցին գլխաւորապէս Պարսից ծոցի կղզիների վերայ, որտեղ կազմուեցին հոգևորական միաբանութիւններ: Սոքա մշակեցին գիտութիւններ, մանաւանդ աստղաբաշխութիւնը:

ՔՈՒՇԵՐԸ ԵՒ ԹՈՒՐԱՆՑԻՔ ԽԱՌՆՒՈՒՄ ԵՆ։—Իրար մօտ և կամ նոյն իսկ իրար հետ խառը բնակւող Թուրանական և քուշական ցեղերը ժամանակով խառնւեցին և ձուլւեցին միմեանց հետ։ Նոցա միութիւնից ծագեցին խառը ժողովուրդներ, որոնց բնակատեղին բռնում էր Իրանի հարթութիւնից մինչև Արաբիայի մեծ անապատը։ Այդ տարածութիւնը բաժանւեց, բնական կերպով, երկու մասի. Տիգրիսից դէպի արևելք կազմւեց Շուշեան ազգը կամ Էլամի թագաւորութիւնը. իսկ Տիգրիսից դէպի արևմուտք՝ կազմւեց քաղդէական ազգը և քաղդէական տէրութիւնը։ Էլամի թագաւորութիւնից, որը շատ հին է և որի մայրաքաղաքն էր Շուշ, շատ քիչ բան է յայտնի։ Աւելի նշանաւոր էր Քաղդէան։

ՔԱՂԴԷԱՅԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ։ ՈՒՐ ՔԱՂԱՔԸ։—Քաղդէայի գլխաւոր քաղաքներն էին՝ Ուր, Ուրախ, Հարսամ, Նիպուր, Սիպպարապա, Բորսիպպա, Բաբել։ Ուրը, շինւած Եփրատի աջ ափին, այդ հին ժամանակներում ծովային առևտուրի գլխաւոր կենտրոնն էր. նորա նաւերը գնում էին Պարսից ծոցը և մինչև Հնդկական ծովը։ Քաղաքի մէջ տեղում դեռ այժմ էլ կանգնած է մի եռյարկանի տաճար, շինւած աղիւսներից, կուպրով պատած։ Քաղաքի շուրջը բռնւած է գերեզմանների մի գօտիով, որոնց փորած են մեր դարու գիտնական ճանապարհորդները և ուր սոքա գտել են Քաղդէայի պատմութեան համար կարևոր տեղեկութիւններ։

ԿՐՕՆԸ։—Սկզբում Թուրանցիք ունէին իրանց սեփական կրօնը և լեզուն, որպէս և քուշերը՝ իրանցն ունէին. բայց մի՛ ազգ դառնալով, կրօններն էլ խառնւեցին։ Կրօնների միաւորւելու դարերում, երկուսից իւրաքանչիւրը աշ-

խատում էր, ի հարկէ, իւր աստուածները և ծէսերը միւսին ընդունել տալու։ Վերջը քուշերի մեծ աստուածները ընդունւեցին. բայց հասարակ ժողովուրդը պահպանեց նաև մի տեսակ ժողովրդական կրօն, որը Թուրանական էր և որը մի տեսակ կախարդութիւն էր։ Այդ կրօնի սպասաւորները կազմում էին կախարդների կամ մոգերի հոգևորականութիւն, որը երեքի էր բաժանւած՝ դևեր հեռացնողներ, բժշկողներ և աստուածիմաց հոգևորականներ։ Թէ ինչ ծէսեր էին կատարում և ինչ հմայութիւններ անում նոքա—այդ մասին նոքա ունէին մի մեծ գիրք, որի մնացորդները այժմ պահպանւած են Բրիտանական Թանգարանում (Լոնդոն քաղաքում)։

II

ՔԱՂԴԷԱՅԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս կազմեցին այդ աւանդութիւնները։—Օաննէս կենդանին։—Դիւցաբանական թագաւորներ։ Քսիզութրէ։—Քաղդէական աւանդութիւն ջրհեղեղի մասին։—Քաղդէական աւանդութիւն աշտարակաշինութեան մասին։—Բաբել աշտարակը Բորզիպպա քաղաքում։

ԻՆՉՊԷՍ ԿԱԶՄԻԵՑԻՆ ԱՅԴ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ։—Մի ազգութիւն կազմելով, թէ թուրանական ծագումի և թէ քուշական ծագումի քաղդէացիք մոռացան իրանց հին ծագումը և սկզբնական հայրենիքը։ Այդ պատճառով այն աւանդութիւնները, որ բերած էին իրանց նախկին հայրենի երկիրներից, նոքա նոյն կամ նման աւանդութիւններ դարձրին տեղական-քաղդէական. այդպիսով նոքա ամեն բանի և բոլոր մարդկանց ծննդավայրը զետեղեցին Քաղդէայում, Տիգրիս և Եփրատ գետերի ափերի վերայ։ Կազմեցին աւանդութիւններ, շատ նման Հնդկաստանի դիւցազներգութիւններին։ Դոքա՝ պատմութիւններ էին աստուածային քաջազուններին, թագաւորներ դառած աստուածներին, որոնց մասին պատմում էին նոցա գործքերը, նոցա գոյութիւնը երկրիս վերայ, նոցա պատերազմական սխրագործութիւնները, առասպելական արկածները և տէրութիւնների հիմնելը։

ՕԱՆՆԷՍ ԿԵՆԴԱՆԻՆ։—Այդ աւանդութիւնների մասին մեզ թողել են յիշատակներ Բերոզ [1]) պատմագիրը և Ասորեստանի գրականութիւնը։

[1]) Բերոզը Բաբելոնի քաղաքի քուրմ էր 3-րդ դարում Քր. առաջ. գրեց յունական լեզուով երեք գիրք բաբելոնեան պատմութիւններ. որոնցից քաղուածներ կան մի քանի հին պատմագիրների մօտ (Եւսեբիոսի, Սինցելլոսի, Յովսէփի և այլոց մօտ)։ Ի մի հաւաքեց գերմանացի Րիխտեր, 1825 թ.։

Նոցանից առաջ ենք բերում հետևեալը։

«Սկզբում զանազան ցեղերի պատկանող մարդկանց բազմութիւն կար Բաբելոնում։ Նոքա ապրում էին անասունների նման։ Բայց դեռ առաջին տարին երևաց Կարմիր ծովից, այն տեղում, որ կպած է Բաբելոնին, մի կենդանի, օժտուած բանականութիւնով՝ Օաննէս անունով։ Նորա ողջ մարմինը ձկան էր, բայց ձկան գլխի տակ ձգւում էր մարդու գլուխ, որպէս և ձկան պոչից դուրս էին ցցւած մարդու ոտներ։ Նա ունէր մարդկային ձայն, և նորա պատկերը ցայժմ կայ մնացած [1])։

Այդ կենդանին անցնում էր ցերեկը մարդկանց մէջ առանց կերակուր ընդունելու. նա սովորցնում էր նոցա գրութիւն, գիտութիւններ և ամեն տեսակ արհեստներ, քաղաքներ և տաճարներ շինելու կանոններ, օրէնքներ և երկրաչափութիւն. ցոյց էր տալիս ցանելու և հնձելու եղանակը. մի խօսքով նա տալիս էր մարդկանց այն ամենը, ինչ նպաստում էր կեանքի քաղցրութեան։ Այդ ժամանակներից դէս—ոչ մի նշանաւոր բան չի հնարւել։ Արեգակի մայր մտնելուն պէս, այս հրէշային Օաննէսը սուզւում էր ծովի ջրի մէջ և անցնում էր գիշերը ալիքների տակ,—որովհետև նա երկակենցաղ էր։ Նա գրեց իրերի և լուսաւորութեան մասին մի գիրք, որը նա մարդկանց յանձնեց»։

ԴԻՒՑԱԲԱՆԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ։ ՔՍԻԶՈՒԹՐԷ։—Երկար ժամանակ անցաւ Աստուծու այդ առաջին յայտնութիւնից մինչև դիւցաբանական մի թագաւորի սերունդի երևալը։

«Առաջին թագաւորը Ալորոսն էր, որը քաղդէացի էր, Բաբելոնից. նորա մասին միայն այս է ասւում, որ նա ուղղակի

[1]) Հայկական հին եկեղեցիների պատերի վերայ նմանապէս կարելի է տեսնել մարդագլուխ ձկների նկարներ։

աստուածութիւնից նշանակեց մարդկանց հովիւը լինելու։ Նա թագաւորեց 10 *սար, որ նոյնն է թէ* 36.000 *տարի։ Նորա որդին թագաւորեց* 3 *սար. նորանից յետոյ Ամիլարոս, որ մի այլ քաղաքից էր՝* 13 *սար։ Դորա ժամանակ Երիթրէ ծովից ծնւեց Աննեդոտոս, որ շատ նման էր Օաննէսին, լինելով կէս աստուած, կէս-մարդ, կէս-ձուկ։ Յետոյ եկաւ Ամմենոն, որ իշխեց* 12 *սար. դորան յաջորդեցին ուրիշները մինչև տասներորդ թագաւոր Քսիզութրէ, որի ժամանակ եղաւ մեծ ջրհեղեղը։ Այսպիսով մինչ մեծ ջրհեղեղը թագաւորեցին* 10 *թագաւորներ յընթացս* 120 *սարի կամ* 432.000 *տարիների և այդ միջոցում* 6 *անգամ աստուածութիւնը յայտնւեց»։*

Դոքա՝ առասպելներ են, բայց յիշւած անունները և տարեթւերը կարելի է, որ նշանակութիւն ունին։ Կարծիք կայ, թէ անդրջրհեղեղեան թագաւորների թիւը, որ տասն է, Զոդիակի 10 *նշաններն են. նոցա իշխանութեան տևողութիւնը՝ աստղաբաշխական շրջաններ են ցոյց տալիս, իսկ աստուածութեան վեց անգամ աշխարհք գալը—քաղդէացւոց վեց սրբազան գրքերն են։*

ՔԱՂԴԷԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՋՐՀԵՂԵՂԻ ՄԱՍԻՆ։— *Բայց ահա և քաղդէական աւանդութիւնը ջրհեղեղի մասին, որ այնքան նման է հրէական աւանդութիւնը։*

«Մի գիշեր Քսիզութրէն լսեց Նուա աստուծուն, որը նրան ասաց՝ Սուրիպպակի մարդ, որդի Օբարտուտուի, շինիր մի մեծ նաւ քեզ և քոյինների համար, որովհետև ես կործանելու եմ մեղաւորներին և կեանքը... Մտցրու այդ նաւի մէջ կեանքի սերմանիքը բոլոր էակների համար, որպէս զի նոքա պահպանւեն»։ Եւ հրամայեց նրան տանել Սիպպարա քաղաքը այն գրքերը, որոնք պարունակում են իրանց մէջ սկիզբը, մէջը և վերջը ամեն բանի, և, ամեն ինչ պատրաստելուց յետ, ճանապարհ ընկնել։ Քսիզութրէն հարցրեց նորան՝ ուր պիտի գնամ. նա պատասխանեց՝ «աստուածների մօտ» և աւելցրեց, թէ պէտք է աղօթել, որ մարդկանց բարիք հասնի։ Քսիզութրէն

հնազանդւեց և շինեց մի կուպրած նաւ։ «Ինչ ունեմ, ասաց նա, ժողովում եմ. ինչ ես ունէի արծաթով, հաւաքում եմ. ինչ ես ունէի ոսկով, հաւաքում եմ. ինչ ես ունէի կեանքի սերմանիքից, հաւաքում եմ. այդ բոլորը ես մտցրի նաւի մէջ։ Ես ներս մտցրի իմ բոլոր սպասաւորներին, արու թէ էգ, դաշտերի տնային կենդանիներին, դաշտերի վայրի կենդանիներին և զօրքիս երիտասարդ տղաներին. ես այդ բոլորը ներս մտցրի»։

Այդ կատարած, Սամաս աստուածը բարձրացրեց իւր ձայնը խաւարի միջից՝ «ես յորդ անձրև տեղալ կը տամ, մտիր նաւի մէջ և փակիր դուռը»։ Եւ նա առաջ բերաւ տեղումը, ասելով խաւարի մէջ՝ «ես երկնքից յորդ անձրև կը տեղացնեմ»։ Երբ, նշանակւած օրը, տօնում էի նորա տօնը, ես վախ կրեցի, մտայ նաւի մէջ և փակեցի դուռը. ես յանձնեցի իմ բնակարանը (նաւը) մի առաջնորդի՝ նորան դէպի անմատչելի լեռների գագաթները ուղղելու համար։

«Առաւօտը մի կատաղի փոթորիկ բարձրացաւ և հեռու տարածւեց երկնքի վերայ։ (Փոթորիկի աստուած) Բինը որոտաց երկնքի մէջ տեղում, Նեբոն (Նեպտուն մոլորակի աստուածը) և Սարու (Նորա ուղեկիցը) դուրս եկան դիմացի կողմից. աւերիչները գնացին դէպի լեռները և դաշտերը. Ներգալ աւերիչը (Մարս մոլորակի աստուածը), ամեն բան տակն ու վրայ արաւ. Ադարը առաջ խաղաց և ոտնակոխ արաւ ամեն բան. հրեշտակները ամեն տեղ մտցրին կործանումը և սրբեցին երկրից սորա բոլոր փառքը. փայլուն երկիրը դարձրին ամայի անապատ... Եղբայրը այլ ևս չը տեսաւ իւր եղբօր։ Փոթորիկը չը խնայեց ժողովուրդին. նոյն իսկ աստուածները երկնքում դողացին նորա առջև և որոնեցին մի ապաստան»։ Իստարը լացեց մարդկութեան ճակատագրի վերայ և «աստուածները, որպէս նաև ոգիները նորա հետ միասին լացեցին. աստուածները հեծկլտանքով ողբացին իրանց գահերի վերայ... Վեց օր և վեց գիշեր անցան. որոտումը, փոթորիկը և մրրիկը իշխում էին, եօթերորդ օրը մրրիկը հանդարտեց, և փոթորիկը, որ

ամեն բան կործանել էր, նման երկրաշարժի, հանդարտեց։ Ծովը ցամաքեց. քամին և փոթորիկը վերջացան։ Ես տարւեցի ծովի միջով. ով մեղք էր գործել և բոլոր մարդկային ցեղը, որ խոտորել էր դէպի մեղքը, նոցա մարմինները ծածանում էին եղեգնի նման։ Ես բաց արի պատուհանը, և լոյսը թափանցեց բնակարանիս մէջ. ես հանգիստ կերպով նստեցի և խաղաղութիւնը եկաւ իմ բնակարանի վերայ։

Տապանը, որ պարունակում էր իւր մէջ մարդկային ցեղի ճակատագիրը, եկաւ և կանգ առաւ Նիզիր երկրում, Գորդիեէնս (գուցէ հայոց Կորդուաց աշխարհ, եթէ ոչ Արարատը կամ Մասիսը) լեռների գագաթների վերայ։ Եօթ օր սպասելուց յետոյ, ես դուրս թողի մի աղաւնի, և սա գնաց։ Աղաւնին գնաց, որոնեց և, ոչ մի տեղ չը գտնելով հանգստանալու համար, վերադարձաւ։ Ես բաց թողի մի ծիծեռնակ, որը, ոչ մի տեղ չը գտնելով հանգստանալու համար, վերադարձաւ։ Ես բաց թողի մի ագռաւ և սա գնաց։ Ագռաւը գնաց և տեսաւ դիակներ ջրերի վերայ և նա կերաւ նոցա. Նա թռաւ և չրջեց հեռու և չը վերադարձաւ։ Ես դուրս թողի կենդանիներ դէպի չորս կողմը։ Ես ածեցի նուիրական գինի, ես շինեցի մի տաճար լերան գագաթի վերայ։ Քսիսութրէի և աստուածների աղօթները վերջապէս հանգստացրին Բէլի բարկութիւնը. Նա համաձայնեց, որ չարունակեն ապրել նոքա, ում որ տապանը ազատած էր մարդկութիւնից և այլ ևս չը կրկնել ջրհեղեղը։ «Երբ նորա վճիռը կայացաւ, Բէլը նաւ մտաւ. Նա վերցրեց իմ ձեռքը և ինձ տարաւ դուրսը և հրամայեց բերել կնոջս ինձ մօտ։ Նա մաքրեց երկիրը, համաձայնութիւն կայացրեց և իւր ձեռքի տակն առաւ ժողովուրդը»։ Աւանդութիւնը աւելցնում է, որ երբ նա իւր կնոջ, աղջկայ և առաջնորդի հետ միասին զոհ մատուցեց, Քսիսութրէն «աստուածներին նմանուելու համար, համբարձաւ և անյետացաւ առ միշտ»։ Նոքա, որոնք նաւի վերայ մնացած էին, տեսնելով, որ նա այլ ևս չի վերադառնում, ցած իջան և սկսեցին որոնել, կանչելով նորա անունը։ Նա ինքը չը յայտնեց, բայց մի ձայն եկաւ երկնքից, որը հրամայեց

նրանց բարեպաշտ լինել դէպի աստուածները, որովհետև նա, որպէս վարձատրութիւն իւր բարեպաշտութեան համար, պիտի բնակուէր աստուածների մօտ, իւր կնոջ, աղջկայ և առաջնորդի հետ միասին։ Նա ասաց նրանց, որ վերադառնան Բաբելոն, Սիպարա քաղաքում թաղած գրքերը հանեն և տան մարդկանց և, վերջապէս, որ նոցա գտնուած տեղը Հայաստանի հողն է։ Այս խօսքերը լսելուց յետոյ, նոքա զոհ մատուցին աստուածներին և ոտով գնացին Բաբելոն։ Մի մասը այն տապանի, որ կանգ էր առել Հայաստանում, մնացած կայ Գորդիեէնս լերան վերայ. մի քանի ուխտաւորներ քերթում են տապանը պատող կուպրը և բանեցնում որպէս կըգարթ (թալիսման) չարիքներից ազատ մնալու համար։ Բաբելոն գալով, Քսիսութրէի ուղեկիցները հանեցին Սիպարայում թաղած գրքերը, գրեցին շատ գրքեր, կառուցին տաճարներ և վերստին շինեցին Բաբելոնը»։

ՔԱՂԴԷԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.—Բերոզը և Ասորեստանի գրքերը պատմում են նաև Բաբելի աշտարակաշինութեան մասին գրեթէ այնպէս, ինչպէս այդ մեզ աւանդում է Աստուածաշունչը։

«Այն սերունդը, որ վերստին բնակեցրեց երկիրը, հսկաների սերունդ էր։ Պատմում են, որ առաջին մարդիկ, փքուած իրանց ուժով և մեծութիւնով, արհամարհեցին աստուածներին և իրանց նոցանից բարձր կարծեցին. և ահա նոքա շինում են մի բարձր աշտարակ այն տեղում, ուր այժմ Բաբելոնն է։ Նա արդէն մօտենում էր երկնքին, երբ քամիները, հասնելով օգնութեան աստուածներին, տապալեցին շինութիւնը բանուորների վերայ։ Նորա աւերակները կոչւեցին Բաբել։ Մինչ այն ժամանակ մարդիկ միմիայն մի լեզու ունէին, բայց աստուածները ստիպեցին նոցա այսուհետև խօսել զանազան լեզուներով»։

Հրէաների պատմածն էլ գրեթէ նոյնն է. սակայն այդ աւանդութիւնը տեղական-քաղդէական է, և միւս սեմական

ազգերի (բացի եբրայեցիներից) այդպիսի աւանդութիւն ամենևին պահպանւած չէ, և առաւել՝ արիական և թուրանական ազգերի։ Արիական ազգերից միմիայն մենք հայերս ունինք պահպանած այդ աւանդութիւնը, և մենք այդ փոխ ենք առած թէ քաղդէացւոց և թէ եբրայեցւոց սրբազան գրքերից [1]։

ԲԱԲԵԼ ԱՇՏԱՐԱԿԸ ԲՈՐՁԻՊՊԱ ՔԱՂԱՔՈՒՄ։—Բաբէլ խօսքը քաղդերէնում ծագում է Բաբ-իլու խօսքից և նշանակում է Իլուի (այսինքն Իլու աստուծու) դուռը։ Քաղդէացիք իրանք այդ աշտարակը ընդունում էին այն աշտարակի տեղ, որ կար Բորզիպպա քաղաքում և որի մասին դեռ ևս, շատ ժամանակ չեառ, Նաբուգոդոնոսոր թագաւորը վկայում էր թէ նա անյիշելի ժամանակներից թերի էր մնացած։ Նա բաղկացած էր եօթը վերադրած սանդուխքներից, որոնցից իւրաքանչիւրը նուիրած էր մի առանձին աստուծու և ներկած էր աստուածներից իւրաքանչիւրին յատուկ գոյներով։ Ամեն մինը այդ տերրասներից (սանդուխքներից) ներկայացնում էր մի կատարեալ քառանկիւնի, իսկ իր ամբողջութեամբ շինութիւնը ներկայացնում էր մի աստիճանաւոր բուրգ, հիմքում շատ լայն, ծայրում շատ նեղ։ Շինութիւնը կանգնեցրած էր մի քառանկիւնի հիմքի վերայ, այնպէս որ աստիճանների թիւը հասնում էր ութի։ Շինութեան չորս երեսները դարձրած էին դէպի չորս գլխաւոր կողմերը՝ արևելք, արևմուտք, հիւսիս, հարաւ։

---

[1]) Մասպերօ, Հին պատմութիւն արևելեան ազգերի (ֆրանսերէն), 3-դ տիպ, 1878 եր. 164, ծանօթութիւն։

III

ՔԱՂԴԷԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Նիմրոդ կամ Բել։—Ուր քաղաքի թագաւորները։—Ուրուխ։—Էլամացւոց թագաւոր Կուդուր-Նախունտա նուաճում է Քաղդէան։—Քանանացւոց գաղթը։—Կուդուր-Նախունտայի յաջորդները։—Քաղդէան կրկին անկախութիւն է ձեռք բերում։—Ագանէ քաղաքի թագաւոր Սարիուքին I։—Սարիուքինի յաջորդները։—Ասորեստանի նոր թագաւորութիւնը եւ Քաղդէայի նուաճելը։

ՆԻՄՐՈԴ ԿԱՄ ԲԵԼ։—Այսպէս, ուրեմն, Քաղդէայի ամենահին պատմութիւնը բոլորովին առասպելական է։ Նոքա ընդունում էին, որ մարդկային թագաւորներ իշխեցին միայն ջրհեղեղից յետոյ։ Բայց և սոցա վերաբերեալ աւանդութիւնները առասպելական են ցայն աստիճան, որ նոցանից մի քանիսին թագաւորել են տալիս հազար տարիներ։ Այդ աւանդութիւնների համեմատ, հիւսիսային կողմում թագաւորում էր Նիմրոդ, որին ներկայացնում են որպէս մի հզօր որսորդ։ Նոյն այդ Նիմրոդը այլ ազգերի, ի միջի այլոց և հայերի մէջ, յայտնի է, Բել անունով։ Հայկական աւանդութիւնը նորա մասին արդէն հանրածանօթ է շնորհիւ Մովսէս Խորենացու։

Նիմրոդի կամ Բելի յաջորդների մասին ոչինչ յայտնի չէ։

ՈՒՐ ՔԱՂԱՔԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ։ ՈՒՐՈՒԽ։—Ինչպէս

երեւում է, Քաղդէայի իւրաքանչիւր գլխաւոր քաղաք ունէր իւր թագաւորը և իւր թագաւորական տոհմերը, որոնք երբեմն երբեմն ընկնում էին մէկի գերիշխանութեան ներքոյ: Իրանց մասին յիշատակներ թողած թագաւորներից մեզ յայտնի են Ուր քաղաքի թագաւորները, որոնցից առաջինի, այն է Ուրուխ թագաւորի անունը գտնւում է ամբողջ Քաղդէայում: Նորա անունը գրւած ենք տեսնում կոպիտ շինւած խեցերի վերայ, և այն շինութիւնները, որոնց համար նոքա գործ են ածւած, կոպիտ են և հասարակ: Կայ մնացած մի տաճար Ուրուխի անունով, այնչափ հսկայական, որ նորա կողմերից ամէն մինը մօտ 70 մետր կամ 98 արշին է: Դա մի բլրակ է, որի համար պէտք է որ մօտ երեսուն միլիօն աղիւս գործածւած լինի:

ԷԼԱՄԱՅԻՈՑ ԹԱԳԱՒՈՐ ԿՈՒԴՈՒՐ-ՆԱԽՈՒՆՏԱ ՆՒԱՃՈՒՄ Է ՔԱՂԴԷԱՆ:—Մօտ 2.300 թ-ին Քր. առաջ Շոշի մի թագաւոր, Կուդուր-Նախունտա անունով, արշաւեց դէպի Քաղդէա, աւերեց այդ երկիրը և վերցրեց նորա քաղաքները սկսած Ուրից մինչ Բաբելոնը և, որպէս յաղթանակ, տարաւ իւր հետ քաղդէական աստուածների նկարները, պարտաւորեց երկիրը տուգանքի և թողեց երկրում՝ իշխաններ իւր սերունդից:

Դորանով վերջանում է քաղդէական պատմութեան առաջին շրջանը:

ՔԱՆԱՆԱՑԻՈՑ ԳԱՂԹԸ:—Պէտք է այստեղ ասած, որ այդ անցքից առաջ Քաղդէան արդէն թուլացած էր նորանով, որ քանանացիք գաղթեցին Երիթրէ ծովի (Պարսից ծոցի) ափերից դէպի արևմուտք, այն է դէպի Պա-

լեստին և Փիւնիկիա: Այդ գաղթի մասին մենք խօսեցինք Փիւնիկիայի պատմութեան մէջ:

ԿՈՒԴՈՒՐ-ՆԱԽՈՒՆՏԱՅԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ: — Էլամացւոց այդ նւաճումները դեռ ևս բոլորովին վերջ չը դրին Քաղդէայի մանր տէրութիւնների գոյութեան, այլ միայն նոցա հարկատու դարձրին Շոշի թագաւորներին: Վերջիններս, Կուդուր-Նախունտայից յետոյ, շարունակեցին հեռաւոր տեղերում ասպատակութիւններ և նւաճումներ անել, օրինակ Ասորիքում (Եփրատից դէպի արևմուտք), որտեղի բնակիչները յաճախ ապստամբում էին:

ՔԱՂԴԷԱՆ ԿՐԿԻՆ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ Է ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ:—Քանի մի ժամանակից յետոյ, սակայն, էլամացւոց ազդեցութիւնը նւաճւած երկիրներում նւազեց և այդ հանգամանքից օգտւելով, Քաղդէայի թագաւորները իրանց անկախութիւնը հաստատեցին. մանաւանդ Ագանէի թագաւորները, որոնք իրանց իշխանութիւնը նւազ առ նւազ տարածեցին դէպի հիւսիսային Միջագետք:

ԱԳԱՆԷ ՔԱՂԱՔԻ ԹԱԳԱՒՈՐ ՍԱՐԻՈՒՔԻՆ I:—Ագանէի թագաւորներից ամենանշանաւորը դառաւ Սարկուքին I (կամ Սարգոն): Նորա համար Ագանէ քաղաքում կանգնեցրած արձանը այս գրութիւնն է կրում՝ «Սարկուքին, հզօր թագաւոր, թագաւոր Ագանէի, այդ ես եմ: Իմ մայրը չը ճանաչեց իմ հօրը, բայց իմ գերդաստանը պատկանում էր երկրի իշխողներին: Ազուպիրաննի քաղաքում, որ գտանւում է Եփրատի ափերի վերայ, իմ մայրը յղացրեց ինձ. Նա ինձ լոյս աշխարհ բերաւ մի ծածուկ տեղում: Նա դրեց ինձ եղեգնեայ մի զամբիւղի մէջ, որի խուփը կպրով ամրացրեց և այդպէս գցեց ինձ գետը, որի ջուրը չը կարողացաւ մինչև ինձ թափանցել: Գետը տարաւ ջուրը մինչ Ակկի անունով ջուր կրող մարդու մօտ: Ակկի, ջուր

կրողը, սրտի բարութիւնից ընդունեց ինձ: Ակկի, ջուր կրողը, ինձ սնուցեց որպէս իւր սեպհական որդուն: Ակկի, ջուր կրողը, պարտիզպանի տեղ տուեց ինձ. որպէս պարտիզպանի, Իստար (աստուածը) ինձ յաջողութիւն տուեց, և... տարիներից յետ ես կալայ ձեռս թագաւորական իշխանութիւնը»:

Սարիուքին I-ը նուաճող դառաւ. Նա իւր ձեռքի տակ դցեց գրեթէ ամբողջ Քաղդէան մինչև Պարսկական ծոցը, անցաւ էլամացւոց աշխարհը, որը իրան հարկատու դարձրեց: Հիւսիսային ցեղերը, գուտիմները, որոնք բնակւում էին Եփրատ գետի և Գորդիենէս (դուցէ Արարատ) լեռան մէջ տեղում, նուաճուեցին: Յետոյ նա մտաւ Ասորիք: Նորա թագաւորութիւնը Քաղդէայի զօրութեան ամենափայլուն դարն է կազմում: Ուրուխում նա մի գրադարան հիմնեց, որի պատճառով այդ քաղաքին տուին գ ր ք ե ր ի ք ա ղ ա ք անունը: Այդ գրադարանի համար նա հրամայեց օրինել բոլոր հին գրքերը և գրել նորերը սեմական լեզւով: Գրադարանի մեծ գրքերից մինը խօսում էր հմայութեան կանոնների մասին և նախկին աստղաբաշխների դիտողութիւնների մասին: Մի այլ գիրք ներկայացնում էր սեմական և թուրանական լեզուների քերականութիւնը: Այդ և այլ գրքեր, որ գրուած էին այրուած հողի խեցերի վերայ, դեռ ևս 1500 տարի գոյութիւն ունեցան: Ասորեստանի թագաւոր Աստուր-բան-հաբալը դոցանից պատճէններ վերցնել տուեց, որոնց հնացորդները գտնուած են մեր ժամանակներում Նինուէի աւերակների մէջ և պահուած են Լոնդոնի Բրիտանական թանգարանում:

ՍԱՐԻՈՒՔԻՆ I-Ի ՅԱՋՈՐԴՆԵՐԸ:—Սարիուքին I-ին յաջորդեց Նարամ-սին, իսկ սորան մի կին, Էլլատ-Բառու: Սորա

թոյլութիւնից օգտուելով, Լարսամ քաղաքի իշխանը տիրեց ամբողջ հարաւային Քաղդէան և կամեցաւ նուաճել Բաբիլոն քաղաքը: Բայց մինչ այս մինչ այն, էլամական մի թագաւոր՝ Խամմուրագաս անունով, գահընկեց արաւ Էլլատ-Նաբուին և ինքը նորա գահը բարձրացաւ. Նա յետ նուաճեց Քաղդէան և Բաբիլոնը դարձրեց իւր մայրաքաղաքը, որ և մնաց նորա յետագաների օրերով:

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՆՈՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՔԱՂԴԷԱՅԻ ՆՈՒԱՃՈՒԵԼԸ:—Մի քանի տարի յետոյ Քաղդէան արդէն մի անզօր թագաւորութիւն էր դարձել, տեղ տալով Միջագետքի մի այլ իշխանութեան, որը հիմնուեց Բաբիլոնից հիւսիս մինչև գուտեմների սահմանները: Այդ նոր տէրութիւնը այն էր, որ յետոյ անուանեց Ասորեստան: Այդ նոր թագաւորութիւնը իւր իշխանութիւնը տարածեց Քաղդէայի վերայ, մինչև որ, մօտ 800 տարի յետոյ, քաղդէացիք կրկին ձեռք բերին իրանց անկախութիւնը, կազմելով Բաբիլոնիայի կարճատև, բայց փայլուն թագաւորութիւնը:

ԱՍՈՐԵՍՏԱՆ

I

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Աշխարհագրական։—Քաղաքներ։—Ասորեստանի սկզբնական թագաւորները։—Աւանդութիւն Նինոսի և Շամիրամի մասին։—Այդ աւանդութիւնը առասպել է։

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ։ – Ասորեստանը կամ Ասուրի երկիրը բռնում էր Տիգրիսի աւազանի մէջ տեղը սկսած այն տեղից, որտեղ Կուրնիբը խառնւում է Տիգրիսի հետ, մինչև այնտեղը, որտեղից Տիգրիսը մտնում է Բաղդադի դաշտերը։ Արևելքից մեծ Զաբ կոչուած վտակը բնականապէս բաժանում էր Ասորեստանը Նաիրի՛ի երկրից և Մարաստանի Թուրանական ցեղերից։ Հիւսիսային սահմանն էր Մասիոս լեռը, հարաւ-արևելեան սահմանը՝ Ադհեմը, արևմտեան սահմանը ձգւում էր Խաբուր վտակի և Եփրատի ընթացքով։

ՔԱՂԱՔՆԵՐ։ —Ասորեստանի ամենահին քաղաքները հիմնեցին Բաղդադի գաղթականները. դոքա էին Նինուէ, Քալախ, Սինգար և Էլ-Ասուր։ Էլ-Ասուրից դուրս եկան Ասորեստանի առաջին թագաւորները և նորա անունովն է, որ երկիրը կոչւեց Ասորեստան։ Յիշեալ քաղաքներից Նի-

նուէն և Քալախը չհաշուած Ասորեստանի երկու մայրաքաղաքները:

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ։—Որքան Քաղդէան, վերջին ժամանակներում, ընկաւ, նոյնքան Ասուրը (Էլ-Ասուրը) զօրացաւ: Ասորեստանի առաջին թագաւորները հարկատու էին Եգիպտոսի թագաւորներին և, միևնոյն ժամանակ, կախումն ունէին Քաղդէայի թագաւորներից: Բայց 15-րդ դարում Քր. առաջ նոցա յաջորդեցին թագաւորներ, որոնք անկախ եղան թէ Եգիպտոսից և թէ մանաւանդ Քաղդէայից: Իսկ մօտ 1270 թ-ին Քր. առաջ Ասորեստանը արդէն այնքան հզօր էր, որ Տուկլատ-Ադարը նուաճեց Բաբելոն քաղաքը, դարձնելով Քաղդէան Ասորեստանին հարկատու երկիր: Այդ կախումից Քաղդէան ազատուեց միայն ութ դարուց յետ:

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՆԻՆՈՍԻ ԵՒ ՇԱՄԻՐԱՄԻ ՄԱՍԻՆ։—Յետին ժամանակներում, սակայն, ստեղծուեցին առասպելական աւանդութիւններ, որոնք այլապէս էին պատմում Ասորեստանի սկզբնաւորութեան մասին:

Ստեղծուեց աւանդութիւն, թէ նախկին ժամանակներում մի ցեղապետ, Նինոս անունով, հռչակուեց իւր նուաճումներով և հիմնեց մի թագաւորութիւն, որը ըմբռնում էր Ասորեստանի հետ նաև Բաբելոնիան, Հայաստանը, Մարաստանը և բոլոր երկիրները սկսած Միջերկրական ծովից մինչև Հնդոս գետը: Նա շինեց Նինուէ քաղաքը Տիգրիսի ափի վերայ: Բացի ասորեստանցիներից, որոնք կազմում էին ազգաբնակութեան ամենակարևոր և հարուստ մասը, Նինոսը թոյլ տուեց իւր մայրաքաղաքում օտարականների մի բազմութիւն, այնպէս որ Նինուէն շուտով դարձաւ ամենամեծ և ամենածաղկած քաղաք:

Բակտրիայի դէմ բացած մի պատերազմ հեռացրեց թագաւորին նորա շինութիւններից, որովհետև նա գնաց Բակտրիա

քաղաքը պաշարելու: Նա հանդիպեց այնտեղ Շ ա մ ի ր ա մ ի ն, որին աստուածային ծագումն էին վերագրում: Նորա հայրը հասարակ մահկանացու էր կարծւում, իսկ մայրը՝ Ասկալոնի Դերկետօ աստուածուհին: Ծնուելուց յետ բարձի թող եղած՝ նա ընդունուեց մի հովուից, որի անունն էր Սիմաս: Օաննէսը, Ասորեստանի կառավարիչը, նորան կնութեան էր առել նորա գեղեցկութեան պատճառով և նորա հետ պատերազմի էր գնացել: Նինոսը, սքանչացած Շամիրամի քաջութեան վերայ, խլեց նորան իւր ամուսնուց, իւր կինը դարձրեց և նորան իւր ժառանգուհի հաստատեց:

Թագուհի դառած, Շամիրամը հիմնեց Բաբելոնը, աւելի ևս յարմար ձևով, քան Նինուէն էր շինուած: Շրջապարիսպը ունեցաւ 360 ստադ (66 կիլօմետր կամ մօտ 62 վերստ) երկարութիւն, ամրացրած 250 մեծ աշտարակներով. իսկ պարիսպի հաստութիւնը բաւական էր, որ վեց կառք նորա վերայ կողք-կող անցնել կարողանային: Եփրատի ափին թումբեր շինեցին, որպէս նաև գետափնայ զբօսարաններ 160 ստադ (30 կիլոմետր կամ մօտ 28 վերստ) երկարութեամբ: Գետի երկու ափերն էլ միացրեցին կամուրջով: Քաղաքի մէջ տեղը կանգնեցրին Բէլ աստուծու տաճարը: Այս շինութիւնները հազիւ վերջացրած, Մարաստանում ապստամբութիւն պայթեց: Շամիրամը նորան սաստեց և յետոյ ճանապարհ ընկաւ իւր թագաւորութեան զանազան նահանգները այցելելու: Նա (շարունակում է աւանդութիւնը) հիմնեց Եքբատանը Մարաստանում, Շամիրամակերտը Հայաստանում, Վանի ծովակի ափին, Տարսոնը Կիլիկիայում: Ամեն տեղ, ուր գնում էր, նա ծակում էր լեռները, պայթեցնում էր ժայռերը, անց էր կացնում մեծ և գեղեցիկ ճանապարհներ: Դաշտավայրերում նա կանգնեցնում էր կարկառակոյտեր, որպէս շիրիմներ իւր վախճանուած զօրավարների համար և կամ որպէս հիմնագծեր նորանոր քաղաքների համար: Հասնելով Ասորիքի սահմաններին, նա անցաւ պարանոցը, հպատակեցրեց իրան Եգիպտոսը և Եթովպան: Հնդկաստանի

հարստութիւնների համբաւը նորան տարաւ Նեղոսի ափերից Հինդոս գետի ափերը: Բայց այստեղ բաղդը նորան դաւաճանեց. Նա չաղթեց Ստրատօբատէս թագաւորից և մտաւ իւր երկիրը, որտեղից այլ ևս դուրս չեկաւ: Նա կանգնացրել էր կոթողներ բնակութեան համար յարմար սահմանների վերայ. Նոյն իսկ Սկիւթիայում, ոչ հեռու Խաքսարտից, որտեղ, դարեր յետոյ, Մեծն Աղեքսանդր նոյա պատւ դեռ ևս անզերծ: «Բնութիւնը, ասում էր Շամիրամը, տւած է ինձ կնոջ մարմին. բայց իմ գործքերը ինձ հաւասարացրած են տղամարդկանցից ամենաուժեղին հետ: Ես կառավարեցի Նինոսի թագաւորութիւնը, որի արեւմուտքը դիպչում է Հինաման գետին (այդ գետը մեզ անյայտ է), հարաւը՝ խունկի և զմուռսի երկրին (Արաբիա), հիւսիսը՝ սակիացւոց և զոկդիացւոց [1]) երկրին: Ինձնից առաջ դեռ ևս ոչ մի ասորեստանցի ծով չէր տեսած. իսկ ես տեսայ չորսը, որոնց ոչ ոք չէր մօտենում, այնքան նոքա հեռու էին: Ես ստիպեցի, որ գետերը իմ ուզած ընթացքով հոսեն. բայց իմ ուզածը՝ միմիայն օգտակար տեղերն են եղած. ես արգաւանդ դարձրի անպտուղ հողը, ոռոգելով նոյա գետերի ջրով: Ես շինեցի անառիկ բերդեր, ես երկաթի ուժով անցկացրի ճանապարհներ անանցնելի ժայռերի միջով: Իմ սայլերի համար ես ճանապարհներ բացարի այնպիսի տեղերում, որտեղ կատաղի գազաններն անգամ ոտ չէին կոխել: Եւ այս զբաղմունքների մէջ ես գտայ ժամանակ իմ զւարճութիւնների և իմ բարեկամների համար»:

Բայց այսքան գործքեր չպահեցին նորան դաւադրութիւններից: Լսելով, որ իւր որդի Նինիասը իւր դէմ դաւադրում է, նա հրաժարւեց գահից սորա օգտին և աղաւնու փոխարկւեց:

Այս է ահա աւանդութիւնը Նինոսի և Շամիրամի մասին,

[1]) Անկարելի չէ որ սակդիացիք կամ զոկդիացիք կոչւում լինէր այն ժողովուրդը, որ կազմեց հայոց ազգի այն մասը որ անյայտ ժամանակներից սկսած մինչ այժմ ժողովրդական ոճով զոկ, իսկ երկիրը Զակատան (Հայոց Գողթան) են կոչւում:

որ պատմում էին իրանք ասորեստանցիք: Նման աւանդութիւն պահպանւած էր նաև հայերի մէջ, որոնք աւելացնում էին, թէ Նինոսը նւաճեց Բաբելոնը, որտեղից ուզեց Հայաստան անցնել. բայց, վստահ չը լինելով, թէ կարող է յաղթել հայոց նահապետ Արամին, բարեկամացաւ սորա հետ, իրան նիզակակից արաւ և ուղարկեց նորան ընծայ մի մարգարտահիւս վարսակալ:

Իսկ ինչ վերաբերում է Շամիրամին, ամենքին յայտնի է Մովսէս Խորենացու պատմածը նորա մասին:

ԱՅԴ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՍՊԵԼ Է:—Նինոսի և Շամիրամի մասին ասորեստանցւոց մէջ պտտող աւանդութիւնները ժողովեց յոյն Կտեզիաս Կնիդացին (Կնիդոսը քաղաք էր հարաւարեւմտեան Փոքր-Ասիայում, Կարիայում), որը ապրում էր մօտ 400 թ. Քր. առաջ և 416—399 թ. բժիշկ էր պարսկական արքունիքում, Շոշ քաղաքում (Շոշ այլապէս կոչւում է Սուզա): Այդ ժամանակ Ասորեստանը Պարսկական թագաւորութեան նւաճւած երկիր էր կազմում: Կտեզիաս գրեց մի արժանաւոր «Պատմութիւն Պարսկաստանի», որից մեզ հասել են միայն քաղւածներ Փոտիոսի, Դիոդորի և Պլուտարքի մօտ [1]): Եւ Կտեզիասն է այդ, որ Նինոսի և Շամիրամի դիւցաբանական անձնաւորութիւններից իսկական թագաւորներ շինեց: Այդ աւանդութեան կատարելապէս զուրկ լինելը ճշմարտութիւնից ապացուցեց ֆրանսիացի Լենորման (1860) իւր «Աւանդութիւն Շամիրամի» գրքի մէջ: Նորա հետ այդ բանում համաձայն են բոլոր ասորագէտները:

[1]) Այդ քաղւածքները ի մի հաւաքեց Բէր (Bähr) գերմանացին, 1824 թ-ին:

II

ԱՌԱՋԻՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Տուկլատ-Ադար I եւ նորա յաջորդները մօտ 1500—1020 թ.։— Տուկլատ-հաբալ-ասար I։—Տուկլատ-հաբալ-ասարի յաջորդները։

ՏՈՒԿԼԱՏ-ԱԴԱՐ I ԵՒ ՆՈՐԱ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ։—Մենք տեսանք, որ մօտ 1500 թ-ին Քր. առ. Ասորեստանը դարձաւ մի անկախ տէրութիւն և որ մօտ 1270 թ-ին Տուկլատ-Ադար I նուաճեց Բաբելոնիան։ Նորա յաջորդները երկու դար շարունակ ջանացին Ասորեստանը դարձնել մի ամփոփ տէրութիւն, պահպանել հպատակութեան մէջ Քաղդէայի իշխաններին և նուաճել նոր երկիրներ։ Այդպիսով նոքա կարողացան իրանց ձեռքը գցել ամբողջ Միջագետքը, սկսած Տիգրիսի վերին աւազանից, որտեղ գտնւում էին Կումուխների և Նաիրի երկիրները։

ՏՈՒԿԼԱՏ-ՀԱԲԱԼ-ԱՍԱՐ I։ Սա աւելի ևս ընդարձակեց իւր տէրութեան սահմանները։ Նա նուաճեց հիւսիսից մոսկիացւոց երկիրը, կարիացւոց և կուրքեցւոց երկիրները։ Այդ նուաճումները բերին հասցրին նորան Հայաստանի գլխաւոր լեռները։ Յետոյ նա դիմեց Նաիրի'ի երկիրը, անցաւ Եփրատը, մտաւ Արամի երկիրը (Ասորիք) և հիտտիների երկրով հասաւ մինչև Միջերկրական ծովի Իսսոս ծոցը [1])։

[1]) Ասորիքի հիւսիսային կողմում բնակւում էին հիտտիտները, իսկ նոցանից աւելի հարաւ՝ արամէացիք։

Փիւնիկեցւոց Արադ քաղաքը բացեց իւր դռները նուաճողի առջև և իւր նաւերը առաջարկեց նորան։ Տուկլատ-հաբալ-ասարը թոյլ տւեց իրան զւարճանալ, մտնելով ծովը նաւի վերայ և մի դլփին սպանելով իւր սեպհական ձեռքով։ Եգիպտացւոց թագաւորը, որին պատկանում էին այդ նոր նուաճւած երկիրներից մի քանիսը, վախեցաւ հակառակութեան ձայն բարձրացնել. նա ընծաներ ուղարկեց Ասորեստանի հզօր թագաւորին, ի միջի այլոց կոկորդիլոսներ և գետաձիեր (հիպպոպոտամ)։ Այդ կենդանիները անյայտ էին Տիգրիսի ափերի վերայ և նոքա այնքան հետաքրքրեցին թագաւորին, որ արժանի համարեց թագաւորութեան հետաքրքիր անցքերի մէջ նոցա մասին յիշատակել։

Տուկլատ-հաբալ-ասարը դժբաղդութիւն ունեցաւ իւր կեանքի վերջում տեսնել մի քանի հարկատու երկիրներ իւր դէմ աջողութեամբ ապստամբած. դոցանից էր նաև Քաղդէան։

ՏՈՒԿԼԱՏ-ՀԱԲԱԼ-ԱՍԱՐԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ։—Նորա յաջորդներից առաջին երկուսը կարողացան ուղղել նորա կեանքի վերջում կրած անաջողութիւնները. բայց, արդէն նորա երրորդ յաջորդի ժամանակ, հիտտիները ապստամբեցին, յաղթեցին, որով Ասորիքը կրկին ձեռք բերեց իւր անկախութիւնը մօտ 1060 թ. Քր. առաջ։

Այդ թագաւորով, որի անունն էր Ասուր-րաբ-ամար, վերջացաւ Ասորեստանի առաջին թագաւորական տոհմը կամ առաջին հարստութիւնը։

III

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Բել-կատ-իրասու մինչեւ Տուկլատ-ադար II 1020—721։—Էլ-Ասուրի անկումը եւ Քալախի բարձրանալը։—Երկրորդ Թագաւորութեան պատերազմները։

ԲԵԼ-ԿԱՏ-ԻՐԱՍՈՒ ՄԻՆՋԵՒ ՏՈՒԿԼԱՏ-ԱԴԱՐ II։ — Ասուր-բաբ-ամարի մահից յետոյ, գլուխ բարձրացրին Բաբիլոնը, Հայաստանի և Կապադովկիայի ազգութիւնները և անկախութիւն ձեռք բերին։ Նոյն իսկ Միջագետքը բաժանեց. Մնաց միայն Ասուր քաղաքը իւր շրջականերով։ Բայց քիչ ժամանակ յետոյ, գահ բարձրացաւ մի այլ տոհմից Թագաւոր՝ Բել-կատ-Իրասու, մօտ 1020 Թ.։ Նա և իւր հինգ յաջորդները աշխատեցին վերականգնել Ասորեստանի նախկին Թագաւորութեան վեհութիւնը, մինչև որ Տուկլատ-Ադար II (883—880 Թւականներին) վերսկսեց Նուաճումների ընդհատած գործը և հռչակ ստացաւ իւր արիասրտութիւնով և կատաղի բնաւորութիւնով։

ԷԼ-ԱՍՈՒՐԻ ԱՆԿՈՒՄԸ ԵՒ ՔԱԼԱԽԻ ԲԱՐՁՐԱՆԱԼԸ։— Որքան այդ Թագաւորների հեղինակութիւնը տարածւում էր դէպի հիւսիս, նոյնքան աւելի կորցնում էր Էլ-Ասուրը իւր մայրաքաղաքային նշանակութիւնը, մինչև որ Տուկլատ-Ադարի յաջորդ Ասուր-Նազիր-հաբալը Քալախը մայրաքաղաք դարձրեց։

Քալախը շինել էր առաջի Թագաւորական տոհմից Սալմանասար I, մօտ 1300 Թ., Տիգրիսի ձախ ափին, որտեղ մեծ Զաբը խառնւում է Տիգրիսի հետ։ Ասուր-նազիր-հաբալը կործանեց Էլ-Ասուրում ունեցած շինութիւնները և կառուցեց նորերը՝ Քալախում։ Նորա յաջորդները մի դար շարունակ աշխատեցին պալատներով գեղեցկացնել նոր մայրաքաղաքը։ Ուրաքանչիւրը այդ պալատներից ճոխութեամբ զարդարւում էր տաշովի փայտով, ոսկով, նկարներով, քանդակով, և արձնաքարով, և այդ բոլոր զարդերը, իրանց փայլով, մէկը միւսից ուզում էին գերազանցել։ Քարէ առիւծներ, սփինքսներ, կոթողներ, սրբարաններ, սրբազան աշտարակներ,—այդ բոլորը նշանակւած էին գեղեցկութիւն և փայլ տալու շինութիւններին։ Եւ այդ բոլորի վերայ իշխում էր Ադարին կից բարձր աստիճանաւոր բուրգը։ Հրաշալի էր ճամբորդի համար լուսնեակ գիշերով տեսնել այդ շինութիւնների արտափայլումը արևմուտքից անցնող Տիգրիսի ջրերի մէջ։

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ։— Երկրորդ տոհմի Թագաւորները, տեսնելով տէրութիւնը հիւսիսից և արեւելքից ապահովւած, չուզեցին ընդարձակել տէրութիւնը դէպի այդ կողմերը։ Հայաստանի լեռներով շրջապատւած երկիրներում, որպէս նաև Մարաստանում նոքա շատ դժւարութեամբ կարող էին օգուտ տեսնել։ Միմիայն վերին Տիգրիսի և Քուրդիստանի Թափառական ցեղերին հնազանդութեան մէջ պահպանելու համար, նոքա մի-մի անգամ ասպատակում էին դէպի Սև-ծովի և Կասպից ծովի կողմերը և կամ հրոսակներով անցնում մինչ Հինդոս գետը։

Նոցա պատերազմական դաշտերը այժմ գտնւում էին հարաւից՝ Բաբիլոնիայում և Էլամում, արևմտեան և հարաւ-արևմտեան կողմերից՝ Ասորիքում։ Ինչ մի ժամանակ Եգիպտոսի Թուտմէս III և Ամենհոտէպ II գործել էին այդ երկիրներում, նոյնը այժմ կատարում էին Ասորեստանի Թագաւորները, միայն թէ մաս առ մաս, ամբողջ երկու դարերի ընթացքում։ Նոքա յարձակւեցին Ասորիքի վերայ, վերցնելով նախ Կարկեմիշ քաղաքը, յետոյ Փիւնիկիան և Դամասկոսը, յետոյ Հրէաստանը և Գազա, մինչև որ նոքա հանդիպեցին Եգիպտոսի փարաւոններին։ Մի ժամանակ յարձակւողները փարաւոններն էին. նոքա էին, որ հասան Նինւէի պարիսպներին. այժմ ասորեստանցիք էին յարձակւողները և Եգիպտոսին սպառնացողները։ Մեմֆիսը ստիպւեց Ասորեստանի զօրք պահել, և Ասուր-բան-հաբալի զօրավարները կողոպտեցին Թեբէի տաճարները։

IV

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ

Ասուր-նազիր-հաբալ։—Սալմանասար III։—Ասորեստանի հզօրութիւնը մօտ 800 թ-ին։—Բին-նիրարի՚ի կին Սամմուրամիտ։

ԱՍՈՒՐ-ՆԱԶԻՐ-ՀԱԲԱԼ։— Երկրորդ Թագաւորութեան ժամանակ նւաճողական պատերազմներ սկսողը Ասուր-նազիր-հաբալն էր։ Նախ նա մի արշաւանք գործեց դէպի Քուրդիստանի արևմտեան կողմերը։

Բնիկները, անընդունակ գտնւելով կանոնաւոր կռւի մէջ մտնել, «քաշւեցին իրանց անմատչելի լեռները և պաշտպանւեցին գագաթների վերայ, որպէս զի ես (ասում է Ասուր-նազիր-հաբալը ինքը մի արձանագրութեան մէջ) չը կարողանամ հասնել նրանց, որովհետև այդ փառահեղ գագաթները բարձրանում են սրի ծայրի նման, և միմիայն թռչունները կարող են թռչելով նրանց հասնել... Երեք օրում ես բարձրացայ լերան վերայ, սարսափ ազդեցի նոցա ապաստարանների մէջ... Նոցա դիակները տարածւեցին լեռնալանջերի վերայ՝ նման ծառերի տերևներին. իսկ որոնք կենդանի մնացին, ապաստան որոնեցին ժայռերի մէջ»։ Նոցա գիւղերը կրակելուց յետ, նւաճողը յարձակւեց Կարխի վիճակի վերայ (այժմ Կուրխ). «Ես այնտեղ 260 կռւողների սրով անցկացրի, ես կտրեցի նոցա գլուխները և նոցանից բուրգեր շինեցի»։ Կարխի՚ից յետ հերթը հասաւ Կումուխ երկրին։ Բայց այստեղ նա իմացաւ, որ Միջագետքում մի քաղաք ապստամբել է իւր դէմ. նա վերադարձաւ այդտեղ և ապստամբներին անխնայաբար կոտորեց։ Հայաստանի

զանազան անկիւններում պայթեցին ապստամբութիւններ, որոնք ճնշեցին, և ապստամբների հետ Ասուր-նազիր-հաբալը վարուեց նոյնքան անգութ կերպով, որքան դորանից առաջ լիչուած ապստամբ քաղաքի բնակիչների հետ, որոնց մասին նա ինքը այսպէս է խօսում. «ես սպանեցի մէկին երկուսի վերայ... Ես պարիսպ շինեցի քաղաքի մեծ մեծ դռների առջև. ես հրամայեցի նոցա գլխաւորներից կաշին հանել և նոցա կաշւով այդ պարիսպը ծածկել։ Մի քանիսը կենդանի սւաղեցին պատի մէջ, մի քանիսը խաչեցին կամ ի ցից հանեցին պատի երկայնութեամբ։ Ես հաւաքել տուի նոցա գլուխները պսակների ձևով և նոցա դիակները ծակծկոտել տուի ծաղկի դրասանգների ձևով»։

Հայաստանի դէմ Ասուր-նազիր-հաբալը պատերազմ մղեց նաև 880 Թ-ին։

Այդ թագաւորը դրեթէ շարունակ պատերազմների մէջ էր. բայց նորա ամենանշանաւոր գործը Ասորիքի նուաճումն էր սկսած Եփրատից մինչև Միջերկրական ծովը, Փիւնիկիան էլ հետը։ Այդ կատարուեց 877 Թ-ին։ Երկու հարիւր տարի առաջ, որպէս տեսանք, այդ երկիրները նուաճեց Տուկլատ-հաբալ-ասար I-ը. այն ժամանակից դէս Ասորեստանի ոչ մի թագաւոր Ասորիքում ոտք չէր կոխած։

ՍԱԼՄԱՆԱՍԱՐ III։ —Ասուր-նազիր-հաբալին յաջորդեց նորա որդին, Սալմանասար III, 858 Թ-ին։ Հօր օրինակին հետևելով, նա մտաւ հիւսիսային Ասորիք, ընդունեց հիտտիների հպատակութիւնը և կանգ առաւ Միջերկրականի ափերին։

Դորանից յետ նա դիմեց Դամասկոսին, որտեղի թագաւորը՝ Բենհադար, օգնութիւն ստացաւ Փիւնիկիայի այլ և այլ քաղաքներից, Իսրայէլից և Արաբիայից, Եգիպտոսից և Ամմոնի երկրից։ Ընդամենը նա դաշտ դուրս բերաւ

62.000 հետևակ զօրք, 8.200 հեծելազօր, 4.800 սայլեր, իսկ արաբական ցեղապետներից մէկը դուրս բերաւ նաև 1000 ուղտ։ Սալմանասարը, սակայն, յաղթեց, բայց չը կարողացաւ իւր այդ յաղթութիւնից օգտուել. նա շտապով վերադարձաւ, Բաղդէայում պատահած դահակալական խռովութիւններին վերջ դնելու համար։ Երբ այստեղ կարգը ապահովեց, նա կրկին դարձաւ դէպի Դամասկոս, կրկին յաղթեց Բենհադարին և մի քանի ժամանակից յետոյ առաւ Դամասկոսը։ Սիդոնը և Տիրոսը վախից ընդունեցին Ասորեստանի գերիշխանութիւնը, Իսրայէլի թագաւորը ընծաներ ուղարկեց Սալմանասարին։

Այդ ժամանակից սկսւում են յարաբերութիւններ ասորեստանցւոց և եբրայեցւոց մէջ։

Այսպիսով, ուրեմն, Ասուր-նազիր-հաբալը նուաճեց հիւսիսային Ասորիքը, իսկ նորա որդի Սալմանասար III նուաճեց կենտրոնական Ասորիքը, որով նա աւելի մօտեցաւ Եգիպտոսին։

Սալմանասար III հետևեալ տարիներում արշաւանքներ գործեց դէպի Արարատեան աշխարհը և Վանի երկիրը։ Երեք տարի նոքա ընդդիմադրեցին, բայց վերջը զիջեցին։

Սալմանասարը մեռաւ 823 Թ-ին։

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ՄՕՏ 800 Թ-ԻՆ։ – Սալմանասար III-ից յետոյ Ասորեստանը դեռ ևս մի քանի ժամանակ պահպանեց իւր զինուորական գերիշխանութիւնը։ Սամսի-բինը (823—810) յաճախակի արշաւանքներով խոնարհեցրեց Նաիրի երկիրը (Տիգրիսի վերին մասում) և նուաճեց Մարաստանը մինչև պարթևների աշխարհը, Կասպից ծովի հարաւ-արևելեան մասում։ Նորա յաջորդ Բին-

Նիրարի (810 — 780) հնազանդեցրեց Քաղդէայի ապստամբող Թագաւորներին, եօթն անգամ մտաւ Մարաստան, երկու անգամ ասպատակեց Վանի երկիրը Հայաստանում և երեք անգամ Ասորիքը։ Փիւնիկիան, Իսրայէլը, Եդոմը, փղշտացիք չը համարձակւեցին տեղից շարժւել։

Այդ ժամանակներում Ասորեստանը տիրապետում էր Առաջաւոր Ասիայի մեծագոյն մասին։ Իւր հպատակ երկիրներով նա մի կողմից դիպչում էր Պարսից ծոցին և Էլամացւոց երկրին, միւս կողմից՝ Կարմիր ծովին և Եգիպտոսին. արեւելքից նա իշխում էր Մարաստանի Թուրանական ցեղերի մեծագոյն մասին և մի քանի արիական ցեղերին, որ այդ ժամանակ արդէն հաստատւած էին Իրանում։ Միմիայն Հայաստանումն էր, որ Տուկլատ-Հաբալասար I-ից դէս շատ քիչ բան էր արւած. այդտեղ ասորեստանցիք բռնած ունէին Վանի լճի ափերից սկսած մինչև Տիգրիսի աղբիւրները. իսկ դորանից դէն՝ երկրի խոչնդոտները և բնակիչների քաջութիւնը չէին թոյլ տւել տեւողական նւաճումներ անել։ Կիլիկիան, Տուբալ և Կապադովկիան (երեքն էլ Փոքր-Ասիայում) խոնարհւում էին Ասորեստանին։

Այդ տարիների Ասորեստանի համար կարելի է կրկնել Եզեկիէլ մարգարէի այս խօսքերը (Հին Կտակարան, գլ. ԼԱ, 3—6)։ «Ահա Ասուր, որպէս մի նոճ Լիբանանի, գեղեցիկ չառաւիղով և խիտ ոստերով և բարձր մեծութիւնով, գլուխը ամպերի մէջ։ Նա իւր մեծութիւնով գերազանցեց դաշտի միւս ծառերին։ Նորա ճիւղերի տակ երկնքի թռչունները իրանց բոյնն էին շինել. Նորա ոստերի տակ ծնւեցին դաշտի բոլոր գազանները. Նորա հովանու տակ բնակւեցին ազգերի բոլոր բազմութիւնները»։

ԲԻՆ-ՆԻՐԱՐԻ'Ի ԿԻՆ ՍԱՄՄՈՒՐԱՄԻՏ։ — Բին-Նիրարիի կանանցից մէկի անունն էր Սամմուրամիտ։ Կարծիք կայ, որ դա այն Շամիրամն է, որի մասին Հերոդոտը պատմում է, թէ գեղեցկացրեց Բաբելոն քաղաքը. բայց նա ապրում էր Բաբելոնիայի առաջին Թագաւոր Նաբոպոլասարից մօտ 150 տարի առաջ։ Նոյն այդ Շամիրամի մասին կարծիք կայ, թէ նա նախատիպարն է աւանդական Շամիրամի։ Բայց դոքա կարծիքներ են, որոնք ընդհանուր ընդունելութիւն չեն գտած։

V

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԱՆԿՈՒՄԸ ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՈՒՄԸ

Ասորեստանի ժամանակաւոր անկումը։—Աւանդական Սարդանապալ։—Ասորեստանի վերականգնումը։—Տուկլատ-ճաբալ-ասար II։—Տուկլատ-ճաբալ-ասարը Ասորիքում։—Արշաւանք դէպի Հնդկաստան։—Պալեստինի նուաճումը։—Սալմանասար V եւ Սարիւքին I։—Իսրայէլի Թագաւորութեան նուաճումը։

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԱՆԿՈՒՄԸ։ — Մեծութեան և հզօրութեան հասած, Ասորեստանը յանկարծ ընկնում է, բայց ոչ տեւողաբար։

Բին-Նիրարի'ի յաջորդ Սալմանասար IV (780—770) իւր թագաւորութեան տասը տարին գործածեց անաջող պատերազմների մէջ Հայաստանի և Մարաստանի դէմ. իսկ Դամասկոսի դէմ մղած մի պատերազմից յետոյ, Ասորեստանը կորցրեց Ասորիքը։

Դրութիւնը աւելի եւ վատթարացաւ Ասուր-Նիրարիի ժամանակ. ամեն կողմից ապստամբութիւններ եղան, նոյն իսկ Նինուէից ոչ հեռու տեղերում։

Ազգը կորցրել էր պատերազմական ոգին և մինչև անգամ մոռացել էր վերջընթեր դարու մեծ թագաւորների անունները. դոցա տեղ ժողովուրդը հնարեց դատարկ թագաւորներ, իբր թէ սերած Նինոսից և Շամիրամից։ Նոցա վերջինն էին ասում Սարդանապալը։

ԱՒԱՆԴԱԿԱՆ ՍԱՐԴԱՆԱՊԱԼ։—Այդ Սարդանապալի մա-

սին պատմում էին, թէ նա իւր կեանքը անց էր կացնում հարեմում, կնոջ պէս հագած և կնոջ վայել զբաղմունքների անձնատուր եղած։ Նորա հարկատու երկու իշխաններից մարաստանցի Արբակէսը և Բաբելոնացի Բելեզիսը ապստամբեցին։ Վտանգի մեծութիւնը արթնացրեց Սարդանապալի մէջ իւր տոհմի պատերազմական ոգին. իրան հաւատարիմ մնացած զօրքի գլուխ կանգնեց, մի քանի անգամ ապստամբներին ջարդեց և նոցա արդէն ջնջելու վերայ էր, երբ Բակտրիայից նորա օգնութեան հասնող զօրքերը դաւաճանեցին նորան և անցան նորա թշնամիների կողմը։ Նա փակւեց Նինուէում և երկու տարի այդտեղ պաշտպանւեց բոլոր յարձակումների դէմ։ Երրորդ տարին, Տիգրիսը, յորդանալով տեղացող անձրեւներից, ափերից դուրս ելաւ և կործանեց պարիսպը քան ստադ երկարութեան վերայ։ Այն ժամանակ նա մտաբերեց, որ պատգամախօսներից մինը ապահովացրել էր նորան յաղթութիւն մինչև այն օրը, երբ գետը կը դառնայ նորա դէմ։ Այդ օրը անձ հասած էր. բայց նա չուզեց ընկնել իւր թշնամիների ձեռքը և այրեց իրան իւր պալատի մէջ իւր գանձերով և կանանց հետ միասին. իսկ թագաւորութիւնը կորաւ նորա հետ։

Այդ աւանդութիւնը զուտ առասպել է. այդ բոլորի մէջ ճիշտը միմիայն այն էր, որ Ասորեստանը իրօք անկման մէջ էր գտանւում [1]։

Եւ այդ ժամանակաւոր անկումն է, որ վերադարձրեց Ասորիքի այլ և այլ ազգութիւններին իրանց անկախութիւնը։

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՈՒՄԸ։ ՏՈՒԿԼԱՏ-ՃԱԲԱԼ-ԱՍԱՐ II։ —Հարկատու երկիրների կորուստը աղէտալի եղաւ թոյլ թագաւորների համար։ 745 թ-ին Քաղախում ապ-

---

1) Սարդանապալի մասին վերը պատմածը աւանդւել է մեզ Դիոդոր Սիցիլիացուց։ Անգլիացի մեծ բանաստեղծ լորդ Բայրոնը այդ նիւթից շինել է «Սարդանապալ» անունով ողբերգութիւնը 1821 թւականին։

սստամբութիւն եղաւ, որի մէջ կորաւ Ասուր-Նիրարին, և իշխանութիւնը անցաւ մի իշխանի ձեռք, որը ամենևին տրամադիր չէր անգործ կեանք վարել։ Դա էր Տուկլատ-հաբալ-ասար։ II։ Այդ թագաւորի անձնաւորութիւնը փայլում է իւր ժամանակւայ պատմութեան մէջ անհամեմատելի փայլով։ Դա մի թագաւոր էր ձևած նախկին մեծ նուաճողների չափով, գործունեայ, պատւազգած, աւելի նստակեաց դաշտում, քան իւր պալատի մէջ։ Տուկլատ-հաբալ-ասարը բարձրացրեց իւր ազգի եռանդը, ցոյց տւեց նրան օտարութեան ճանապարհը և նորան տարաւ աւելի հեռու, քան երբ և իցէ իրանից առաջ։

ՏՈՒԿԼԱՏ-ՀԱԲԱԼ-ԱՍԱՐԸ ԱՍՈՐԻՔՈՒՄ։—Տուկլատ-հաբալ-ասարը սկսեց նախ ճանաչել տալով իւր գերիշխանութիւնը հիւսիսային Բաղդէայի վերայ։ Յետոյ նա անցաւ Ասորիք, որտեղ, Արպադ քաղաքի մօտ (այժմեայ Հալեպից մի փոքր դէպ հիւսիս, այժմ Տէլ-Էրֆադ կոչւած տեղում), ժողովեց Ասորիքի բոլոր հարկատու իշխաններին. Տիրոսի, Կարկեմիշի, Կումմուխի և եօթն ուրիշ իշխաններ նորա կոչնակին պատասխանեցին. շատերը սակայն մերժեցին գալ. բայց թագաւորը նոցա պատժելու ժամանակ չունեցաւ շնորհիւ այն հանգամանքի, որ նա ստիպւեց աճապարել իւր երկրի հիւսիսային կողմերը, սանձահարելու համար Հայաստանում պայթած մի ապստամբութիւն։ Բայց երբ նա կրկին վերադառնալ ուզեց Արպադ, տեսաւ իւր դէմ միացած շատ իշխաններ, որոնց մէջ նաև Յուդայի թագաւոր Ազարիան։ Երեք տարի պաշարելուց յետ, Արպադը վերցւեց (792 թ.)։ Խստութիւնը, որով Տուկլատ-հաբալ-ասար II վարւեց ապստամբ քաղաքներից մի քանիսի հետ, ազ-

դեց նաև բոլորի վերայ. 18 թագաւորներ հպատակւեցին, դոցա մէջ նաև Սամարիայի և Դամասկոսի թագաւորները։

ԱՐՇԱՒԱՆՔ ԴԷՊԻ ՀՆԴԿԱՍՏԱՆ։ — Հետևեալ չորս տարիները գործ դրւեցին Հայաստանի և Մարաստանի դէմ (738—735). իսկ յետոյ Տուկլատ-հաբալ-ասար II ձեռնարկեց մի արշաւանք դէպի Հինդոսի ափերը։ Ճանապարհը, որով նա գնաց, անցնում էր Ուրմիա լճի և Կասպից ծովի հարաւում, ուր այժմ են Աբադան և Աստերաբադ քաղաքները, և այսպէս շարունակ մինչև Հինդոսի հովիտը, որի հետ բաբելոնացիք առևտրական յարաբերութիւններ ունէին։

Իսկ է, որ այդ նորանւաճ երկիրները ասորեստանցիք կրկին կորցրին, հէնց որ նւաճողը վերադարձաւ Նինուէ. բայց այդ արշաւանքի յիշատակը երկար մնաց ազգերի յիշողութեան մէջ։ Այդ անցքից շատ տարիներ յետոյ, մարդիկ գիտէին, որ մի ժամանակ ասորեստանցիք իշխել են Հինդոսի ափերին, բայց այդ գործի բոլոր պատիւը վերագրեցին կրկին նոյն առասպելական Շամիրամին։ Այժմ արդէն հաստատ է, որ այդ մեծ ձեռնարկութեան պատիւը վերաբերում է Տուկլատ-հաբալ-ասար II-ին։

ՊԱԼԵՍՏԻՆԻ ՆՒԱՃՈՒՄԸ։ — Տուկլատ-հաբալ-ասարը յետոյ նւաճեց գրեթէ ամբողջ Պալեստինը, իսկ փղշտացիք հպատակութիւն ընդունեցին։ Իսրայէլի թագաւորութիւնից Տուկլատ-հաբալ-ասար II բազմաթիւ ժողովուրդներ տեղափոխեց Ասորեստան։ Յետոյ նա գնաց Դամասկոսի դէմ, որը առնւեց երկու տարի պաշարելուց յետոյ, իսկ Դամասկոսի բնակիչներից ութ հազար հոգի Տուկլատ-հաբալ-ասարը տեղափոխեց Կիր, Հայաստանում։

Տուկլատ-Հաբալ-ասարը II մեռաւ 727 Թ., Քալախում, 18 տարի փառաւորագոյն թագաւորութիւնից յետ։

ՍԱԼՄԱՆԱՍԱՐ V ԵՒ ՍԱՐԻՈՒՔԻՆ I։ ԻՍՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՆՒԱՃՈՒՄԸ։ —Տուկլատ-Հաբալ-ասար II-ին յաջորդեց Սալմանասար V։ Փիւնիկեցիք, Հրէաները և փղշտացիք զգացին, որ եթէ որ և իցէ փրկութիւն կարող է հասնել նրանց, այդ կարող էր սպասել միմիայն Եգիպտոսից։ Այդ ժամանակ Եգիպտոսում իշխում էր Շաբակը, որի ժամանակ Եգիպտոսը, իւր աղէտներից փրկւած, հզօր տէրութիւն էր ներկայացնում։ Իսրայէլի թագաւոր Հօշէա ընծաներ ուղարկեց Շաբակին, օգնութեան հրաւիրելով նորան։ Սալմանասար V այդ յարաբերութիւնների մասին տեղեկացաւ, իւր մօտ կանչեց Հօշէային, որին բանտարկեց. և բանտարկութեան մէջ նա կորաւ, մոռացւած ամէնքից։ Ասորեստանի զօրքերը մտան Իսրայէլի երկիրը և պաշարեցին Սամարիան։ Պաշարւածներին օգնութեան հասաւ Տիրոսի թագաւորը։ Այն ժամանակ Սալմանասարը, զօրքի մի մասով, գնաց և գրաւեց Տիրոսի ցամաքային մասը. բայց ծովից պաշտպանւած Տիրոսը վերցնել անհնարին եղաւ։ Գործերի այդ դրութեան մէջ Սալմանասար V մեռաւ, և գահը բարձրացաւ թագաւորութեան մեծ սպահներից մէկը՝ Սարիուքին (նաև Սարգօն կամ Սարգուն)։

Սարիուքինը շարունակեց սկսւած գործը. նա վերցրեց Սամարիան, իսկ բնակիչներին գերութեան տարաւ Քալախ, Խաբուր և Մարաստանի քաղաքները։ Նոցա տեղը Սամարիա բերւեցին քաղդէացիք, որոնք գերւած էին այդ ժամանակներում՝ նոցա միացած լինելու պատճառով էլամացւոց հետ, որոնց դէմ Սալմանասարը պատերազմեց և որոնց յաղթեց։ Ասորեստանի մի կառավարիչ սկսեց բնակւել Իսրայէլի թագաւորական պալատում։

Այդպիսով ընկաւ Սամարիան, նորանով և Իսրայէլի թագաւորութիւնը, որը միակ բաժանում էր Եգիպտոսը Ասորեստանից։

VI

ԱՍՈՐԵՍՏԱՆԸ ՍԱՐԳՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔՈՅ

Սարգոնեան տոհմը։—Սարիուքին։—Նոր շրջանի բնաւորութիւնը։—Սարիուքին (721—704) յաղթում է եգիպտացիներին։—Արարատեան թագաւորութիւն։—Արարատեան աշխարհի լուսաւորութիւնը։—Արարատեան թագաւորութիւնը եւ Սարիուքին։—Սարիուքինի թագաւորութեան վերջին տարիները։ Խորսաբադի պալատը։

ՍԱՐԳՈՆԵԱՆ ՏՈՀՄ։—Սարիուքինը, նա՝ որ վերցրեց Սամարիան, հիմք դրեց մի նոր թագաւորական տոհմի։ Դորանով սկսւում է նաև մի նոր շրջան Ասորեստանի պատմութեան մէջ։ Այդ տոհմի նախահօր իսկական անունը Սարիուքին է, բայց նորա սերունդը կոչւում է Սարգոնեան տոհմ, Սարգոն անունից, որ ձևով Սարիուքին յիշուած է եբրայեցւոց Հին Կտակարանի մէջ, Եսայիա մարգարէից (Գլ. Ի)։

ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ։—Մինչև Սարգոնները Ասորեստանի աճումը կատարւել էր ի վնաս կէս-բարբարոս ցեղերի և կամ մանր տէրութիւնների, որոնք անկարող էին երկար ժամանակ դիմադրել գերազանց ուժերին։ Դոքա էին՝ Նաիրի երկիրը, Կումուխ երկիրը, հիտտիտների երկիրը, արամէացւոց երկիրը, Դամասկոսը, Իսրայէլը, Փիւնիկիան, փղշտացւոց երկիրը և այլն։ Բայց այդ բոլոր երկիրները արդէն նուաճուած էին, այնպէս որ այժմ Ասորեստանը կանգնած էր դէմ յանդիման այնպիսի տէրութիւնների, որոնք, նորա չափ ուժեղ

կազմակերպուած լինելու պատճառով, ոչ միայն նորան դիմադրել կարող էին, այլ և նորան ջարդել։ Հարաւ-արևմտեան կողմից նա շփւում էր Եգիպտոսի հետ. հիւսիսում նա հանդիպում էր Արարատեան թագաւորութեան. հարաւ-արևելեան կողմից քաղդէական թագաւորութիւնների նուաճումը նորան հարևան դարձրեց Էլամի հին թագաւորութեան հետ։ Եգիպտոսը, Արարատեան աշխարհը և Էլամը կանգնեցրին Ասորեստանի նուաճողական եռանդը և կազմեցին նորա և մնացեալ աշխարհի մէջ մի անջրպետ, որից Ասորեստանը երբէք դուրս գալ չը կարողացաւ։ Մի ամբողջ կէս դար շարունակ Սարիուքինը և նորա յաջորդները յաղթութիւններ տարան այդ երեք թագաւորութիւնների զօրքերի վերայ, ասպատակեցին նորա քաղաքները, կառավարիչներ կամ հարկատու իշխաններ նշանակեցին նոցա վերայ։ Բայց դոքա ժամանակաւոր յաղթութիւններ էին. տևողապէս հաստատել նոքա չը կարողացան այդ երկիրներում։ Ասորեստանցւոց յաջողութիւնները Նեղոսի, Արաքսի և Ուլայի'ի ափերի վերայ մնացին միմիայն ժամանակաւոր յաջողութիւններ, որոնց վիճակը շուտով կորչում էր նոցա յաջորդող աղէտների պատճառով։ Իսկ է, որ, իրանց անդադար յարձակումներով նոքա տանջեցին այդ երկիրները, բայց, վերջ ի վերջոյ, նոյն իսկ յաղթութիւնները մաշեցին իրանց՝ ասորեստանցւոց ուժերը այնպէս, որ ձեռք բերած արդիւնքը իրանց չը մնաց, այլ մնաց մի այլ ազգի, այն է՝ պարսիկներին։

ՍԱՐԻՈՒՔԻՆ (721—704) ՅԱՂԹՈՒՄ Է ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԻՆ։—Իւրանց յոյսերը դրած Եգիպտոսի թագաւոր եթովպացի Շաբակի վերայ, Համաթի թագաւորը, Արպադի, Դամասկոսի և այլ իշխանների հետ սկսեց պատերազմը Ասորեստանի դէմ։ Բայց Սարիուքինը վրայ հասաւ դեռ նախ քան եգիպտացիք օգնութեան էին հասել, յաղթեց ապստամբներին, իսկ Համաթի թագաւորին կենդանի մաշկել տւեց։ Շաբակի զօրքերը և Սարիուքինի զօրքերը իրար

հանդիպեցին Պալեստինում, Ռափեհ կամ Ռաֆիա քաղա-
քում [1])։ Եգիպտացիք յաղթեցին և Շաբակը կարողացաւ
ազատել շնորհիւ մի փղշտացի հովուի, որը նորան անա-
պատով անցկացրեց։ Շաբակը փախաւ Թեբէ, որտեղ շու-
տով մեռաւ, թողնելով իւր որդուն միմիայն իշխանու-
թիւնը Թեբէի և նորա շրջակայ նահանգների վերայ։ Դել-
տայի մանր իշխանները գլուխ բարձրացրին և դարձան
անկախ իշխաններ, որը Տանիսում, որը Բուբաստում և
այլն։ Սաիսի իշխանը սկսեց կրել փարաւոնի անուն և
(714) ընծաներ ուղարկեց Սարխուքինին։

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ։— Եգիպտոսից յետ,
հերթը հասաւ Արարատեան թագաւորութեան, որը Ասորես-
տանի արձանագրութիւնների մէջ կրում է Ուրարտի անունը։

Այն լեռնային երկիրը, որտեղ իրանց սկիզբն են առնում
Տիգրիսը և Եփրատը, բնակեցրած էր մի միակ ցեղով, որը այժ-
մեայ հայերից տարբեր էր և աւելի ազգակցութիւն ունէր Կով-
կասի մի քանի այլ ազգերի հետ։ Նա բաժանուած էր բազմա-
թիւ մանր տէրութիւնների, որոնց անունները թէև յայտնի են,
բայց ոչ ամենի ճիշդ աշխարհագրական դիրքը։ Դոքա էին՝
Նաիրի (Տիգրիսի և Եփրատի ակունքների տեղում), Մաննա
(Վան, հարաւ-արևելքում), Մուսասիր (Արսիա, Արճէշ, Վանի
լճի հիւսիսային կողմում), Միլդիա լեռան իշխանութիւն (այժ-
մեայ Կարինի վիճակը) և վերջապէս, Ուրարտի կամ Արարտի
և կամ, ըստ Հին Կտակարանի և հայկականի՝ Արարատ (Հերո-
դոտի մօտ նա կոչւում է Ալարոդիէնս)։

Արարատեան թագաւորութեանը յաջողած էր իւր և բոլոր
հարևան ցեղերի մէջ միութիւն հաստատել։

[1]) Նոյն տեղում հինգհարիւր տարից յետ Պտոլոմէոս Փիլոպատորը
հանդիպեց Անտիոքոս Մեծին։

Ասորեստանցոց յարձակումները Հայաստանի իշխա-
նութիւնների վերայ սկսւեցին 13-դ դարում, սկսած Տուկ-
լատ-հաբալ-ասար I-ից. իսկ 9-դ դարում վերին Տիգրիսի
գրեթէ ամբողջ հովիտը հարկատու էր կամ նուաճած
Ասորեստանից։ Ասուր-նազիր-հաբալը սկսեց Մաննայի (Վանի)
նուաճումը։ Սալմանասար III առաջինն էր, որ յարձակւեց
Արարատեան թագաւորութեան վերայ, որտեղ նա ջարդեց
Արամէ թագաւորին 841-ին և սորա յաջորդ Սադուրի՝ին
832-ին և 829-ին։

Այդ յաղթութիւնները, սակայն, մնում էին առանց
մեծ հետևանքի. յաղթածները միշտ ապստամբում էին։

Արարատեան աշխարհի դէմ արշաւանքները յաճախ
կրկնւեցին Սալմանասար IV-ի (787—784, 782—780
թւականներին) և Տուկլատ-հաբալ-ասար II-ի ժամանակ
(742 և 734 թ-ին), բայց առանց նորան նուաճել կարո-
ղանալու։

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ։—Ասորես-
տանի հետ շփւելով, Արարատեան աշխարհը լուսաւորւեց. նա
ընդունեց իւր հակառակորդների արհեստները և մինչև անգամ
նոցա գրութիւնը։ Նորա թագաւորներից մինը (Բիլիդուրիս I)
բերել տւեց Նինւէից գրագիրներ, որոնք պաշտօնական ար-
ձանագրութիւնները խմբագրեցին իրանց լեզւով, տալով թա-
գաւորին Ասորեստանի արձանագրութիւնների մէջ ընդուն-
ւած փքուն ածականները։ Մի քանի ժամանակ Նինւէի
բարբառը դառաւ Արարատեան աշխարհի գլխաւոր լեզուն.
իսկ Բիլիդուրիսի որդի Իսպունիս I-ի ժամանակ, ասորես-
տանցւոց գրութեան եղանակը մի քանի փոփոխութիւններով
գործադրւեց տեղական բառբառների գրութեան համար։

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍԱՐԽՈՒՔԻՆ։—
Սարխուքինի ժամանակ Արարատեան թագաւորն էր Մինուաս

I։ Սա իւր մասին խօսել չը տւեց, բայց նորա անդրանիկ որդին, Ուրսա, ճանաչւած էր որպէս Սարիուքինի ամենավտանգաւոր թշնամին։ Ուրսան աշխատեց իւր ազգի գերիշխանութիւնը վերականգնել և դորա համար դիմեց ամեն միջոցների։ Նախ նա ջանաց հեռացնել Սարիուքինից Մաննայի (Վանի) թագաւոր Իրանզուին. երբ սա չը համաձայնեց, Ուրսան ապստամբեցրեց ժողովուրդը Իրանզուի դէմ։ Սարիուքինը օգնութեան հասաւ իւր հարկատու իշխանին, բայց շուտով վերադարձաւ Ասորեստան. և երբ կրկին երևաց Հայաստանի կողմերում, արդէն Մաննայի նոր իշխանը հպատակել էր Արարատեան Թագաւորին։ Սարիուքինը ասպատակեց երկիրը, սկսած Ուրմիայ լճից մինչև Վանի լիճը։ Քանի մի ժամանակից յետ, Սարիուքինը ուզեց վերջնական հարւած տալ Արարատեան Թագաւորութեան, որտեղ նա, իրօք, մի մեծ յաղթութիւն տարաւ։ Ուրարտան գրեթէ միակ փախաւ դէպի լեռները և մօտ հինգ ամիս շրջեց առանց մի ապահով տեղ գտնել կարողանալու։ Նորա Թագաւորութիւնը կողոպտեց և նորա մի քանի քաղաքները տւեցին Մաննայի իշխանին։ Յաղթւեց նաև Ուրսայի դաշնակիցներից վերջինը, Ուրսանա անունով [1]։ Այդ աղէտալի լուրն իմանալուն պէս՝ Ուրսան յուսահատութիւնից իրան սպանեց։

Ուրսայի մահով, սակայն, երկիրը չը նւաճւեց. Նորա եղբայր Արգիստիս յաջորդեց նորան և յաջողութեամբ դիմադրեց ասորեստանցիներին։ Արարատեան Թագաւորութիւնը շուտով դուրս եկաւ աւերակներից։ Ուժի և հնարագիտութեան միջոցով Արգիստիսը կրկին յետ առաւ իւր եղբօր բոլոր կորցրած երկիրները և մինչև անգամ յարձակւեց ուղղակի Ասորեստանի վերայ, գրաւելով Մաննա (Վան), որը իւր սիրելի բնակատեղերից մէկը դարձրեց։

[1] Ուրսանայի կնիքը այժմ գտնւում է Հոլլանդիայի Հաագ-քաղաքի Թանգարանում։

ՍԱՐԻՈՒՔԻՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ։
ԽՈՐՍԱԲԱԴԻ ՊԱԼԱՏԸ։—Դեռ ևս Արարատեան Թագաւորու-
թեան դէմ մղած արշաւանքների միջոցներում, Սարիու-
քինը ստիպւած էր երևալ Մարաստանում, Կիլիկիայում
և Ասորիքում։ Փոքր Ասիայում նորա հեղինակութիւնը տա-
րածւում էր մինչև Ալիս և Սարոս գետերը։ Նոյն միջոց-
ներում նա արշաւեց քաղդէացւոց դէմ, որոնք դաշնակցել
էին իրանց հետ էլամացիներին և ունեցաւ կատարեալ
յաջողութիւն։ Նոյն իսկ այդ միջնադէպքերն էին, որ Թոյլ
էին տալիս Արարատեան Թագաւորներին կրած հարւած-
ներից յետոյ կրկին ույժերը ժողովել և կազդուրւել։

Իւր կեանքի վերջին տարիներում Սարիուքինը ունե-
ցաւ անյաջողութիւններ ոչ միայն Արարատեան Թագաւո-
րութիւնից, այլ նաև էլամացիներից։ Նա սպանւեց Դուր-
Սարիուքին կոչւած պալատում, որ այժմ կոչւում է Խոր-
սաբադ, որ նա նոր էր շինել տւած։

Սարիուքինին յաջորդեց նորա որդի Սին-ախէ-իրբէ, և
կամ ուղղակի Սեննախերիբ, որպէս նա կոչւում է Հին
Կտակարանում։

VII

ՍԵՆՆԱԽԵՐԻԲ, ԷՍԱՐ-ՀԱԴԴՈՆ ԵՒ ԱՍՈՒՐ-ԲԱՆ-ՀԱԲԱԼ

Սեննախերիբը Հրէաստանի եւ Եգիպտոսի դէմ։ Նորա փախուստը։— Սեննախերիբը Էլամի դէմ։—Բաբելոն քաղաքի կործանումը։—Սեննախերիբի աշխարհաշինութիւնը։—Էսար-Հադդոն։—Նուաճումներ մինչեւ Սեւ ծովը։—Սիդոնի կործանումը։—Արշաւանքներ Արաբիայի վերայ։—Արշաւանք Եգիպտոսի վերայ։—Թեբէի կործանումը։—Ասուր-բան-հաբալ։—Թեբէի երկրորդ կործանումը։—Ասուր-բան-հաբալի հռչակը եւ Ասորեստանի սահմանները։

ՍԵՆՆԱԽԵՐԻԲԸ ՀՐԷԱՍՏԱՆԻ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԷՄ։ ՆՈՐԱ ՓԱԽՈՒՍՏԸ։—Սարրուքինի մահից յետոյ, կրկին ոտքի ելան գրեթէ միաժամանակ բոլոր կողմերի հպատակ ազգերը։ Սեննախերիբը սովոր էր շատ արագ գործել. նա շուտով ճնշեց այդ ապստամբութիւնները։ Ամենամեծ ընդդիմադրութիւնը տեղի ունեցաւ փղշտացւոց Էկրոն քաղաքի պարիսպների տակ, որտեղ կանգնած էին եգիպտական Դելտայի իշխանների զօրքերը։ Դոքա յաղթուեցին։ Սեննախերիբը աւերեց Հրէաստանը, գերի առաւ 200,150 հոգի, մեծ թէ փոքր, տղայ թէ աղջիկ։ Այդ աղէտների յիշատակը մի քանի դար շարունակ մնաց հրէաների յիշողութեան մէջ։ Սեննախերիբը պատրաստւում էր վերցնել Երուսաղէմը, երբ հրէաների թագաւոր Հիզկիան հաշտութիւն խօսեց։ Բայց եգիպտացիք հասնում էին Հրէաստանի

օգնութեան. Սեննախերիբը դիմեց դէպի Դելտան. բայց նորա զօրքը կիսով չափ կոտորուեց ժանտախտից, մնացածն էլ ցրուեց, այնպէս որ նա վերադարձաւ Նինուէ գրեթէ մենակ։ Նա այլ եւս երբէք չը վերադարձաւ Պաղեստին, որովհետեւ նա, դորանից յետ, շարունակ պիտի ճակատ դնէր հիւսիսային, արեւելեան և հարաւային ապստամբութիւններին։

ՍԵՆՆԱԽԵՐԻԲԸ ԷԼԱՄԻ ԴԷՄ։—Դոցանից ամենանշանաւորները՝ Էլամի և Քաղդէայի դէմ մղած պատերազմներն են։ Էլամի թագաւորութեան դէմ Սեննախերիբը գործ դրեց ոչ միայն ցամաքի զօրք, այլ և նաւային զօրք։ Այդ նպատակով Տիգրիսի վերայ Սեննախերիբը նաւատորմիղ էր սարքել, բերել տալով Փիւնիկէից հմուտ նաւաշէններ և նաւաստիներ։ Նաւերի միջոցով Ասորեստանի զօրքը կարողացաւ ուղղակի Էլամի սիրտը մտնել, որ էլամացւոց համար անսպասելի էր։ Սեննախերիբը այդտեղ մեծ յաղթութիւններ տարաւ. նորա մտադրութիւնն էր այդ տէրութիւնը մի անգամ ընդ միշտ կործանել. բայց այս անգամ նա կիսով շատացաւ, ստիպուած լինելով շտապել Քաղդէա, որտեղ նմանապէս ժողովուրդը ապստամբած էր։ Կռիւը շատ յամառ էր և վերջացաւ Սեննախերիբի կատարեալ յաղթութիւնով և Բ ա բ ե լ ո ն ք ա ղ ա ք ի կ ո ր ծ ա ն ու մ ո վ։

ԲԱԲԵԼՈՆ ՔԱՂԱՔԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ։—Սեննախերիբը կործանել տուեց Բաբելոն քաղաքը, տաճարները, աշտարակները, բերդերը և սրբարանները. Նա լցնել տուեց մեծ ջրանցքը։ Այն բոլորը, ինչ մի ժամանակ Բաբելոնի թագաւորները խլած էին ասորեստանցիներից աւելի քան 400

տարի առաջ՝ աստուածների արձաններ, կնիքներ և այլն,— Սեննախերիբը դոցա Նինուէ փոխադրել տուեց։ Ութ տարի շարունակ կիսաւեր Բաբելոնը մնաց առանց թագաւորի և գրեթէ առանց բնակիչների, մինչև որ յետագայ Սարգոններից մէկը, Ասար-հադոնը, քաղաքը վերաշինեց նորա նախկին փայլով։

ՍԵՆՆԱԽԵՐԻԲԻ ԱՇԽԱՐՀԱՇԻՆՈՒԹԻՒՆԸ։ — Չը նայած այդ անընդհատ պատերազմներին, Սեննախերիբը կարողացաւ ժամանակ գտնել տաճարներ և պալատներ շինել տալու, և Ասորեստանի ոչ մի թագաւոր չի թողել այնքան հոյակապ շինութիւններ, որքան նա։ Շնորհիւ նորա առատաձեռնութեան և գերիների այն բազմութեան, որ նա խլում էր յաղթութիւններից յետոյ նոցա հայրենիքից, Ասորեստանի ճարտարապետութիւնը Սեննախերիբի օրերով ծաղկեց աւելի քան երբ և իցէ իրանից առաջ։ Շինութիւնները զարդարւում էին օրնամենտներով, որոնցով ներկայացնում էին պատկերներ՝ գործողութեան տեղին նմանեցրած տեսարաններով՝ լեռներ, ժայռեր, ծառեր, ճանապարհներ, գետեր, լճեր, պարտէզներ, կենդանիներ, թըռչուններ, ձկներ։ Դոցա հետ միասին, որոնք ներկայացնում էին գեղարւեստական ճաշակ, գտնւում էին, սակայն, բազմաթիւ տեսարաններ թագաւորի առօրեայ կեանքից՝ երկար շարք ծառաների, որոնք կերակուր են տանում թագաւորի համար և այլն։ Սեննախերիբը ամենից շատ գեղեցկացրեց Նինուէն, որը բարձ ի թողի էր արւած Սարխուքինից և որը մայրաքաղաքութիւնից զրկւած էր։ Սեննախերիբը վերադարձրեց Նինուէին նորա նախկին փայլը, վերաշինեց հին ջրմուղները, շինեց նորերը, վերանորոգեց

Տիգրիսի գետափերը, ամրացրեց շրջապարիսպը և նորոգեց բոլոր հին արձանները։ Հին թագաւորական պալատը նա վերաշինեց, գործածելով դորա համար Ասորիքից բերել տուած ալաբաստրի սպիտակ քարեր և եղևնի։ Այդ պալատի մէջ նա արձանագրել տուեց իւր անունը, պատւիրելով իւր յաջորդներին, որ նոքա հսկեն պալատի և իւր անւան արձանագրութեան վերայ։ Բայց այդ պալատը, չը նայած տւած պատւէրին, 60 տարուց յետ կործանւեց։

ԷՍԱՐ-ՀԱԴԴՈՆ ԿԱՄ ԱՍՍՈՒՐ-ԱԽԷ-ԻԴԻՆ II 680—667։

Սեննախէրիբը սպանւեց իւր որդիներից, որոնցից անդրանիկը, Ադրամելեխ, Մովսէս Խորենացու ասելով, փախաւ Հայաստան, որտեղ տեղական թագաւորը նրան հողեր տուեց։ Կրտսեր եղբայրը, որ ծնւած էր այլ մօրից, թագաւոր հռչակւեց. դա էր Ասուր-ախէ-իդին, որին (Հին Կտակարանում) եբրայեցիք կոչում էին Էսար-Հադդոն։

ՆՒԱՃՈՒՄՆԵՐ ՄԻՆՉԵՒ ՍԵՒ ԾՈՎԸ։—Մի առ ժամանակ Էսառ-Հադդոնը նւաճեց Տիգրիսի և Կասպից ծովի մէջ տեղ թափառող Մարաստանի արիական ցեղերը. յետոյ պատերազմները Վանի, Տուբալի, մուսկիացւոց և կիմմերիացւոց դէմ հասցրին Ասորեստանի տիրապետութիւնը մինչև Սև ծովը և Կովկասեան լեռների ստորոտը, Այդ անցքերը եղան 680-ից մինչև 676 թւականներում։

ՍԻԴՈՆԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ։ — Դորանից յետ նա խաղաղացրեց ապստամբւած Քաղդէան, որին օգնում էին էլամացիք։ Յետոյ դարձաւ նա դէպի Ասորիք, որտեղի իշխաններից մէկը ապստամբել էր. դորան Էսար-Հադդոնը բռնեց Կիպրոս կղզու վերայ, անցնելով ծովը «որպէս ձուկ» (ասւած

է արձանագրութեան մէջ)։ Յետոյ գրաւեց նա Փիւնիկիայի լեռնային կողմերը, որտեղ նա բնակիչներին սրի և կրակի ճարակ տուեց։ Սիդոնը կործանեց, նորա մեծամեծներին խեղդեցին, թագաւորին և բնակիչներին տեղափոխեցին Ասորեստան, իսկ նոցա տեղ Սիդոնը բնակեցրեց Բաղդէայից և Էլամից բերած գաղթականներով։

ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐ ԱՐԱԲԻԱՅԻ ՎԵՐԱՅ։ — Մինչև Էսար-Հադդոնը էլամացիք շփւել էին արաբների հետ միմիայն Եփրատի ափերի մօտ և նուաճած Ասորիքի և Պաղեստինի սահմանների վերայ։ Դոքա մեծ մասամբ թափառական և կողոպտող ցեղեր էին։ Այժմ, երբ Ասորիքի կողմից այլ ևս երկիւղ չը կար, Էսար-Հադդոնը ցանկացաւ տիրանալ նոյն իսկ Եմենին, որի արդիւնաբերութիւնները արտահանւում էին հրէաների քարաւաններով և Բաբելոնի նաւերով։ Էսար-Հադդոնը, սակայն, չը կարողացաւ թափանցել մինչև Եմենը անապատների միջով. բայց մինչ այդ անապատեան սահմանները նա նուաճեց այդ երկիրները և միացրեց նոցա Ասորեստանի հետ։

ԱՐՇԱՒԱՆՔ ԵԳԻՊՏՈՍԻ ՎԵՐԱՅ։ ԹԵԲԷԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ։ — Սենեքերիբի վերջին պարտութիւններից յետ, Եգիպտոսը շատ թէ քիչ կազդուրուեց. Թեբէի եթովպական տոհմը կարողացաւ իւր իշխանութիւնը տարածել ամբողջ Եգիպտոսի վերայ. Էսար-Հադդոնը մտաւ Նեղոսի հովիտը, վերցրեց Մեմֆիսը և Թեբէն, որը նա կողոպտեց. աստուածների և աստուածուհիների արձանները, քուրմերի և քրմուհիների ոսկէ հանդերձները և կրօնական անօթները ուղարկեցին Ասորեստան, որտեղ նոքա դրւեցին տաճարների մէջ, որպէս պատերազմական ախոյեաններ։

Էսար-Հադդոնը Ասորեստանի ձևով կազմակերպեց վարչութիւնը Եգիպտոսում. ամբողջ երկիրը բաժանեց քսան մանր իշխանութիւնների, և դոցա բոլորի գլուխ նշանակեց Սաիսի թագաւոր Նեքաւոն I-ին։ Այդ պատահեց 672 թ. Քր. առաջ.։

ԱՍՈՒՐ-ԲԱՆ-ՀԱԲԱԼ։ ԹԵԲԷԻ ԿՐԿՆԱԿԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ։ — Եթովպայի թագաւորները դորանով չը սաստեցին. նոքա յոգնակի արշաւանքներով փորձեցին Եգիպտոսը կրկին ձեռք բերել և դորանում նոքա երբեմն յաջողութիւններ ունեցան։ Այն ժամանակ Էսար-Հադդոնի յաջորդ Ասուր-բան-հաբալը վճռեց եգիպտական անկախութեան և եթովպական նուաճողների յաւակնութիւններին վերջնական հարուածը տալ։ Այդ նպատակով Ասուր-բան-հաբալը կրկին աւերեց Թեբէն, իսկ բնակիչներին, մարդ թէ կին, գերութեան տարաւ։ Բայց ոչ այդ և ոչ նուաճողի մեծ հռչակը օգնեցին. Եգիպտոսը իւր ազատութիւնը կրկին ձեռք բերեց, երբ Ասուր-բան-հաբալը զբաղւած էր Էլամում։

ԱՍՈՒՐ-ԲԱՆ-ՀԱԲԱԼԻ ՀՌՉԱԿԸ։ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ։ — Ասուր-բան-հաբալի հռչակը այդ ժամանակներում արդէն այնքան մեծ էր և հաստատ, որ նոյն իսկ օտար թագաւորներ, որպէս, օրինակ, Հրէաստանի թագաւորը նորան խոնարհութիւն էին ցոյց տալիս։ Ասորեստանի թագաւորութիւնը նորա ժամանակ տարածւեց, գոնէ անունով, մինչև Եգէյեան ծովը (Արխիպելագոս, Յունական ծով)։

———

VIII

ՎԵՐՋ ԷԼԱՄԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Էլամացիք կամենում են խլել քաղդէական գաւառները։—Բաբելոնի փոխ-արքան դաւադրում է Ասորեստանի դէմ։—Բաբելոնի երկրորդ կործանումը։—Քաղդէական փախստականներ Էլամում։—Ասուր-բան-հաբալը Էլամի դէմ։—Քաղդէական փախստականների վիճակը։—Էլամի թագաւորութեան վերջը։—Ասորեստանի թագաւորութեան վերջը։—Ասուր-էդիլ-իլանի։

ԷԼԱՄԱՑԻՔ ԿԱՄԵՆՈՒՄ ԵՆ ԽԼԵԼ ՔԱՂԴԷԱԿԱՆ ԳԱՒԱՌՆԵՐԸ։—Մի ժամանակ կարելի էր կարծել, թէ Ասուր-բան-հաբալը կամենում էր վերսկսել Սարիուքինի ձեռնարկութիւնները Հայաստանի դէմ։ Նորա այդ դիտաւորութիւնը խանգարեց էլամեան թագաւորութիւնը, որը իւր վերայ քաշեց այն աղէտները, որոնք թերևս Հայաստանի բաժինը դառնային։ Էլամացւոց թագաւոր Ուրտակին, մոռանալով այն օգնութիւնները, որ ստացաւ մի սովի ժամանակ, 659 թուականին յարձակուեց բաբելոնեան փոխարքայութեան մի քանի սահմանակից գաւառների վերայ։ Բայց Ուրտակին բռնուեց և յետոյ փախաւ, բայց սպանուեց մէկի ձեռքով։ Նորա յաջորդ Թէումման և որդին գլխատուեցին։ Էլամացիք, սակայն, չը վհատուեցին, և Ասորեստանից հովանաւորուած էլամացւոց թագաւոր Ումմանիգաս, գրաւելով իւր ազգի հայրենասիրական շարժում-

ներից, դառաւ Ասուր-բան-հաբալի կատաղի թշնամին։ Բայց մի առ ժամանակ նա յետ քաշուեց ուղղակի պատերազմելուց։ Եւ ահա թէ ինչու։

ԲԱԲԵԼՈՆԻ ՓՈԽ-ԱՐՔԱՆ ԴԱՒԱԴՐՈՒՄ Է ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԴԷՄ։—Բաբելոնի փոխ-արքան, որը Ասուր-բան-հաբալի եղբայրն էր, մի մեծ դաւադրութիւն սարքեց սորա դէմ, իւր կողմը գրաւելով բոլոր ազգերը Եգիպտոսից սկսած մինչ Էլամը։ Բայց Ասուր-բան-հաբալը նորան յաղթեց։

ԲԱԲԵԼՈՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ։ — Յաղթելով, փոխարքան մտաւ Բաբելոն, որը պաշարեց և վերցրեց։ Բաբելոնը, որը մօտ 50 տարի առաջ մի անգամ կործանուել էր, ենթարկուեց երկրորդ կործանման ասորեստանցիներից։

ՔԱՂԴԷԱԿԱՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ ԷԼԱՄՈՒՄ։—Դորանից յետ մի քանի քաղդէական ցեղապետներ փախան Էլամ, որտեղի թագաւորը մերժեց նոցա մատնել Ասուր-բան-հաբալի ձեռքը։

ԱՍՈՒՐ-ԲԱՆ-ՀԱԲԱԼԸ ԷԼԱՄԻ ԴԷՄ։—Այդ ժամանակ Շոշում (որ Էլամի մայրաքաղաքն էր) արքունական յեղափոխութիւն պատահեց. զօրավարներից մէկը (Ումմանալդաս) սպանեց թագաւորին և նորա տեղը բռնեց։ Դորանից ծագեց խառնակութիւն, որից օգտուեց Ասուր-բան-հաբալը Էլամի դէմ պատերազմելու համար։ Ումմանալդասը յաղթուեց, փախաւ լեռները և նորա տեղ Ասուր-բան-հաբալը նշանակեց հարկատու թագաւոր Էլամի՝ Սամմարտաուին։ Բայց սա հաւատարիմ չը մնաց և ուզեց կոտորել տալ Ասորեստանի բերդապահ զօրքերին։ Այդ չաջողուեց նրան, և ինքը մատնեց ասորեստանցիներին։ Ումմանալդաս, փախուստից վերադարձած, ժողովեց իւր ուժերը և յետ խլեց մի քանի նշանաւոր բերդաքաղաքներ։ Հետևեալ տարւայ գարնան, Ասուր-բան-հաբալը անձամբ եկաւ Էլամ և մէկը միւսի յետևից վերցրեց Շոշի մօտերքում կառուցած բերդերը,

և չէառ ինքը Շուշ քաղաքը։ Մի ամիս և 25 օր Էլամի ամբողջ հարթութիւնը կողոպուտի տուեց զօրքերին։ Բնակիչների մնացած մասը քշեց «ոչխարների խաշինների նման» այլ էլամական քաղաքները, որտեղ նրանք ունէին Ասորեստանի աստուածները, նահանգապետները և զինուորական հրամանատարները։

ՔԱՂԴԷԱԿԱՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ։—Կրկին անգամ փախած Ումմանալդասը առաջարկեց Ասուր-բան-հաբալին նորա ձեռքը մատնել քաղդէական փախստական ցեղապետներից գլխաւորին՝ Նաբու-բել-սումէ՚ին։ Բայց սա գերադասեց մահը և իւր ախոռապետի ձեռքով իրան սպանել տուեց։ Նորա մարմինը յանձնուեց Ասուր-բան-հաբալի դեսպաններին. թագաւորը դիակից գլուխը կտրեց և գցեց փողոցը, արգելելով նորան թաղել։ Նորա գլուխը, աղով պատրաստած, կախ տուեց Նինուէի թագաւորական պալատի պարտէզների ծառերից մէկից. մի բարելիեֆ (քանդակած տեսարան), որ այժմ տեղափոխուած-պահպանուած է Լոնդոնի Բրիտանական թանգարանում, ներկայացնում է Ասուր-բան-հաբալին մի խնջոյքի մէջ իւր կանանց հետ, ներկայութեամբ այդ քստմնելի ախոյեանի։

ԷԼԱՄԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԸ։— Ումմանալդասի այդ վատութիւնը, սակայն, իրան չազատեց, և նա հալածուեց տէրութեան սահմաններից դուրս։ Էլամը, որը Առաջաւոր Ասիայի տէրութիւններից ամենահինն էր, ջնջուեց աշխարհիս երեսից. Նորա իսկական պատմութեան յիշատակները անյայտացան աւանդութիւնների մէջ։ Առասպելական Մեմնոնը բռնեց՝ ազգերի յիշողութեան մէջ՝ տեղը այն փառաւոր և համարձակ թագաւորների, որոնք տիրապետել էին Բաբելոնին և Ասորիքին արդէն այն ժամանակներում, երբ Նինուէն դեռ ևս մի փոքրիկ աւան էր։

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԸ (625)։ ԱՍՈՒՐ-ԷԴԻԼ-ԻԼԱՆԻ։ — Այդ արտաքուստ հզօր տէրութիւնը մօտեցել էր իւր վախճանին։ Մարաստանում կազմել էր մի նոր և հզօր տէրութիւն, որի գլուխն էր Կիաքսարը։ Մարաստանի ցեղերը, կազմակերպուած լինելով որպէս մի նոր ազգութիւն, ցոյց տուին նոր ազգերին յատուկ ձգտումն ընդարձակուելու. նոքա յարձակուեցին Ասորեստանի վերայ, բայց այդ անգամ յաղթուեցին։

Կիաքսարը պատրաստեց մի կանոնաւոր զօրք և, վերսկսելով մի երկրորդ յարձակումն Ասորեստանի վերայ, պաշարել էր Նինուէն, երբ, անսպասելի կերպով, հիւսիսից երևացին Մարաստանում սկիւթացիք։ Հարկաւոր էր դիմել սոցա դէմ։ Սկիւթացիք յաղթեցին իրանց մեծ թւի պատճառով, բայց չը մնացին երկրում, այլ գնացին Միջագետք, Քաղդէա, որտեղ զարհուրելի աւերումներ պատճառեցին. յետոյ նոքա դիմեցին դէպի Ասորիք, Փիւնիկիա։

Մարաստանը 6—7 տարիներից յետոյ թօթափեց իւր վրայից սկիւթացւոց լուծը և վերսկսեց իւր պատերազմը Ասորեստանի դէմ, միանալով Քաղդէայի փոխարքայ Նաբոպալասարի հետ, որը այդ իսկ ժամանակներում իրան թագաւոր էր հռչակել։ Ասուր-էդիլ-իլանին, իրան դաւաճանուած տեսնելով, ամրացաւ Նինուէի մէջ, պաշտպանուեց որքան կարողացաւ և վերջը, թշնամու ձեռքը չընկնելու համար, իրան այրեց 625 թւին։ Նինուէն կործանուեց և Ասորեստանի թագաւորութիւնը վերջացաւ։

IX

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ասորեստանի լուսաւորութեան աննշանութիւնը։—Ասորեստանի ժառանգները։—Ասիրիական գրերը։

Ասորեստանի թագաւորութեան վերանալուց յետ շատ տարիներ չանցան, և արդէն Ասորեստանի թագաւորութիւնից միմիայն աւանդութիւնն էր մնացել. երկու հարիւր տարուց յետ՝ որոշ կերպով չը գիտէին անգամ Նինուէի տեղը։

Ասորեստանը, լուսաւորութեան պատմութեան մէջ, աննշան տեղ է բռնում, որովհետև ինչ որ ունեցան ասորեստանցիք՝ փոխ էր առնուած Քաղդէայից և Եգիպտոսից։ Քաղդէացիք և եգիպտացիք առաջին անգամ ունին լուրջ տեղեկութիւններ աստղաբաշխութեան, բժշկականութեան և բնական գիտութիւնների մասին։ Ասորեստանցիք իրանց գիտութիւնները փոխ էին առել Քաղդէայից, արուեստները՝ Քաղդէայից և մի փոքր էլ Եգիպտոսից, գիտական և կրօնական գրականութիւնը՝ Քաղդէայից։

Միակ բանը, որ ասորեստանցիներին յատուկ էր, այդ՝ նոցա զօրավարների անագորոյնութիւնն էր և նոցա զինուորների քաջութիւնը։ Ասորեստանի պատմութիւնը՝ անընդհատ պատերազմների և նուաճումների պատմութիւն է. հէնց որ նորա ազգաբնակութեան դադրած և սպառուած

լինելը այլ ևս չը ներեց նրան յաջողութիւններ ունենալ պատերազմի դաշտի վերայ — ինքն էլ անյայտացաւ։

Ասորեստանի ընդարձակ տէրութիւնը բաժանւեց Կիաքսարի և Նաբոպոլասարի մէջ. բուն Ասորեստանը և նորա հետ կից հիւսիսային և հիւսիս-արեւմտեան երկիրները ստացաւ Կիաքսարը, միացնելով Մարաստանի հետ. իսկ Նաբոպոլասարը Բաբելոնի թագաւորութեան հետ ստացաւ Ելամը և իւր գերիշխանութիւնը ընդարձակեց Միջագետքի, Ասորիքի և Պաղեստինի վերայ։

ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԵՐԸ։—Ասորեստանցիք գրում էին նշաններով, որոնց իւրաքանչիւր մասնիկը ներկայացնում էր մի գիծ հաստ գլխով և բարակ ծայրով. այդ գիծը կամ հորիզոնական էր —, կամ ուղղահայեաց |, և կամ անկիւնաձև <։ Բևեռի ձև ունենալուն պատճառով, նոցա անուանում ենք բևեռագրեր (écriture cunéiforme ֆրանսերէն, Keilschrift գերմաներէն, клинообразныя письма ռուսերէն)։ Այդ նշանների յայտնի դասաւորութիւնը արտայայտում էր երբեմն մի ամբողջ գաղափար, բայց մեծ մասամբ՝ վանկեր։ Վանկերը լինում էին հասարակ, կամ բարդ։ Հասարակ վանկը բաղկացած էր մի ձայնաւորից և մի բաղաձայնից։ Օրինակ հասարակ վանկերի համար՝  ա,  բա,  աբ,  իբ,  բու,  նա,  ին,  պա,  ուպ, և այլն։

Բաղադրեալ վանկերը գրւում էին երկու կերպ. բաժանելով նոցա հասարակ վանկերի, այնպէս որ մի բարդ (երկու բաղաձայն ունեցող) վանկից ստացւում էին երկու հասարակ (մի ձայնաւոր և մի բաղաձայն ունեցող) վանկեր, որոնցից երկրորդ վանկը սկսւում էր առաջինի ձայ-

նաւորով։ Օրինակ. նապսատ, որ հոգի է նշանակում, կարող էր գրել՝ նա+ապ+սա+ատ , և կամ բարդ վանկը արտայայտւում էր մի յատուկ նշանով՝ , այսինքն նապ+սատ։

Բարդ նշանների թիւը հասնում էր մինչ 300-ի։ Նշանները մեծ մասամբ արտայայտում էին մի քանի հնչիւններ. դորան անւանում են բազմահնչիւնութիւն. այդ բանը պատճառում է բևեռագրերի կարդալու ամենամեծ դժւարութիւններից մէկը։ Եւ ահա մի օրինակ, թէ ինչպէս մի նախադասութեան մէջ շաղկապւում էին բևեռագրերը

Աւ - կի սու Նաբու - կուդուր - ուսուր նի - բե-
Յետ նորա Նաբուկուդուրուսուր զէնքերը


տէ սու իս սա - ա ա - նա զա - ան - կի բէը - տի
իւր նա տարաւ դէպ կիրճերը սահմանների

ւա Ասուր ա - նա կա - սա - դի եւ - մի - կա
Ասուրի համար նւաճման նա եկաւ։

Ընթերցումը հեշտացնելու համար մարդկանց անուններին առաջ դնում էին  (տես Նաբուկուդուրուսուր), երկրի անւան առաջ դնում էին  (տես Ասուր)։

Նաբուկուդուրուսուր գրելը բաւականի բարդ բան էր. Նաբու խօսքը մի աստուծու անուն էր և գրւում էր այսպէս՝ ։ Արդ, նախազգուշացնելու համար, թէ իսկոյն պէտք է աստուծու անուն գայ, դնում էին այս նշանը՝  և ցոյց տալու համար, թէ ամբողջ բառը (Նաբուկուդուրուսուր)

մի մարդու անուն է, սկզբում, որպէս ասացինք, դնում էին նշանս . ուրեմն Նաբու-կուդուր-ուսուր անւան առաջին մասը (Նաբու) պէտք է գրել ։ Այդ օրինակի մէջ մենք տեսնում ենք, թէ ինչպէս մի գաղափար (Նաբու աստուած) յայտնելու համար յատուկ հնարւած մի նշան () գործ էին ածում մի այլ խօսք գրելու համար, որի մի կամ երկու վանկը նոյն հնչիւնները ունէին։ Դա՝ գաղափարագրութիւն է անւանւում։ Գաղափարագրական ձևը աւելի սակաւ էր գործածւում, քան թէ վանկագրական ձևը։

Բևեռագրութեան սիստեմը, թեթև կերպով փոփոխւած, գործ էր դնւում, բացի Ասորեստանի բարբառներից, նաև չորս արիական լեզուների համար. այն է Քաղդէայի, Մարաստանի և Էլամի թուրանական լեզուների և Արարատեան լեզուի համար։ Մօտ 600 տարի Քր. առաջ Իրանի բնակիչները ընդունեցին այդ գրերը և յարմարեցրին իրանց լեզուին։ Դորանից ծագեց արիական բևեռագրութեան մի եղանակ, որը ամենապարզն էր և ամենահեշտը կարդալու համար։ Մեծամասնաբար այդ գրերը այբբենական են, մի քանիսները՝ վանկագրական և մի փոքր մասն էլ՝ գաղափարագրական։ Այդ եղանակով գրում էին Պարսկաստանում և Մարաստանում երկու դար՝ Կիւրոսից մինչ Դարիոս Կոդոմանը։ Վանկագրական ձևի օրինակը թողեցին Քաղդէայի թուրանցիք։ Նոցա սիստեմը ընդունեց ասորեստանցիներից, որոնք նոյնը տարածեցին դէպ հիւսիս՝ Հայաստանում, դէպ արևելք՝ Մարաստանում, Էլամում և Պարսկաստանում։ Գրութեան այդ սիստեմը գործածութիւնից դուրս եկաւ միայն Քրիստոսից մի-երկու դար յետոյ։

Յետոյ այդ գրութիւնը բոլորովին մոռացութեան տուեց, մինչև որ նորան սկսեցին ուսումնասիրել մեզնից մօտ 125 տարի առաջ. իսկ առաջին անգամ ճանաչեցին պարսկական բևեռագրերը և դոցա առաջին կարդացողը եղաւ Գրոտեֆենդ (անգլիացի) 1802 թ-ին. Նա տուեց նոցա այբբենարանը, որը յետոյ լրացրին Եւգենիոս Բիւրնուֆ (ֆրանսիացի) և Քրիստիան Լասսէն (գերմանացի)։ Մի քանի տարի յետոյ մի անգլիացի, Հենրիկոս Ռաուլինսոն, գրեթէ վերջնական կերպով ուսումնասիրեց Աքեմենիդների (Կիւրոսի և յաջորդների) արձանագրութիւնները, որոնց նա թարգմանեց։ Այդ թարգմանութիւնների մասնաւոր թերութիւնները լրացրին Օպպէրտ (ֆրանսիացի) և Շպիգել (գերմանացի)։

Հին պարսկական արձանագրութիւնների ընթերցումը ճանապարհ բացեց բաբելոնեան, ասիրիական և մարական բնագիրները կարդալու համար։ Առիթը տուեց նախ Մոսուլի ֆրանսիական հիւպատոս Բոտտա, որը գտաւ Նինւէի աւերակները 1846 թ., իսկ յետոյ նաև Լէյարդ (անգլիացի), որը գտաւ Կույունջիկի և Նիմրուդի աւերակները (1849—51)։ Այդ աւերակների մէջ գտան մեծաքանակ արձանագրութիւններ, որոնց կարդալու եղանակները պարզեցին Ռաուլինսոն, Հինքս և Ֆոքս Տալբոտ Անգլիայում, դը-Սոլսի և Օպերտ՝ Ֆրանսիայում։ Այդ ժամանակւանից դէս Ասորեստանի ուսումնասիրութեան կամ ասորագիտութեան յառաջդիմութիւնը չարունակ է եղել։ Բաբելոնեան, Նինուեան և մարական (մեդական) արձանագրութիւնները կարդալուց յետ, սկսեցին հետամուտ լինել հին քաղդէական գրականութեան մնացորդներին։ Մի երեսուն տարում անյայտ լեզուների և ազգերի նոր աշխարհ բացուեց ուսումնասիրութեան համար, և պատմութեան երեսուն դարեր գերեզմանից նորից լոյս աշխարհ եկան։

ԲԱԲԵԼՈՆԻԱ

I

ԲԱԲԵԼՈՆԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Նաբօ-բալ-ասուր։—Նաբուգոդոնոսոր։—Հրէաների ապստամբութիւնը։—Երուսաղէմի կործանումը եւ Հրէաների գերութիւնը։—Երեմիայի ողբը։—Նաբուգոդոնոսորը Արաբիայում։—Հաշտութիւն Տիրոսի հետ։—Նաբուգոդոնոսորը Եգիպտոսում։—Բաբելոնի վերանորոգումը։—Աւանդութիւններ Նաբուգոդոնոսորի մասին։—Բաբելոնեան թագաւորութեան վերջը։

ՆԱԲՕ-ԲԱԼ-ԱՍՈՒՐ։ — Ամբողջ ութ դար ներքին կռիւներից և Ասորեստանի դէմ պատերազմներ կամ ապստամբութիւններ անելուց յետ, Քաղդէան, վերջապէս, կրկին անգամ միացաւ մի միակ թագաւորի ձեռքում։ Նինւէի անկումը և բարեկամութիւնը Մարաստանի հետ ապահովում էին Նաբօբալասուրի համար տիրապետութիւնը Եփրատի աւազանի և Ասորիքի վերայ։ Ամբողջ 15 տարի նա ոչոքի վերայ չը յարձակուեց և ոչոքից հարւած չստացաւ։ Իւր թագաւորութեան վերջում, սակայն, մի անկնկալ վտանգ սպառնաց նորան։ Այն ժամանակւանից դէս՝ երբ ասորեստանցիք դուրս քշեցին Եգիպտոսից (Ասուրբան-հաբալի ժամանակ), Եգիպտոսի մանր թագաւորները

կրկին ընկան Եթովպայի լուծի տակ, մինչև որ 651 թ-ին Պսամետիքը, յաղթելով միւս մանր իշխաններին, տիրացաւ Եգիպտոսին: Նինուէի կործանումը Կիաքսարի ձեռքով կատարուեց Պսամետիքի ժամանակ: Սորա որդին, Նեքաւոն II, որպէս տեսանք, նուաճեց Ասորիքը 608 թ-ին, օգտուելով Նաբօբալասարի ծերութիւնից: Բայց այդ երկիրները մնացին Նեքաւոնի ձեռքին միմիայն երեք տարի: Նաբօբալասարը ուղարկեց իւր որդի Նաբուկուդուրուսուրին (Նաբուգոդոնոսոր) Նեքաւոնի դէմ 605 թ-ին. վճռական կռիւը եղաւ Կարկեմիշի մօտ. եգիպտացիք կատարելապէս ջարդուեցին և Նաբուգոդոնոսորը դորանով կրկին յետ ձեռք բերաւ Ասորիքը: Նա պատրաստւում էր Եգիպտոս անցնել, երբ նրան հասցրին նորա հօր մահուան լուրը, և նա վերադարձաւ Բաբելոն:

ՆԱԲՈՒԳՈԴՈՆՈՍՈՐ:—Այս թագաւորը քաղդէական թագաւորութեան հերոսն է, որպէս Կիաքսարը՝ Մարաստանի հերոսն է: Առանց նորան, Բաբելոնը կը յիշուէր պատմութեան մէջ միմիայն որպէս առևտրական և գործարանական քաղաք. բայց, շնորհիւ նորան, Բաբելոնը ճանաչուեց ամբողջ արևելքում իւր յաղթութիւնների և զօրութեան պատճառով:

ՀՐԷԱՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ:—Նեքաւոնը, թէպէտ և յաղթուեց Կարկեմիշում և կորցրեց Ասորիքը, բայց վհատուողներից չէր: Ասորիքի մանր տէրութիւնների գոյութիւնը միշտ հարկաւոր էր համարուած Եգիպտոսի փարաւոններից, որպէս անջրպետ Եգիպտոսի և Ասորեստանի հզօր տէրութիւնների մէջ: Այժմ բաբելոնեան տէրութիւնն էր դարձել վտանգաւոր Եգիպտոսի համար, և Նե-

քաւոնը իւր նպատակին հասնել էր կամենում, դրդելով Ասորիքի մանր իշխաններին Բաբելոնի դէմ: Նեքաւոնի դրդմամբ ապստամբուեց Հրէաստանի թագաւոր Յովակիմը. բայց սա յաղթուեց: Երեք տարուց յետ նա կրկին ապստամբուեց, բայց մեռաւ, թողնելով թագը երիտասարդ Յովակիմ II-ին, որին Նաբուգոդոնոսորը ընտանիքով հանդերձ աքսորեց Քաղդէա: Նաբուգոդոնոսորը խնայեց Երուսաղէմը և շատացաւ միայն տաճարի գանձերը վերցնելով. հրէական զօրքը գերութեան տարուեց. բնակիչների բանուոր մասը տեղափոխուեց Բաբելոն, որտեղ նոցա բանեցրին մեծ շինութիւնների համար: Երուսաղէմում Նաբուգոդոնոսորը իւր տեղ նշանակեց Սեդեկիային:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ ԵՒ ՀՐԷԱՆԵՐԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ: - Քանի մի ժամանակից յետոյ Հրէաստանը կրկին ոտի կանգնեց, միացած Տիրոսի, Փիւնիկիայի և մի քանի այլ իշխանութիւնների հետ: Նաբուգոդոնոսորը շտապեց դորա առաջն առնել, և այդ նպատակով իւր զօրքի մի մասը ուղարկեց Տիրոսը պաշարելու, իսկ գլխաւոր ոյժերով անձամբ մտաւ Հրէաստան, վճռած լինելով առ միշտ վերջացնել իւր գործը հրէաների հետ: Նա աւերեց երկիրը, գիւղացիներին մատնեց փղշտացւոց և եդոմացւոց յափշտակութեան և մօտեցաւ Երուսաղէմին, երբ արդէն ողջ երկիրը սրի և կրակի ճարակ էր տուած: Հրէաները հերոսական յամառութեամբ պաշտպանեցին Երուսաղէմը: Բայց միութիւն չկար բնակիչների մէջ. Երեմիան քարոզում էր հպատակութիւն, իսկ թագաւորը վճռած էր մինչև վերջին ծայր պաշտպանուել: Սովը սկսուեց քաղաքում, հացի պաշարը հատել էր, բայց քաղաքը անձնատուր լինել չուզեց:

Վերջապէս մի տարի և կէս պաշարումից յետ, քաղաքի շրջապարիսպի մէջ ճեղք բացուեց և քաղդէացիք ներս մտան։ Նաբուգոդոնոսորը խեղդել տուեց Սեդեկիայ թագաւորի որդիներին և Հրէաստանի բոլոր բարձր աստիճանաւորներին՝ նոյն իսկ իւր ներկայութեամբ։ Յետոյ հրամայեց՝ Սեդեկիայի աչքերը հանեն և նորան երկտակ շղթաներով ուղարկեն Բաբելոն։

ԵՐՈՒՍԱՂԷՄԸ ԿՈՐԾԱՆՒԵՑ ԵՒ ԱՅՐՒԵՑ։—Զինուորները, քահանաները, դպիրները, բարձր դասակարգից բոլորեքեանք ուղարկուեցին Քաղդէա, որտեղ նոցա ցրուեցին զանազան քաղաքներում։

(Մովսէս Խորենացու ասելով (Գլ. իբ), պատմում էին, թէ Հայոց Հրաչեայ թագաւորը խնդրեց և ստացաւ Նաբուգոդոնոսորից՝ գերուած եբրայեցիների գլխաւորներից Շամբաթին, որին Հրաչեան մեծ պատւով բնակեցրեց Հայաստանում, և որ այդ Շամբաթից (Սմբատ) սերուեց Բագրատունիների հայկական հռչակաւոր տոհմը)։

Կործանումը վերջացրած, քաղդէացիք յետ քաշուեցին, յանձնելով այդ նոր նահանգի կառավարութիւնը Երեմիա մարգարէի բարեկամներից մէկին։ Բայց այն հրէաները, որոնք վրէժխնդիր եղան երկրի նոր կառավարիչներից, վախենալով Նաբուգոդոնոսորի բարկութիւնից, փախան Եգիպտոս, իրանց հետ տանելով ժողովրդի մի մասը և Երեմիային։ Բայց դորանով գործը չը վերջացաւ. 581 թ-ին մի անգամ ևս ապստամբեցին հրէաները. բայց այս անգամ ևս յաղթուեցին, և այն աքսորը, որին նոքա ենթարկուեցին, վճռեց երկրի ճակատագիրը։

ԵՐԵՄԻԱՅԻ ՈՂԲԸ։—Հեռուից Երեմիան աղիողորմ կերպով ողբաց իւր ցեղի ջնջուելը (Տես Աստուածաշունչ,

Երեմիա, խը և խթ)։ «Հրէաստանը տարուեց գերութիւն, այնքան վշտացրած է և այնքան մեծ է նորա ստրկութիւնը. նա այժմ ապրում է այլ ազգերի մէջ և այլ ևս հանգիստ չի գտնում։ Դէպի Սիօնը տանող ճանապարհները սուգ են կրում, որովհետև այլ ևս ոչ ոք տօնախմբութիւններին չի գալիս. նորա դռները բացեն, նորա զոհաբերները հեծկլտում են, նորա կոյսերը ճնշուած են տխրութիւնից. նորա որդիքը գնում են գերութիւն թշնամու առջև։ Ով Եհովահ, դու կաս յաւիտենականապէս և քո գահը մնում է դարէցդար։-Ինչու պիտի մեզ առ միշտ մոռանաս։ Ինչու դու պիտի մեզ առ միշտ թողնես։—Տար մեզ քո մօտ, որպէս զի մենք փոխուենք. նորոգիր մեր օրերը, որպէս նոքա առաջ էին»։

Հրէաստանի աղէտը արտափայլեց Յորդանանից դէն հարևան երկիրների վերայ (Ամոն, Մովաբ և Նաբաթ), որոնք խստորէն պատժուեցին ապստամբութիւնների պատճառով։

ՆԱԲՈՒԳՈԴՈՆՈՍՈՐԸ ԱՐԱԲԻԱՅՈՒՄ։—Արաբիան նմանապէս կրեց ասպատակողի հարուածը։ Որպէս Ասորեստանի թագաւորները, նոյնպէս այժմ Նաբուգոդոնոսորը հրապուրուեց առասպելական հարստութիւնների այն հռչակով, որ վայելում էին հեռաւոր Եմէնի (Արաբիայի արևմտեան մասը) վաճառականութիւնով հարստացած երկիրները։ Բայց նա հազիւ կարողացաւ հասնել Եմէնի արևմտեան սահմաններին և վերադարձաւ, իւր հետ տանելով գերուածների մի բազմութիւն և ամբողջ երկու ցեղեր, որ նա բնակեցրեց Քաղդէայում։ Արաբները չը մոռացան նուաճողին, որը նոցա այդքան խստութեամբ հարուածեց. Բոխտնասարը (այդպէս

են կոչում նոքա Նաբուգոդոնոսորին) պատուանոց։ Համար մի աւանդական հերոս, որին վերագրում էին հազար ու մի դիւցազնական և առասպելական յիշատակներ։

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ ՏԻՐՈՍԻ ՀԵՏ։—Կղզու պարիսպներով պաշտպանւող Տիրոսը ի դերև էր հանում քաղդէացւոց բոլոր յոյսերը. սոքա, 13 տարի ապարդիւն կերպով քաղաքը պաշարելուց յետ, պաշարումը վերացրին, հաշտութեան դաշն կապելով Տիրոսի թագաւորի հետ։

ՆԱԲՈՒԳՈԴՈՆՈՍՈՐԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ։--Մնաց Եգիպտոսը, որի մասին մարգարէական գուշակութիւններ էին խօսում Երեմիա և Եզեկիէլ (Երեմիա, Թ. 25—26, խզ, 8—13, խը, 30, խզ.-Եզեկիէլ, Լ, 10—18)։ Եւ իրօք, Նաբուգոդոնոսորը յարձակուեց Եգիպտոսի վերայ. բայց հետևանքների մասին վկայութիւնները տարբերւում են։ Յովսէփի ասելով (Ժ, 11), Նաբուգոդոնոսորը ասպատակեց երկիրը և վերադարձաւ, նշանակելով երկրի վերայ մի կառավարիչ. իսկ Եգիպտացւոց ասելով՝ Նաբուգոդոնոսորը ստիպուեց յետ մղել, կորցնելով Ասորիքի ամբողջ Միջերկրական ծովափը։

ԲԱԲԵԼՈՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ։—Դորանով էլ վերջացան Նաբուգոդոնոսորի արշաւանքները։ Նա արդէն ծերացած էր, և իր կեանքի վերջին տարիները նա նուիրեց Բաբելոնի վերաշինութեան գործին։ Մենք տեսանք, որ, դեռ ևս մինչ Նինուէի կործանումը, մի դարեայ ընթացքում Բաբելոնը երկու անգամ աւերուեց Սենեքերիմից և Ասուր-բանի-պալից։ Նաբոպալասարը արդէն սկսեց Բաբելոնի վերաշինումը, յանուն իր կնոջ, որ կրում էր Նիտոկրիս եգիպտական անունը։ Օրինակ՝ վերաշինուեց Տիգրիսը և Եփրատը միացնող ջրանցքը՝ Բաբելոնից դէպ հիւսիս, վե-

րանորոգեցին այն մեծ աւազանները, որտեղ հաւաքւում էր ջուրը Եփրատի յորդութեան ժամանակ. նորոգեցին քաղաքի կամուրջը և քաղաքի պարիսպը և այլ շատ շինութիւններ, որոնց համար բերուած էին անթիւ գերի-բանւորներ Ասորիքից, Հրէաստանից, Եգիպտոսից և Արաբիայից։ Նաբուգոդոնոսորը եղաւ Բաբելոնիայի համար այն, ինչ Եգիպտոսի համար եղած էր Ռամզէս II (Սեզոստրիս Մեծն)։ Բաբելոնի շրջակայքում չկայ տեղ, որտեղ չը գտնէին Նաբուգոդոնոսորի անունը և նորա հրաշալի գործունէութեան յետքերը։

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ ՆԱԲՈՒԳՈԴՈՆՈՍՈՐԻ ՄԱՍԻՆ։— Նաբուգոդոնոսորի վերջին տարիների մասին պատմում են զանազան աւանդութիւններ։ Ազգային քաղդէական աւանդութիւնը պատմում էր, թէ իր կեանքի վերջում, Նաբուգոդոնոսորը, նախազգալով իր մօտաւոր վախճանը, բարձրացաւ իր պալատի կտուրը և գուշակեց քաղդէացիներին թագաւորութեան մօտագայ վերջը։ Հրէական աւանդութիւնը, որ անողորմ էր դէպի մի թագաւոր, որը կործանել էր Երուսաղէմը և տաճարը, պատմում էր, թէ, մոլորուած իր փառքով, նա իրան Աստուծու հաւասար կարծեց և Եհովայի բարկութեամբ՝ անասունի փոխարկուեց։ Եօթ տարի շարունակ նա ապրեց դաշտերում, կերակրուելով խոտով, որպէս տաւար և որ յետոյ նա իր նախկին կերպարանքը ստացաւ և իշխանութիւնը կրկին իր ձեռքն առաւ։

Նաբուգոդոնոսորը մեռաւ 561 թւականին։

Ի Ր Ա Ն

ՄԱՐԵՐ ԵՒ ՊԱՐՍԻԿՆԵՐ

I

ԻՐԱՆԸ ԵՒ ՆՈՐԱ ՀԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Տեղագրական։—Բնակիչներ։

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ։—*Ասորեստանից դէպի արեւելք գտընւող երկիրները բնականապէս երկուսի են բաժանւում՝ մէկը լեռնային, միւսը տափարակ։ Լեռնայինը բաժանում է Տիգրիսի աւազանը Կասպից ծովի աւազանից. իսկ տափարակ մասը հարաւի կողմից հասնում է Հնդկական ծովին, արեւելեան կողմից՝ դէպի Հելմէնդ։ Լեռնային մասը յենւում է մի լեռնակոյտի վերայ, որը եռանկիւնաձեւ է եւ որի կողքերը բարձր են, իսկ կենտրոնը՝ խորն ընկած։ Այդ խորութեան մէջ թափւող ջրերը կազմում են մի մեծ լիճ, որի մակերեւոյթը, նման Մեռեալ ծովին, ովկիանոսից ցածր է, իսկ ջուրը այնքան աղի է, որ ձուկ չի կարող այնտեղ ապրել։ Այդ լեռնակոյտից բաժանւում է Էլբորուսը, որը, մօտենալով Կասպից ծովի*

հարաւային ափին, գնում է հեռու՝ Հինդու-Քուշի հետ միանալու համար։ Նորա գագաթներից Դեմաւենդը բարձրանում է մինչ մօտ 20.000 ոտաչափ (ուրեմն նշանաւոր չափով բարձր է Մասիսից)։ Վերը յիշած լեռնային մասից սկիզբ են առնում հինգ-վեց գետեր, որոնք թափւում են Տիգրիս գետը, կազմելով բերրի ձորեր։

Այդ լեռներից դէնը, դէպ արեւելք, ձգւում է մի լայնածաւալ դաշտ, թեթեւ կերպով ծածանւած բլուրներով և դէպի ափերը այնքան բերրի, որ կարող է կերակրել մեծ ազգաբնակութիւն։ Ափերից հեռանալով դէպի կենտրոնը, գետերը կորչում են հողի տակ, և երևան է գալիս անապատը։ Ամբողջ երկիրը, իւր ընդհանրութեամբ, չի կարող հաւասարել Քաղդէային և Եգիպտոսին պտղաբերութեան կողմից. բայց և այնպէս նա հարուստ է բնական հարստութիւններով։ Լեռները պարունակում են փոքր քանակութեամբ պղինձ, երկաթ, արճիճ ոսկի, արծաթ, մարմարիոնի մի քանի տեսակներ և թանկագին քարեր։ Լեռները մեծ մասամբ ծածկւած էին խիտ անտառներով, որտեղ բուսնում էին հացի ծառ, կաղնի, օփենի (կաղամախ), ընկուզենի և ուռենի։ Զագրոս գետի և Ուրմիայի հովիտները կատարեալ այգեստաններ են. նոքա արտադրում են տանձ, խնձոր, սերկեւիլ, կերաս, ձիթենի, դեղձ։ Դաշտում ծառեր կան միմիայն գետերի և լճակների ափերին. բայց, որտեղ ջուրը պակաս չէ, ցորենը և կանաչեղէնը հարուստ է։ Կային գազաններ՝ առիւծ, վագր, ինձ, արջ. բայց կային ընտելացող շատ կենդանիներ՝ վայրի էշ, գոմէշ, այծեամ, շուն, միասապատ և երկսապատ ուղտեր և ձիերի մի քանի տեսակներ։

ԲՆԱԿԻՉՆԵՐ։—Հին աշխարհի ազգերը ամեն ժամանակ անցել են Իրանի միջով. քուշերը և սեմացիք անցան այդ երկրով. բայց նոքա այդտեղ չը մնացին։ Յետոյ եկան արիական ցեղերը, որոնց գլխաւոր մասը իւր բնակութիւնը հաստատեց Ուրմիայ լճի հարաւում, որ յետոյ դառաւ ատրպատականեան Մարաստան։ Նոցանից առաջ երկիրը բռնւած էր թուրանցիներից, որոնք ստիպւեցին տեղի տալ։

Մարաստանցիք (կամ մեդացիք կամ մարք և կամ մարեր) պատկանում էին կովկասեան ցեղի հնդկա-եւրոպական ճիւղին, որպէս նաև պարսիկները, որոնց հետ միասին նոքա կազմում էին իրանական ազգերի գլխաւոր մասը։ Նոցա ընդհանուր անունն էր Արիաս, իսկ նոցա սկզբնական հայրենիքը, իրանց ասելով, Պամիրի բարձրաւանդակն էր։ Իրան գալով, պարսիկները բռնեցին երկրի հարաւ-արեւմտեան մասը և դառան հարեւաններ էլամացւոց. մարերը բռնեցին երկրի հիւսիս-արեւմտեան մասը։ Բայց որքան հեշտութեամբ պարսիկները հաստատւեցին իրանց նոր հայրենիքում, նոյնքան դժւար եղաւ մարերի համար հաստատել իրան նոր հայրենիքում, որի իւրաքանչիւր կտոր հողը պէտք է ույժով ձեռք բերէին թուրանական ցեղերից, միշտ աշխատելով մօտենալ Ասորեստանի սահմաններին։

Ասորեստանը, որպէս առաջ տեսանք, քանիցս անգամ ոտ կոխեց Իրանում։ Այդ սկսեց միմիայն 9-դ դարից, սկսած Տուկլատ-ադար II-ից և Ասուր-նազիր-հաբալից, երբ դեռ ևս երկիրը մեծ մասամբ թուրանական ցեղերով էր բնակեցրած։ Բայց երբ Տուկլատ-հաբալ-հասար II (որ գահ բարձրացաւ 745 թ-ին) իւր զօրքերը մղեց դէպ արևելք, մարերը արդէն բռնած էին երկիրը Զագրոս գետից մինչ անապատը

և Էլամի հիւսիսային սահմաններից մինչ Կասպից ծովը։ Այդ ժամանակ, ինչպես ցոյց են տալիս Ասորեստանի արձանագրութիւնները, Մարաստանը բաժանուած էր իրարից անկախ բազմաթիւ իշխանների և ցեղապետների մէջ։ Սարխուքինը լրջօրէն սկսեց երկրի նուաճումը. 712 թ-ին բազմաթիւ զօրքերով նա մտաւ Մարաստան, վերցրեց քաղաքների մեծագոյն մասը, որ նա միացրեց Ասորեստանի հետ, և բերդեր շինեց զանազան տեղերում՝ երկիրը հնազանդութեան մէջ պահելու համար։ Ըստ Ասորեստանի սովորութեան, մարերի մի մասը Սարխուքինը տեղափոխեց Ասորեստանի արևմտեան նահանգները, նոցա տեղ բերաւ բնակիչներ Հրէաստանից և Սամարիայից։ Կէս դար շարունակ, մինչ մօտ 650 թ., Մարաստանը ամբողջապէս Ասորեստանի ներքոյ էր։

II

ԻՐԱՆԱԿԱՆ ԿՐՕՆԸ

Միակ աստուծու գաղափարը։—Զօրօաստր կամ Զրադաշտ։—Զենդ—Աւեստա։—Իրանական կրօնը։—Արամազդ, Ամշասպանդներ, Իազատաներ, Ֆրաւարշիներ։ Անրիման։ Դեւեր։—Մարդու պարտականութիւնները։—Կրակատներ։—Հանդերձեալ կեանքը։—Մազդէութեան առաջադրումը մարերի մէջ։ Քուրմեր կամ մոգեր։

ՄԻԱԿ ԱՍՏՈՒԾՈՒ ԳԱՂԱՓԱՐԸ։—Մարերի և պարսիկների ամենահին կրօնը նմանութիւն ունէր հնդկական կրօնի հետ, բայց յետոյ փոփոխութիւններ մտան իրանական (մարերի և պարսիկների) կրօնի մէջ։ Նմանութիւնը կայանում էր նորանում, որ, ինչպէս նաև բոլոր արիացիք (հնդկացիք, իրանցիք, հայեր, բոլոր եւրոպական ազգերը), իրանցիք ճանաչում էին, բայց դեռ ևս բոլորովին մութը կերպով, էութեամբ մ ի մ ի ա կ Ա ս տ ու ա ծ, բայց որը իւր արտայայտութիւններով բազմաթիւ էր։ Աստուածը մի էր, բայց նորա զանազան ոյժերը (յատկութիւնները), որպիսիք են՝ ստեղծելու ոյժը, մեռցնելու ոյժը, կենդանութիւն տալու ոյժը, յաղթութիւն տալու ոյժը, երկրին պտղաբերութիւն տալու ոյժը և այլն, կարող էին առանձին առանձին կենդանութիւն ունենալ և անկախ կերպով գործել։

ԶՕՐՕԱՍՏՐ ԿԱՄ ԶՐԱԴԱՇՏ։—Իրանցիք իրանց կրօնի

հիմնադիր համարում էին Զօրօաստր կամ, ըստ հին հայ-
կականի, Զրադաշտ մոգին, որը ապրում էր այն ժամա-
նակներում, երբ իրանցիք (մարեր, պարսիկներ) դեռ ևս
Իրան չէին եկած, այլ Բակտրիայումն էին։ Ահա թէ աւան-
դութիւնը ինչ է պատմում նորա մասին։

Զրադաշտը թագաւորական ցեղից էր և, դեռ ևս
չը ծնւած, աստուած ընտրել էր նորան աշխարհքը վե-
րանորոգելու համար։ Նորա մանկութիւնը և երիտասար-
դութիւնը անցաւ անընդհատ կռիւների մէջ դևերի դէմ,
որոնք միշտ պաշարում էին նորան. բայց ամեն կռւից նա
դուրս էր գալիս աւելի կատարեալ։ Երեսուն տարեկան հա-
սակում, մի երկնային հրեշտակ, Վոհու-Մանօ, երևաց նրան
և տարաւ նորան Արամազդ աստուծու մօտ։ Զրադաշտին
ասացին, որ նա պէտք է հարց ու փորձ անէ աստուծուն։
Նա էլ հարցրեց՝ որն է էակների մէջ ամենալաւը երկրի
վերայ։ Նրան պատասխանեցին, թէ մարդկանց մէջ ամե-
նալաւը նա է, որ մաքուր սիրտ ունի։ Յետոյ Զրա-
դաշտը ուզեց իմանալ ամեն մի հրեշտակի անունը և պաշ-
տօնը և չար հրեշտակի բնութիւնը և ոյժերը։ Նա անցաւ
մի բոցաւոր լեռան միջով, թոյլ տւեց, որ իւր մարմինը
բացեն և կուրծքի մէջ հալած մետաղ թափեն. և դորա-
նից նա ցաւ զգաց։

Դորանից յետ նա ստացաւ աստուծու ձեռքից Աւես-
տան, որ օրէնքի գիրքն էր, և կրկին ուղարկւեց երկիր։
Նա գնաց Բակտրիայի թագաւոր Վշտասպայի մօտ և կռւի
մտաւ նորա արքունական իմաստունների հետ։ Երեք օր
շարունակ սոքա աշխատեցին յաղթել և մոլորեցնել նորան,
երեսունը աջ, երեսունը ձախ թևից։ Բայց երբ նոքա

իրանց պարտութիւնը խոստովանեցին, Զրադաշտը յայտնեց,
որ ինքը գալիս է աստուծու մօտից և սկսեց թագաւորին
Աւեստան կարդալ։ Իմաստունները սկսեցին նորան հալա-
ծել, մեղադրելով նորան կախարդութեան և ամբարշտու-
թեան մէջ։ Բայց կռւից նա դուրս եկաւ յաղթանակով,
շնորհիւ իւր ճարտարութեան և հրաշքների։ Այդ ամենից
յետ Վշտասպան, նորա կինը և որդին հաւատացին նրան
և նորա ժողովրդի մեծ մասը հետևեց թագաւորի օրինակին։

Աւանդութիւնը աւելցնում է, թէ նա դեռ ևս երկար
ապրեց՝ յարգւած ամենքից իւր սուրբ վարքի համար։
Ոմանց ասելով՝ նա մեռաւ կայծակնահար, միւսների ասե-
լով՝ նա սպանւեց մի թուրանցուց։

Արդեօք Զրադաշտը պատմական անձնաւորութիւն է,
թէ առասպելական։ Այդ հարցին պատասխան դեռ ևս չի
տրւած։ Բայց կան կրօնական գրքեր, որ նրան են վերա-
գրում. դա՝ Աւեստա անունով գրքերի ժողովածուն է, որի
մի մասը գրւած է զ ե ն դ լեզւով, որ հին իրանական լեզու-
ներից մէկն է։ Այդ իսկ պատճառով այդ գիրքը սովորաբար
կոչւում է Զենդ-Աւեստա, այսինքն զենդական աւետարան։

ԶԵՆԴ-ԱՒԵՍՏԱ։ — Աւեստա թարգմանօրէն նշանակում
է «կենդանի խօսք» (յիշեցէք հայերէն աւետիք և աւետել
խօսքերը)։ Այդ գրքի ամբողջութիւնը մեզ չի հասած,
այլ հասած են միմիայն կտորներ, որոնք ամփոփւած են
երեք ժողովածուների մէջ. դոցանից երկուսը գրւած են
զենդերէն, իսկ երրորդը՝ հասարակ պարսկերէն։ Այդ գրւածք-
ները մի ժամանակից չեն, այլ զանազան ժամանակներից.
նոցանից մի քանիսը այնքան հին են, որ նոցանից իմաց-
ւում է հին իրանական կրօնը։

ԻՐԱՆԱԿԱՆ ԿՐՕՆԸ։—Իրանցիք պաշտում էին մի միակ աստուած, որի անունն էր Ա ր ա մ ա զ դ (պարսկերէն Օրմուզդ), ըստ հին հայկականի՝ Որմիզդ։ Դա՝ իմաստուն ոգին էր, «լուսաւոր, պայծառափայլը, շատ-մեծը, շատ-բարին, շատ-կատարեալը և շատ-գործունեան, շատ-բանականը և շատ-գեղեցիկը»։ Նա ինքը չի ստեղծուած, բայց ամեն ինչ նա է ստեղծել. և այդ ամենը նա ստեղծել է ոչնչից, թէ ոգին և թէ մարմինը։

Ի սկզբանէ նա ստեղծեց իւր համար օգնականներ տիեզերքը կառավարելու համար. դոքա էին վեց հրեշտակապետներ, որոնք կոչւում էին ա մ շ ա ս պ ա ն դ ն ե ր, այսինքն անմահականներ։ Դոցանից մէկը ներկայացնում էր բարին, միւսը՝ կատարեալ մաքրութիւնը, միւսները՝ բաղձալի թագաւորութիւնը, կատարեալ իմաստութիւնը, առողջութիւնը և, վերջապէս, անմահութիւնը։

Այդ վեց հրեշտակապետներից յետ գալիս էին հազարաւոր այլ հրեշտակներ, ի ա զ ա տ ա ն ե ր, որոնք ցրուած էին ամբողջ տիեզերքում, հսկելու համար, որ ամեն ինչ իւր կարգով կատարուի։ Դոցանից մէկն էր արեգակը, միւսը՝ քամին, և մնացեալները՝ ջուրը, կրակը, օդը և աստղերը։

Դոցանից յետ գալիս էին այլ տեսակ հրեշտակներ, ֆ ր ա ւ ա ր շ ի ն ե ր։ Ամեն մարդ, ամեն իազատա և նոյն իսկ ինքը Արամազդը ունէր իւր ֆրաւարշին, որի պաշտօնն էր նորան պահպանել (պահապան հրեշտակներ)։ Մարդուս մահից յետ, ֆրաւարշին մնում էր երկնքում և այդտեղ նա դառնում էր անկախ հրեշտակ, որի բարի գործելու ոյժը նոյնքան մեծ էր, որքան մաքուր և առաքինի էր այն արարածը, որի պահապանն էր նա։

Արամազդը ներկայացնում էր բարի ոգին. բայց, ստեղծելով աշխարհը, ծագեց և չար ոգին, կործանիչ հրեշտակը, որին անուանեցին Ա հ ր ի մ ա ն։ Ինչպէս Արամազդը երևում է ամեն բանում, ինչ օգտակար է և գեղեցիկ, նոյնպէս Ահրիմանը երևում է ամեն բանում, ինչ վնասակար է և տգեղ՝ խաւարի, յանցաքի, մեղքի մէջ։ Արամազդի վեց ամշասպանդներին Ահրիմանը դիմադրեց վեց ոգիներ՝ նոցա չափ կարող և ուժեղ՝ միայն թէ չարութիւն անելու, կործանելու համար, մարդկանց դէպի գողութիւն և սպանութիւն դրդելու համար։ Ինչպէս Արամազդը իազատաներ ստեղծեց մարդկանց պահպանելու համար, նոյնպէս և Ահրիմանը ստեղծեց դ և ե ր, որոնք միշտ պաշարում են մարդուս և դրդում նորան դէպի չարը։ Արամազդը ստեղծեց լոյսը, մարդուն և ամեն բան, ինչ լաւն է աշխարհում. Ահրիմանը ստեղծեց խաւարը, անասուններին և վնասակար բոյսերը։ Ահրիմանի զօրութիւնը կատարելապէս կը խորտակուի միմիայն ժամանակների վերջում։ Այն ժամանակ Զրադաշտից բղխած երեք մարգարէներ [1]) կը յայտնուեն, որոնք աշխարհք կը բերեն օրէնքի իրեք
նոր գրքեր, որոնցով փրկութիւնը լիակատար կը դառնայ։
Խաւարը կ'անյայտանայ լոյսի առջև, մահը՝ կեանքի առջև,
ինքը Ահրիմանը պէտք է խոստովանի Արամազդի իշխանու-
թիւնը, և կատարելութիւնը կ'իշխէ տիեզերքում։

ՄԱՐԴՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ։—Մարդս պաշար-

---

1) Ուխշիատ-Էրէտօ, Ուխշիատ-Նէմօ, Սաօշիան կամ այլապէս Ա ս տ ո ւ ա տ-Էրիտ։—Հայկական «աստուած» խօսքը երևի նոյն ծագումից է, ինչ վերջինս։

ւած դւերով և պաշտպանուած խազատաներով, պէտք է ապրի արդարութեան օրէնքի համեմատ այն հանգամանքում, որի մէջ վիճակը նորան դրել է: Պատուաւոր պաշտօններ համարւում են՝ քահանայի, զինւորի և հողագործի պաշտօնները: «Նա սուրբ է, ով այս աշխարհում շինել է մի տուն, որի մէջ նա պահպանում է կրակը, կենդանին, իւր կնոջ, իւր երեխաներին և լաւ խաշներ: Նա, ով հողից արտադրում է ցորեն, նա, ով մշակում է դաշտերի պտուղները, նա, ով պահպանում է մաքրութիւնը,—նա այդպիսով առաջ է մղում Արամազդի օրէնքը այնքան, որքան եթէ հարիւր զոհաբերութիւն անէր: Հողը մշակել՝ մարդուս առաջին պարտականութիւնն է. Մնացեալի համար բաւական է, որ նա Արամազդին աղօթներ անէ և զոհեր մատուցանէ և որ նա լինի սրտով պարզ, խօսքով անկեղծ և ազնիւ իւր բոլոր գործառնութիւնների մէջ»:

ԿՐԱԿԱՏՆԵՐ:—Արամազդը չունէր ոչ արձաններ, ոչ խորհրդաւոր սրբարաններ, ոչ տաճարներ. բայց բարձրութիւնների վերայ շինուած էին կրակատներ, որտեղ սրբազան կրակը պահպանւում էր որդւոց որդի քուրմերի ձեռքով. և սոցա պարտականութիւնն էր՝ չը թողնել որ նա հանգչի:

Գլխաւոր զոհը ձին էր. բայց մատուցւում էին նաև եզը, այծը և գառը: Զոհաբերութիւնից առաջ պատրաստւում էր հաօմա անունով արբեցնող խմիչքը, որը բաժանում էին ներկայ եղողներին. յետոյ քուրմը (քահանան) մորթում էր անասունը, որի կտորները նա դնում էր ոչ թէ կրակի մէջ (այդ կը նշանակէր կրակը պղծել), այլ սրբազան կրակի առջև: Ծէսը սովորաբար վերջանում էր հանդիսաւոր խնճոյքով, որտեղ ուտում էին զոհի միսը:

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔԸ:—Մահից յետ, մարդուս մարմինը չը պէտք է ոչ այրել, ոչ թաղել և ոչ գետը գցել. այդ կը նշանակէր պղծել կրակը, հողը ջուրը: Երկու ձևով կարելի էր հեռացնել մարմինը՝ կամ ծածկելով մարմինը մոմով և այնպէս թաղել, և կամ դնել բացօդեայ տեղում և թողնել, որ վայրի թռչունները և գազանները լափեն նորան [1]): Վերջին դէպքի համար գերեզմանների տեղը բռնում էին բարձր աշտարակներ: Հոգին երեք օր մնում է դիակի մօտ, իսկ չորրորդ օրւայ արշալոյսին նա թողնում է նորան՝ ներկայանալու համար վերջին դատաստանի տեղը: Ռաշնու հրեշտակը կշռում է նորա լաւ և վատ գործքերը և արդարացնում է կամ դատապարտում, նայած նորա կեանքի վկայութեան: Դատարանից դուրս գալով, նորան տանում էին Ցինւատ կամուրջի մօտը, որը ձգւած է դժոխքի վերայ և տանում է դէպի արքայութիւն: Եթէ նա պիղծ է, չի կարող անցնել նորա վերայով և ընկնում է անդունդը [2]), որտեղ նա դառնում է Ահրիմանի ստրուկը. եթէ մաքուր էր, նա առանց դժւարութեան անցնում է Սրաօշա հրեշտակի օգնութեամբ: Ամշասպանդ բարի-ոգին ողջունում է նորան և ներկայացնում Արամազդի գահի առջև և նորան նստեցնում է այնտեղը, որ նա պիտի բունէր մինչև մարմինների յարութեան օրը:

ՄԱԶԴԷՈՒԹԵԱՆ ԱՂԱՒԱՂՈՒՄԸ ՄԱՐԵՐԻ ՄՕՏ: ՔՈՒՐ-

[1]) Դեռ այսօր էլ այդ սովորութիւնը մնում է Հնդկաստանի ցեղերից մէկի մօտ:

[2]) Յիշեցէք հայոց մազէ-կամուրջը:

ՄԵՐ ԿԱՄ ՄՈԳԵՐ: – Իրանական ազգերի (մարերի և պարսիկների) այդ հնագոյն կրօնը այժմ յաճախ անւանում են մ ա զ դ է ո ւ թ ի ւ ն (մազդեզանց կրօն կամ օրէնք, ըստ հայկական մատենագիրների)։ Այդ խօսքը առեղծւած է Մ ա զ դ ա խօսքից, որը կազմում է Արամազդ աստուծու անւան մասը (զենդերէն Արամազդ գրւում էր Ահուրօ-Մազդա)։

Մազդէութիւնը իւր սկզբնական ձևով երկար ժամանակ մնաց պարսիկների մօտ անխախտ. բայց մարերի մօտ նա խառնւեց թուրանական այլ և այլ սնապաշտութիւնների հետ ցայն աստիճան, որ մազդէութիւնը նոցա մօտ փոխարկւեց կ ա խ ա ր դ ա կ ա ն կ ր օ ն ի։ Մարերը իրանց բոլոր աղօթքները և զոհերը մատուցանում էին միմիայն Ահրիմանին և զանազան դևերին՝ նոցա գութը շարժելու համար [1]։ Նոցա քուրմերը (քահանաները) գործ էին դնում զանազան բարբարոս ծէսեր և արարողութիւններ, որոնցով իբր թէ նոքա յաղթում էին դևերին։ Նոքա հաւասարեցրին Ահրիմանի ոյժը Արամազդի ոյժի հետ, այնպէս որ նոցանից ոչ ոք միւսին չը պիտի յաղթէր։ Մարերի մօտ այդ երկու ոգիները անեղ չէին, այլ բղխում էին մի ինչ որ նոցանից առաջ եղած բանից, որին նոքա անւանում էին ա ն ս ա հ մ ա ն-ժ ա մ ա ն ա կ։ (Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» գրքի մէջ Զ ր ւ ա ն աստուածը)։

Որպէս վարդապետութիւնը փոխւեց, փոխւեց նաև կրօնի արտաքին ձևը։ Մարաստանի թուրանցիք ունէին մի

[1]) Սորա նմանը այսօր իսկ տեսնւում է հայերիս հարևան եզիդների մէջ։

քրմական փակ դասակարգ (կաստա), որի անդամները իրանց պաշտօնները ժառանգական էին համարում։ Այդ քուրմերը, որոնց մոգ էին անւանում, պահպանեցին նաև արիացւոց (մարերի) գալուց յետոյ և կազմեցին մարաց ազգի վեց մշտական ցեղերից մէկը։ Նոքա ապականեցին արիացիների իրանց սնապաշտական ծէսերով, զարգացրին կրակապաշտութիւնը և աստղապաշտութիւնը։ Նոքա պարծենում էին, թէ ունին գերմարդկային զօրութիւն, թէ կարող են բացատրել և տալ պատգամներ, գուշակել ապագան։ Հագած երկար սպիտակ հանդերձներ, գլխին դրած երկար խոյրեր, ձեռներին առած սրբազան մոշենու խուրձեր, առանց որոնց ոչինչ չը պիտի կատարէին, այդ մոգերը միևնոյն ժամանակ շատ փչացած մարդիկ էին, ինչպէս որ պատմում են հին գրողները։ Եւ այդ մոգերը մեծ ազդեցութիւն ունեցան թէ ժողովուրդի և թէ մեծերի վրայ։

ՄԱՐԱՍՏԱՆ

I

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՄԱՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱ-ՒՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պարսկական աւանդութեան անճշդութիւնը։—Դէյոկ։—Փրաւորտ։

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԱՆՃՇԴՈՒԹԻՒՆԸ։ — Մենք տեսանք թէ Ասորեստանի պատմութիւնից և թէ այս հատուածի առաջին գլխից, որ Մարաստանը մինչ 650 թ. Քր. առաջ գտնւում էր Ասորեստանի իշխանութեան ներքոյ, և որ այն բոլորը, ինչ պատմեց դորա մասին, բղխում է Ասորեստանի արձանագրութիւններից։ Այդ է համարւում ճիշդը։ Բայց այդպէս չէին պատմում պարսիկները, որոնք մարերի ազգակիցներն էին և որոնցից իւր տեղեկութիւնները քաղեց յոյն պատմաբան Հերոդոտը (ծնուած 484 թ. Քր. առաջ)։ Պարսիկները այսպէս պատմեցին Հերոդոտին Մարաց թագաւորութեան մասին, որի սկիզբը իբր թէ դրեց Դէյոկ, 708 թւին Քր. առաջ։

ԴԷՅՈԿ։—«Մարերի մօտ կար մի իմաստուն մարդ, որի անունն էր Դէյոկ։ Այդ Դէյոկը ուզեց իշխանութիւն ձեռք բերել և գործեց այսպէս։ Մարերը կենում էին աւաններում. Դէյոկը, որ իւր աւանում ամենայարգուածներիցն էր, իրան նուիրեց դա-

տաստանալարութեան։ Իւր աւանի մարերը, տեսնելով նորա արդարադատութիւնը, ընտրեցին նորան դատաւոր։ Եւ նա եղաւ արդար դատաւոր։ Այսպէս վարուելով, նա հռչակ ստացաւ միւս աւաններում, որտեղից դանդատաւորները սկսեցին միմիայն նրան դիմել։ Դէիոկը, տեսնելով որ այժմ ամեն բան նորա վերայ է բարձած, դադարեց գալ և նստել այն տեղում, որտեղ նա առաջ նստում էր դատաստան անելու համար, և յայտնեց, որ այլ ևս դատաստան անել չի կամենում, պատճառաբանելով, որ իւր սեպհական գործերը վարելու ժամանակ չի գտնում։ Դորանից յետ մարերի մօտ շատ խառնակութիւններ և վէճեր ծագեցին. այդ պատճառով նոքա հաւաքուեցին մի տեղ խորհուրդի, ուր Դէիոկի բարեկամները ամենից շատ խօսեցին և կարողացան համոզել, որ ամեն բան կարգին կը լինի, եթէ իրանց միջից մի թագաւոր ընտրեն։ Առաջարկեցին Դէիոկին, որը ընդունեց թագաւոր։

Թագաւոր դառած (շարունակում է Հերոդոտը), Դէիոկը իւր համար մի պալատ շինեց և իրան շրջապատեց պահապաններով։ Յետոյ հրամայեց իւր հպատակներին թողնել իրանց գիւղերը, հաւաքուել իւր շուրջը՝ մի մեծ մայրաքաղաքի պարիսպների շրջանակի մէջ։ Հնազանդ թագաւորի հրամանին՝ մարերը շինեցին այն քաղաքը, որ կոչուեց Էքբատան։ Քաղաքը շրջապատեցին եօթ պարիսպներով, որոնցից վերջինի մէջ շինուեց թագաւորի պալատը և գանձարանը։ Պարիսպներից առաջինը, ներկուեց սպիտակ, երկրորդը սև, միւսները ծիրանագոյն, կապոյտ, կարմիր. վեցերորդը արծաթաջրուեց, եօթերորդը՝ ոսկէզօծուեց։ Այս բոլոր ամրութիւնները Դէիոկը շինել տուեց իւր և իւր պալատի համար. իսկ ժողովուրդին հրամայեց բնակուել պարիսպներից դուրս։

Այս բոլորը վերջացրած, Դէիոկը կանոն դրեց, որ ոչ ոք ազատ մուտք չունենայ իւր մօտ, այլ միայն միջնորդութեամբ պալատական ծառայողների. նաև որ ոչ ոք չը համարձակուի ուղղակի նայել թագաւորի վերայ, չը ծիծաղի և չը թքի իւր

ներկայութեամբ։ Այս ծիսակատարութիւնը նա կարգեց, որ նորա ժամանակակից մարդիկ, որոնք նորա հետ միասին էին մեծացած և նորա չափ ընդունակ էին, նորա դէմ չը թշնամանային և նորա դէմ դաւադրութիւն չը սարքէին. նա մտածեց, որ, իրան անմատչելի դարձնելով իւր հպատակներին, նոքա ի վերջոյ կը տեսնեն նորա մէջ մի այլ բնաւորութեան էակ։

Դէիոկը, պարսիկների պատմելով, թագաւորեց 53 տարի, սկսած 708 Թ.-ից մինչ 655 Թ.։ Բայց մենք գիտենք արդէն, որ նոյն այդ կէս դարում Ասորեստանում թագաւորեցին Սարխուքին, Սեննախերիբ և Ասուր-ախէ-իդդին, որոնց ժամանակ մանր ցեղապետների մէջ բաժանուած Մարաստանը կատարելապէս հպատակ էր Ասորեստանին։ Այդ ցոյց է տալիս որ մի այնպիսի Դէիոկ, որ թագաւորութիւն հիմնած լինի, չի եղած։ Ճիշդը միայն այս է, որ այդ անուան նման անուն կրող մի իշխան կար Մարաստանում Սարխուքինի ժամանակ, որը նորա երկիրը նուաճեց. բայց այդ Դէիոկը փոքրիկ և աննշան իշխան էր և մնաց այդպէս մինչև մահ։

ՓՐԱՒՈՐՏ։—Հերոդոտի ասելով, Դէիոկին յաջորդեց Փրաւորտը, որը իբր թէ թագաւորեց 655 Թ.-ից մինչ 633 Թ.։ Այժմ կարծում են, որ ինչպէս Դէիոկը չի եղած, նոյնպէս չի եղած Փրաւորտը, որպէս Մարաստանի թագաւոր։

II

ԿԻԱՔՍԱՐ

Կիաքսար։—Սկիւթացւոց երեւալը։—Կիաքսարը կործանում է Ասորեստանի թագաւորութիւնը։—Կիաքսարը Փոքր-Ասիայում։—Պատերազմ Լիւդիայի դէմ։

ԿԻԱՔՍԱՐ։—Մարաստանի մեծ թագաւորութեան իսկական հիմնողն էր Ոււախշատարա, որին յոյները անուանում էին Կիաքսար։ Այժմ կարծում են, որ Կիաքսարը բուն մարաստանցի չէր, այլ ծնուած էր Կասպեան ծովի արեւելեան ափերին, որտեղ նա, իւր հօր Փրաւորտի հետ միասին, գլուխ կանգնեց մի նոր գաղթականութեան, որը եկաւ Իրանի դաշտը և այդպիսով ուժեղացրեց այդ երկրի արիական տարրը (հակառակ Թուրանցւոց, որոնք դեռ մեծ բազմութեամբ բնակւում էին Իրանում)։ Իրանի մանր տէրութիւնները հեշտութեամբ նուաճւեցին և միացրւեցին ի մի տէրութիւն։ Այդ նորեկները, մի անգամ նուաճումների յետեւից ընկած, կանգ չառան Խոատրասի լեռնաշղթայի մօտ, և ուզեցին իջնել Տիգրիսի հովիտը, որտեղ նոքա հանդիպեցին ասորեստանցիներին։ Նոքա յաղթեցին մարերին, Փրաւորտը սպանւեց կռւի մէջ և Կիաքսարը յետ տարաւ իւր զօրքի մնացորդը մի նոր պատերազմի պատրաստուելու համար։

ՍԿԻՒԹԱՑՒՈՑ ԵՐԵՒԱԼԸ։—Կիաքսարը մի կանոնաւոր զօրք էր պատրաստել և սկսել էր պատերազմը Ասորեստանի դէմ, երբ մի անսպասելի թշնամի երեւաց այդ տեղերում և բաժանեց հակառակորդ տէրութիւնները։ Այդ անսպասելի թշնամին՝ սկիւթացիք էին։ Սկիւթացիք բնակւում էին յայնկոյս Կովկասեան լեռների, Արեւելեան-Եւրոպայի հարաւային մեծատարած դաշտերում։ Դոքա կիսավայրենի ցեղեր էին և յայտնի էին հին ազգերին գլխաւորապէս սկիւթացւոց անունով։ Դեռ ևս շատ հին ժամանակներից սկսած, սկիւթացիք (այլապէս նաև կիմմերիացիք) սովորութիւն ունէին անցնել Կովկասեան լեռները և գալ՝ Ասիայի ազգերին կողոպտելու համար։ Վերջերքում, երբ նրանց էլ հասաւ Ասորեստանի հռչակը, նոքա սկսեցին այդ երկիրը գալ։ Մօտ 632 թ-ին նոքա յարձակւեցին Ասորեստանի վերայ նոյն այն ժամանակ, երբ պատերազմ կար ասորեստանցւոց և մարերի մէջ։ Կիաքսարը արդէն տարել էր յաղթութիւնը և ստիպել Ասորեստանի թագաւորին՝ փակւել Նինուէի մէջ. բայց սկիւթացւոց մօտենալու պէս, նա վերջացրեց պաշարումը և նրանց դիմաւորեց։ Կիաքսարը յաղթւեց թշնամու բազմութեան առջև։ Մարաստանը դառաւ հարկատու։ Բայց սկիւթացիք չը մնացին այդ երկրում, այլ ուղղւեցին դէպի Եփրատի և Միջերկրական ծովի երկիրները, ամեն տեղ մտցնելով անխնայ աւերումներ։ Միջագետքը և Քաղդէան կորցրին իրանց ազգաբնակութեան կէսից աւելին։ Ինչպէս որ Հոնները հազար տարի յետոյ, նոյնպէս էլ սկիւթացիք չէին խնայում ոչ հասակ և ոչ սեռ։ Բազմաթիւ քաղաքներ կորան, ուր դարերով հարստութիւններ էին դիզ-

ւած: Ասորեստանից և Քաղդէայից նոքա անցան հիւսի-
սային Ասորիք, Փիւնիկիա, Դամասկոս, Պաղեստին, մինչև
որ հասան Եգիպտոսի սահմանները: Բայց այդտեղից նոքա
յետ քաշուեցին, ստանալով Պսամետիքից հարուստ ընծաներ:
Այդ ժամանակից սկսում է նոցա ոյժը կոտրուել. ամեն տարի
նորանոր պատերազմներ մղելով, նոցա թիւը սակաւացաւ:
Յաղթուածները սկսեցին գլուխ բարձրացնել և առաջիննե-
րից մէկը Մարաստանն էր:

Կիաքսարը մի անգամ հրաւիրեց սկիւթացւոց մեծե-
րին և նոցա գլխաւոր զօրավարներին մի մեծ խնճոյքի:
Նոցա արբեցնելուց յետոյ, նա հրամայեց նոցա բոլորին
կոտորել: Հետևեալ օրը սկսուեց պատերազմը սկիւթացւոց
դէմ, որը սակայն երկար տևեց. բայց և այնպէս յաջողուեց
դուրս քշել նոցա: Դորանից յետ սկիւթացիք կրկին յետ քաշ-
ուեցին Կովկասեան լեռներով դէպի Եւրոպայի դաշտերը, ոչինչ
յետք չը թողնելով Ասիայում: Նոցա իշխանութիւնը Ասիա-
յում երևի տևեց ոչ աւելի քան եօթ-ութ տարի, այն է
634-ից մինչ 627 թ. Քր. առաջ:

ԿԻԱՔՍԱՐԸ ԿՈՐԾԱՆՈՒՄ Է ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈ-
ՐՈՒԹԻՒՆԸ:—Սկիւթացիներից ազատուելով, Կիաքսարը վեր-
սկսեց պատերազմը Ասորեստանի դէմ, որտեղի թագաւորն
էր Ասուր-Էդիլ-Իրանի: Կիաքսարը որոնեց դաշնակիցներ
Ասորեստանին հարկատու իշխանների մէջ և նրան յաջո-
ղեց իւր հետ միացնել Քաղդէայի կառավարիչ Նաբոբա-
լասարին, որը իրան Բաբելոնի թագաւոր հռչակեց (625-ին):
Կիաքսարը, Նաբոբալասարի բարեկամութիւնը աւելի հաս-
տատ դարձնելու համար, իւր աղջիկ Ամիտիսին նորա որդի
Նաբուգոդոնոսորին կնութեան տուեց: Ասորեստանի թա-

գաւորը, տեսնելով Նաբոբալասարի դաւաճանութիւնը իւր
դէմ, փակուեց Նինուէում, պաշտպանուեց որքան կարողա-
ցաւ և վերջը իրան այրեց իւր պալատում, թշնամու ձեռքը
չընկնելու համար (625-ին):

ԿԻԱՔՍԱՐԸ ՓՈՔՐ-ԱՍԻԱՅՈՒՄ:— Նինուէն նուաճած,
Կիաքսարը դիմաւորեց Արարատեան աշխարհին և հարևան
երկիրներին: Սկիւթացիք այդ երկիրները կիսաւեր էին
դարձրել, այնպէս որ նոքա չը կարողացան Կիաքսարին
ընդդիմադրութիւն ցոյց տալ: Նինուէն կործանելուց տասը
տարի անցած, Կիաքսարը թափանցեց Փոքր-Ասիայի սիրտը:
Նա գտաւ այդտեղ նոյն ազգերը, որոնց ճանաչեցին եգիպ-
տացիք իննը դար առաջ՝ փռիւգացիք, լիւդիացիք և այլն:

ՊԱՏԵՐԱԶՄ ԼԻՒԴԻԱՅԻ ԴԷՄ:—Փոքր-Ասիայի հարստու-
թիւնների համբաւը շատ գրգռել էին Կիաքսարի ախոր-
ժակը. նա միմիայն առիթի էր սպասում յարձակուելու հա-
մար: Կիաքսարը ունէր իւր ծառայութեան մէջ թափա-
ռական սկիւթացւոց մի զօրագունդ: Այդ գունդը յանկարծ
թողեց Կիաքսարին և փախաւ Լիւդիայի թագաւոր Ալիա-
տէսի մօտ: Կիաքսարը պահանջեց Ալիատէսից, որ նոցա
յետ տայ. բայց մերժում ստացաւ և պատերազմ յայտնեց:
Ամբողջ վեց տարի շարունակուեց պատերազմը հաւասար
ոյժերով, և երկու զօրքերը մի անգամ էլ եկան իրար
հանդիպելու, երբ կռուի մէջ տեղում արեգակը խաւարեց:
Այդ երևոյթը լքցրեց երկու կողմերին էլ սնապաշտական
երկիւղով և պատճառ եղաւ հաշտութեան: Ալիւս գետը
կազմեց սահման երկու տէրութիւնների մէջ: Բարեկամու-
թիւնը աւելի ևս հաստատ պահելու համար, Ալիատէսը
իւր աղջիկ Արիէնիսին կնութեան տուեց Կիաքսարի որդի

Աժդահակին։ ժամանակի սովորութեան համեմատ, երկու թագաւորները փոխադարձ հաւատարմութիւն երդուելուց յետոյ, կնքեցին դաշնը, իրար բազուկները ծակելով և վէրքից բղխող արիւնը խմելով (610)։

Այդ անցքից յետ, Կիաքսարը իւր կեանքի մնացած տարիները անցկացրեց խաղաղութեան մէջ և մեռաւ 596 թ. Նորա ժամանակ Մարաստանը տարածւում էր Իրանի անապատից մինչև Փոքր-Ասիայի Ալիւս գետը, լինելով ամենահզօրը բոլոր ասիական տէրութիւններից։

III

ՄԱՐԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Աժդահակ։—Մարաստանի կործանումը։ Կիւրոս։—Պարսիկների առաւելութիւնները մարերի վերայ։—Հայկական աւանդութիւն Աժդահակի մասին։

ԱԺԴԱՀԱԿ։—Կիաքսարին յաջորդեց նորա որդի Աժդահակը (կամ Աստիագ)։ Աժդահակը իւր հօր նման չէր կրթւած պատերազմի համար։ Նա ապրեց պալատական ճոխութեան մէջ, շրջապատւած պահապաններով և ներքինիներով. Նորա միակ զւարճութիւնն էր որսորդութիւնը իւր պալատի որսարանում և կամ անապատի սահմանների վերայ։ Ջրնաչած որ ամուսնացած էր մի քանի անգամ, նա արու զաւակ չունեցաւ, և թագը, իրանից յետ, պիտի անցնէր իւր դուստր Մանդանային և կամ սորա որդկերանց։ Մանդանան տրւած էր կնութեան իւր հօր հպատակ իշխաններից մէկին, այն է պարսկական իշխան Կամբիւզին, որից ունեցաւ որդի Կիւրոս։

ՄԱՐԱՍՏԱՆԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ։ ԿԻՒՐՈՍ։—Կիւրոսը մեծացաւ Եքբատանի պալատում և, հասակն առած, հասկացաւ, թէ որքան Աժդահակի փափկասիրութիւնը թուլացրել էր մարերի պատերազմական ոգին։ Նորա մէջ ծագեց մի համարձակ միտք՝ ապստամբել իւր պապի դէմ, կործանել մարաց թագաւորութիւնը և նորա տեղը հաստատել

իւր ազգի, այն է պարսից թագաւորութիւնը։ Կիւրոսը համոզեց իւր հօր՝ փորձել մի մեծ ապստամբութիւն։ Ինքը Կիւրոսը փախաւ արքունիքից և մտաւ Պարսկաստան։ Առաջին կռւի մէջ Կիւրոսը յաղթւեց, իսկ իւր հայրը սպանւեց. բայց ի վերջոյ Կիւրոսը մնաց յաղթող և գերեց Աժդահակին։

ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԱՐԵՐԻ ՎԵՐԱՅ։— Իւր թագաւորի գերւելը իմանալով, Մարաստանը այլ ևս ընդդիմութիւն ցոյց չը տւեց և անձնատուր եղաւ յաղթողին։ Մարերը և պարսիկները մի ցեղից լինելով և ունենալով մի լեզու, մի կրօն և գրեթէ նոյն հայրենիքը, պարսիկների տիրապետութիւնը մարաստանցիներին չը պէտք է թւէր օտարի լուծ, օտարի նւաճում։ Աժդահակը և նորա նախորդները թագաւոր էին մարերի և պարսիկների, իսկ Կիւրոսը և նորա յաջորդները դառան թագաւորներ պարսիկների և մարերի։ Պարսիկները աւելի պարզ կեանք էին վարում, քան մարերը. նաև իրանական կրօնը՝ մազդէութիւնը՝ պարսիկների մօտ աւելի մաքուր էր պահւած, քան մարերի մօտ։ Պարսիկները պարզութեան հետ պահպանել էին նաև աւելի մեծ եռանդ, քան մարերը։ Այդ իսկ պատճառներով պարսիկները ձեռք բերին գերիշխանութիւն Իրանում։

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ԱԺԴԱՀԱԿԻ ՄԱՍԻՆ։—Աժդահակի և Մարաստանի կործանման մասին կայ նաև մի հայկական աւանդութիւն. Ահա թէ Մովսէս Խորենացին ինչպէս է պատմում այդ աւանդութիւնը։

Կիւրոսի մտերմութիւնը հայոց թագաւոր Տիգրանի հետ շատ անհանգստացնում էր Աժդահակին, որը աշխատում էր նոցա այդ կապը քակտել՝ իւր տէրութեան ապահովութեան համար։ Աժդահակը մի անգամ մի այսպիսի երազ տեսաւ. թէ

նա իբր մի անծանօթ երկրում է, մերձ մի բարձր լերան, որի գագաթը պատած էր սառնամանիքով։ Երկար նայելով լերան վերայ, նորա աչքին բացւեց մի այսպիսի տեսարան՝ մի ծիրանազգեստ, բարձրահասակ ու կարմրայտ կին, նստած լերան գագաթի վերայ, բռնած էր երկունքով։ Աժդահակը հիացած նայում էր նորա վերայ, երբ այդ կինը յանկարծ երեք կատարեալ դիւցազներ ծնեց. դոցանից մէկը նստեց առիւծի վերայ և սլացաւ դէպի արևմուտք. երկրորդը՝ ընձու վերայ դիմեց դէպի հիւսիս. իսկ երրորդը՝ սանձած անարի մի վիշապ, չահատակեալ յարձակւեց Աժդահակի տէրութեան վերայ։

Այսպիսի խառը երազների մէջ Աժդահակին թւեց, թէ իւր արքունիքի տանիքի վերայ կանգնած՝ տեսնում էր նոյն այդ յարկերի վերին երեսը՝ գեղեցիկ և բազմագոյն շատրւաններով զարդարւած և Աժդահակին պսակող հրաշատեսիլ դիք նորա վերայ կանգնած։ Յանկարծ վերն է նայում Աժդահակը և տեսնում որ նա, ով վիշապի վերայ էր հեծած, արծւի թևերով սլացաւ և յարձակւեց դից վերայ։ Աժդահակը ընկաւ նոցա մէջ և կռւի մտաւ դիւցազնի հետ։ Միմեանց վիրաւորելով, վերջը վիշապը յաղթեց և Աժդահակը արթնացաւ քնից։

Այս երազը Աժդահակը բացատրեց նորանով, որ իւր տէրութիւնը կործանելու է հայկազն է Տիգրանից։ Հնարք որոնեց Տիգրանին սպանելու և վճռեց այդ բանին հասնել Տիգրանի քոյր Տիգրանուհու ձեռքով, որին կնութեան առաւ, դիմելով Տիգրանին մի շողոքորթ նամակով։ Բայց Տիգրանուհին, Աժդահակի կինը դառնալով, իմացաւ ամուսնու նենգամտութիւնը, մերժեց նորա ցանկութիւնը կատարել և գաղտնի կերպով զգուշացրեց Տիգրանին։ Տիգրանը մեծ զօրքով հանդիպեց Աժդահակին սահմանի մօտ։ Պատերազմը տևեց հինգ ամիս. վերջը, մենամարտութեան մէջ, Տիգրանը սպանեց Աժդահակին։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

I

ԱՌԱՍՊԵԼ ԿԻՒՐՈՍԻ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Աժդահակը տալիս է իւր աղջիկ Մանդանային պարսիկ Կամբիւզին։—Աժդահակը ուզում է սպանել տալ Մանդանայի որդուն։—Վարպակէսի տատանումը։—Վարպակէսը յանձնում է երեխան Միհրդատին։—Միհրդատի կինը ազատում է երեխային։—Կիւրոսի մանկութիւնը։—Կիւրոսը ճանաչւում է Աժդահակից։—Աժդահակի զարհուրելի վրէժխնդրութիւնը։—Աժդահակը խորհուրդ է հարցնում մոգերից։—Կիւրոսը յետ է ուղարկւում Պարսկաստան։—Վարպակէսի դաւադրութիւնը։—Նորա պատգամաւորութիւնը Կիւրոսի մօտ։—Կիւրոսի ապստամբութիւնը։—Առաջին ճակատ։—Երկրորդ ճակատ։

ԱԺԴԱՀԱԿԸ ՏԱԼԻՍ Է ԻՒՐ ԱՂՋԻԿ ՄԱՆԴԱՆԱՅԻՆ ՊԱՐՍԻԿ ԿԱՄԲԻՒԶԻՆ։—*Աժդահակը մի աղջիկ ունէր Մանդանա անունով, որի մասին աչսպիսի երազ տեսաւ, թէ իբր նորա կուրծքից մի մեծ ծառ էր բուսել, որի ճիւղերը սաւերում էին ամբողջ Ասիան։ Երազահան մոգերը այդ երազը մեկնեցին այն մտքով, թէ Մանդանան մի երեխայ կը ծնէ, որը պէտք է նուաճէ ամբողջ Ասիան։ Աժդահակը սարսափեց և այդ պատճառով Նա ամուսնացրեց իւր դստեր ոչ թէ մի մեծատոհմ մարաստանցու, այլ Կամբիւզ անունով պարսիկ մեծատուն իշխանի հետ, որից Աժդահակը ոչ մի վտանգ չէր սպասում, կարծելով որ պարսիկների մէջ առաջին մարդը չարժէր յետին մարաստանցուն։*

ԱԺԴԱՀԱԿԸ ՈՒԶՈՒՄ Է ՍՊԱՆԵԼ ՏԱԼ ՄԱՆԴԱՆԱՅԻ ՈՐԴՈՒՆ։—Աժդահակը, սակայն, մի այլ երազ ևս տեսաւ, որ իբր թէ Մանդանայի գրկից մի որթ էր բուսել, որ ծածկում էր ամբողջ Ասիան։ Մոգերը այդ երազին նոյն բացատրութիւնը տուին։ Աժդահակը իսկոյն իւր մօտ կանչել տուեց Մանդանային, որի վերայ պահապաններ նշանակեց, որ նորանից ծնուած երեխային թաքցնեն։ Եւ իրօք, Կիւրոսը նոր էր ծնուել Մանդանայից, երբ Աժդահակը իւր մօտ կանչեց իւր ամենամօտիկ ազգականին, որի վերայ ամենից շատ վստահութիւն ունէր։ «Վարպակէս, ասաց նա, հաւատարմութեամբ կատարիր այն, ինչ պիտի պատուիրեմ քեզ։ Առ այս երեխային, տար նորան քո տունը և թաղիր նորան ինչպէս կամենաս»։ Այդ ասելով, նա հրամայեց տալ Վարպակէսի ձեռքը երեխային, որին սորա մայրը նոր զարդարել էր տուած։

ՎԱՐՊԱԿԷՍԻ ՏԱՏԱՆՈՒՄԸ։—Վարպակէսը վերադարձաւ տուն արտասուքը աչքերին և, մօտենալով իւր կնոջ, պատմեց սրան Աժդահակի պատուէրը։ «Ինչ ես ուզում անել», հարցրեց կինը։—Ես չեմ կատարիլ թագաւորի հրամանը, պատասխանեց նա, թէկուզ նա աւելի էլ շատ կատաղի ու չարանայ, քան նա այժմ է։ Եւ ես այդ սպանումը չեմ կատարիլ մի քանի պատճառներով. նախ որ ես ազգական եմ երեխային. երկրորդ, Աժդահակը արդէն ծերացած է և որդի չունի. եթէ, նորա մահից յետ, թագը անցնի նորա դստեր, որի որդուն նա կամենում է որ ես սպանեմ, էլ ինչ ապագայ է սպասում ինձ, եթէ ոչ մեծ վտանգ։ Իմ ապահովութեան համար պէտք է որ երեխան մեռնի, միայն թէ ոչ իմ, այլ Աժդահակի ծառաներից մէկի ձեռքով։

ՎԱՐՊԱԿԷՍԸ ԵՐԵԽԱՆ ՅԱՆՁՆՈՒՄ Է ՄԻՀՐԴԱՏԻՆ։—Նա իսկոյն մարդ ուղարկեց Աժդահակի եղնարածներից մէկի յետևից, որ կենում էր նորա խաշների հետ մի տեղում, որը ամենից շատ յաճախուում էր գազաններից։ Նորա անունն էր Միհրդատ, որ մի կին ունէր Սպաքօ անունով։ Արօտատեղերը,

ուր արածացնում էր նա թագաւորի եղները, գտնւում էին Եքբատանից դէպի հիւսիս։ Այդ կողմերում Մարաստանը ներկայացնում էր լեռնային երկիր, անտառներով ծածկուած։ Եղնարածը եկաւ և Վարպակէսը այսպէս խօսեց նրան. «Աժդահակը հրամայում է քեզ վերցնել այս երեխային և դնել ամենաանբնակ լերան վերայ, որպէս զի նա շուտով մեռնի։ Նա նոյնպէս հրամայեց քեզ ասել, որ եթէ դու ազատես երեխային, նա քեզ կը մեռցնի ամենազարհուրելի տանջանքներով։ Եւ դու պէտք է ինձ իմացնես, թէ դու որտեղ դրեցիր երեխային։

ՄԻՀՐԴԱՏԻ ԿԻՆԸ ԱԶԱՏՈՒՄ Է ԵՐԵԽԱՅԻՆ։—Միհրդատը բերաւ երեխային իւր խրճիթը, ուր նորա կին Սպաքօն մի տղայ էր ծնել։ Երբ մարդը վերադարձաւ, Սպաքօն ուզեց իմանալ նորա կանչուելու պատճառը։ «Ես տեսայ, ասաց Միհրդատը, և լսեցի այնպիսի բաներ, որ ես երբէք չէի ուզիլ ոչ տեսնել և ոչ լսել, և տան աստուածները, որ այդ բաները երբէք եկած չը լինէին տէրերի գլխին։ Վարպակէսի ամբողջ ընտանիքը լացի մէջ էր։ Սարսափած ես մէջը մտայ և տեսայ մի երեխայ, որ գետնի վերայ լալիս էր։ Նա ծածկուած էր ոսկէթել լեհերով և զանազան գոյնանի կտաւներով»։ Շարունակելով իւր խօսքը, Միհրդատը իւր կնոջը պատմեց թագաւորի զարհուրելի պատուէրը և աւելցրեց՝ «ճամբին ես իմացայ ծառայից, որը ինձ ուղեկցեց մինչ քաղաքից դուրս և որը ինձ տուեց երեխան, որ սա Մանդանայիցն է՝ Աժդահակի աղջկանից և Կամբիւզից։ Երեխան էլ հրէն»։

Այդ ասելով, Միհրդատը բացում է երեխան և ցոյց տալիս իւր կնոջ։ Հիացած նորա ուժի և գեղեցկութեան վերայ, Սպաքօն գրկում է իւր մարդու ոտները և աղաչում, արտասուքը աչքերին, դէն չը գցել այդ երեխան։ Միհրդատը ուզեց հասկացնել, որ այդ անկարելի է։—«Դէ քանի որ ես չեմ կարող քեզ համոզել, վրաբերեց Սաքօն, և որ անպատճառ հարկաւոր է, որ մի երեխայ դէն գցած տեսնեն, ահա թէ ինչ կ'ասեմ քեզ՝ իմ բերած երեխան մեռած է. տար նորան սարը գցիր, իսկ

Նորա տեղ մեծացնենք Աժդահակի քրոջ երեխան, որպէս թէ սա մերը լինի։ Դորանով տես թէ ինչ լաւ բան արած կը լինենք՝ մեր սեպհական երեխան կ'ունենայ արքայական թաղում, իսկ որ կենդանի է՝ կեանքը չի կորցնիլ»։

Եղնարածը զգաց, որ կինը խելօք է խօսում, և հետևեց նորա խորհուրդին։ Նա թողեց տանը Մանդանայի որդուն, իսկ իւր սեպհական երեխան, որ մեռած էր, դրեց մանուկ-իշխանի օրօրոցի մէջ, նորա բոլոր զարդարանքներով, և տարաւ դրեց ամենաամայի լերան վերայ։ Երրորդ օրը նա գնաց քաղաքը, մտաւ Վարպետի մօտ և ասաց, որ պատրաստ է նորան ցոյց տալու երեխայի մարմինը։ Վարպետը Միհրդատի հետ ուղարկեց իւր պահապաններից մի քանիսին և, նոցա վկայութիւնից յետոյ, թաղել տւեց մեռած երեխան։ Իսկ Սպաքոն մեծ խնամքով մեծացրեց իշխանազն երեխային, որը յետոյ Կիւրոս անունը ստացաւ։

ԿԻՒՐՈՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ։—Այդ երեխան, տասը տարեկան դառած, մի արկածով իրան ճանաչել տւեց։ Մի օր, երբ մի գիւղում, ուր Աժդահակի խաշներն էին, նա խաղում էր իւր հասակակից երեխաների հետ, սոքա ընտրեցին նորան իրանց թագաւոր։ Խաղի կանոնների համաձայն, նա բաշխեց մէկին իւր շինութիւնների վերակացուի պաշտօնը, միւսներին՝ թիկնապահների պաշտօնը, ստրկանապետի պաշտօնը և, վերջապէս, մէկին էլ պէտք է նրան ներկայացնէր մասնաւոր անձերի աղերսագրերը։ Այդպիսով ամեն մէկը մի պաշտօն ստացաւ, նայած նորա ընդունակութիւններին և կամ նայած թէ ինչ կարծիք ունէր նոցա մասին Կիւրոսը։ Մարատանի մեծատուն մարդկանցից մէկի, այն է Արտեմբարէսի որդին, խաղում էր Կիւրոսի հետ և ինչ որ մի հրաման մերժեց կատարել։ Կիւրոսը իսկոյն նորան բռնել տւեց իւր ընկերների ձեռքով և նորան ճիպոտներով ծեծել տւեց։ Բայց երբ նորան արձակեցին, նա վշտացած գնաց քաղաքը և գանգատուեց իւր հօր մօտ նորա վերայ, որին նա եղնարածի որդի էր անւանում։ Արտեմբարէսը,

բարկացած, գնաց թագաւորի մօտ իւր որդու հետ միասին և պատմեց նրան, թէ ինչպէս յանդուգն են վարուել նորա որդու հետ։ «Տէր իմ, ասաց նա, բացելով իւր որդու ուսերը, ահա թէ ինչպէս վիրաւորել է մեզ ձեր ստրուկներից մէկը»։

Աժդահակը իսկոյն կանչել տւեց Միհրդատին և նորա որդուն։ Երբ սոքա եկան՝ «Ինչպէս, ասաց թագաւորը, նայելով փոքրիկ Կիւրոսի վերայ, ինչպէս դու, քո տեղովը, համարձակուել ես այդպէս անվայել կերպով վարուել իմ արքունիքի առաջին մեծերից մէկի որդու հետ։—Ես այդ արել եմ արդարութեամբ, պատասխանեց Կիւրոսը։ Գիւղի տղերքը, որոնց մէջ նա էլ կար, ինձ ընտրեցին խաղի մէջ թագաւոր. նոցա աչքում այդ բանի համար ամենաարժանին էի։ Ամենքը կատարում էին իմ հրամանները, բացի Արտեմբարէսի որդուց, որը մերժեց ինձ հնազանդուել։ Ես նորան պատժեցի. եթէ այդ իմ վարմունքը պատժի արժանի է, ահա պատրաստ եմ այդ պատիժը կրելու։

ԿԻՒՐՈՍԸ ՃԱՆԱՉՒՈՒՄ Է ԱԺԴԱՀԱԿԻՑ։—Այդ հպարտ պատասխանից յետ, թագաւորը աւելի լաւ տնտղեց երեխային և զարմացաւ, տեսնելով երեխայի դէմքի վերայ նմանութիւն իւր դէմքի գծերի հետ։ Այդ նմանութիւնը և Կիւրոսի տարիքը Աժդահակի սրտի մէջ կասկածներ արթնացրին։ Նա մի քանի ժամանակ մնաց ապշած. վերջապէս ուշքի եկաւ, յետ ուղարկեց Արտեմբարէսին, որպէս զի առանձին կերպով հարց ու փորձ անէ Միհրդատին։ Թագաւորը հարցրեց նորան, թէ որտեղ էր գտել այդ երեխային և ումից էր ստացել նորան։ Հովիւը պատասխանեց, թէ ինքն է նորա հայրը և որ երեխայի մայրը դեռ ևս կենդանի է և իւր հետն է ապրում։ Աժդահակը ասաց, որ նա իզուր է ծածկում ճշմարտութիւնը և դորանով իզուր իրան դժբաղդացնում է։ Այս ասելով, նա նշան արաւ իւր պահապաններին նորան բռնելու։ Միհրդատը, տեսնելով, որ իրան տանում են հարց ու փորձի, խոստովանեց ճշմարտութիւնը, պատմեց բոլոր եղածը և աղաչեց, որ նորան ներումն շնորհէ։

ԱԺԴԱՀԱԿԻ ԶԱՐՀՈՒՐԵԼԻ ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ։—Ճըշմարտութիւնը իմանալով, Աժդահակը շատ էլ չը մտածեց Միհրդատի վերայ. բայց, սաստիկապէս զայրացած Վարպակէսի դէմ, հրամայեց իւր թիկնապահներին շուտով նորան իւր մօտ բերել։ Երբ նորան բերին, թագաւորը հարցրեց նորան. «Վարպակէս, ինչ տեսակ մահով ոչնչացրիր դու իմ աղջկայ երեխային, որին ես քեզ յանձնեցի»։ Վարպակէսը, նկատելով Միհրդատին թագաւորի սենեակում, առանց այլևայլութեան խոստովանեց բոլորը, վախենալով, որ չը բռնուի ստախօսութեան մէջ։ Տէր իմ, ասաց նա, երբ երեխային ընդունեցի, մտածեցի, թէ ինչպէս կատարեմ ձեր հրամանները և, միևնոյն ժամանակ, յանցաւոր չը լինեմ մի սպանութեան համար՝ ձեր իշխանուհի-դստեր և նոյն իսկ ձեր դիմաց։ Ես կանչեցի մօտս Միհրդատին, որին ասացի, թէ դուք ինքներդ էք հրամայել նորան սպանել տալ։ Ես նորան սպառնացի ամենաչարաչար մահ, եթէ բոլորը կէտ-առ-կէտ չը կատարի։ Պատուէրներս կատարուեցին. երեխան մեռաւ, որպէս այդ վկայեցին իմ ամենահաւատարիմ ներքինիները, որոնց ես տեղն ու տեղը ուղարկեցի։ Յետոյ ես կատարեցի իմ վերջին պարտականութիւնները՝ թաղել տալ մեռած երեխային»։

Վարպակէսը անկեղծ էր խօսում. բայց Աժդահակը, ծածկելով իւր կասկածները, նախ պատմեց Վարպակէսին բոլոր պատմութիւնը, ինչպէս որ նա լսել էր Միհրդատից. յետոյ յայտնեց, թէ երեխան կենդանի է և որ նա այդ բանից գոհ է։ «Որովհետև, ասաց նա, ինչ էլ որ լինի, ես շատ զգացւում էի իմ դստեր յանդիմանութիւնից։ Բայց քանի որ բաղդը մեզ յաջողակ է եղած, ուղարկիր քո որդուն ինձ մօտ, որ նորեկ իշխանի հետ ընկերութիւն անէ և եկ այս երեկոյ ինձ մօտ ընթրիքի. ես կամենում եմ աստուածներին մի գոհ մատուցանել, շնորհակալութիւն յայտնելու համար, որ իմ թոռը ինձ յետ բերուեց»։

Վարպակէսը, այս խօսքերից յետ, խոնարհուեց թագաւորի առջև, ուրախանալով այդ գործի յաջող վախճանի համար, և

իսկոյն ուղարկեց պալատը իւր միակ որդուն, որը տասներեք տարեկան էր։

Վարպակէսի որդին եկաւ թէ չէ՝ Աժդահակը նորան խեղդել տուեց. յետոյ նորան մաս-մաս կտրատեցին և խորովեցին կամ եփեցին։ Խնճոյքի ժամին եկան հիւրերը, Վարպակէսն էլ նոցա հետ։ Աժդահակին և այլ հիւրերին մատուցին ոչխարի միս, իսկ Վարպակէսին՝ իւր որդու մարմինը, որից կտրել էին գլուխը, ձեռները, ոտները։ Երբ Վարպակէսը բաւականի կերել էր, Աժդահակը հարցրեց նորան՝ թէ արդեօք գոհ է ճաշից։ «Շատ գոհ եմ», պատասխանեց նա։ Այդ րոպէին առաջուց պատուիրուած ծառաներ մի ծածկուած զամբիւղի մէջ բերին երեխայի գլուխը, ձեռները, ոտները և հօրը ներկայացրին, ասելով, որ զամբիւղը բաց անէ և վերցնէ միջից ինչ կտորներ որ կը կամենայ։ Նա չը շփոթուեց, և երբ Աժդահակը նորան հարցրեց՝ գիտէ նա արդեօք ինչ որսի միս էր նորա կերածը, նա ասաց, թէ գիտէ, բայց թէ ամեն բան, ինչ հաճելի է մի թագաւորի, նրան հաճելի է։ Այդ պատասխանից յետ նա դարձաւ տուն, վերցնելով իւր հետ որդու մնացորդները թաղելու համար։

ԱԺԴԱՀԱԿԸ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՀԱՐՑՆՈՒՄ ՄՈԳԵՐԻՑ։—Թագաւորը յետոյ իւր մօտ կանչել տուեց այն մոգերին, որոնք մեկնութիւն էին տուել իւր երազին։ Նոքա պատասխանեցին, որ եթէ երեխան մեռած չէ, պէտք է որ նա թագաւորէ»։ Երեխան կենդանի է և առողջ, ասաց Աժդահակը, նա գիւղումն է մեծացել. գիւղի երեխաները նորան իրանց թագաւոր են ընտրած եղել. նա իւր համար թիկնապահներ է ընտրել, դռնապաններ և աղերսագրեր ներկայացնող ծառայողներ է նշանակել. մի խօսքով նա արել է ինչ որ իսկական թագաւորներն են անում։ Ինչ էք կարծում, այս ինչի նշան է»։

«Քանի որ երեխան կենդանի է, պատասխանեցին մոգերը, և նա թագաւորել է առանց որոշ նպատակի, հանգստացէք, դուք այլ ես վախենալու ոչինչ չունիք. երկրորդ անգամ նա

այլ ևս չի թագաւորելու։ Այդ եղաւ մոգերի պատասխանը, որոնք խորհուրդ տուին, որ Կիւրոսը ուղարկւի Պարսկաստան և յետ տրւի իր ծնողներին։

ԿԻՒՐՈՍԸ ՅԵՏ Է ՈՒՂԱՐԿՒՈՒՄ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ։—Կիւրոսը, իրօք, յետ ուղարկւեց իր ծնողներին. սոքա օգուտ քաղեցին Սպաքօ'ի անունից, որ մարերէն նշանակում է քած չուն՝ պարսիկներին համոզելու համար, որ իրանց որդին, աստուածների յատուկ տնօրինութեամբ, սնւել էր քած շնից մի անապատում, ուր Աժդահակը Կիւրոսին գցել է տւած եղել։

ՎԱՐՊԱԿԷՍԸ ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ Է ՍԱՐՔՈՒՄ։—Կիւրոսը, հաղիւ դուրս եկած պատանեկութիւնից, դառաւ իր հասակակիցների մէջ ամենաքաջ երիտասարդը։ Վարպակէսը, սակայն, սնուցանում էր իր մէջ մի բուռն ցանկութիւն՝ Աժդահակից վրէժխնդիր լինելու։ Նրան թւաց, որ Կիւրոսը կարող էր այդ բանում նրան օգնել. գաղտնօրէն նա պարգևներ ուղարկեց նրան և դրդեց նորա փառասիրութիւնը։ Միևնոյն ժամանակ նա գննում էր մարերին, որոնց վշտացրել էր թագաւորը խիստ վարւողութիւնով, և աշխատում էր համոզել մեծամեծներին՝ խլել թագը Աժդահակից և այն դնել Կիւրոսի գլխի վրայ։

ՎԱՐՊԱԿԷՍԸ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ ԿԻՒՐՈՍԻ ՄՕՏ։—Այդ դաւը սարքած՝ Վարպակէսը ուզեց Կիւրոսին իր վերջին խորհուրդը տալ։ Որովհետև Կիւրոսը Պարսկաստանումն էր և ճանապարհները պահպանւած էին, Վարպակէսը մի միջոց գտաւ Կիւրոսի հետ հաղորդակցելու. նա մի նապաստակ բերել տւեց, բացանել տւեց նորա փորը առանց մորթին հանելու, դրեց մէջը իր նամակը և կարել տւեց։ Յետոյ այդ նապաստակը տւեց իր ծառաներից ամենահաւատարիմին, մի թակարդով, իբր թէ նա մի որսորդ լինի, և նրան հրամայեց հասցնել Պարսկաստան Կիւրոսին տալու համար և նրան ասելու, որ նա նապաստակի փորը առանց վկայի բաց անէ։

Կիւրոսը այդ նամակից իմացաւ, որ մարերի մեծամեծ-

ները թողնելու են Աժդահակին այն օրը, երբ Կիւրոսը զօրքով իրանց մօտ կը գայ։

ԿԻՒՐՈՍԸ ԱՊՍՏԱՄԲԵՑՆՈՒՄ Է ՊԱՐՍԻԿՆԵՐԻՆ։—Կիւրոսը ուզեց ազատել իր ազգը մարերի լուծից։ Լաւ մտածելուց յետոյ, ահա թէ նա ինչ հնարքին դիմեց. նա մի նամակ գրեց իր նպատակներին համաձայն, բացեց նորան պարսիկների ներկայութեամբ և կարդաց նրանց։ Նամակի մէջ ասւած էր, թէ Աժդահակը նորան, Կիւրոսին, կառավարիչ է նշանակում Պարսկաստանի վերայ։ «Այժմ, ասաց Կիւրոսը, ես ձեզ հրամայում եմ այստեղ հաւաքւել, ամենքը մի մի գերանդիով»։ Երբ նոքա ամենքը հաւաքւեցին, նա նոցա մի մեծ դաշտ տարաւ՝ ամբողջապէս ծածկւած թփերով և փշերով, և հրամայեց նրանց այդ դաշտը մաքրել մի օրում։ Այդ գործը վերջացրած, նա հրամայեց նրանց հետևեալ օրը լողանան և գան իր մօտ։ Նոյն այն դաշտում Կիւրոսը բերել տւեց իր հօր բոլոր տաւարը, մորթել տւեց և պատրաստել տւեց համադամ կերակուրներ. բերել տւեց նաև ամենալաւ գինիներ մի խօսքով՝ Կիւրոսը նրանց ամենաճոխ խնճոյք տւեց։ Խնճոյքը վերջացրած, Կիւրոսը հարցրեց նոցա, թէ արդեօք այդ երկու դրութիւններից նոքա որն են հաւանում. Նոքա պատասխանեցին, թէ օր առաջ իրանք ամեն տեսակ նեղութիւններ քաշեցին, մինչդեռ այսօր ամեն տեսակ բարիքներ տեսան։ «Պարսիկներ, ասաց այն ժամանակ Կիւրոսը, եթէ ուզում էք ինձ հնազանդւել, դուք միշտ կը տեսնէք այսպիսի և դեռ ևս շատ ուրիշ բարիքներ։ Իսկ եթէ դուք չէք ուզիլ իմ խորհուրդներին հետևել, դուք չը պէտք է այլ բան սպասէք, քան երէկւայ նման նեղութիւններ։ Դառէք, ուրեմն, ազատ, հարուստ և բաղդաւոր, հնազանդ լինելով իմ հրամաններին։

ԱՌԱՋԻՆ ՃԱԿԱՏ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԵՒ ՄԱՐԵՐԻ ՄԷՋ։ ՎԱՐ-ՊԱԿԷՍԻ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ։—Պարսիկները, երկար ժամանակից ի վեր զայրացած լինելով մարերին հպատակ լինելուց, ուրախութեամբ ընդունեցին ազատւելու այդ առիթը։ Երբ

Աժդահակը իմացաւ Կիւրոսի դաւադրութեան մասին, նորան սուրհանդակով իւր մօտ կանչեց։ Կիւրոսը սուրհանդակին պատուիրեց թագաւորին յայտնել, որ նա իրան աւելի շուտով կը տեսնի, քան թէ կը ցանկար։ Այդ պատասխանի վերայ Աժդահակը հրամայեց մարերից զօրք վերցնել և զօրքի հրամանատարութիւնը յանձնեց Վարպակէսին։ Երբ բանը հասաւ կռւի, այն ամենքը, որոնք Վարպակէսի խորհուրդից տեղեակ չէին, քաջութեամբ կռւեցին. միացածները անցան Կիւրոսի կողմը և կամ հրաժարւեցին կռւելուց։

ԵՐԿՐՈՐԴ ՃԱԿԱՏ։ ԱԺԴԱՀԱԿԸ ԳԵՐԻ Է ԲՌՆԻՈՒՄ։—Այդ լուրն իմանալուն պէս, Աժդահակը հրամայեց խաչի դնել երազահան մոգերին. յետոյ, քաղաքում մնացած քաղաքացիների հետ, նա ինքը անձամբ գնաց պարսիկների դէմ և կռւի մտաւ։ Նա կորցրեց կռիւը իւր զօրքի մեծագոյն մասի հետ և ինքը գերի ընկաւ թշնամու ձեռքը։

Վարպակէսը դորանով իւր վրէժը լուծեց։ Նա ներկայացաւ թագաւորին, անպատւեց նորան և, ի միջի այլ վիրաւորանքների, հարցրեց թէ արդեօք նրան որքան է դիւր գալիս ստրկութիւնը։ Աժդահակը նրան հասկացնել տւեց, որ նա մեծ սխալ է գործել, քանի որ նա ինքը կարող էր թագաւոր դառնալ, փոխանակ թագը ուրիշի գլխին դնելու, և որ նա անարդարութիւն է արել, քանի որ, մի մասնաւոր վիրաւորանքի համար, նա իւր հայրենիքը ստրկութեան մէջ գցեց։

Աժդահակը այդպիսով կորցրեց գահը 35 տարի թագաւորելուց յետ։ Կիւրոսը նորան ուրիշ վնաս չը հասցրեց և նորան մինչ վերջ իւր մօտ պահեց։

II

Լ Ի Ւ Դ Ի Ա Ց Ի Ք

Լիւդիացիք։—Լիւդիայի թագաւորութիւնը։—Կրեզոս։—Կրեզոս և Սոլոն։—Կրեզոսի որդու սպանելը։

ԼԻՒԴԻԱՑԻՔ։—Մարաստանին տիրապետելուց յետ, Կիւրոսը պատրաստւեց Լիւդիան նւաճելու։ Լիւդիան գտնւում էր Փոքր-Ասիայի արևմտեան մասում։ Նորա մայրաքաղաքն էր Ս ա ր դ է ս, որ շինւած էր երկու գետերի կցւանի մօտ։

Լիւդիացիք, որպէս Փոքր-Ասիայի բոլոր ազգերը (ի բաց առած հին լիւկիացիք), պատկանում էին կովկասեան ցեղի արիական ճիւղին։

ԼԻՒԴԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ։—Լիւդիայի, որպէս նաև Փոքր-Ասիայի ուրիշ բազմաթիւ հին և այժմ բոլորովին ջնջւած երկիրների և պատմութեան մասին քիչ տեղեկութիւններ են մնացած։ Լիւդիացւոց իրանց ասելով, Զևս աստուծուց և Երկրից ծնւեց Մանէս. Մանէսը ունեցաւ Կոտիսին, որը Ովկիանոսի աղջիկն էր։ Կոտիսը ծնեց Ասիօսին, որը տւեց իւր անունը Ասիայ աշխարհացամաքին, և Ատիսին, որը հիմնեց Լիւդիայի առաջին թագաւորական տոհմը, այն է Ա տ ի ս ե ա ն տ ո հ մ ը։ Ատիսեան տոհմը շարունակեց թագաւորել մինչ 13 դարու վերջը Քր. առաջ. իսկ այդ ժամանակ նորան փոխարինեց մի այլ տոհմ, որը Հերակլէսի ցեղին էր պատկանում, որ և այդ պատճառով կոչւում էր Հ ե ր ա կ լ ե ա ն տ ո հ մ, որի քսան և մէկ յաջորդները ընդ-

ամենը հինգ հարիւր տարի թագաւորեցին։ Նոցանից շատերի անունները կորած են, իսկ ինչ որ պատմում են մնացեալների մասին՝ կատարեալ առասպելներ են։ Օրինակ, Կամբլէսը այնքան շատակեր էր, որ մի գիշեր, քնած ժամանակ, նա իւր կնոջ կուլ տւեց։ Մելէսի կինը մի առիւծ ծնեց, և այլ այսպիսի առասպելներ։

Մօտ 700 թ-ին Հերակլեան տոհմը վայր գցւեց և նորա տեղը բռնեց Գիւգէս անունով մէկը, որը նախօրէն սպանեց Հերակլեան տոհմի վերջին թագաւոր Կանդուլին և հիմնեց Մ ե ր մ ն ա դ ե ա ն տ ո հ մ ը։ Այդ անցքի մասին մնացել են մի երկու վիպական աւանդութիւններ, որոնք նիւթ ծառայեցին յոյն բանաստեղծների համար։

Թէ Գիւգէսը և թէ նորա յաջորդները՝ Արդիս և Սադիատէս ընդարձակեցին Լիւդիայի թագաւորութեան սահմանները Եգէյեան ծովի ուղղութեամբ, նւաճելով նաև ծովափեայ յոնական գաղթականութիւնները։

ԿՐԵԶՈՍ։—Կրեզոսը յաջորդեց 559 թ-ին իւր հօր Ալիատէսին։ Իւր հօր թագաւորութեան առաջին տարիներում նա նւաճեց յոնական մեծ քաղաք Եփեսոսը, և Փոքր-Ասիայի բոլոր գաղթականները ստիպւեցին նրան հարկ վճարել։ Այդ նւաճումներով խրախուսւած, նա կամեցաւ մի այլ նւաճում անել և նաւատորմ պատրաստել տւեց Փոքր-Ասիայի յունական կղզիների վերայ յարձակւելու համար։ Արդէն ամեն բան պատրաստ էր նաւերը շինելու համար, երբ մի յոյն, Բիաս անունով, Սարդէս եկաւ։ Կրեզոսը հարցրեց նորան, թէ ինչ նորութիւն կայ Յունաստանում։ «Իշխան, պատասխանեց նա, կղզիացիք մեծ քանակութեամբ ձիեր են գնում՝ Սարդէսի վերայ յարձակւելու և քո դէմ պատերազմելու համար։—Դա հանաք էր, որից յետ Բիասը հասկացրեց Կրեզոսին, որ այդ բանը նոյնքան

ծիծաղելի է, որքան Կրեզոսի ցանկութիւնը ծովի վերայ կղզիացւոց հետ կռւել։ Կրեզոսը այդ խրատն առած, թողեց իւր դիտաւորութիւնը և բարեկամութիւն հաստատեց կղզիների յոյների հետ։

Մի քանի ժամանակից յետ, Կրեզոսը տէր դառաւ բոլոր ազգերի՝ սկսած Եգէյեան ծովից (Արխիպելագեան ծով) մինչև Փոքր-Ասիայի Ալիւս գետը, բացառութեամբ Լիւկիայի և Կիլիկիայի։ (Այդ նւաճւած ազգերն էին՝ մարիանդինացիք, Ասիայի Թրակիացիք, բիթունիացիք, պանֆլագոնացիք, փռիւգեցիք, լիկաօնացիք, պամֆիլիացիք և կարիացիք)։

Այդքան արդիւնաբեր երկիրների նւաճումը հռչակեց Կրեզոսի անունը որպէս իւր ժամանակւայ ամենահարուստ մարդու. իսկ առատաձեռնութիւնը, որով նա իւր հարստութիւնները բաշխում էր, յարուցեց վերին աստիճանի հիացում նորա ժամանակակիցների կողմից։ Նա շատ ճոխ նւէրներ ուղարկեց Յունաստանի այլ և այլ տաճարների համար, Դելփիս և թէ այլ տեղեր։ Այդ բոլորի համար յոյները նորան վարձատրեցին գովասանքներով և երախտապարտութիւնով։ Նորան հռչակեցին երկրիս ամենահարուստ մարդ, և այդ համբաւը տևում է ցայսօր։

ԿՐԵԶՈՍ ԵՒ ՍՈԼՈՆ։—Այդքան երկիրների նւաճումը շատ ճոխացրեց Սարդէս քաղաքը։ Յունաստանից շատ մարդիկ եկան այստեղ. եկաւ, ի միջի այլոց, աթենացի Սոլոնը, որը ճանապարհորդում էր օտար ազգերի սովորութիւնները և օրէնքները ուսումնասիրելու համար։

Կրեզոսը նորան փառաւոր կերպով ընդունեց, ցոյց տւեց նորան իւր բոլոր հարստութիւնները և ասաց նրան. «Դու շատ ես ճանապարհորդել. ով է քո տեսածներից ամենաերջանիկ

մարդը»։ Այդ հարցը նա արաւ, համոզուած լինելով, որ ինքն է ամենաերջանիկը։ «Տելլ անունով աթենացին», պատասխանեց Սոլոնը։ Կրեզոսը զարմացաւ։ «Ինչու դու նորան այդքան երջանիկ ես համարում» հարցրեց Կրեզոսը։—Որովհետև, պատասխանեց Սոլոնը, նա ապրեց մի ծաղկեալ քաղաքում, ունեցաւ գեղեցիկ և առաքինի որդիք, որոնցից ամեն մինը նորան թոռներ տւեց, որոնք բոլորեքեանք նորա մահը տեսան. և որովհետև վերջապէս, ունենալով մեծ կարողութիւն, նա կնքեց իւր մահկանացուն փառաւոր կերպով. մի կռւի մէջ, որ ունեցան աթենացիք իրանց դրացիների հետ, նա կռւեց քաջօրէն, փախցրեց թշնամիներին և մեռաւ փառքով։ Աթենացիք նորան արձան կանգնեցրին տէրութեան հաշւով նոյն այն տեղում, որտեղ նա ընկաւ։

Կրեզոսը մտածեց, որ գոնէ երկրորդ տեղը իրան կը պատկանի։ «Տելլից յետոյ, շարունակեց Սոլոնը, ամենաերջանիկներն էին Կլէօբիս և Բիտոն. նոքա արգոլիսեցիք էին, վայելում էին պատւով ձեռք բերած մի կարողութիւն և, հասարակաց խաղերի մէջ, մրցանակ տարան։ Նոցա մայրը Յունոն աստուածուհու քրմուհին էր, և այդ աստուածութեան տօնախմբութեան օրը անպատճառ հարկաւոր էր, որ նա գար մի զոյգ եզներով լծուած կառքի վերայ։ Պատահեց, որ եզները դաշտերից դեռ ևս չէին վերադարձած, և երկու երիտասարդները իրանք լծեցին և, քարշ տալով կառքը, որի մէջ իրանց մայրն էր նստած, նորան տարան 45 ստադ ճանապարհ մինչ աստուածուհու տաճարը։ Արգոլիսեցիք գովեցին նոցա բարեպաշտութիւնը, իսկ կանայք շնորհաւորեցին քրմուհուն, որ այդպիսի զաւակներ ունի։ Մայրը, լցուած ուրախութեամբ և կանգնած արձանի ոտներին, խնդրեց աստուածուհուց պարգևել իւր երկու որդկերանց ամենամեծ երջանկութիւնը, որ կարող է ունենալ մի մահկանացու։ Այդ աղօթը վերջացրած, նա կատարեց իւր զոհաբերութիւնը։ Այդպիսի տօնախմբութիւնների մէջ, սովորական խնճոյքից յետ, երկու երիտասարդները ննջեցին տաճարի մէջ,

և այլ ևս չարթնացան։ Աստուածուհին կամեցաւ նոցա հեռացնել կեանքի թշւառութիւններից։ Նոցա յիշատակը սրբագործելու համար՝ արգոլիսեցիք ուղարկեցին նոցա արձանները Դելֆիի տաճարը։

«Աթենացի, դարձաւ նորան Կրեզոսը կատաղութեամբ, ուրեմն դու իմ բաղդաւորութիւնը բանի տեղ չես դնում, որ դու ինձ մինչև անգամ հասարակ քաղաքացիների հետ համեմատելու արժանի չես գտնում։—Տէր իմ, ասաց Սոլոնը, դուք ինձ հարցնում էք, թէ ինչ եմ մտածում մարդկային կեանքի մասին. միթէ ես կարող էի այլապէս պատասխանել։ Մի երկարակեաց մարդ ապրում է 70 տարի. այդ 70 տարին տալիս են 25.550 օր։ Արդ, այդքան օրերից մէկը չես գտնիլ, որի անցքերը բոլորովին նման լինեն մի այլ օրւայ անցքերին։ Ուրեմն պէտք է ընդունել, որ մարդս ենթակայ է հազար տեսակ պատահարների։ Դու, ճիշդ է ունես մեծ հարստութիւններ. բայց ես չեմ կարող պատասխանել քո հարցին, մինչև որ ես չ'իմանամ, թէ արդեօք քո օրերը կը վերջանան երջանկութեան մէջ, թէ ոչ։ Բաղդաւոր համարելուն արժանանալու համար պէտք է որ մի գեղեցիկ կեանքի հետ միացնել մի գեղեցիկ մահ»։

Այսպէս խօսեց Սոլոնը։ Նա ոչինչ չ'ասաց, որ ախորժելի լինէր Կրեզոսին. այդ պատճառով նա նորան յետ ուղարկեց արքունիքից։ Հաւանական է, որ Կրեզոսը նորան անտաշ մարդու տեղ ընդունեց, որը, առանց ուշադրութիւն դարձնելու ներկայ հարստութիւնների վերայ, ամեն բանում վերջն էր որոնում։

ԿՐԵԶՈՍԻ ՈՐԴՒՈՒ ՍՊԱՆՒԵԼԸ։—Կրեզոսը երկու որդի ունէր՝ մէկը համր էր, միւսը ամեն բանում գերազանցում էր իւր հասակակիցներին. նորա անունն էր Ատիս։ Կրեզոսին մի անգամ երազում ասեց, թէ Ատիսը մեռնելու է երկաթէ զէնքից։ Թագաւորը, դողալով իւր որդու համար, հեռացրեց նորան զօրքից և հրամայեց՝ նորա սենեակում կախ արած նիզակները և տէգերը վերցնեն և դուրս տանեն, որ մի գուցէ նոցանից մէկը կամ միւսը վայր ընկնի իւր որդու գլխին.

Այդ ժամանակներում եկաւ Սարդէս մի դժբախտ մարդ, որի ձեռները սպանութիւնից պղծած էին. դա մի փռիւգեցի էր, թագաւորական ծագումից, որը խնդրեց Կրեզոսին մաքրել նորա ձեռները։ Ծիսակատարութիւնից յետոյ թագաւորը ուզեց իմանալ, թէ նա ով է։ «Տէր իմ, ասաց հիւրը, ես Գորդիուսի որդին եմ և Միդասի թոռը, անունս է Ադրաստ. ես սպանեցի իմ եղբօրը առանց այդ ցանկալու. հօրիցս ես վռնդուեցի և եկայ այստեղ ապաստան որոնելու։—Դուք ծագում էք մի տոհմից, որը ես սիրում եմ, պատասխանեց Կրեզոսը. դու քո բարեկամների մէջն ես. քեզ ոչինչ չի պակասի իմ արքունիքում, որքան որ դու ինձ մօտ մնալ հարկաւոր կը դատես։ Դժբաղդութիւնդ համբերութեամբ տար. այդ միակ միջոցն է այն ամոքելու համար»։ Արդաստը մնաց Կրեզոսի արքունիքում։

Նոյն այդ ժամանակներում, Միւսիայում ահագին մեծութեամբ մի վարազ երևաց, որը, վայր գալով Ոլիմպոս լեռնից, մեծ վնասներ էր հասցնում գիւղերին։ Միւսիացիք քանի անգամ նորա յետևից ընկան, բայց առանց կարողանալու նորան վնասել։ Նոքա գնացին Կրեզոսին, որ նա իւր որդուն ուղարկէ՝ վարազը երկրից դուրս գցելու համար։ «Որդուս մասին մի խօսէք, պատասխանեց թագաւորը, ես չեմ կարող նորան ուղարկել. բայց ես կը տամ ձեզ իմ որսորդական կառքը՝ լիւդիական ընտիր երիտասարդների հետ»։

Ատիսը լսում էր այդ խօսակցութիւնը. նա գանգատուեց հօր մօտ, թէ նորան ամէն միջոց արգելուած է իւր քաջութիւնը ցոյց տալու համար. ասաց նաև, որ նա լաւ չէ հասկանում պատգամախօսութեան միտքը տեսած երազի մասին։ «Աստուածները քեզ ասել են ուել, որ ես պէտք է մեռնեմ մի երկաթէ զէնքից. բայց մի վարազ խոմ ձեռներ չունի, և միթէ նա սուր երկաթ ունի, որ վախենում ես»։ Կրեզոսը համոզուեց և թոյլ տուեց իւր որդուն որ այդ որսին գնայ, դնելով նորան Ադրաստի պահպանութեան ներքոյ, որը երդուեց նորան ողջ առողջ յետ բերել, որքան այդ իրանից կախուած է։

Իշխանը և նա ճանապարհ ընկան ընտիր մարդկանց մի խմբով և թագաւորի ասպականիով։ Ոլիմպոս լեռը հասած, որոնում են վարազին, գտնում են, շրջապատում նորան և տէգեր արձակում նորա վերայ։ Ադրաստի նիզակը չի կպչում անասունին, այլ դիպչում է Կրեզոսի որդուն։

Լիւդիացիք Սարդէս բերին երիտասարդ իշխանի մարմինը, սպանողի հետ միասին։ Ադրաստը, դիակի մօտ կանգնած, ձեռները մեկնած դէպի Կրեզոսը, աղաչում էր որ վերջինս նորա վիզը կտրէ իւր որդու վերայ, քանի որ կեանքը նրան այնքան ատելի էր դառել այն օրից, երբ իւր առաջին սպանութեան վերայ աւելցրեց այս երկրորդը։ Կրեզոսը հրաժարուեց այդ անել։ Երբ թաղման հանդէսը վերջացաւ, և մի տխուր լռութիւն էր պատել ժողովի մէջ, տեսան թէ ինչպէս Արդաստը ինքը վերջ տուեց իւր թշուառ կեանքին, սպանելով իրան Ատիսի գերեզմանի վերայ։

III

ԼԻՒԴԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԸ

Կրեզոսը խորհուրդ է հարցնում Յունաստանի պատգամախօսներից։— Կրեզոսը միանում է Լակեդեմոնիայի հետ։— Առաջին ճակատ։— Երկրորդ ճակատ։— Կրեզոսի վիճակը։

ԿՐԵԶՈՍԸ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՀԱՐՑՆՈՒՄ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԱՏԳԱՄԱԽՕՍՆԵՐԻՑ։—Կրեզոսը երկու տարի ողբաց իւր որդու մահը։ Բայց Ասիայում կատարուող անցքերը, Աժդահակի թագաւորութեան կործանումը, Կիւրոսի թագաւորութեան հաստատուելը և օրէցօր բարձրանալը—նորա սուգին վերջ դրեցին։ Այժմ նորա միակ հոգսն էր այդ զօրութիւնը նուազեցնել, դեռ քանի որ իրան չէր սպառնացել։ Այդ մտքով զբաղուած, նա վճռեց խորհուրդ հարցնել ամենահռչակաւոր պատգամախօսներից։ Նա պատգամաւորներ ուղարկեց զանազան տեղեր, մանաւանդ Դելփիս (Յունաստանում) և Ամոնի Իւպիտէրի տաճարը (Աֆրիկայում), փորձելու համար, թէ որքան ճիշդ նոքա գուշակել գիտեն։

Կրեզոսը միևնոյն օրում ճանապարհ գցեց իւր պատգամաւորներին, որոնց պատուիրեց պատգամախօսներին ներկայանալ ուղիղ հարիւր երորդ օրը և հարցնել, թէ Կրեզոսը նոյն այն րոպէին ինչ է շինում. յետոյ իւրաքանչիւր պատգամախօսի պատասխանը գրել և իրան թագաւորին ներկայացնել։ Պատասխաններից յայտնի է միայն Դելփիսի պատգամախօսինը. հէնց որ լիւդիացիք ներս մտան տաճարը, Պիւթիան (քրմուհին) ասաց նրանց. «Ես գիտեմ աւազի հատիկների թիւը և ծովերի սահմանները. ես հասկանում եմ համրի լեզուն. ես լսում եմ նորա

ձայնը, ով չի խօսում։ Իմ զգայարանքները զգում են հոտը կրիայի, որին տապակում են գառան մսի հետ մի պղնձէ կաթսայում»։

Պատգամաւորները գրի անցրին այդ պատասխանը և վերադարձան Սարդէս։ Երբ ամենքը վերադարձել էին, Կրեզոսը բացեց նոցա ծրարները։ Հէնց որ Դելփիսի պատգամախօսի խօսքերը լսեց, նոցա ճշմարտութիւնը խոստովանեց և երկրպագեց աստուծուն։

Դորանից յետ Կրեզոսը աշխատեց աստուծուն հաճելի լինել և նորա տաճարը ճոխ ընծաներ ուղարկեց և կամ փճացրեց ի պատիւ նորա։ Նա մորթել տուեց 300 զոհ, այրել տուեց մի մեծ խարոյկի վերայ ոսկեզօծուած և արծաթազրած մահճակալներ, ծիրանագոյն զգեստներ և այլ թանկագին գործուածներ։ Վերջապէս նա դրեց տաճարի մէջ անթիւ-անհամար ոսկէ և արծաթէ անօթներ։

Լիւդիացիք, որոնք պիտի այդ ընծաները տանէին Դելփիս, պատուէր ստացան հարցնել պատգամախօսին, թէ արդեօք Կրեզոսը պէտք է պատերազմ յայտնէր պարսիկներին, թէ ոչ։ Պիւթիան պատասխանեց, թէ այդ դէպքում նա մի մեծ տէրութիւն է կործանելու, և նրան խորհուրդ տուեց ձեռք բերել բարեկամութիւնը Յունաստանի այն պետութիւնների, որոնց նա ամենահզօրն էր ճանաչում։

Նա հարցնել տուեց նաև, թէ արդեօք իւր թագաւորութիւնը երկարատև է լինելու, թէ ոչ. նրան պատասխանեցին՝ «Երբ մի ջորի մարերի թագաւոր կը դառնայ, այն ժամանակ փախիր, քնքուշացած լիւդիացի, դէպի Հերմոսի ափերը։ Չ'ընդդիմադրես և քո ստորութիւնից չը կարմրես»։

ԿՐԵԶՈՍԸ ՄԻԱՆՈՒՄ Է ԼԱԿԵԴԵՄՈՆԻԱՅԻ ՀԵՏ։— Այն ժամանակ թագաւորը աշխատեց իմանալ, թէ որոնք են Յունաստանի ամենազօրեղ տէրութիւնները և գտաւ որ դոքա են Լակեդեմոնիան և Աթէնքը՝ բայց որ դոքա երկպառակուած էին։ Կրեզոսը դեսպաններ ուղարկեց սպար-

տացւոց մօտ (Սպարտան՝ լակեդեմոնացւոց մայրաքաղաքն էր) ընծաներով, նոցա խնդրելու համար, որ միանան իւր հետ։

Աքանչացած այդ գերադասութիւնից և նորա մեծահոգութիւնից, սպարտացիք խոստացան պատրաստ լինել նրան օգնելու համար։

ԱՌԱՋԻՆ ՃԱԿԱՏ։ — Կրեզոսը իւր զօրքով անցաւ Ալիս գետը։ Կիւրոսը, իմանալով այդ, բազմաթիւ զօրքով եկաւ նորա դէմ և դեսպաններ ուղարկեց յոնիացւոց (Փոքր-Ասիայի ծովեզրեայ յոյների) մօտ, բայց յոնիացիք հրաժարւեցին հետևել այդ խորհուրդին։ Զօրքերը Թերամարտից անցան ընդհանուր գործի, որը շատ սաստիկ էր և իւր երկու կողմից ևս մեծ բազմութիւն կոտորւեց։ Գիշերը բաժանեց թշնամիներին, առանց որ յաղթութիւնը մէկի կամ միւսի կողմը լինէր։

ԵՐԿՐՈՐԴ ՃԱԿԱՏ։ — Կրեզոսը վերադարձաւ Սարդէս ձմեռը անցկացնելու համար, մինչև որ նորա դաշնակիցները՝ եգիպտացիք, բաբելոնացիք և սպարտացիք օգնութեան կը հասնէին։ Նա չէր կարծում, թէ պարսիկները կը մտնեն նորա երկիրը, որ այնքան հեռու էր Պարսկաստանից։ Բայց Կիւրոսը, ընդհակառակը, դիմեց դէպի Սարդէս մեծ զգուշութեամբ, որպէս զի չը թողնէ, որ լիւդիացիք ժամանակ ունենան պատրաստւելու։ Լիւդիացիք շատ քաջ ազգ էին և նոցա հեծելազօրքը հռչակւած էր։ Նոքա կարգ-կարգ կանգնեցին քաղաքի առջև, մի ընդարձակ դաշտի վերայ։ Կիւրոսը վախեցաւ, որ այդ անթիւ հեծելազօրքը չը ճնշէ իւր զօրքին։ Նա հաւաքեց, ասում է Հերոդոտը, իւր բանակում գտնւող բոլոր ուղտերը և քշեց նոցա իւր զօրքի առաջ, որովհետև ձին վախենում է ուղտից և

չի կարողանում տանել ոչ նոցա տեսքը և ոչ նոցա հոտը [1]։ Եւ իրօք, հէնց որ գործը սկսւեց, լիւդիացիք չը կարողացան ձիերին սանձել։ Բայց դորանից նոքա չը վախեցան. նոքա վայր իջան ձիերից և կռւեցին յետիոտն։ Բայց նոքա յաղթւեցին, փախան մտան քաղաքի պարիսպների յետև, ուր պարսիկները նոցա պաշարեցին և, մի քանի ժամանակից յետ, առան քաղաքը 554 թ.։

ԿՐԵԶՈՍԻ ՎԻՃԱԿԸ։ — Յոյները զարմացան, որ մի մեծ պետութիւն, որպիսին էր Լիւդիան, կարող էր, մի պարտութիւնից յետ, վայր ընկնել և որ Կրեզոսի նման մի թագաւոր, որը այնքան բարեպաշտ էր Յունաստանի աստւածների դիմաց, կարող էր կորչել, առանց որ այդ աստւածները նրան պաշտպանութիւն ցոյց տւած լինէին։

Հերոդոտը այսպէս է պատմում Կրեզոսի վիճակի մասին։ Նա մի որդի ունէր, որը ամեն տեսակ լաւ յատկութիւններով օժտւած էր, միայն թէ համր էր։ Կրեզոսը ամեն միջոց գործ դրեց նորան բուժելու համար. ի միջի այլոց նա դիմեց Դելֆիի պատգամախօսին, որը պատասխանեց. «Լիւդիացի, թագաւոր շատ ազգերի, անմիտ Կրեզոս, մի ցանկացիր քո որդու ձայնը լսելու. նա կ՚սկսէ խօսել այն օրը, երբ սկսելու են քո դժբաղդութիւնները»։ Սարդէս քաղաքը վերցնելուց յետ, մի պարսիկ քիչ էր մնում սպանէր Կրեզոսին, առանց սորան ճանաչելու։ Երիտասարդ արքայորդին, սարսափած այդ տեսարանից, ուժ գործ դրեց խօսելու, և նորա լեզուն բացւեց։ «Զինւոր, բացականչեց նա, մի սպանիր Կրեզոսին»։ Դոքա՝ նորա առաջին խօսքերն էին, և այդ օրից նա պահպանեց խօսելու ընդունակութիւնը մինչև մահ։

---

1) Հերոդոտը սխալւում է. քարւաններում ուղտերը և ձիերը միասին են գնում առանց իրարից խրտնելու. միայն թէ շատ ճիշդ է, որ, տարւայ մի որոշ ժամանակում, ուղտերից գարշահոտութիւն է փչում։

Կրեզոսը, գերի բռնուած, տարւեց Կիւրոսի մօտ։ Կիւրոսը նորա համար խարոյկ պատրաստել տւեց, որի վերայ բարձրացաւ Կրեզոսը։ Այդ ժամին նա յիշեց Սոլոնի խօսքերը և, խորը հառաչելով, երեք անգամ կրկնեց նորա անունը՝ «Ո՜հ, Սոլոն, Սոլոն»։ Կիւրոսը հարցնել տւեց թարգմանչի բերանով, թէ ով է այն մարդը, որի անունը նա տալիս է։ «Դա մի մարդ է, ասաց նա, որի հետ խօսելը կը գերադասէի բոլոր թագաւորների հարստութիւններից»։ Եւ նա սկսեց պատմել այն, ինչ մենք գիտենք Սոլոնի այցելութեան մասին։ Կիւրոսի սիրտը մեղմացաւ այդ պատմութիւնից յետ և Կրեզոսին այրելու հրամանը յետս կոչեց, մտածելով, որ այդպիսի դժբաղդութիւն իրան էլ կարող է հասնել։

Այդ օրից սկսած, Կիւրոսը մեծ պատւով վարւեց Կրեզոսի հետ. նա նորան մինչև անգամ ասաց. «Խնդրիր ինձնից ինչ կամենաս, և ես իսկոյն կը կատարեմ կամքդ։—Տէր իմ, ասաց Կրեզոսը, իմ ամենամեծ ցանկութիւնը սա է, որ թոյլ տաք ուղարկեմ Յունաստանի Ապոլլոն աստուծուն այս շղթաները և հարցնել տամ նրան, թէ միթէ նրան թոյլ է տրւած խաբել այն մարդուն, որը նորան այնքան պատւել է։ Կիւրոսը նորա այդ խնդիրքը կատարեց ծիծաղը երեսին։ Դելփիի պատգամախօսը պատասխանեց, թէ իզուր է Կրեզոսը գանգատւում։ Ապոլլոնը (այդ այն աստուածն է, որին նւիրւած էր Դելփիի տաճարը, ուր գտնւում էր պիւթեան քրմուհին), Ապոլլոնը նրան գուշակել էր, որ, պատերազմ յայտնելով, նա մի մեծ թագաւորութիւն է կործանելու. ինչու Կրեզոսը մարդ չ'ուղարկեց հարցնելու, թէ որ թագաւորութիւնն է կործանելու՝ իւրը, թէ պարսիկներինը։ Յետոյ, թէ Կրեզոսը նմանապէս չէր հասկացել Ապոլլոնի խօսքերը՝ թէ երբ մի ջորի մարերի թագաւոր կը դառնայ, այն ժամանակ փախիր, քնքուշացած լիւդիացի, դէպի Հերմոսի ափերը, չընդդիմադրես և քո ստորութիւնից չը կարմրես։ Այդ ջորին՝ Կիւրոսն էր, որովհետև նորա ծնողներից մայրը՝ մարաստանցի էր և Աժդահակի աղջիկը, իսկ հայրը՝ պարսիկ էր և հպատակ մարերին»։

IV

ԿԻՒՐՈՍԸ ՆՈՒԱՃՈՒՄ Է ԱՄԲՈՂՋ ՓՈՔՐ-ԱՍԻԱՆ

Ասիայի յոյներին սպառնում են պարսիկները։—Լիւդիացւոց ապստամբութիւնը։—Ապաստանի իրաւունքը յոյների մօտ։—Կիւրոսը նուաճում է ամբողջ Փոքր-Ասիան։

ԱՍԻԱՅԻ ՅՈՅՆԵՐԻՆ ՍՊԱՌՆՈՒՄ ԵՆ ՊԱՐՍԻԿՆԵՐԸ։— Սարդէսի առումից առաջ, Յոնիայի և Էօլիսի (երկու երկիրներն էլ յունական գաղթականութիւններ էին Փոքր-Ասիայի արեւմտեան մասում) յոյները մերժեցին Կիւրոսի հետ միանալու։ Բայց երբ նոքա իմացան Լիւդիայի թագաւորութեան անկումը, նոքա իրանք խնդրեցին Կիւրոսին՝ իրանց ընդունել իւր հպատակութեան ներքոյ նոյն պայմաններով, ինչ պայմաններով որ նոքա հպատակ էին Լիւդիայի Կրեզոսի ժամանակ։ Կիւրոսը նրանց պատասխանեց այս առակով։ Սրինգ ածող մէկը ծովի մէջ ձկներ տեսաւ. նա իւր սրինգը ածեց, երեւակայելով, թէ ձկները նորա մօտ կը գան։ Երկար սպասեց, բայց նոքա չեկան։ Նա վերցրեց ուռկանը, բռնեց նոցանից շատերին և ափը հանեց։ Տեսնելով որ նոքա թռչկոտում են՝ հերիք, ասաց նա, այլ ևս մի՛ պարէք, քանի որ չուզեցիք սրինգի ձայնով պարել։

Պատգամաւորները այդ որ յայտնեցին, յոնիացիք ամրացրին իրանց քաղաքները և վճռեցին դիմել սպարտացւոց օգնութեան։

Բայց սպարտացիք չօգնեցին, այլ միայն նաւով մար-
դիկ ուղարկեցին Կիւրոսի և Յոնիայի գործերի դրութիւնը
իմանալու համար։

ԼԻԴԻԱՑԻՈՑ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ։—Կիւրոսը պատուի-
րեց լիւդիացի Պակտիասին Կրեզոսի գանձերը Պարսկաս-
տան տեղափոխել. իսկ ինքը ճանապարհ ընկաւ դէպի Եք-
բատան։ Բայց հազիւ նա հեռացել էր Սարդէսից, Պակ-
տիասը ապստամբեցրեց լիւդիացիներին։ Մեծ գումարներ
ձեռին՝ նա գնաց ծովափեայ յունական քաղաքները, զօրք-
դեր կազմեց իւր հաշուով, վերադարձաւ Սարդէս և պա-
շարեց միջնաբերդը։

Կիւրոսը դորանով չը վրդովւեց, այլ մի մարասատան-
ցու ուղարկեց այնտեղ, Մազարէս անունով, որին պատուի-
րեց ազատել միջնաբերդը և Պակտիասին կենդանի իւր
մօտ բերել։

ԱՊԱՍՏԱՆԻ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՅՈՅՆԵՐԻ ՄՕՏ։—Պակտիասը,
այդ լուրը իմանալուն պէս, փախաւ Կիւմէ (որ Եւբէա կղզու
վերայ գտնուած Կիւմէ քաղաքի մի գաղթականութիւն էր Էօլի-
սում, Փոքր-Ասիայում)։ Մազարէսը պատգամ ուղարկեց բնակիչներին,
որ փախստականին իրան յետ տան։ Պատասխան տալուց
առաջ, նոքա խորհուրդ հարցրին մի պատգամախօսից, որը
պատասխանեց թէ պէտք է յետ տան։ Արդէն պատրաստւում
էին աստուծուն հնազանդւելու, երբ Կիւմէի նշանաւոր մարդ-
կանցից մինը խանգարեց վճռի կատարելը մինչև որ նորից
մի պատգամաւորութիւն չը գնաց, որի մէջ ինքն էլ ընտրւեց։

Աստուածը նրան նոյն պատասխանը կրկնել տւեց։ Այն
ժամանակ Արիստոդիկոսը պտտեց տաճարի չորջը և դուրս
թռցրեց բոլոր թռչուններին, որոնք այնտեղ բոյն էին շինել։
Հերոդոտը աւելցնում է, որ այդ ժամուն սրբարանից մի ձայն
աղաղակեց՝ «Ով դու, ամենաապերախտ մարդ, դու համարձա-

կութիւն ունիս իմ տաճարից խլել իմ ապաւորներին», և որ
Արիստոդիկոսը, առանց շփոթւելու, պատասխանեց՝ «ինչպէս,
մեծ աստուած, դու ինքդ հովանաւորում ես քո ապաւոր-
ներին, և դու հրամայում ես կիւմէցիներին, որ նոքա իրանց
ապաւորին մատնեն։—Այո, ես այդ կամենում եմ, վերսկսեց
նոյն ձայնը. և հէնց նորա համար դուք պէտք է կորուէք, որ
մի այդպիսի մեղք էք գործել, և որ միւս անգամ չը գաք պատ-
գամախօսի մօտ խորհուրդ հարցնելու, թէ դուք պիտի ապա-
ւորներին մատնէք թէ ոչ»։

Կիւմէցիք Պակտիասին փախցրին Լեսբոս կղզին, յետոյ
Խիօս կղզին, որի բնակիչները ձեռնտու բայց ամօթալի պայ-
մաններով նորան մատնեցին Մազարէսի ձեռքը։

ԱՄԲՈՂՋ ՓՈՔՐ-ԱՍԻԱՆ ՆՒԱՃՒՈՒՄ Է ՊԱՐՍԻԿՆԵՐԻՑ. —
Պարսիկների զօրագլուխ, Մազարէսից յետոյ, նշանակւեց
նոյն Հարպակէսը, որին Աժդահակը մեզ արդէն յայտնի
դարշելի ընթրիքը տւեց։ Նա վերջացրեց Ասիայի յոյների,
դոցա հետ նաև կղզիների յոնիացւոց նւաճումը։ Յետոյ
Հարպակէսը նւաճեց կարիացիներին, կնիդացիներին և լիւ-
կիացիներին։ Կարիան, մի երկիր էր հարաւ-արևմտեան
Փոքր-Ասիայում՝ Հալիկառնաս (Հերոդոտի հայրենիք), Կնի-
դոս և այլ քաղաքներով։ Մինչ 550 թ-ը Քր. առ. ունէին
սեպհական թագաւորներ։ Կնիդացիք վատ հռչակ ունէին
ծովային աւազակութեան պատճառով։ Լիւկիան մի երկիր
էր Փոքր-Ասիայում։

V

ԿԻՒՐՈՍԸ ՆՒԱՃՈՒՄ Է ԲԱԲԵԼՈՆԻԱՆ

Բաբելոնիայի դրութիւնը։—Արշաւանքի սկիզբը։—Բաբելոնացւոց պարտութիւնը։—Կիւրոսը փոխում է Եփրատի հոսանքը.—Կիւրոսը առնում է Բաբելոնը։—Բաբելոնի հարստութիւնները։—Հրէաների վերադարձը։

ԲԱԲԵԼՈՆԻԱՅԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ։—Մինչև Կարպակէսը ասպատակում էր Փոքր-Ասիան, Կիւրոսը ինքը զբաղւած էր Բարձր-Ասիայի ազգերով։ Նա ընդարձակեց իւր տէրութիւնը հիւսիսից մինչ Իաքսարտէս, արևելքից՝ մինչ Հնդոս գետերը։ Այդ ամենի համար եղած կռիւների նկարագրութիւնները չեն մնացած։ Դոցանից միայն մի պատերազմի մասին է պատմում Հերոդոտը, այն է՝ Բաբելոնի նւաճումը։

Երբ Կիւրոսը արշաւեց Բաբելոնիա, այստեղ թագաւորում էր Նաբու-Նահիդը, որը, Կրեզոսի անկումից յետոյ, պատրաստութիւններ տեսաւ դիմադրութեան համար։ Նա ժողովել էր իւր զօրքը, նորոգել էր փոսերը և պարիսպները, լրացրել էր քաղաքների պաշարները, Բաբելոնի համար մի ամուր ապաստարան էր պատրաստել, ուր նա պիտի փախչէր, եթէ յաղթւէր։

ԱՐՇԱՒԱՆՔԻ ՍԿԻԶԲԸ։ ԳԻՒՆԴԷՍ ԳԵՏԸ։—Մեծ թագաւորը, ասում է Հերոդոտը, պատերազմի չէր ելնում առանց որ ուտեստներ և տաւար չը վերցնէր հետը։ Նորա յետևից տանում

էին նաև Քոասպի ջուրը, որը Շուշում անցնող գետն է։ Թագաւորը ուրիշ ջուր չէր խմում։ Ջուրը եփում էին և ածում արծաթէ ամանի մէջ և տանում թագաւորի յետևից չորս անիւեայ կառքերի վերայ, լծւած ջորիներով։

Երբ անցնում էին Գիւնդէս, որը Տիգրիսի օժանդակ մի գետ է, սպիտակ ձիերից, որ պարսիկները զոհաբերում էին արեգակին, և որոնք միշտ թագաւորին հետևում էին՝ մէկը ընկղմւեց հոսանքի մէջ։ Կիւրոսը բարկացաւ գետի վերայ, որպէս թշնամու վերայ և սպառնաց դարձնել նորան այնքան փոքրիկ և թոյլ, որ առաջին պատահած կինն անգամ կարող էր անցնել առանց ծնկները թրջելու։ Կիւրոսը կանգնեցրեց զօրքը, բաժանեց նորան երկու մասի և հրամայեց գետի իւրաքանչիւր կողմից 180-ական առու անցկացնեն, որոնց մէջ գետը կուլ գնաց և կորաւ։

ԲԱԲԵԼՈՆԱՑԻՈՑ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ. ԲԱԲԵԼՈՆԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ։—Հետևեալ տարւայ գարնան, բաբելոնացիք Կիւրոսի առաջն ելան, բայց յաղթւեցին և յետ դառան, փակւելով քաղաքի պարիսպների ետևը։ Շնորհիւ մեծաքանակ պաշարների, նոքա շատ էլ հոգս չը տարան և համբերութեամբ կրում էին պաշարման դրութիւնը։ Այդպէս չէր Կիւրոսը, որը ամիսներով ոչինչ չը կարողացաւ չինել. հարկ եղաւ հնարքի դիմել։

ԿԻՒՐՈՍԸ ՓՈԽՈՒՄ Է ԵՓՐԱՏԻ ՀՈՍԱՆՔԸ։—Քաղաքը մտնելու համար, նա մտածեց փոխել Եփրատի հոսանքը։ Նա դրեց իւր զօրքի կէսը այն տեղում, ուր Եփրատը մտնում է Բաբելոնը, իսկ միւս կէսը՝ որտեղ գետը դուրս է գալիս Բաբելոնից, և պատւիրեց որ ներս մտնեն քաղաքը, հէնց որ գետը ծանծաղ կը դառնայ։ Ինքը Կիւրոսը, զօրքի ամենալաւ մասով, բարձրացաւ գետն ի վեր, որտեղ անցկացրեց և կամ նորոգեց հնուց մնացած առուները և աւազանները։ Երբ ամեն բան պատրաստ էր՝ ջուրը դէպի այդ առուները և աւազանները ուղղելու համար, նա սպասեց այն րոպէին, երբ բաբելոնացիք տօնում էին իրանց ամենամեծ տօներից մէկը։

ԿԻՒՐՈՍԸ ԱՌՆՈՒՄ Է ԲԱԲԵԼՈՆԸ (538 թ.)։—Այն ժամանակ պարսիկները մտան քաղաքը գետի փոսով, երբ նորա միջի ջուրը արդէն բաւականաչափ սակաւացել էր։ Բաբելոնացիք կարող էին կոտորել Կիւրոսի զօրքը, եթէ փակէին այն դռները, որոնք տանում էին դէպի գետը, և բարձրանային գետով անցնող պարիսպների վերայ։ Բայց, տօնախմբութեան պատճառով, նոքա ամէնքն էլ քէֆ ու պարի մէջ էին։ Երբ նոքա իմացան վտանգի մասին, արդէն ուշ էր. քաղաքի ծայրերը արդէն պարսիկների ձեռքում էին։

ԲԱԲԵԼՈՆԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ։—Բաբելոնը չափազանց հարուստ քաղաք էր։ Այդ հարստութիւնների չափը ցոյց տալու համար, Հերոդոտը, ի միջի այլոց, բերում է հետևեալ ապացոյցը։ Բացի հասարակ ցեղերից, թագաւորի բոլոր երկիրները ուղարկում էին ամէն բան, ինչ հարկաւոր էր թագաւորի սեղանի և զօրքի համար։ Այդ ծախքերից տարւայ մէջ չորս ամսի մասը հոգում էր Բաբելոնը, իսկ մնացեալ ութ ամիսների մասը հոգում էին բոլոր միւս հպատակ ասիական ազգերը։ Դորանից զատ, Բաբելոնը ինքը, առանց հպատակ երկիրների, պահում էր, բացի զօրքի ձիերից, նաև կուտոցներ տասն և ութ հազար ձիերի համար։ Այստեղ պահում էին նաև բազմաթիւ հնդկական մեծ շներ։ Չորս մեծ աւաններ պարտաւոր էին նոցա կերակուրը հայթհայթել, և դորա համար նոքա ազատ էին ամէն ուրիշ հարկերից։

ՀՐԷԱՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ (536 թ.)։—Այդ անցքից մի քանի տարի յետոյ, Կիւրոսը թոյլ տուեց հրէաներին վերադառնալ Երուսաղէմ։ Նոքա մնացին Բաբելոնիայում 50 տարի։

VI

ԿԻՒՐՈՍԻ ՄԱՀԸ

Կիւրոսի արշաւանքները դէպի հիւսիս։—Մասագէթացւոց սովորութիւնները։—Տոմիրիս թագուհին։—Պարսիկները անցնում են գետը։—Տոմիրիսի որդու մահը։—Կիւրոսի մահը։—Կիւրոսը նուաճող էր, բայց ոչ կառավարիչ։

ԿԻՒՐՈՍԻ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐԸ ԴԷՊԻ ՀԻՒՍԻՍ։—Երբ Կիւրոսը նուաճեց Բաբելոնիան, նա ուզեց իւր իշխանութեան ներքոյ դցել նաև մասագեթացիներին։ Դոքա՝ քաջ և մեծ ազգ էին Կասպեան ծովի արևելեան կողմերում։

ՄԱՍԱԳԵԹԱՑԻՈՑ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ։—Նոքա հագնւում էին սկիւթացւոց նման և նոցա կենցաղը նոյնն էր։ Նոքա հաւասարապէս լաւ կռւում էին ոտի և ձիու վերայ։

Երբ նոցանից մէկը զառամեալ հասակն էր մտնում, նորա ազգականները հաւաքւում էին, սպանում էին նորան, խառնում էին նորա միսը տաւարի մսի հետ և ուտում։ Մեռնելու այդ տեսակը համարւում էր ամենաերջանիկը։ Հիւանդութիւնից մեռնելը դժբախտութիւն էր համարւում և այդ մեռածները չէին ուտում, այլ թաղում էին։ Մասագեթացիք չէին ցանում, այլ ապրում էին իրանց խաշններով և ձկներով, որ առատութեամբ տալիս էր Յաքսարտէս (այժմեան Ամու-Դարիա)։ Կաթը նոցա սովորական խմիչքն էր. Նոքա պաշտում էին արեգակը, որի համար ձիեր էին զոհում, որովհետև, ասում էին նոքա, աստուածներից ամենաարագ շարժւողին արժանի է զոհել անասուններից ամենաարագ շարժւողը։

ՏՈՄԻՐԻՍ, ՄԱՍԳԵԹԱՑԻՈՑ ԹԱԳՈՒՀԻՆ։ — Տոմիրիսն, մասգեթացւոց թագաւորի այրին, թագաւորում էր նոցա վերայ։ Կիւրոսը դեսպաններ ուղարկեց նորա մօտ, խնդրելով նորա ձեռքը։ Բայց այդ իշխանուհին հասկացաւ, որ Կիւրոսը աւելի մասգեթացւոց թագի վերայ էր սիրահարուած, քան նոցա թագը կրողի անձնաւորութեան վերայ. ուստի նա մերժեց դեսպաններին՝ իւր հողի վրայ ոտ դնել։ Այն ժամանակ Կիւրոսը առաջ խաղաց մինչ Իաքսարտէս գետը, որի վերայ պատրաստեց կամուրջ անցկացնել։

Կիւրոսը այդ բանով էր զբաղուած, երբ Տոմիրիսի դեսպանը ներկայացաւ նրան և ասաց. «Ահաւասիկ թէ մասգեթացւոց թագուհին ինչ է ասում քեզ. մարերի թագաւոր, դադարեցրու այդ ձեռնարկութիւնը, շատացիր քո ընկերներով և թող որ մերը մեզ մնայ։ Բայց եթէ շատ ես ցանկանում քո ուժերը իմին հետ փորձել, կամուրջ մի շինիր. մենք կը հեռանանք այս գետից մինչ երեք օրուայ ճանապարհ հեռու, որ քեզ ժամանակ տանք մեր երկիրը անցնելու. իսկ եթէ աւելի բարւոք ես համարում մեզ ընդունել քո հողի վերայ, նոյն բանը արա, ինչ մենք»։

Կիւրոսը հարցրեց պարսիկների մեծամեծներին, թէ ինչ են մտածում այս դեսպանութեան մասին։ Նոքա ամենքը միաբերան պատասխանեցին, թէ պէտք է Տոմիրիսին և իւր զօրքերին ընդունել պարսկական հողի վերայ։ Կրեզոսը, որը, ինչպէս տեսանք, Կիւրոսի խորհրդատուներից մէկն էր դառել, չը հաւանեց այդ խորհուրդը։ «Եթէ թշնամուն մենք մեր հողի վերայ ընդունենք և նա մեզ յաղթէ, վախենալու չէ արդեօք, Տէր իմ, որ դուք կորցնէք ձեր թագաւորութիւնը. որովհետև այն ժամանակ էլ ով պիտի մասգեթացւոց դէմն առնէ։ Եթէ դուք լինէք յաղթողը, գետի միւս կողմում, ձեզ ոչ ոք չի կարող խանգարել թափանցել Տոմիրիսի երկիրների խորքերը։ Եւ վերջապէս, ամօթ բան չէր լինի արդեօք Կիւրոսի համար՝ յետ կանգնել մի կնոջից։ Ուրեմն ես այն կարծիքի եմ, որ մեր զօրքերը անցնեն գետը և մտնեն թշնամու երկիրը։ Մասգեթացիք

կեանքի քաղցրութիւնները չը գիտեն. մեծ քանակութեամբ տաւար մորթել կը տանք, համով կերակուրներ կը շինենք և կը թողնենք դաշտի վերայ. նրանց վերայ կ'աւելացնենք գինի և ամեն տեսակ քաղցրեղէններ։ Այդ արած-պրծած, դաշտում մենք կը թողնենք մեր ամենավատ գունդերը. իսկ մենք, զօրքի մնացած մասով, կը հեռանանք դէպի Իաքսարտէս։ Մասգեթացիք, տեսնելով այնքան առատութիւն, կը վազեն այնտեղ, և այն ժամանակ մենք մեզ ցոյց կը տանք»։

ՊԱՐՍԻԿՆԵՐԸ ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ԳԵՏԸ։—Կիւրոսը ընդունեց Կրեզոսի կարծիքը։ Նա իմաց տուեց իւր վճիռը Տոմիրիսին, որը, դաշինքի համաձայն, հեռացաւ, իսկ ինքը զօրքերով անցաւ գետը։

ՏՈՄԻՐԻՍԻ ՈՐԴՒՈՒ ՄԱՀԸ։—Գետից մի օր հեռաւորութեան վերայ Կիւրոսը կանգ առաւ և թողեց դաշտում իւր ամենավատ գունդերը, մեծ խնճոյքի պատրաստութիւններով, և վերադարձաւ դէպի գետը։ Մասգեթացիք յարձակուեցին այդ զօրքերի վերայ, ամենքին սրի անցկացրին և, տեսնելով ամեն բանը պատրաստ ճաշի համար, սեղանի նստեցին, կերան խմեցին մինչ վերջին ծայր՝ յետոյ քնեցին։ Պարսիկները վրայ հասան, նոցանից շատերին կոտորեցին և նոցա զօրավարին, որը Թագուհու որդին էր, գերի վերցրին.

Լսելով իւր որդու դժբաղդութիւնը, Թագուհին դեսպան ուղարկեց Կիւրոսի մօտ։ «Արեան ծարաւի իշխան, ասաց նա, թող որ այդ յաղթութիւնը քեզ չը փքացնէ. դորանով դու պարտական ես այն խմիչքին, որը անմիտ է դարձնում և որը իջնում է մարմնի մէջ միայն նորա համար, որ բարձրացնէ չրթունքների վերայ լիրբ խօսքեր։ Դու յաղթութիւն տարար իմ որդու վերայ ոչ թէ կռուի մէջ, այլ այս գայթակղիչ խմիչքի հրապոյրով։ Լսիր և հետևիր իմ բարի խորհուրդին՝ յետ տուր ինձ իմ որդուն և, կորցնելուց յետ իմ զօրքի երրորդ մասը, ես համաձայն իմ որ դու անպատիժ յետ քաշուես. եթէ ոչ, երդւում եմ արեգակով, ես, մասգեթացւոց տիրուհին, այո ես քեզ արիւնով կը կշտացնեմ, որքան էլ նորան ծարաւի լինես»։

Կիւրոսը այս խօսքերի վերայ ուշք չը դարձրեց։ Ինչ վերաբերում է թագուհու գերւած որդուն, արբեցութիւնից արթնացած՝ նա խնդրեց Կիւրոսից արձակել տալ իրան շղթաներից և, ազատութիւն ստանալուն պէս, իրան սպանեց։

ԿԻՒՐՈՍԻ ՄԱՀԸ (529)։—Կռիւը երկու զօրքերի մէջ ամենակատաղին էր, որ մինչ այնմ տեսնւած էր։ Յաղթութիւնը մնաց մասգեթացւոց կողմը. պարսիկների մեծագոյն մասը կոտորւեց. ինքը Կիւրոսը սպանւեց։ Նա թագաւորեց քսան և ինը տարի։

Տոմիրիսը (մասգեթացւոց թագուհին) որոնել տւեց Կիւրոսի մարմինը մեռածների մէջ և չարչարեց նորա գլուխը։ «Թէպէտ ես կենդանի եմ և յաղթող, ասաց նա, բայց դու ինձ կորցրիր, կորցնելով իմ որդուն. բայց ես քեզ կը կշտացնեմ արիւնով, որպէս ես քեզ սպառնացել էի»։ Եւ հրամայեց թագաւորի գլուխը գցել մի տիկի մէջ, որը լիքն էր մարդկային արիւնով։

Պարսիկներին յաջողւեց յետ խլել Կիւրոսի գլուխը, որը նոքա տեղափոխեցին Փասարգադ, որտեղ նորան հանդիսաւոր կերպով թաղեցին նորա պալատի պարտէզներում։

ԿԻՒՐՈՍԸ ՆՒԱՃՈՂ ԷՐ, ԲԱՅՑ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԻՉ։—Ժողովրդական բանաստեղծութիւնը, որը այլակերպել էր նորա կեանքը և նորա իսկական գործքերը փոխարինել էր առասպելական պատմութիւններով, ստեղծեց Կիւրոսից կատարելատիպ արևելեան իշխանի։ Աւանդութեան մէջ նա դառաւ ամենաքաջը, ամենամեղմը, անգամ ամենագեղեցիկը մարդկանց մէջ։ Բայց իրապէս երևի նա ունէր մի զօրավարի բոլոր յատկութիւնները՝ գործունէութիւն, եռանդ, խորամանկութիւն և երկդիմութիւն, որը այնքան անհրաժեշտ է համարւում՝ Ասիայում նւաճումներ յաջողեցնելու համար։

Բայց նա չունեցաւ կառավարչական յատկութիւններ և ոչինչ չարեց՝ իւր պետութեան հաստատութեան համար։ Միմիայն Լիւդիայում նա նշանակեց մի պարսկական կառավարիչ, իսկ բոլոր միւս տեղերում նա գոհացաւ միմիայն հպատակութիւն ընդունելու յայտարարութիւնով, թողնելով կառավարչութիւնը բնիկների ձեռքում։ Նա կարողացաւ միացնել հին աշխարհի բոլոր երկիրները, ի բաց առած Եգիպտոսը, իւր ազգի իշխանութեան ներքոյ. բայց նւաճւած երկիրների կազմակերպութիւնը թողեց իւր յետագաներին։

VII

ԿԱՄԲԻՒԶԸ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ

Կամբիւզ II եւ Շմերդիս։—Յոյն Ֆանէս։—Ինչպէս էին անցնում Արաբիայի անապատը։—Երդւելու ծէսը արաբների մօտ։—Արաբները օգնում են պարսիկներին։—Ճակատ եգիպտացոց եւ պարսիկների մէջ։—Մեմֆիսի առումը։—Կամբիւզի վարւողութիւնը եգիպտացոց թագաւորի եւ մեծերի հետ։—Պսամետիք II-ի մահը։

ԿԱՄԲԻՒԶ II (529—522) ԵՒ ՇՄԵՐԴԻՍ։—Կիւրոսը իւր թագաւորութիւնը կտակեց իւր անդրանիկ որդի Կամբիւզին, իսկ մի քանի նահանգների կառավարչապետութիւնը՝ իւր երկրորդ որդի Շմերդիսին։ Կանխօրէն որոշելով պայազատութիւնը, նորա յոյսն էր՝ ժառանգների մէջ վէճերի տեղիք չը թողնել, որպիսիք արեւելքում սովորապէս պատահում են իշխանի մահից յետոյ։ Նորա այդ յոյսը չ՚արդարացաւ. հազիւ գահ բարձրացած, Կամբիւզը իւր եղբօր սպանել տուեց։ Այդ ոճիրը կատարեց այնքան զգուշութեամբ և գաղտնի, որ նա աննկատելի անցաւ ժողովրդի համար. ժողովուրդը և պալատական ծառայողները կարծեցին, թէ Շմերդիսը դռնփակ պահուած է Մարաստանի հեռաւոր պալատներից մէկում և յոյս ունէին նորա վերադարձին։

Կամբիւզի ներքոյ նուաճումները շարունակեցին. պարսիկները դեռ ևս ոգեւորուած էին պատերազմական և աւար-

առութեան այն ծարաւով, որ Կիւրոսը նոցա մէջ գրգել էր։ Չորս մեծ տէրութիւններից՝ Մարաստան, Լիւդիա, Բաբելոնիա և Եգիպտոս, որոնք երեսուն տարի առաջ բաժանել էին ողջ Արեւելքը, միմիայն մէկն էր կանգուն մնացել՝ Եգիպտոսը։ Կամբիւզը վճռեց յարձակուել նորա վերայ։ Պատրւակները պակաս չէին։ Եգիպտացիք մի ժամանակ լիւդիացւոց և բաբելոնացւոց դաշնակիցներն էին. բացի այդ, նոքա հարուստ էին։

ՅՈՅՆ ՖԱՆԷՍ։—Պարսիկների թագաւորին այդ արշաւանքում առաջնորդում էր մի յոյն՝ Ֆանէս անունով, որը դորանով դաւաճանութիւն էր անում։ Նա վարձկան սպայ էր եգիպտացւոց Ամասիս փարաւոնի ծառայութեան մէջ։ Դժգոհ այդ իշխանից, նա ծովով փախաւ Եգիպտոսից Կամբիւզի մօտ, որը պատրաստւում էր ասպատակել Եգիպտոսը։ Արշաւանքի դժուարութիւնը նորա մէջն էր, որ զօրքը պիտի անցնէր Արաբիայի անապատները, որտեղ ջուր չը կայ։ Ֆանէսը խորհուրդ տուեց Կամբիւզին՝ դիմել արաբների թագաւորին, որը միջոցներ կը տար ապահով կերպով անցնել Արաբիայի անապատները։

ԻՆՉՊԷՍ ԷԻՆ ԱՆՑՆՈՒՄ ԱՐԱԲԻԱՅԻ ԱՆԱՊԱՏԸ։—Այսօր, շարունակում է պատմել Հերոդոտը (5-դ դարում Քր. առաջ), ահա թէ ինչպէս են այդ դժուարութեան դէմն առնում։ Տարին երկու անգամ, Յունաստանի և Փիւնիկիայի զանազան տեղերից, բերում են Եգիպտոս մեծ քանակութեամբ կարասներ լիքը գինով, և, չը նայած դորան, այդ կարասներից հազիւ մի հատ գտնուի Եգիպտոսում։ Թէ ուր են գնում նոքա—ահա ասեմ ձեզ։ Իւրաքանչիւր քաղաքում քաղաքապետը պարտաւորուած է հաւաքել բոլոր այդ կարասները և ուղարկել նոցա Մեմֆիս. այդտեղից նոցա ուղարկում են անապատը արդէն ջրով լիքը։

Այդ կերպը մտցրին պարսիկները, որոնք Եգիպտոսի տէրը դարձան։ Բայց քանի որ Կամբիւզի արշաւանքի ժամանակ այդ տեղում ջուր չէր գտնւում, նա, Ֆանէսի խորհրդով, դեսպան-

ների միջոցով խնդրեց արաբների թագաւորին ապահով ճանապարհ տալ անցնելու։ Այդ խնդիրքը կատարուեց միմեանց հաւատարմութեան երդում տալուց յետոյ։

ԵՐԴՒՈՒԼՈՒ ԾԷՍԸ ԱՐԱԲՆԵՐԻ ՄՕՏ։—Չը կայ մի ազգ, որը աւելի մեծ երկիւղածութեամբ պահէր երդումը, քան արաբները։ Ահա թէ, Հերոդոտի ասելով, ինչ ծէսեր էին կատարում նոքա այդ առիթով։ Երբ նոքա երդւում են, հրաւիրում են մի երրորդ անձ, մի միջնորդ։ Այդ միջնորդը, կանգնած երկու երդւողների միջև, բռնած ունի մի սրածայր և կտրող քար, որով նա ցատում է մէկի և միւսի ձեռքի ափը, բութ մատերի մօտ։ Յետոյ նա վերցնում է իւրաքանչիւրի շորից մի մի փոքրիկ կտոր, որը թաթախում է նոցա արեան մէջ և նորանով չփում եօթը քար, որոնք դրած են նոցա մէջ, կոչելով Բաքոս և Ուրանոս աստուածների անունները։ Երբ այդ ծէսը վերջանում է, այն մարդը, որ երդւում է, ներկայացնում է միւս կողմից իւր բարեկամներին որպէս երաշխաւորներ. սոքա էլ իրանց կողմից արդարութիւն են համարում յարգել երդման հաւատը։

ԱՐԱԲՆԵՐԸ ՕԳՆՈՒՄ ԵՆ ՊԱՐՍԻԿՆԵՐԻՆ ԱՆՑՆԵԼ ԱՆԱՊԱՏԸ։—Երբ Արաբիայի թագաւորը, վերը նկարագրած ձևով, դաշն կապեց Կամբիւզի դեսպանների հետ, հրամայեց ջրի տիկերը լցնել և նոցա բարձել տուեց բոլոր ուղտերի վերայ, որ կային իւր թագաւորութեան մէջ։ Ուղտերին տարան անապատի կողմերը, և ինքը թագաւորը անձամբ գնաց այնտեղ Կամբիւզի զօրքին դիմաւորելու համար։

Այդ պատրաստութիւնների միջոցին Ահմէսը մեռաւ և նորա որդի Պսամետիքը յաջորդեց նորան։ Նա մեծ զօրք ժողովեց և եկաւ բանակ դրեց Նեղոսի Պելուզեան բերանի մօտ, որտեղ նա սպասեց թշնամուն։

ՃԱԿԱՏ ԵԳԻՊՏԱՑԻՈՑ ԵՒ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ՄԷՋ։—Եգիպտացիք սկսեցին յարձակումը։ Կռիւը յամառ էր և արիւնահեղ. երկու կողմից էլ շատ մարդ կոտորուեց. վերջապէս եգիպտացիք յետ քաշուեցին։

«Ես, ասում է Հերոդոտը, տեսայ կռուի դաշտում մի շատ զարմանալի բան։ Ոսկորները նոցա, որոնք այդ օրում կոտորուեցին, դեռ ևս ցրուած մնում են, բայց իրարից զատ. այնպէս որ մի կողմում դուք տեսնում էք պարսիկների ոսկորները, միւս կողմից՝ եգիպտացւոց։ Պարսիկների գանգերը այնքան քնքուշ են, որ կարելի է լինում նոցա կոտրել խճաքարով. եգիպտացւոց գանգերը, ընդհակառակը, այնքան ամուր են, որ հազիւ կարելի է լինում նոցա կոտրել քարերի հարուածներով։ Դորա պատճառը ինձ բացատրեցին։ Եգիպտացիք, դեռ ևս իրանց ամենափոքրիկ հասակում, սկսում են գլուխը ածիլել. այդպիսով գանգը արեգակի տակ կոշտանում է, մազերը աւելի յորդ են բուսնում։ Այդ է պատճառը, որ Եգիպտոսում աւելի քիչ, քան այլ երկիրներում, պատահում են գոչ մարդիկ։ Պարսիկները, ընդհակառակը, ունին թոյլ գանգ, որովհետև, իրանց ամենաքնքուշ հասակից սկսած, նոքա իրանց գլուխը ծածկում են արախչիով։

ՄԵՄՖԻՍԻ ԱՌՈՒՄԸ (523 Թ.)։—Կռիւը կորցնելուց յետ, եգիպտացիք անկարգ կերպով փախան և մտան Մեմֆիս, որտեղ նոքա փակուեցին։ Կամբիւզը նոցա մօտ պատգամաւոր ուղարկեց, որը գետն ի վեր գնաց մի նաւի միջոցով։ Երբ եգիպտացիք տեսան նաւը Մեմֆիս մտնելիս, նոքա դուրս եկան միջնաբերդից, կոտրատեցին նաւը և կոտորեցին ամենքին, որոնք նաւի վերայ էին։ Բայց պարսիկները մտեցան քաղաքին, պաշարեցին նորան և հարկադրեցին եգիպտացիներին անձնատուր լինել։

ԵԳԻՊՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՒ ՄԵԾԵՐԻ ՀԵՏ ԱՆՊԱՏԻՒ ՎԱՐՄՈՒՆՔԸ։—Տասը օր անցած, Պսամետիք II ը, որը թա-

գաւորել էր միայն վեց ամիս, տարւեց քաղաքի առջև մի քանի ուրիշ եգիպտացոց հետ միասին։ Նոցա փորձելու համար, Կամբիւզը Պսամետիքի աղջկան հագցնել տուեց ստրկուհու շոր և ուղարկեց նորան, կուժը ձեռին, ջուր բերելու. նրան ուղեկիցներ նշանակեցին մի քանի այլ աղջիկներ, ընտրած եգիպտական ամենամեծ ընտանիքներից և հագցրած նմանապէս ստրկուհիների շորերով։

Այս ջահիլ աղջիկները, իրանց հայրերի մօտով անցնելիս, արտասուք թափեցին և արձակեցին աղիողորմ ձայներ։ Սոքա էլ պատասխանեցին գոռ ու գոչումով. բայց Պսամետիքը միայն աչքերը իջեցրեց։

Դորանից յետ Կամբիւզը անցկացնել տուեց Պսամետիքի մօտով նորա որդուն 200 այլ՝ բայց նրան հասակակից՝ եգիպտացոց հետ, ամենքն էլ թոկը վզին և սանձը բերանին։ Նոցա տանում էին գլխատման՝ վրէժխնդիր լինելու այն մարդկանց համար, որոնք սպանեցին եգիպտացիներից Մեմֆիսում, երբ Կամբիւզի պատգամաւորը նաւով այդ քաղաքը մտաւ։ Պսամետիքը ճանաչեց իւր որդուն. բայց, մինչդեռ թագաւորին շրջապատողները լալիս էին և ողբում, նա պահպանեց նոյն սառնասրտութիւնը, ինչպէս որ իւր աղջկան տեսնելու ժամանակ։

Երբ երիտասարդները անցան գնացին, Պսամետիքը մի ծերունի տեսաւ, որը սովորաբար իւր մօտն էր սեղանինստում։ Այդ մարդը, զրկուած իւր բոլոր գոյքից, այժմ պահպանում էր իրան միմիայն ողորմութեամբ. Նա անցնում էր զօրքի մի շարքից միւս շարքը, աղաչելով ամենքին ողորմածութիւն և կարեկցութիւն։ Այս տեսարանի դիմաց Պսամետիքը լացեց։ Նորա վերայ հսկող պահապանները այդ բոլորի մասին տեղեկացրին Կամբիւզին։ Զարմացած նորա այդ վարմունքի վերայ, նա հարցնել տուեց պատճառի մասին։ «Որդի Կիւրոսի, պատասխանեց Պսամետիքը, իմ ընտանիքի դժբաղդութիւնները շատ են մեծ, որպէս զի կարելի լինի լաց լինել. բայց ես կարող եմ լաց լինել, տեսնելով ողբալի վիճակը մի բարեկամի, որը, մեծ

կարողութիւն ունենալուց յետ՝ թշուառութեան մէջ է ընկնում»։

Լսելով այդ պատասխանը, Կրեզոսը (որը դեռ ևս կենդանի էր) և բոլոր պարսիկները, որոնք այդ բանին ներկայ էին, արտասուեցին. ինքը Կամբիւզը այնքան կարեկից գտնուեց, որ հրամայեց ազատել Պսամետիքի որդուն։ Բայց արդէն ուշ էր՝ նա առաջինն էր գլխատուած։

ՊՍԱՄԵՏԻՔԻ ՄԱՀԸ։—Պսամետիքը մնաց Կամբիւզի մօտ, որից նա չը տեսաւ ոչ մի վատ վարւողութիւն։ Եգիպտոսի կառավարչութիւնը կը յանձնէր նրան, եթէ միայն չը գտնէին, որ նա գաղտնի կերպով դրդում էր եգիպտացիներին դէպի ապստամբութիւն։ Կամբիւզը դատապարտեց նորան՝ խմել ցուլի արիւն [1]), որից նա իսկոյն մեռաւ։

---

[1]) Ցուլի արիւնը թոյն չէ, եթէ նա փչացած չէ. ամեն ուրիշ արիւն, որ նեխուած է, կ'ունենար նոյն թունաւոր յատկութիւնները։ Աթենքում դա այն թոյներից էր, որոնք գործ էին ածում մահուան դատապարտուածների համար։

VIII

ԿԱՄԲԻԶԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ ԵԹՈՎՊԱՅԻ ՎԵՐԱՅ

Կամբիւզի դիտաւորութիւնները։— Եթովպա ուղարկուած դեսպանութիւնը։— Արեգակնային ճաշասեղանը։— Եթովպայի թագաւորի պատասխանը։— Կամբիւզի արշաւանքը Եթովպա։ Արշաւանք Ամմոնի դէմ։

ԿԱՄԲԻԶԻ ԴԻՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ։— Եգիպտոսը նուաճելուց յետ, Կամբիւզը վճռեց պատերազմել Աֆրիկայի երեք գլխաւոր ազգերի՝ կարթագենացւոց, ամմոնացւոց և եթովպացւոց դէմ։ Եթէ այդ երեք ազգերը սանձէին, նա կը լինէր տէր Աֆրիկայի ամենալաւ մասի, որպէս նորա հայրը տէր դառաւ Ասիայի լաւագոյն մասի։ Դորա մասին նա խորհուրդ տեսաւ իւր գլխաւոր խորհրդակիցների հետ և մտադրուեց իւր նաւատորմիղը ուղղել կարթագենացւոց դէմ, իւր զօրքի մի գունդը՝ ամմոնացւոց դէմ, իսկ Եթովպա առ այժմ միայն լրտեսներ ուղարկել երկրի դրութիւնը ճանաչելու համար։ Կարթագենացւոց դէմ ծովային արշաւանքը չիրագործուեց շնորհիւ այն հանգամանքի, որ փիւնիկեցիք մերժեցին այդ գործին աջակցել, չուզելով վնասել իրանց ցեղակից և կրօնակից մի գաղթականութեան (Կարթագէնը հիմնել էին տիրացիք)։

ԵԹՈՎՊԱ ՈՒՂԱՐԿՈՒԱԾ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ։ — Եթովպա լրտեսներ ուղարկելու համար, Կամբիւզը իւր մօտ կանչել տուեց Էլեֆանտին քաղաքի բնակիչներից, որոնք գիտէին եթովպա-

կան լեզուն։ Նա յանձնեց նորանց մի ծիրանագոյն շոր, մի ոսկեայ մանեակ, ապարանջաններ, մի ալաբաստրեայ անօթ անուշ իւղերով լցուած, և մի տակառ արմաւենու գինի։ Այս ընծաները տանելու պատրուակով, նոքա պիտի տեղեկանային արեգակնային սեղանի գոյութեան մասին և զննէին երկիրը։

ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ՃԱՇԱՍԵՂԱՆԸ։— Ահաւասիկ, ասում է Հերոդոտը, ինչ բան է արեգակնային ճաշասեղանը։ Եթովպայի մայրաքաղաքի առջև մի մարգագետին կայ, որի վերայ փռուած են ամեն տեսակ չորքոտանիների եփած մսի կտորներ, որ քաղաքի պաշտօնեաները գիշերները բերում են այնտեղ։ Լուսածագին ամեն մարդ կարող է գալ և այնտեղ ճաշել։ Տեղացիք կարծիք են կազմել, թէ հողը ինքն է բուսցնում այդ բոլոր մսերը։

ԵԹՈՎՊԱՅԻ ԹԱԳԱՒՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ։—Հերոդոտին պատմեցին, թէ եթովպացիք ամենախոշոր և ամենալաւ կազմուած մարդիկն են ամբողջ աշխարհում և թէ նոքա արժանացնում են թագ կրելու միմիայն նորան, որը ամենամեծն է և որի ոյժը համեմատ է իւր բարձր բոյին։ Այդ թագաւորը շուտով հասկացաւ, որ Կամբիւզի դեսպանները լրտեսներ են, և ասաց նրանց. «Ինձ հետ բարեկամութիւն անելու համար չէ, որ պարսիկների թագաւորը ձեզ ուղարկել է ինձ մօտ. դուք եկել էք իմ տէրութեան ոյժը չափելու։ Եթէ ձեր թագաւորը արդարամիտ մարդ լինէր, նա չէր ցանկայ ստրկութեան մէջ գցել մի երկիր, որից նա երբէք վիրաւորանք չի կրած։ Տարէք նորա մօտ իմ կողմից այս աղեղը և ասացէք նրան՝ «Եթովպայի թագաւորը խորհուրդ է տալիս պարսիկների թագաւորին՝ ժողովել մի աւելի բազմաթիւ զօրք, քան նա այժմ ունի, և գալ իմ դէմ պատերազմելու միմիայն այն ժամանակ, երբ պարսիկները կարողանան այս մեծութեան մի աղեղ լարել նոյնքան հեշտութեամբ, որքան ես։ Իսկ մինչ այդ ժամանակ, թող Կամբիւզը փառք տայ աստուածներին, որ Եթովպայի թագաւորին նուաճումներ անելու չեն տրամադրել»։

Այսպէս խօսելուց յետ, պատմում էր աւանդութիւնը, նա

չետ լարեց աղեղը և տւեց դեսպաններին։ Յետոյ նա իւր ձեռքն առաւ ծիրանագոյն հանդերձը և հարցրեց, թէ ինչ բան է ծիրանին և ինչպէս է շինւում այդ գոյնը։ Երբ դեսպանները նրան մեկնեցին այդ գոյնը շինելու եղանակը, «այս մարդիկը, ասաց նա, խաբեբաներ են, որպէս նոցա շորերը»։ Յետոյ նա հարց ու փորձ արաւ ապարանջանների և մանեակի մասին. դեսպանները նրան պատասխանեցին, թէ դոքա զարդեր են։ Նա ծիծաղեց և, նոցա ընդունելով շղթաների տեղ, ասաց, թէ եթովպացիք դոցանից աւելի զօրեղներն ունին։ Յետոյ խօսեց անուշ իւղերի մասին։ Նոցա պատրաստելու մեկնութիւնը լսելուց յետոյ, նա նոյն տեսակ պատասխան տւեց, ինչ նա ասել էր ծիրանագոյն հագուստի մասին։ Բայց երբ խօսքը եկաւ գինու վերայ, նա շատ գոհ մնաց այդ խմիչքից։

Նա հարցրեց դեսպաններին նաև, թէ ինչով է կերակրւում նոցա թագաւորը և թէ պարսիկների մօտ որն է կեանքի ամենաերկար տևողութիւնը։ Դեսպանները պատասխանեցին, թէ նա ապրում է հացով, և բացատրեցին նրան ցորենի ինչ լինելը։ Նոքա ասացին նաև, թէ պարսիկների մօտ կեանքի ամենամեծ տևողութիւնը 80 տարին է։ Այդ խօսքերին եթովպացին պատասխանեց, թէ նա չի զարմանում, որ մարդիկ, որոնք կերակրւում են աղբով, այդքան քիչ են ապրում և թէ նա համոզւած է, որ նոքա աւելի էլ քիչ կ'ապրէին, եթէ նոքա իրանց ուժերը չը կազդուրէին ահա այս խմիչքով (նա ուզում էր ասել՝ գինով), և որ այս բանում նոքա գերազանցում են եթովպացիներին։

Դեսպանները, իրանց հերթով, հարց ու փորձ արին թագաւորին կեանքի երկարութեան մասին եթովպացւոց մօտ և նոցա կենցաղավարութեան մասին։ Նա պատասխանեց, թէ մեծ մասամբ հասնում են 120 տարեկանին, մի քանիսը՝ դորանից էլ աւելի, որ նոքա ապրում են եփած մսով և որ կաթը նոցա խմիչքն է։ Լրտեսները զարմացք ցոյց տւին եթովպացւոց երկարակեցութեան մասին։ Թագաւորը նոցա տարաւ մի շատրւանի մօտ, որտեղից նոքա, որոնք լողանում են, դուրս են

գալիս անուշաբոյր, որպէս մանուշակի հոտից։ Դեսպանները, Եգիպտոս վերադառնալով, պատմեցին, թէ այդ ջուրը այնքան թեթև է, որ ոչ մի բան չէր կարող նորա երեսին կանգնել, և ոչ իսկ փայտը։

ԿԱՄԲԻՒԶԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ ԵԹՈՎՊԱՅԻ ՎԵՐԱՅ։—Երբ Կամբիւզը Թեբէ հասաւ, նա ընտրեց մօտ 50.000 մարդ, որոնց նահրամայեց ստրկութեան մէջ բերել ամմոնացիներին և այրել նոցա տաճարը։

Այն զօրքերը, որոնք ուղևորւեցին Եթովպա, դեռ ևս չէին անցել ճանապարհի հինգերորդ մասը, և արդէն ուտելեղէնը պակասեց։ Սկսեցին ուտել գրաստի անասունների միս, բայց Կամբիւզը շարունակեց առաջ գնալ։ Սկսեցին խոտեղէն ուտել, որքան որ գիւղերում կարելի էր այդ գտնել։ Երբ հասան աւազոտ երկիրները, զինւորները իրանց ստիպւած տեսան զարհուրելի միջոցի դիմել. նոքա բաժանւեցին խմբերի, իւրաքանչիւրում տասը մարդ, և ուտում էին նորան, որին վիճակահանութիւնը նշանակում էր։ Միայն այդ ժամանակ Կամբիւզը սկսեց յետ մղել, բայց Թեբէ վերադարձած՝ զօրքի մի մասը արդէն կորցրել էր նա։

ԱՐՇԱՒԱՆՔ ԱՄՄՈՆԻ ԴԷՄ։ – Ամմոնացւոց դէմ ուղարկած զօրքերը հասան առաջին օազիսին, որը Թեբէից եօթն օրւայ ճանապարհի վերայ էր. բայց թէ ինչ պատահեց յետոյ նոցա հետ՝ ոչոք չիմացաւ։ Ամմոնացիք պատմեցին, թէ երբ այդ զօրքը ճաշի էր նստած, կատաղի քամի բարձրացաւ հարաւից, որը նրան թաղեց աւազի լեռների մէջ։ Այդ մեկնութիւնը շատ հաւանական է, որովհետև դեռ ևս այսօր շատ ճամբորդներ և քարւաններ այդ եղանակով կորչում են։

IX

ԿԱՄԲԻԻԶԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Կամբիւզը վիրաւորում է Ապիս եզան։—Կամբիւզը սպանում է իւր քրոջ։—Կամբիւզը սպանում է Պրեքսասպի որդուն։—Դէպք Կրեզոսի հետ։—Մոգ Շմերդիսի ապստամբութիւնը։—Կամբիւզի մահը։

ԿԱՄԲԻԻԶԸ ՎԻՐԱՒՈՐՈՒՄ Է ԱՊԻՍ ԵԶԱՆ։—Իւր վերջին արշաւանքների անաջող ելքը շատ կատաղացրեց Կամբիւզին։ Նորա բացակայութեան ժամանակ Մեմփիսում մեռել էր Ապիս եզը։ Եգիպտացիք, կանոնով որոշուած օրեր սուգ պահելուց յետ, մի նոր Ապիսի պէտք է գահ բարձրացնէին։ Սովորութեան համեմատ, հէնց որ քուրմերը գտան մի այդպիսի նոր եզ, բոլոր ժողովուրդը հագաւ իւր ամենաթանկագին շորերը և ուրախութեան մէջ էր։ Հէնց այդպիսի մի օր էր, երբ Կամբիւզը Մեմփիս մտաւ։ Նա կարծեց, թէ ժողովուրդը ուրախութիւններ է անում իւր անաջողութիւնների պատճառով։ Նա իւր մօտ կանչել տուեց քաղաքի պաշտօնեաներին և քուրմերին, որոնց, առանց քննութեան, սպանել տուեց։ Յետոյ բերել տուեց իւր մօտ Ապիս եզան և, սրի մի հարուածով, ազդրից ներքև մի վէրք տուեց, որից նա քանի մի օր յետոյ մեռաւ։ Կամբիւզը հրամայեց նոյնպէս սպանել այն ամենքին, որոնք Ապիսին տօնելիս կը լինեն։ Այդ Ապիսի մումիան վերջերքումս գտնուեց Սերապիսի տաճարում (այժմեայ Ալեքսանդրիա քաղաքում) մի արձանագրութիւնով, թէ նա մեռաւ վէրքը ստանալուց մի քանի օր յետոյ։

ԿԱՄԲԻԻԶԸ ՍՊԱՆՈՒՄ Է ԻՒՐ ՔՐՈՋ։—Սկզբում պատմեց, թէ ինչպէս Կամբիւզը սպանեց իւր եղբօրը։ Բայց նա սպանեց նաև իւր քրոջ, որի հետ նա ամուսնացել էր հակառակ օրէնքի, որը արգելում էր ամուսնութիւնը հարազատ քոյր և եղբօր մէջ։

Մի օր, երբ այդ իշխանուհին ներկայ էր մի առիւծի ձագի կռւին, որին Կամբիւզը արձակել էր մի փոքրիկ շան վերայ, վերջինիս յաղթուելու ժամանակ՝ այդ շան եղբայրը թոկը կտրեց՝ նորան օգնութեան հասնելու համար, և, երկուքը միասին, յաղթեցին առիւծի ձագին։ Այս կռիւը, որին շատ ախորժում էր Կամբիւզը, արտասուք թափել տուեց նորա քրոջը։ Թագաւորը հարցրեց պատճառի մասին։ «Ես չը կարողացայ, ասաց քոյրը, պահել արտասուքս, տեսնելով փոքրիկ շանը իւր եղբօր օգնութեան հասնելիս, որովհետև այդ բանը ինձ յիշեցրեց Շմերդիսի վիճակը, որի մահուան վրէժը գիտեմ որ ոչ ոք չը պիտի լուծէ»։ Կամբիւզը իսկոյն յարձակւեց իւր քրոջ վերայ և նորան այնքան զարհուրելի կերպով չարչարեց, որ նա մեռաւ։

ԿԱՄԲԻԻԶԸ ՍՊԱՆՈՒՄ Է ՊՐԵՔՍԱՍՊԻ ՈՐԴՈՒՆ։—Կամբիւզը շատ էր յարգում Պրեքսասպին, որի որդին նորա մօտ տակառապետի պաշտօնն էր վարում։ Մի անգամ Կամբիւզը նորան հարցրեց. «Ինչ են մտածում պարսիկները իմ մասին։—Տէր իմ, նոքա ձեզ շատ գովում են. միայն թէ նոքա կարծում են, թէ դուք շատ էք բարեկամ գինու հետ։—Այո, վրաբերեց Կամբիւզը, նոքա ասում են, թէ ես շատ եմ սիրում գինին, այսինքն թէ գինին իմ խելքը կորցնել է տալիս և ինձ կատաղեցնում է։ Ուրեմն այն գովասանքները, որ նոքա տալիս էին ինձ առաջ, անկեղծ չէին։

Եւ իրօք, մի քանի օր առաջ Կամբիւզը հարցրել էր

Կրեզոսին և Պարսկաստանի մեծերին, թէ արդեօք ինքը հաւասար է իւր հօրը թէ ոչ: Պարսիկները պատասխանեցին, որ նա, Կամբիւզը, իւր հօրից աւելի էլ բարձր է, քանի որ նա տէր է այն բոլոր երկիրների, որ ունէր նորա հայրը և դեռ դորա վերայ նա աւելցրել է Եգիպտոսը և իշխանութիւնը ծովերի վերայ: Բայց Կրեզոսը, նրբացնելով այդ շողոքորթութիւնը, աւելացրեց՝ «Ոչ, դուք նման չէք ձեր հօր, որովհետև դուք դեռ չունիք այնպիսի մի տղայ, ինչպէս նա ունէր»:

Այդ խօսքերը մտաբերելով, Կամբիւզը ասաց Պրեքսասպին. «փորձենք և տեսնենք, թէ որքան արդար են մտածում պարսիկները: Քո տղան ահա այդ նախասենեակում կանգնած է. թէ ես նորա սրտին դպցրի այս նետը, ուրեմն պարսիկները սխալւում են: Այդ ասելով, նա արձակեց նետը. երիտասարդը վայր ընկաւ: Կամբիւզը բաց անել տուեց նորա շորերը, տեսնելու համար, թէ արդեօք որտեղին է դիպել նետը. և նա համոզւեց, որ նա ուղիղ սրտին է դիպել: Ուրախութեամբ լցւած Կամբիւզը դիմեց սպանւածի հօրը՝ «Դու տեսնում ես, որ պարսիկներն են կորցրել իրանց խելքը: Տեսած կա՞ս, որ մէկը նշանին աւելի լաւ դիպցնի»: Պրեքսասպը, տեսնելով որ կատաղածի հետ գործ ունի, իւր սեպհական գլխի համար վախեցաւ և պատասխանեց՝ «Ես չեմ կարծում, որ աստւածներն անգամ աւելի ճիշտ խփել գիտենան»: Մի այլ անգամ նա կենդանի թաղել տուեց մինչ վիզները տասներկու պարսիկների ամենաբարձր ընտանիքներից.

ԴԷՊՔ ԿՐԵԶՈՍԻ ՀԵՏ:—Կրեզոսը համարձակւեց Կամբիւզին սանձահարել: Դու էլ, գոռաց Կամբիւզը նորա վերայ, յաւակնութիւն ունիս ինձ խորհուրդներ տալու, դու, որ այնքան լաւ կառավարեցիր քո երկիրները, դու, որ այնպիսի լաւ խորհուրդներ տւիր իմ հօրը, դրդելով նորան Արաքսէսը անցնել՝ մասագէթացւոց դէմ պատերազմելու համար: Էհէ, դուն անպատիժ չես մնայ»: Եւ նա վերցրեց իւր նետը նորա վերայ արձակելու համար: Կրեզոսը կարողացաւ նորա կատաղու-

թիւնից փախչել: Կամբիւզը հրամայեց իւր պահապաններին սպանել նորան: Բայց որովհետև նոքա ճանաչում էին թագաւորի բնաւորութեան անհաստատութիւնը, Կրեզոսին թագցրին: Եւ իրօք, Կամբիւզը շուտով ափսոսեց նորան: Ծառաները յայտնեցին, թէ նա դեռ ևս կենդանի է. դորա վերայ Կամբիւզը շատ ուրախացաւ, բայց, անհնազանդութեան համար, ծառաներին սպանել տուեց:

ՄՈԳ ՇՄԵՐԴԻՍԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ:—Մինչդեռ Կամբիւզը Եգիպտոսում իւր կատաղութեանն էր անձնատուր եղած, երկու մոգ օգուտ քաղեցին այն ատելութիւնից, որ նա դրդել էր ժողովուրդի մէջ, սորան ապստամբեցնելու համար: Նոցանից մէկը Կամբիւզից նշանակւած էր իւր կալքերի կառավարիչ. դա էր ապստամբը: Նրան յայտնի էր Շմերդիսի մահը, բայց գիտէր նաև, որ նորա սպանումը կատարւել էր շատ գաղտնի կերպով և որ ժողովուրդը նորան դեռ ևս կենդանի էր կարծում: Արդ, այդ մոգը մի եղբայր ունէր, որը չափազանց նմանում էր Կամբիւզի սպանւած եղբօր՝ Շմերդիսին. դորա անունն էր Գաումատա: Իւր եղբօր օգնութեամբ, նա իրան ցոյց տւեց, որպէս Կամբիւզի եղբայր և Կիւրոսի որդի Շմերդիս և, որպէս այդպիսին, իրան թագաւոր հռչակեց, ուղարկելով ամեն տեղ, մանաւանդ Եգիպտոս, պատգամաւորներ՝ զօրքերին արգելելու, որ Կամբիւզին չը հնազանդւեն:

ԿԱՄԲԻՒԶԻ ՄԱՀԸ:—Լսելով այդ լուրը, Կամբիւզը ամենայն արագութեամբ ճանապարհ ընկաւ դէպի Շոշ: Բայց դեռ ևս Ասորիքում, Եքբատան քաղաքում (ոչ Մարաստանի Եքբատանը) նա մեռաւ, որպէս պատմում է Հերոդոտը՝ ձին հեծնելու միջոցին, մի վէրքից, որ նա ստա-

ցաւ իւր մերկացած սրից: Եգիպտացիք պատմում էին, որ սուրը նորան վիրաւորել էր ուղիղ այն տեղում, որտեղ վիրաւորեց Կամբիւզը Ապիս եզան:

Մեռնելիս, Կամբիւզը յայտնեց ճշմարտութիւնը, թէ Շմերդիսը սպանուած էր իւր հրամանով: Կամբիւզը թագաւորեց մօտ $7^1/_2$ տարի, մինչ 522 թ. Քր. առաջ:

X

ԿԵՂԾ ՇՄԵՐԴԻՍ

Պարսիկները չեն հաւատում Շմերդիսի մահուան:—Մոգի բարերար կառավարութիւնը:—Մոգը ճանաչւում է:—Եօթը պարսկական մեծամեծների դաւադրութիւնը:—Մոգերի սպանումը:—Բեհիստունի արձանագրութիւնը:

ՊԱՐՍԻԿՆԵՐԸ ՉԵՆ ՀԱՒԱՏՈՒՄ ՇՄԵՐԴԻՍԻ ՄԱՀՒԱՆ: — Ոչ մի պարսիկ չուզեց հաւատ ընծայել մեռնող Կամբիւզի խօսքերին: Նոքա կարծեցին, թէ նա այդպէս խօսեց միմիայն ատելութիւնից դէպի եղբայրը, մանաւանդ որ Պրէքսասպը հերքում էր այդ իրողութիւնը:

ՄՈԳԻ ԲԱՐԵՐԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ: —Շմերդիսի անուան տակ, մոգը խաղաղութեամբ կառավարեց երկիրը չըրթացս վեց ամսի: Որպէս զի նուաճուած ազգերը իւր կողմը գրաւէ, նա երեք տարով նոցա ազատեց բոլոր հարկերից և զինուորական ծառայութիւնից:

ՄՈԳԸ ՃԱՆԱՉՒՈՒՄ Է: —Կէս տարուց յետ, սակայն, մոգը սկսեց արդէք ճանաչւել:

Սովորութիւն էր, որ նոր թագաւորը, թագի հետ միասին, վերցնում էր նաև իւր նախորդի ամբողջ հարեմը (կանանոցը): Բայց կեղծ Շմերդիսը, գահը բարձրանալուն պէս, բաժանեց հարեմի բոլոր կանանց առանձին-առանձին սենեակներում և նոցա այնպէս փակ էր պահում, որ նոքա իրար հետ ոչ մի հաղորդութիւն չը պիտի կարողանային ունենալ:

Այդ հանգամանքը արդէն կասկածներ զարթուցեց պարսիկների մի քանի մեծամեծների մէջ, որոնցից մէկի, Օթանէսի, դուստր Ֆեդիմէն Կամբիւզի կինն էր։ Օթանէսը մտաբերեց, որ Գաումատան, որը շատ նման էր Շմերդիսին, մի ինչ որ յանցանքի համար զրկւել էր ականջներից։ Գաղտնի կերպով նա մարդ ուղարկեց իւր դուստր Ֆեդիմէի մօտ, որին ասել տւեց. «Աղջիկս, պէտք է որ քեզ նման մի բարեծնունդ անձը իրան վտանգի ենթարկէ. քո հայրն է, որ այդ հրաւէրքն է կարդում քեզ, քո հայրն է, որ քեզ հրամայում է այդ։ Եթէ թագաւորը Շմերդիսը չէ, Կիւրոսի որդին, այլ նա, որին կասկածում եմ, քեզ վայել չէ նորա կինը լինել և ոչ էլ նորան վայել՝ Պարսկաստանի գահը գրաւել։ Հետևիր ուրեմն իմ խորհուրդին և արա ինչ պատւիրում եմ քեզ։ Երբ թագաւորը կը գայ քեզ մօտ, քննիր, թէ ունի նա արդեօք ականջներ։ Եթէ ունի, հապա նա Կիւրոսի որդին է, եթէ ոչ, դա՝ մոգն է»։

Ֆեդիմէն կատարեց իւր հօր հրամանը. նա իմացաւ, որ մոգը ականջներ չունէր և դորա մասին իմաց տւեց իւր հօրը։

ԵՕԹԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՄԵԾԱՒՈՐՆԵՐԻ ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆԸ։ Նոյն այդ գաղտնիքը իմացել էր նաև մի այլ մեծատոհմ ազնւական։ Դարեհը, Վշտասպեան տոհմից, որը սերւած էր Աքեմենիդների ցեղից, այսինքն այն ցեղից, որին պատկանում էին նաև Կիւրոսը և Կամբիւզը։ Օթանէսը յայտնեց գաղտնիքը հինգ ուրիշ մեծատոհմ անձերին. սոցա հետ միացաւ նաև Դարեհը։ Այդ եօթը մեծաւորները գաղտնի ժողով կազմեցին, որտեղ իրար փոխադարձ հաւատարմութիւն խոստացան։ Դարեհի խորհուրդով վճռւեց չը յապաղել, այլ նոյն գիշերը մտնել պալատը և սպանել մոգին։

ՄՈԳԵՐԻ ՍՊԱՆՈՒՄԸ։ - Այդ եօթը ազնւականները ճանապարհ ընկան դէպի պալատը։ Երբ նոքա դռներին հասան, պահապանները, ի պատիւ նոցա աստիճանին, նոցա

թոյլ տւին անցնելու։ Պալատի գաւիթում նոքա հանդիպեցին սպահների, որոնք աշխատեցին նոցա արգելել առաջ գնալու։ Այն ժամանակ եօթը դաւադիրները սպանեցին նոցա և վազեցին մոգերի սենեակները, որոնք հաւաքւել էին կեղծ-Շմերդիսի մօտ խորհրդի։

Ձայներ լսելուն պէս, մոգերը պատրաստւեցին պաշտպանւելու թէ աղեղներով և թէ նիզակներով։ Բայց դաւադիրները նոցա բոլորին կոտորեցին, կտրեցին նոցա գլուխները և դուրս բերին փողոց՝ խմբւած ամբոխին ցոյց տալու համար։

Պարսիկները սրերն առան ձեռները և, ճշմարտութիւնն իմանալուն պէս, սկսեցին կոտորել մոգերին, որտեղ նոցա հանդիպում էին։ Պարսիկները երկար ժամանակ տօնում էին այդ օրը մեծ հանդէսով. այդ օրը նոքա դարձրին իրանց ամենամեծ տօներից մէկը, որին անւանում էին «մոգերի կոտորած»։ Այդ օրը ոչ մի մոգի թոյլ չէր տրւած տանից դուրս գալու։

ԲԵՀԻՍՏՈՒՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ։— Այս պատմութիւնը, վերաբերեալ եօթը մեծամեծների և կեղծ-Շմերդիսի սպանման, որպէս նաև այն, որ պէտք է պատմել, թէ ինչպէս Դարեհը ընտրւեց թագաւոր, քաղւած է Հերոդոտից։ Բայց այդ պատմութեան մէջ շատ բան առասպելական է։ Այդ անցքի մասին Բեհիստունի արձանագրութեան մէջ ասւած է միմիայն այս. «Ես (Դարեհ) աղօթեցի Արամազդին, և Արամազդը ինձ օգնական եղաւ։ Բագայադիս ամսի 10-ին, իմ հաւատարիմների հետ, ես սպանեցի այս Գաումատա մոգին և նորա գլխաւոր մեղսակիցներին։ Սիկթաուատիս բերդը, Մարաստանի Նիզայիա

վիճակում, ահա թէ որտեղ սպանեցի ես նորան։ Ես նորան թագաւորութիւնից զրկեցի։ Արամազդի ողորմութեամբ ես դառայ թագաւոր։ Արամազդը ինձ տուեց գաւազանը։ Թագաւորութիւնը, որ խլուած էր մեր տոհմից, ես այն կրկին ձեռք բերի»։

XI

ԴԱՐԵՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Եօթը դաւադիրների վճիռը։—Դարեհը թագաւոր է ճանաչւում։—Բաբելոնի ապստամբութիւնը։—Առասպել Զոպիրոսի մասին։—Մարաստանի, Հայաստանի եւ Ասորեստանի ապստամբութիւնները։

ԵՕԹԸ ԴԱՒԱԴԻՐՆԵՐԻ ՎՃԻՌԸ։—Խաղաղութիւնը վերականգնելուց հինգ օր յետոյ, եօթը մեծամեծները, որոնք ապստամբեցին մոգերի դէմ, խորհուրդ կազմեցին։ Ամենից առաջ նոքա վճռեցին, որ, թագաւորութիւնը իրանցից մէկին վիճակուած լինելով, բացի Օթանէսից, որ էն գլխից այդ պատուից հրաժարուեց, Օթանէսին և նորա յետագաներին մշտնջենաւոր կերպով ամեն տարի մի մարական հանդերձ պիտի տրւի, և որ նրան պէտք է տրւեն պարգևներ, որոնք պարսիկների մօտ ամենապատւաւորներն են համարւում։

Յետոյ վճռւեց, որ եօթից ամեն մէկը պիտի պալատում ազատ մուտք ունենայ, առանց պարտաւորուած լինելու այցելութեան համար կանխապէս իմացնելու. երկրորդ, որ թագաւորը ուրիշ տանից չը պէտք է կին առնէ, քան այն տներից, որոնք մոգին գահազուրկ արին։ Բայց թէ ինչպէս պիտի ընտրւի նոր թագաւորը, վճռւեց հետևեալ առաւօտը ձիով դուրս գալ քաղաքի առաջը, և որ թագաւոր կը ճանաչւի նա, որի ձին, արեգակի երևալուն պէս, առաջինը կը խրխնջայ։

Այսպէս է պատմում աւանդութիւնը, որը տալիս է նաև հետևեալ մանրամասնութիւնները։

ԴԱՐԵՀԸ ԹԱԳԱՒՈՐ Է ՃԱՆԱՉՒՈՒՄ։—Դարեհը մի ճարպիկ ձիապան ունէր, Էբարէս անունով։ Ժողովից դուրս գալով,

Դարեհը նրան ասաց. «Էբարէս, մեր մէջ վճռուած է, որ վաղը մենք ձի հեծնենք և որ մեր մէջ նա կը լինի թագաւոր, ում ձին առաջինը կը խրխնջայ արեգակի ծագման ժամանակ։ Ուրեմն այժմ գործ դիր քո բոլոր ճարպկութիւնը, որ այդ մեծ աստիճանը ես ստանամ։—Տէր իմ, պատասխանեց Էբարէսը, եթէ ձեր հրամանոց ընտրութիւնը միմիայն դորանից է կախուած, քէֆներդ լաւ պահէք և հոգս մի քաշէք՝ ոչ ոք ձեզ չի յաղթիլ. ես մի անսխալական հնար ունիմ։

Գիշերը հասնելուն պէս, Էբարէսը վերցրեց այն ամենից, ինչ աւելի էր սիրում Դարեհի ձին, և տարաւ դրեց քաղաքի արուարձանի մի տեղում. յետոյ իւր տիրոջ ձին տարաւ այնտեղ, յետ ու առաջ խաղացրեց այդ ուտխտների շուրջը և յետոյ, վերջապէս, թոյլ տուեց ստնելու։ Բայց մնացեալ գիշերը նորան էլ ոչինչ չ'ուտացրեց։

Առաւօտը, լոյսը ծագելուն պէս, վեց պարսիկները ձիերը հեծած, կանգնեցին նշանակուած տեղը։ Նոքա շրջեցին նոյն արուարձանի կողմերում. և հէնց որ նոքա հասան այնտեղ, որտեղ նախորդ գիշերը ստնկքն էր դրած, Դարեհի ձին իսկոյն խրխնջաց։ Աւելացնում են, որ նոյն րոպէին կայծակ փայլեց, որ և լսեցին որոտումի հարուած, թէպէտ և օրը պայծառ էր և որ այն նշանները ցոյց էին տալիս թէ երկինքը հաղորդակցութեան մէջ է Դարեհի հետ։ Միւս վեց մեծամեծները ձիերից վայր իջան, երկրպագեցին նորա ոտներին և ընդունեցին նորան իրանց թագաւոր։

Դարեհ, որդի Վշտասպի, հռչակուեց թագաւոր, և Ասիայի բոլոր ազգերը, որոնք նուաճուած էին Կիւրոսից և Կամբիւզից, ենթարկուեցին նրան, բացի արաբներից, որոնք երբէք պարսիկների ստրուկ չէին եղած։

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ։ — Բայց այդ հպատակութիւնը ձեռք բերուեց միմիայն երկարատև կռիւներից յետոյ։ Նուաճուած ազգերը ափսոսացին կեղծ-Սմերդիսին,

որը այնքան թեթևութիւններ էր խոստացել նրանց, և, բացի դորանից, նոքա ուզեցին օգտուել նոցա մահից՝ անկախութիւն ձեռք բերելու համար։ Առաջինը ոտի կանգնեց Շուշաստանը, հին Էլամացւոց երկիրը. Շուշաստանից ապստամբութիւնը անցաւ Բաբելոն, որի հարկատու իշխանը ընդունեց Նաբուգոդոնոսոր անունը, ուզելով դորանով իւր հայրենակիցների մէջ արթնացնել իրանց փայլուն անցեալի յիշողութիւնները։ Բաբելոնը ապստամբեց (520 թ.), և ապստամբութիւնը տարածուեց մինչ այն աստիճան, որ Դարեհը, թողնելով Շուշաստանը խաղաղացնելու հոգսը իւր զորապետներին, ինքը գլուխ կանգնեց այն զօրքի, որը նշանակուեց Քաղդէայում (Բաբելոնիայում) գործելու։ Նա անցաւ Տիգրիսը և հանդիպեց ապստամբներին Եփրատի ափերի վերայ մի աւանի մօտ, որը կոչւում էր Զազաննու, ջարդեց նոցա և թշնամու մի մասը գցեց Եփրատ։ Նաբուգոդոնոսոր անուանեալը մի քանի ձիաւորներով փախաւ Բաբելոն, որտեղ նա փակուեց։ Քաղաքը պատրաստուած չէր պաշարման համար և, չը կարողանալով տանել երկար պաշարում, անձնատուր եղաւ Դարեհին։ Ապստամբութեան գլուխը մահուան պատիժ կրեց։

ԱՌԱՍՊԵԼ ԶՈՊԻՐՈՍԻ ՄԱՍԻՆ։—Ժողովրդական աւանդութիւնը, սակայն, շուտով այլակերպեց այդ պատմական պատմութիւնը։ Երբ, այդ անցքից մօտ 50 տարի յետոյ, յոյն պատմաբան Հերոդոտը ճանապարհորդում էր Ասիայում, արդէն պատմում էին, թէ Դարեհը, գալով Բաբելոնի առաջը, գտաւ քաղաքը պաշտպանելու պատրաստ դրութեան մէջ։ Բնակիչները նորոգել էին պարիսպները, կտրել ջրանցքները, հաւաքել պաշարը, և, ազատուելու համար անօգուտ բերաններից, սպանել էին իրանց բոլոր կանանց, բացառութեամբ նոցա, որոնք հայ

թխելու համար պէտքական էին։ Անցաւ քսան ամիս, երբ մի օր Զոպիրոսը, մէկը այն եօթը ազնուականներից, որոնք սպանեցին մոգին, ներկայացաւ Դարէհի առաջ քիթը և ականջները կտրած, գլուխը ածիլած, մարմինը արիւնով շաղախած։ Դարէհի զարմանքին նա պատասխանեց, թէ այդ վէրքերը նա ինքն է արել, և ահա թէ ինչու։ Ես, ասաց Զոպիրոսը, կ'երթամ կը մտնեմ Բաբելոն. ես կ'ասեմ, թէ այսպէս վարուել են ինձ հետ ձեր հրամանով. այդպիսով ինձ կ'աջողուի նոցա զօրքերի մի մասի հրամանատարութիւնը ձեռք բերել։ Եւ, որպէս զի քաղաքացւոց հաւատարմութիւնը բոլորովին ձեռք բերած լինեմ, տասը օրից յետոյ 1000 անպէտք զինուորներ ուղարկիր Շամիրամի դռան առաջը. եօթ օր էլ անցած՝ ուղարկիր 2000 այլ զինուորներ Նինոսի դռների մօտ. քսան օր էլ անցած՝ ուղարկիր 4000 մարդ քաղդէական կոչուած դռների մօտ. բայց որ ամենքն էլ, բացի իրանց սրերից, ուրիշ զէնք չունենան։ Յետոյ, քսան օր էլ անցած, արդէն ուղարկիր միացեալ զօրքդ քաղաքի վերայ յարձակուելու համար. մինչ այդ ժամանակ բաբելոնացիք ինձ յանձնած կը լինեն քաղաքի մի քանի դռների բանալիները, ես կը բացեմ այդ դռները մեր զօրքերի համար։

Ամեն բան կատարուեց Զոպիրոսի նախագծով, և Բաբելոնը կրկին ընկաւ պարսիկների ձեռքը։ Դարէհը քանդել տուեց պարիսպները և խաչել տուեց քաղաքի ամենանշանաւոր անձերից 3000 հոգի։

ՄԱՐԱՍՏԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ։ — Մինչդեռ Դարէհը զբաղուած էր Քաղդէայով, մի ահագին ապստամբութիւն պայթեց Պարսկաստանի հիւսիսային և արևելեան նահանգներում։ Մարաստանը, Հայաստանը և Ասորեստանը իրանց թագաւոր ճանաչեցին Փրաւորտին, որը սերուած էր Կիաքսարի տոհմից և որը՝ գահ բարձրանալով, ընդունեց Քշատրիտա անունը։ Երբ Դարէհը վերջացրեց իւր գործը Քաղդէայում և Էլա-

մում, իւր բոլոր ոյժերը ուղղեց այդ Փրաւորտի դէմ։ Հայաստանի համար նշանակուած զօրքի հրամանատարութիւնը նա յանձնեց Դադարշիշ անունով հային, Ասորեստանը հնազանդեցնելու հոգսը տուեց Վաումասային, իսկ դժուարագոյն գործը՝ բուն Մարաստանի հնազանդեցնելը՝ նա յանձնեց Վիդարնային, որը մոգերին սպանող եօթից մէկն էր։ Երբ առաջին կռիւները անորոշ մնացին, Դարէհը ինքն անձամբ գնաց Մարաստան։ Կունդուրուս աւանի մօտ եղաւ հանդիպումը Փրաւորտի հետ, որը ստիպուեց փախչել դէպի հիւսիսային լեռները, բայց բռնուեց, տարուեց Էքբատան և խաչուեց։ Դորանից յետոյ ապստամբ երկիրների հնազանդեցնելը կարճ ժամանակամիջոցի գործ էր։

Այս իրողութիւնների մասին վկայում են Բեհիստունի արձանագրութիւնները։

XII

ԴԱՐԵՀԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս կազմակերպեց Դարեհը իր տէրութիւնը.—Սատրապութիւններ.—Զինուորական եւ քաղաքացիական իշխանութիւնների բաժանումը.—Հարկերը.—Պարսկական դրամը Դարեհի ժամանակ.

ԻՆՉՊԷՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԴԱՐԵՀԸ ԻՒՐ ՏԷՐՈՒԹԻՒՆԸ:—Իւր իշխանութեան առաջին վեց տարիների նեղութիւնները անպտուղ չանցան Դարեհի համար: Նա ուզեց վերջ տալ աւանդութեան և հիմնել նոր սկզբունքների վերայ մի իսկական պարսկական տէրութիւն, տարբեր մինչ այնժամանակեայ թագաւորութիւններից, որոնք ներկայացնում էին իրար հետ անկապ և միմիայն առերեւոյթ նուաճած երկիրներ: Դարեհը չուզեց իւր հպատակ բոլոր ազգերը ի մի ձուլել. ընդհակառակը, նա խրախուսեց, որ նոցանից իւրաքանչիւրը պահպանէ իւր լեզուն, իւր սովորութիւնները, իւր կրօնը, իւր օրէնքները և այլ առանձնայատկութիւնները: Հրէաները իրաւունք ստացան վերջացնել իրանց տաճարի շինութիւնը. Ասիայի յոյները պահպանեցին իրանց զանազան կառավարութիւնները, Փիւնիկիան պահպանեց իւր թագաւորներին և իւր սուֆֆեաներին, Եգիպտոսը՝ իւր ժառանգական նոմարքներին: Բայց այդ բոլոր իշխանութիւնների վերայ կար միմիակ բարձր իշխանութիւն՝ Դարեհի ձեռքում:

ՍԱՏՐԱՊՈՒԹԻՒՆՆԵՐ:—Երկիրը բաժանեց մեծ նահանգների, որոնց թիւը տարբեր էր զանազան ժամանակներում: Դարեհի ժամանակ, սկզբներում, կային քսան և երեք նահանգներ կամ սատրապութիւններ, իսկ իւր թագաւորութեան վերջում՝ երեսուն և մէկ: Այդ բազմաթիւ սատրապութիւններից յիշենք մի քանիսը. բուն Պարսկաստան, Էլամ (որտեղ էր Շոշ քաղաքը, Դարեհի սիրած մայրաքաղաքներից մէկը), Քաղդէա, Ասորեստան, Ասորիք (Փիւնիկիայով և Պաղեստինով միասին), Եգիպտոս, Իաւնիա (Լիւկիա, Կարիա և Փոքր-Ասիայի յոյներ), Լիւդիա, Մարաստան, Հայաստան [1], Կապադովկիա (Փոքր-Ասիայի միջին մասը և Տաւրոսից սկսած մինչ Սև Ծովը), Պարթեւների աշխարհ, Բակտրիա, Սաքաստան (Չինաստանի սահմանների մօտ), Մակացիք (Կասպից ծովի արեւմուտքում, Կովկասի և Ուրմիա լճի մէջ տեղը) և այլք:

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ:—Եթէ իւրաքանչիւր նահանգ կառավարուէր մի միակ մարդու ձեռքով, կարելի էր վախ կրել, որ նահանգապետները կամ սատրապները օգտուէին ներքին շփոթութիւններից՝ անկախ իշխաններ դառնալու համար: Դարեհը բաժանեց նահանգական զօրքի հրամանատարութիւնը երկրի կառավարչութիւնից: Իւրաքանչիւր սատրապութեան համար Դարեհը նշանակեց երեք իրարից անկախ և ուղղակի թագաւորից նշանակուած բարձր պաշտօնեաներ՝ սատրապ, թագաւորական քարտուղար և զօրքի գլխաւոր:

---

1) Որ Դարեհի արձանագրութիւնների մէջ առաջին անգամ Հայաստանը յիշւում է Արմինա անունով.

Սատրապին յանձնուած էր նահանգի ամբողջ կառավարութիւնը․ նա էր հաւաքում հարկերը, նա էր կառավարում դատարանները, ունէր իրաւունք՝ դատաստանական գործերում՝ մահուան պատիժ տալ և կամ մահուան պատժից ազատել։ Սատրապը ունէր պալատ, պալատական ծառայողներ, թիկնապահներ, մեծ հարեմ, որպէս վայել էր միմիայն թագաւորներին։ Սատրապին նշանակում էր թագաւորը թէ բարձր և թէ ստորին դասակարգերից, պարսիկներից և թէ օտարների միջից, անորոշ ժամանակով։

Սատրապը ունէր իւր մօտ մի թագաւորական քարտուղար, նշանակուած թագաւորից։ Նորա պաշտօնն էր վարել գրագրութիւնը․ բայց, միևնոյն ժամանակ, նա հսկում էր սատրապի բոլոր գործունէութեան վերայ և դորա մասին տեղեկացնում թագաւորին։

Վերջապէս, նահանգի մէջ զետեղուած բոլոր զօրքերը, թէ պարսկական գարնիզոնները, թէ տեղացիներից հաւաքուած զօրքը և թէ վարձկան զօրքերը հպատակւում էին ոչ թէ սատրապին, այլ մի զօրավարի, որը սատրապից ոչ մի կախում չունէր։

Բացի այդ երեք բարձր պաշտօնեաներից, որոնցից իւրաքանչիւրը առանձին-առանձին կանոնաւոր յարաբերութիւններ ունէր թագաւորի հետ, թագաւորը, աւելի մեծ ապահովութեան համար, ամեն տարի ուղարկում էր տէրութեան նահանգները պաշտօնեաներ, որոնք կոչւում էին թագաւորի ա չ ք ե ր և ա կ ա ն ջ ն ե ր։ Նոցա պաշտօնն էր տեսնել և լսել թէ ինչեր են կատարւում տէրութեան ամենահեռաւոր տեղերում և բոլորի համար տեղեկացնել թագաւորին։ Նոքա գնում էին մեծամեծ իրաւունքներով, քննում էին գործերի դրութիւնը և, մինչև անգամ, յան-

դիմանում էին սատրապներին, եթէ այդ հարկաւոր էին համարում։ Նոցա նշանակութիւնը ամենքի աչքում բարձրացնելու մտքով, թագաւորը նոցա ուղեկցելու համար զօրքի գունդեր էր տալիս։ Եթէ նոցա զեկուցումները (տեղեկագիրները) պաշտօնեաների մասին աննպաստ էին, թագաւորական հրամանով նոքա զրկւում էին պաշտօնից․ շատ անգամ, նկատուած յանցանքների համար, նոքա մահուան էին դատապարտւում, առանց քննութեան։ Այդպիսի դէպքերում մի սուրհանդակ էր ուղարկւում, որը սատրապի թիկնապահներին ցոյց էր տալիս թագաւորական հրամանը՝ իրանց մեծին՝ սատրապին սպանելու։

ՀԱՐԿԵՐԸ։—Սատրապների ամենագլխաւոր նշանակութիւնը հարկեր ժողովելն էր։ Բուն Պարսկաստանը կանոնաւոր հարկերից ազատուեց․ նորա բնակիչների պարտականութիւնն էր միայն ընծայ տալ թագաւորին ամեն անգամ, երբ թագաւորը ճանապարհորդում էր նոցա երկրի մէջ։ Ընծայի մեծութիւնը լինում էր համեմատ իւրաքանչիւր մարդու կարողութեան։ Ընծան լինում էր եզ կամ ոչխար, բայց նաև մի քիչ կաթ կամ պանիր, արմաւ, ալիւր և ընդեղէն։

Միւս նահանգները ենթարկուած էին որոշ հարկերի, մասամբ փողով, մասամբ բնութեամբ։ Արծաթով ընդամենը ստացւում էր այնքան, որքան քաշում է այժմեայ 82.799.866 արծաթեայ ֆրանկը (կամ աւելի քան 20 միլլիոն արծաթէ ռուբլին)։ Այդքան արծաթ այն ժամանակ նոյնքան արժէք ունէր, որքան այժմ 663 միլլիոն ֆրանկը կամ մօտ 165 միլլիոն արծաթէ ռուբլին։

Բնութեամբ վճարւող հարկը պակաս մեծ չէր։

Եգիպտոսը տալիս էր ցորենով այնքան, որքան հարկաւոր էր 120.000 մարդու համար, որոնք կազմում էին Եգիպտոսում կանգնած զօրքը: Մարերը տալիս էին ամեն տարի 100.000 ոչխար, 4.000 ջորի և 3.000 ձի. հայերը՝ 30.000 ձիու քուռակ (որպէս վկայում է հռովմայեցի Ստրաբոն պատմաբանը և աշխարհագիրը առաջին դարում Քրիստոսից յետոյ՝ իւր պատմութեան XI գլխում), բաբելոնացիք՝ 500 երիտասարդ ներքինիներ, Կիլիկիան՝ 366 սպիտակ ձիեր և այլն:

Այդ բոլորը մտնում էր արքունական գանձարանը. բայց դորանով չէր վերջանում բոլոր հարկաւութիւնը. սատրապները ուղիղ չէին ստանում թագաւորից. նոքա, որպէս նաև նոցա պահապանները, ապրում էին նահանգների հաշուով, և առատօրէն վճարել էին տալիս տեղացիներից: Մի սատրապ իւր բազմաթիւ ծառաներով, ձիերով, իւր հարեմով (կանանոց) և այլն նստում էր երկրին, որքան կը նստէր մի թագաւոր:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԴՐԱՄԸ: — Վճարումները հեշտացնելու համար, Դարէհը շրջանառութեան մէջ գցեց ոսկէ և արծաթէ դրամ, որին ուխն նորա անունը [1]: Դարէհի դրամը կրում էր երեսի կողմում թագաւորի պատկերը, զինուորուած աղեղով կամ սլաքով: Այդ դրամները հաստ են, անկանոն, կոպիտ կտրուածքով: Ստացուած բոլոր արծաթը ձուլում էին կաւէ ամաններում և պահում թագաւորական գանձարաններում մինչև որ նորարից դրամ կտրեն:

[1] Թերևս հայոց դահեկան խօսքը սկզբում նշանակում լինէր Դարէհի դրամ:

XIII

ՍԿԻՒԹԻԱ ԵՒ ՍԿԻՒԹԱՑԻՔ

Սկիւթիայի արշաւանքի պատճառները.—Սկիւթացւոց բարքը.—Սկիւթացւոց կրօնը.—Պատերազմական սովորութիւններ.—Աստուածայիններ կամ գուշակողներ.—Դաշինք.—Թաղման հանդէսը.—Այլ սովորութիւններ:

ՍԿԻՒԹԻԱՅԻ ԱՐՇԱՒԱՆՔԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ:—Պարսիկների մէջ դեռ ևս իշխում էր նուաճողական ոգին: Նոցա աչքում մի թագաւոր փառք էր ձեռք բերում միմիայն նուաճումներով: Կիւրոսը նուաճեց ասիական երկիրները, Կամբիւզը՝ Եգիպտոսը. Դարէհին էլ հարկաւոր էր իւր տէրութիւնը ընդարձակել նոր նուաճումներով: Բայց իւր տէրութիւնը ընդարձակելու յարմարութիւն չը կար հիւսիսից, հարաւից, արևելքից և արևմուտքից. այդ բոլոր կողմերի սահմանները կազմում էին ծովեր, անապատներ, լեռներ և կամ մեծ գետեր: Միայն հիւսիս-արևմուտքում կային երկիրներ, որտեղ պարսկական զօրքերը ոտք չէին դրել, այն է՝ Եւրոպայի հողի վերայ, որտեղ բնակւում էին մի կողմից յոյները, միւս կողմից՝ սկիւթացիք:

Սկիւթացիներից միշտ վախ կար, որ չը յարձակւեն Ասիայի վերայ, որպէս առաջ, երբ նոքա տարիներով իշխեցին ասիական ազգերի վերայ – մարաց Կիաքսար թագաւորի ժամանակ: Ասիական ազգերի մօտ նոքա թողել

էին արինահեղ յիշողութիւններ։ Եւ Դարեհը ուզեց նախ նոցա հպատակեցնել, որպէս զի յետոյ դառնայ յոյների դէմ։

ՍԿԻՒԹԱՑԻՈՑ ԲԱՐՔԸ։—Սկիւթացիք, որ ապրում էին այժմեայ Ռուսաստանի հարաւում, Սև ծովից հիւսիս, մի խաշնարած ժողովուրդ էին. նոքա, ասում է Հերոդոտը (որը գրում էր այդ անցքերից մօտ յիսուն տարի յետոյ, և ուրեմն գրեթէ ժամանակակից մարդ էր), նոքա չունէին ոչ քաղաքներ և ոչ բերդեր, և, ուր որ գնում էին, իրանց բնակարանները, որ սայլեր են, հետն են տանում։ Նոքա շատ վարժ են աղեղ ձգելում, նոյն իսկ ձիու վերայից. նոքա չունէին հողագործութիւն, այլ ապրում են խաշներից, որ իրանց հետ են քշում։ Նոցա բնակած երկիրը շատ յարմարութիւն է ներկայացնում խաշնարած կեանքի համար, որովհետև այդ երկիրը դաշտային է, արօտատեղերով առատ և նոյնքան առատ գետերով, որքան Եգիպտոսը առատ է ջրացքներով։

ՍԿԻՒԹԱՑԻՈՑ ԿՐՕՆԸ։—Նոքա պաշտում են մի քանի աստուածների, բայց արձաններ (տաճարներ) կանգնեցնում են միմիայն պատերազմի աստծուն։ Ահա թէ ինչ է նոցա տաճարը՝ այն դաշտում, որը նշանակւած է ազգային ժողովների համար, հաւաքում են մանր փայտի խուրձեր և դոցանից ահագին դէզ են շինում, աւելի լայն և երկար քան բարձր։ Այդ դէզի վերայ մի քառանկիւն են շինում, երեք կողմից աւելի բարձր և անմատչելի. չորրորդ կողմը զառիվայր է, այնպէս որ կարելի է նորա վերայ բարձրանալ։ Ամեն տարի այդ կողմի վերայ 150 սայլ փայտի խուրձեր են դարսում, որովհետև ձիւնը, անձրևը, քամին և այլն նստացնում են։ Բարձրութեան վերայ սկիւթական ամեն մի ազգ մի մի հին երկաթէ թուր է կանգնեցնում, որը պատերազմի աստուծու կուռքի տեղ է ծառայում։ Ամեն տարի նոքա այդ թուրին զոհ են բերում ձիեր և գերի-

ների հարիւրերորդ մասը։ Մարդկային զոհերի գլխին նախ գինի են ածում, յետոյ մի տախտակ ամանի վերայ նոցա վիզը կտրում են և այդ անօթը տանում են դէպի գլուխը և արիւնը ածում թուրի վերայ։ Նոյն այդ ժամանակ նոքա, որոնք դէզի ներքևումն են, կտրում են մորթւածների աջ բազուկը ուսի հետ միասին և գցում դէպի օդը. նայած թէ ինչպէս են նոքա վայր ընկնում գետնի վերայ,—դորանից զանազան գուշակութիւններ են անում։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ։— Պատերազմի ժամանակ սկիւթացին խմում է առաջին վայր գցած մարդու արիւնը, կտրում է սպանւած մարդու գլուխը, տանում նորան ու ներկայացնում թագաւորին։ Այդ րոպէից նա ստանում է իրաւունք աւարի բաժանման մէջ մասնակցելու, թէ չէ՝ նա կը զրկւէր աւարի բաժնից։

Սպանւածի գլուխը զերծելու համար, սկիւթացին նախ ցտում է գլխի շուրջը, ականջների մօտ, և վերևից բռնելով՝ նա քաշում է կաշին։ Յետոյ նա այդ կաշին ճմլում է իւր ձեռքերում, նախօրէն մսանքները քերթելով եզան կողի ոսկրով. այդ կաշին նա բանեցնում է անձեռոցի տեղ։ Նա նորան կախում է իւր ձիու սանձի վերայ և դորանով պարծենում. և որքան սկիւթացին շատ ունի այդ կաշւից, նոյնքան նա աւելի քաջ է ճանաչւում։ Պատահում է, որ մի քանի այդպիսի կաշիներ իրար հետ կարում են և նոցանից շոր շինում։ Մի քանիսը նաև մաշկում են աջ բազկի կաշին մինչև եղունգները և նորանով իրանց կապարճի երեսը շինում։ Վերջապէս կան որ կաշին մաշկում են ոտից ցգլուխ, չորացնում փայտի կոտրտանքների վերայ և ձիերի վերայ իրանց հետ տանում։

Եթէ սպանւածը այնպիսի մէկն էր, որին սպանողը ատելութեամբ ատում էր, վերջինս նորա գանգը սղոցում էր յօնքերից ներքև և նորանից խմելու աման շինում, ոսկեզօծելով մէջը, եթէ սպանողը հարուստ էր։

Ամեն գլխաւոր կամ ցեղապետ իւր վիճակում տարին մի

անգամ խնձոյք էր սարքում. ամեն մարդ ով մի թշնամու սպանել էր, արժանանում էր այնտեղ գինի խմելուն. ովքեր ոչ՝ ամօթահար կերպով ջոկ տեղ էին նստում. ովքեր շատ էին սպանել, նոքա խմում էին երկու անօթից միասին կպցրած։

ԱՍՏՒԱԾԱՅԻՆՆԵՐ ԿԱՄ ԳՈՒՇԱԿՈՂՆԵՐ։—Սկյութացոց մէջ, ասում է Հերոդոտ, շատ են աստուածայիններ, որոնք իրանց գուշակութիւնների համար գործ են ածում ուռենու գաւազաններ։

Երբ սկյութացոց թագաւորը պառկում է հիւանդ, նա կանչել է տալիս իւր մօտ ամենահռչակաւոր աստուածայիններից երեքին։ Սովորապէս նոքա պատասխանում են, թէ այս ինչ կամ այն ինչ մարդը կեղծ երդում է ուել թագաւորական վրանի աստուածների անունով և որ այդ պատճառով թագաւորը հիւանդացել է։ Մեղադրուողին բերում են. եթէ նա բացասում է յանցանքը, թագաւորը կանչել է տալիս ուրիշ երեք աստուածայիններ։ Եթէ սոքա, իրանց գուշակութեան կանոններով. համոզում են մեղադրուողին երդմնազանցութիւն արած լինելու մէջ, սորա գլուխը կտրում են, կայքը գրաւում յօգուտ առաջին երեք գուշակողների։ Եթէ նոքա նորան անմեղ են յայտնում, այն ժամանակ կանչում են կրկին երեք ուրիշ գուշակողներ. եթէ մեղադրուողին անմեղ են յայտնում սոքա, այն ժամանակ նա արձակւում է, իսկ առաջին երեք գուշակողներին պատժում են մահով, նոցա հետ նաև նոցա արու զաւակներին, բայց նոցա աղջիկներին խնայում են։

Եւ ահա թէ ինչպէս են նոքա մեռցնում. եզներով լծած մի սայլ լցնում են մանր փայտերի խուրձերով. գուշակողներին դնում են այդ խուրձերի մէջ, ոտները կապում սայլի հետ, ձեռները կապում մէջքերին, մի ցռկակապ էլ դնում բերներին, խուրձերը կրակում են և եզներին քշում, խրտնեցնելով սոցա։ Եզներից մի քանիսը այրւում են գուշակողների հետ, միւսները կարողանում են վէրքերով ազատուել։

ԴԱՇԻՆՔ։—Երբ սկյութացիք դաշն են կապում, մի հողէ գաւաթի մէջ գինի են ածում. դաշն կապողները նորա մէջ

խառնում են իրանց արիւնից, որը նոքա առնում են դանակներով իրանց մարմնի վերայ թեթև կերպով ցտելով։ Այդ ամանի մէջ թրջում են մի թուր, մի քանի նետեր, մի կացին և նիզակ, և յետոյ խմում են ամանի հեղանիւթի մի մասը, մնացածը խմում են նոցա ուղեկիցները։

ԹԱՂՄԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ։—Սկյութացոց թագաւորների գերեզմանները այն երկրումն են, որտեղ Դնեպր գետը սկսում է նաւագնաց դառնալ։ Երբ թագաւորը մեռնում է (պատմում է Հերոդոտը), այդ տեղում մի մեծ քառանկիւնի փոս են փորում. յետոյ մարմինը պատում են մոմով, ճղում են փորը, մաքրում են մէջը, անուշ իւղերով լցնում և կրկին կարում։ Յետոյ դնում են մարմինը սայլի վերայ, տանում են մի այլ գաւառ, որտեղի բնակիչները իրանց ականջներից մի փոքր կտրում են, գլխի շուրջը ածիլում, ցռումներ անում բազուկների վերայ, պատռում ճակատը և ձախ ձեռների միջով նետեր են անցկացնում։

Այդ ձևով մարմինը շրջեցնում են բոլոր գաւառներում և հասցնում թաղման տեղը։ Այդտեղ նորան դնում են կանաչ խոտի վերայ, շուրջը տնկում են տէգեր, և նոցա ծայրերի վերայ՝ փայտի կտորներ, որոնց ծածկում են ուռենու ճիւղերով։ Գերեզմանի փոսի դատարկ մնացած տեղում դնում են թագաւորի կանանցից մէկին, որին նախապէս խեղդում են, որպէս նաև նորա նախարարին, ծառաներից մէկին, մի քանի ձի, նորա ոսկէ և արծաթէ ամանները և այլն։ Այդ բոլորը վերջացրած՝ փոսը լցնում են հողով և կանգնեցնում են մի բարձր հողաբլուր։

Տարին լրացած, թագաւորի միւս ծառաներից մօտ յիսուն հոգու խեղդում են, նոյնքան էլ նորա ամենալաւ ձիերից, որոնցից հանում են փորոտիքը, լցնում յարդով և կրկին կարում։ Ձիերին կախում են ցիցերի վերայ, բայց այնպէս, որ ոտները կախ ընկած են մնում։ Նոցա գլխով անց են կացնում մի սանձ և մի երասանակ, և իւրաքանչիւր կախած ձիու վերայ նստեց-

նում են խեղդած տղաներից մէկին, սոցա ողնաշարի միջով մինչ վիզը մի ձող անցկացնելուց յետ, որի ներքևի ծայրը ամրացնում են այն ձողի վերայ, որը անցկացրած ձիու միջով։

Ինչ վերաբերում է մնացած սկիւթացիներին, երբ նոցանից մէկը մեռնում է, նորա ամենամօտ ազգականները դնում են նորան մի սայլի վերայ և շրջեցնում նոցա ազգականների տներում. այդ ազգականները ընդունում են նորան և նորանից ամէն ով խնճոյք է սարքում նոցա համար. որոնք ուղեկցում են հանգուցեալին. բոլոր կերակուրներից դնում են նաև ննջեցեալի առջև։ Այդ արարողութիւնները տևում են քառասուն օր, որից յետ կատարւում է թաղումը։

ԱՅԼ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ Սկիւթական ազգերից նոքա, որոնց Տաւր են անւանում, մի կոյս-սուրբի զոհ են բերում այն բոլոր օտարներին, որոնք նոցա երկրի ափերին ալեկոծութեան են հանդիպում։

Սկիւթացւոց ցեղերից մէկը կերակրւում է մարդու մսով. իսկ մի ուրիշ ցեղի մէջ սովորութիւն է, որ մի աղջիկ չի կարող մարդու գնալ մինչև մի թշնամու սպանած չը լինի։

Ահա այն ժողովուրդը, որի վերայ Դարեհը պատրաստւեց յարձակւելու։

XIV

ԴԱՐԵՀԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ ՍԿԻՒԹԻԱՅԻ ՎԵՐԱՅ

Դարեհը անցնում է Բոսֆորը։—Դարեհը Թրակիայում։—Գեթացիք։—Իստերի (Դանուբի) կամուրջը։—Սկիւթացիք յետ են մղում։—Սկիւթացւոց ընծաները։—Դարեհի դարձը։—Միլտիադէս Աթենացին եւ Հիստիաս Միլետացին։—Դարեհը կրկին անցնում է Իստերը եւ Բոսֆորը։—Թրակիան նւաճւում է։

ԴԱՐԵՀԸ ԱՆՑՆՈՒՄ Է ԲՈՍՖՈՐԸ (508 թ.)։—Երբ Դարեհը վճռեց արշաւել Սկիւթիա, նա բոլոր նահանգները սուրհանդակներ ուղարկեց հրամանով մի քանիսին, որ ցամաքի զօրք պատրաստեն, միւսներին՝ որ նաւատորմիղ պատրաստեն, երրորդներին՝ որ Բոսֆորի վերայ նաւային կամուրջ շինեն։ Այդպիսով նա հաւաքեց 800.000 մարդ, թէ հետևակ և թէ հեծելազօր, և ունեցաւ մի նաւատորմիղ, բաղկացած 600 առագաստաւոր նաւերից։ Բոսֆորի երկու ափերի վերայ նա կանգնեցրեց սպիտակ քարից երկու սիւն, արձանագրելով յունական տառերով բոլոր այն ազգերի անունները, որ նա տանում էր իւր հետ։ Յետոյ նա անցաւ Բոսֆորը այն ահագին կամուրջի վերայով, որը ձգւած էր ծովի նեղուցի վերայ։

ԴԱՐԵՀԸ ԹՐԱԿԻԱՅՈՒՄ։—Իւր հետ վերցրած ազգերի մէջ կային նաև ասիացի յոյներ։ Նա սրանց հրամայեց ծովով գնալ մինչ Իստեր (Դանուբ) գետը, կամուրջ պատ-

բաստել նորա վերայ և սպասել իւր գալուն: Իսկ ինքը Դարեհը իւր զօրքով անցաւ Թրակիայի միջով: Տէար գետի ափերը այնքան հաճելի եղան նրան, որ այնտեղ նա երեք օր բանակ դրեց և կանգնեցրեց մի սիւն այս արձանագրութիւնով՝

«Տէարի ակունքը տալիս են աշխարհիս ամենալաւ և ամենագեղեցիկ ջրերը: Դարեհ, Վշտասպի որդին, ամենաամենագեղեցիկը բոլոր մարդկանցից, Թագաւոր Պարսկաստանի և ամբողջ ցամաքի, արշաւելով սկիւթացւոց դէմ, հասաւ նորա ափերը»:

ԳԵԹԱՑԻՔ:—Դեռ Իստէր (Դանուբ) չը հասած, Դարեհը նւաճեց գեթացիներին: Նոքա իրանց անմահ էին համարում, կարծելով, որ իրանցից նա, որ մեռնում է, գնում է իրանց աստուած Զալմոքսիսի մօտ: Հինգ տարին մի անգամ վիճակով նոքա մէկին ջոկում են և ուղարկում Զալմոքսիսի մօտ՝ իրանց մասին նրան տեղեկութիւններ տալու և հրամանով, որ իրանց պիտոյքները չայտնեն աստուծուն: Ահա թէ, ասում է Հերոդոտը, ինչպէս է կատարւում այդ պատգամաւորութիւնը. երեք մարդ պէտք է պահեն նիզակները սուր ծայրն ի վեր, մինչդեռ միւսները բռնում են վիճակւածին ոտներից և ձեռներից, թափ են տալիս նորան և գցում դէպի վեր այնպէս, որ նա ընկնի նիզակների սուր ծայրերի վերայ: Եթէ նա իւր վէրքերից մեռնում է, այդ նշան է, որ աստուած հաշտ է նոցա հետ. եթէ նա չի մեռնում, նորան մեղադրում են չարութեան մէջ: Երբ նոքա դադրում են նորան չանդիմանելուց, նոյն եղանակով իրանց աստուծու մօտ մի ուրիշին են ուղարկում, տալով նրան պատուէրներ, քանի որ նա դեռ ևս կենդանի է:

Նոյն այդ գեթացիք նետեր են գցում երկնքի դէմ, երբ որոտում է կամ կայծակ է խփում, վախացնելու համար չաստուածոց արձակող աստուծուն, համոզւած լինելով որ ուրիշ աստւած չը կայ, քան Զալմոքսիս:

ԻՍՏԵՐԻ ԿԱՄՈՒՐՋԸ:—Երբ Դարեհը անցաւ Իստեր գետը (Դանուբ), մի Թօկի վերայ փայտեայ կապ կապեց և, տալով յոնիացւոց (Ասիայի յոյների) կառավարիչներին, ասաց սրանց՝ «Յոնիացիք, առէք այս Թօկը, օրէնը մի մի կապ յետ արէք. եթէ, բոլորը յետ անելուց յետ, ես այստեղ չը լինեմ, դուք կը վերադառնաք ձեր երկիրը: Մինչ այդ ժամանակ պահպանեցէք կամուրջը»:

ՍԿԻՒԹԱՑԻՔ ՑԵՏ ԵՆ ՄՂՈՒՄ:—Երբ սկիւթացիք իմացան Դարեհի մերձակայութիւնը, նոքա վճռեցին յետ մղել փոքր առ փոքր, լքցնելով ջրհորները և աղբիւրները, փճացնելով խոտը և քաշւելով դէպի հիւսիս:

Պարսիկները առաջ էին մղւում, բայց թշնամուն հասնել չէին կարողանում: Նոքա մտան մի մեծ անապատ, որտեղ Դարեհը կանգ առաւ ութ մեծ դղեակներ շինելու համար. բայց, տեսնելով որ սկիւթացիք անյայտացան, այդ բերդերը նա թողեց անկատար:

ՍԿԻՒԹԱՑԻՈՑ ԸՆԾԱՆԵՐԸ:—Վերջը Դարեհի համբերութիւնը հատաւ, չը կարողանալով ստիպել թշնամուն կանոնաւոր կռւի մէջ մտնելու իւր զօրքի հետ, որը սկսեց արդէն նեղութիւններ քաշել պաշարի կողմից: Այն ժամանակ սկիւթացւոց թագաւոր Իդանթիւրսը մի պատգամաւոր ուղարկեց Դարեհի մօտ ընծաներով, այն է՝ մի թռչուն, մի մուկ, մի գորտ և հինգ նետ: Դարեհը հարցրեց, թէ ինչ են նշանակում այդ պարգևները. պատգամաւորը պատասխանեց, թէ իրան հրամայւած է միմիայն ներկայացնել և յետ դառնալ և որ պարսիկներին է թողնում նոցա միտքը հասկանալ:

Մի խորհուրդի մէջ, որ կազմեց Դարեհը, Գօբրիասը, որը մոգերին սպանող եօթ ազնւականներից մէկն էր, տւեց այսպիսի բացատրութիւն. «Պարսիկներ, ասաց նա, այս ընծաները նշանակում են, որ եթէ դուք չը թռչէք օդի մէջ, որպէս թռչուններ,

եթէ չը մտնէք գետնի մէջ, որպէս մկներ, եթէ դուք չը ցատկէք ճահիճների մէջ, որպէս գորտեր,—դուք ամենքդ կը կոտորուէք այս նետերից։

ԴԱՐԵՀԻ ԴԱՐՁԸ։—Դարեհը վերջապէս համոզուեց, որ աւելի երկար մնալը Սկիւթիայում և անօգուտ է և վտանգաւոր։ Վճռեց վերադառնալ, բայց հարկաւոր էր այնպէս յետ մղել, որ սկիւթացիք, որոնք մեծ մասամբ ձիաւորներ էին, չը յարձակուեն իրանց յետևից։ Այդ բանի մէջն էլ Դարեհը հետևեց Գոբրիասի խորհուրդին։ Գիշերը երբ հասաւ, նա վառել տուեց խոտի մեծ դէզերը, որպէսզի թշնամին կարծէ, թէ զօրքը իւր տեղում կանգնած է. աւանակներին կապեցին, որ նոցա ձայնը հասնէ թշնամուն։ Յետոյ, թողնելով հիւանդներին և իւր ամենավատ զունդերը իրանց տեղում, ցոյց տուեց, իբր զօրքի միւս մասով ուրիշ ճանապարհով գնում է թշնամու վերայ յարձակուելու. բայց իրօք նա դարձաւ դէպի Իստէր։

Կրակների պլպլոցը և աւանակների խանչոցը կարողացան սկիւթացիներին խաբել մինչև հետևեալ օրը։ Բայց հետևեալ օրից նոքա ընկան պարսիկների յետևից, ընտրելով ամենակարճ ճանապարհը դէպի Իստէր։ Պարսիկները, սակայն, այլ՝ աւելի երկար ճանապարհով էին գնացել. ուստի ձիաւոր սկիւթացիք աւելի շուտ հասան Իստեր, քան պարսիկները, և յորդորեցին յոնիացիներին քանդել կամուրջը, իսկ իրանք յետ դարձան պարսիկներին հանդիպելու։ Բայց այդ նրանց չ'աջողեց, որովհետև պարսիկները գալիս էին անորոշ ճանապարհով։

ՄԻԼՏԻԱԴԷՍ ԱԹԵՆԱՑԻՆ ԵՒ ՀԻՍՏԻԱՍ ՄԻԼԵՏԱՑԻՆ։—Սկիւթացւոց առաջարկութիւնը՝ կամուրջը քանդել, են-

թարկուեց քննութեան։ Միլտիադէս աթենացին, որը Հելլեսպոնտոսի (Դարդանելի) մօտ Խերսոնեզ քաղաքի բռնակալն էր, խորհուրդ տուեց հետևել սկիւթացւոց առաջարկութեան, որով Յոնիան (Փոքր-Ասիայի յոյների գաղթականութիւնները) կ'ազատուէր պարսիկների լուծից։ Հեստիասը, Միլետի բռնակալը, ընդդիմացաւ այդ բանին. համոզուած լինելով, որ եթէ իրանք իշխում են այդ քաղաքներում, դորա համար նոքա պէտք է շնորհապարտ լինեն Դարեհին, որի կորուստով նոքա իրանց իշխանութիւնն էլ կը կորցնեն։ Հիստիասի կարծիքը ընդունուեց և, որպէսզի սկիւթացիներին ևս բաւարարութիւն տան, նաւային կամուրջի այն մասը, որը ընկնում էր Սկիւթիայի կողմը, մի փոքր տարածութեամբ քանդուեց։

ԴԱՐԵՀԸ ԿՐԿԻՆ ԱՆՑՆՈՒՄ Է ԻՍՏԵՐԸ ԵՒ ԲՈՍՖՈՐԸ։—Դարեհը հասաւ Իստերի ափը գիշեր ժամանակ։ Հիստիասը նաւերը կանգնեցրեց կամուրջի կտրուած մասում, և Դարեհի զօրքը անցաւ կամուրջը, յետոյ Թրակիան և կանգ առաւ Խերսոնեզում, որտեղ նա թողեց 80,000 զօրք, իսկ ինքը անցաւ Բոսֆորը ու վերադարձաւ Ասիա։

ԹՐԱԿԻԱՆ ՆՈՒԱՃՈՒՄ Է։—Դարեհը չը հասաւ իւր նպատակին, որ էր՝ Սկիւթիան նուաճել. բայց նա նուաճեց գոնէ Թրակիան մինչև Դանուբ գետը։ Դորանով նա պաշտպանեց պարսկական տէրութիւնը սկիւթացւոց յարձակումների վտանգից. իսկ միւս կողմից՝ նա հասաւ Յունաստանի սահմաններին։ Ահա այդ Յունաստանի դէմ է, որ Դարեհը և նորա յաջորդ Քսերքսէսը, մի քանի ժամանակից յետոյ, պէտք է պատերազմ մղէին։ Բայց այդ պատերազմների մանրամասնութիւնները պէտք է պատմուեն Յունաստանի պատմութեան մէջ, որին և պատկանեց առ միշտ արժանայիշատակ յաղթութիւնների պատիւը։

ՎԵՐՋ։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ

ՅԱՌԱՋԱԲԱՆ . . . . I—IV

ԵԳԻՊՏՈՍ . . . . 1— 96

I Եգիպտոսի բնութիւնը . . . . 1— 12

II Եգիպտական ազգը . . . . 13— 19

III Եգիպտացւոց կրօնը . . . . 20— 29

IV Եգիպտացւոց օրէնքները . . . . 30— 32

V Եգիպտոսի քաղաքները. . . . . 33— 36

VI Եգիպտացւոց գրութիւնը . . . . 37— 43

VII Եգիպտոսի պատմութեան շրջանները . . 44— 46

VIII Մեմփիսեան շրջան . . . . 47— 51

IX Եգիպտոսի լուսաւորութիւնը Մեմփիսի շրջանում . . . . 52— 55

X Թեբէեան շրջան. . . . . 56— 60

XI Հովիւները Եգիպտոսում . . . . 61— 65

XII Շարունակութիւն թեբէեան շրջանի . . 66— 71

XIII Դելտայի իշխանութիւնները. . . . . . 72— 75

XIV Եգիպտոսը եթովպացւոց և ասորեստանցւոց իշխանութեան ներքոյ. . . . . . 76— 81

XV Սաիսեան շրջան . . . . 82— 88

XVI Շարունակութիւն սաիսեան շրջանի . . 89— 95

ՓԻՒՆԻԿԻԱ . . . . 97—111

I Փիւնիկիայի բնակիչները և երկիրը. . . 97— 98

II Փիւնիկեցւոց վաճառականութիւնը և գաղթականութիւնները սիդոնեան շրջանում. 99—102

III Փիւնիկեան տիրոսեան շրջանում . . . . 103—104

IV Գաղթական տէրութեան աճումը և անկումը 105—107
V Փիւնիկեցոց այբբենարանը և նորանից բղխած արիական ազգերի այբբենարանները . . . . 108—111
ՄԻՋԱԳԵՏՔ . . . . 113—181
ՔԱՂԴԷԱ . . . . 113—131
I Քաղդէայի հին բնակիչները . . . . . . 113—119
II Քաղդէայի նախապատմութիւնը . . . . 120—126
III Քաղդէայի պատմութիւնը . . . . 127—131
ԱՍՈՐԵՍՏԱՆ. . . . . 133—174
I Ասորեստանի սկզբնական պատմութիւնը. 133—137
II Առաջին հարստութիւն . . . . 138—139
III Երկրորդ հարստութիւն . . . . 140—142
IV Շարունակութիւն երկրորդ հարստութեան. 143—147
V Ասորեստանի ժամանակաւոր անկումը և վերականգումը . . . . 148—153
VI Ասորեստանը Սարգոնների ներքոյ . . . 154—159
VII Սեննաքերիբ, Եսար-Հադդոն և Ասուր-բան-Հաբալ . . . . 160—165
VIII Վերջ Էլամի թագաւորութեան և Ասորեստանի թագաւորութեան . . . . 166—169
IX Ասորեստանի լուսաւորութիւնը: Գրութիւնը. . . . . 170—174
ԲԱԲԵԼՈՆԻԱ. . . . . 175—181
I Բաբելոնեան թագաւորութիւնը . . . . . 175—181
ԻՐԱՆ, ՄԱՐԵՐ ԵՒ ՊԱՐՍԻԿՆԵՐ . . . . 183—207
I Իրանը և նորա բնակիչները . . . . . . 183—186
II Իրանական կրօնը . . . . 187—195
ՄԱՐԱՍՏԱՆ . . . . 197—207
I Պարսկական աւանդութիւն առաջին թագաւորների մասին. . . . . 197—199
II Կիաքսար. . . . . 200—204

III Մարաստանի թագաւորութեան կործանումը. . . . . 205—207
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ . . . . 209—281
I Առասպել Կիւրոսի մանկութեան մասին . 209—218
II Լիւդիացիք . . . . 219—225
III Լիւդիայի թագաւորութեան վերջը . . . 226—230
IV Կիւրոսը նուաճում է ամբողջ Փոքր-Ասիան. 231—233
V Կիւրոսը նուաճում է Բաբելոնիան . . . . 234—236
VI Կիւրոսի մահը. . . . . 337—241
VII Կամբիւզը և Եգիպտոսի նուաճումը . . . 242—247
VIII Կամբիւզի արշաւանքը Եթովպիայի վերայ. 248—251
IX Կամբիւզի վերջին տարիները. . . . . . 252—256
X Կեղծ-Սմերդիս. . . . . 257—260
XI Դարեհի թագաւորութ. առաջին տարիները 261—265
XII Դարեհի կառավարութիւնը . . . . 266—270
XIII Սկիւթիա և սկիւթացիք . . . . 271—276
XIV Դարեհի արշաւանքը Սկիւթիայի վերայ. 277—281

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	Տող		Տպւած է	Ուղիղն է
21	11	վերևից	Նունը	Նուն
41	8	ներքևից	հայերէնը	արաբերէնը
53	14	վերևից	արձանագրութիւն	արձանագործութիւն
62	16	»	քրդական	թրքական
83	6	»	որ նա և է	որ նա որ և է
92	7	ներքևից	Ահմէսից նա ինձ	Ահմէսից. նա ինձ
93	10	վերևից	Մեմֆեսում	Մեմֆիսում
116	15	»	Ուրախ, Հարսամ	Ուրուխ, Լարսամ
117	10	»	մարկային	մարդկային
121	3	»	Բաբիլոն	Բաբելոն
129	13	ներքևից	Միջագէտք	Միջագետք
158	15	վերևից	Ուրարտան	Ուրսան
174	4	»	բուերագրերը	բևեռագրերը
259	10	ներքևից	մեծամեծներւ	մենամեծներին



Գիրքը ենթարկվել է ախտահանման
25/VII—42 թ.

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

0014128

ՀՀ Ազգային գրադարան
NL0014128

2013